ՀԱՅՐԵՆԻՔ

891.99(082) 8973

Բ - 13 | Բաբայան Արամ

Հայրենիքի հայ գրողները

…ենիքի մասին: 10 ռ.

891.99-82
Բ-13
Հայր.
321:172

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՀԱՅՐԵՆԻՔ

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ

Կազմեց
ԱՐԱՄ ԲԱՐԱՑԱՆ

Ա 11/30796 8973

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1946

Կազմը, Ֆորզացը և գլխազարդերը
Նկարիչ Հ. ԿԱՐԱԼՅԱՆԻ

РОДИНА
(На армянском языке)

Армгиз, Ереван, 1946.

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովուրդը պատկանում է աշխարհի հնագույն ազգերի թվին։ Նա հարուստ անցյալի ու մեծ կուլտուրայի տեր մի ժողովուրդ է։ Դեռևս այն շրջանում, երբ ժամանակակից եվրոպական առաջադեմ մի շարք ժողովուրդներ չունեին, կամ նոր-նոր էին ստեղծում իրենց կուլտուրաները, հայ ժողովուրդը ստեղծել էր արդեն իր գիրն ու գրականությունը, իր հրաշալի ճարտարապետությունը, իր բազմաբովանդակ կուլտուրան ընդհանրապես։ Հայ ժողովրդի կուլտուրան, մանավորապես նրա սքանչելի գրականությունը, որն իրավամբ իր պատվավոր տեղն ունի համաշխարհային գրականության պատմության մեջ, բարձր գնահատության է արժանացել իր ժամանակ առանձին գիտնականների ու գրողների կողմից։ «Մինչդեռ հայերը,—ասում է ռուս նշանավոր բանաստեղծ ու գիտնական Վ. Բրյուսովը,—մեր ողջ աշխարհի ուշադրության ավելի բարձր իրավունք ունեն՝ այն բարձր կուլտուրայով, որ հայ ժողովուրդը մշակել է իր գոյության երկար դարերի ընթացքում և այն բացառիկ հարուստ գրականությամբ, որը կազմում է Հայաստանի թանկարժեք ավանդը մարդկության հանուր գանձարանին»։ Մեր միջնադարյան գրականության, հատկապես պոեզիայի մասին խոսելիս, Վ. Բրյուսովը տվել է նրան համամարդկային նշանակություն։ Այս տեսակետից զարմանալի չէ, որ նույն Վ. Բրյուսովը խնդիր է դնում, որ «հայ պոեզիային ծանոթանալը պետք է պարտադիր լինի յուրաքանչյուր կրթված մարդու համար, ինչպես պարտադիր է նրա համար հույն ողբերգակներին, Դանթեի «Կատակերգությանը», Շեքսպիրի դրամաներին, Վիկտոր Հյուգոյի պոեմներին ծանոթ լինելը»։

Հայ ժողովրդի ստեղծած այդ բարձր գրականության հիմնական մոտիվը՝ հայրենիքի գաղափարն է։ Եվ դա միանգամայն բնական է. դարեր շարունակ հեծելով օտարի լծի տակ, զրկված լինելով մարդու տարրական ազատություններից, կյանքի և գույքի ապահովությունից, թափառելով երկրե երկիր, հայ ժողովուրդը միշտ երազել ու տենչել է իր հայրենիքի ազատությունն ու անկախությունը, իր հայրենի տան ապահովությունը։ Նրա այդ տրամադրությունների փայլուն ապացույցն է հանդիսանում հազարամյակների ընթացքում ստեղծած իր գրականությունը։ «Հայրենիքի երգը,— ասում է Վ. Տերյանը,— հնչել է մեզանում առավել կամ պակաս ուժեղ Եղիշեից և Խորենացուց սկսած մինչև մեր օրերը։ Այդ գաղափարը կարմիր թելի նման անցնում է մեր գրականության միջով սկզբից մինչև մեր օրերը»։ Կամ ինչպես մեր մեծ բանաստեղծ Ա. Իսահակյանն է ասում՝ «մեր գրականության հավերժ շողշողացող բովանդակությունն է եղել ազատության անշեջ ծարավը, պայքարը, հայրենասիրությունը և մարդկային արժանապատվության հարգանքը»։

Մեր գրողները սիրել են մեր հայրենիքը, նրա հոյակապ կուլտուրան և, իրենց ստեղծագործությունների մեջ արտացոլելով հայ ժողովրդի հերոսական պայքարը, նրա տանջանքներն ու հաղթանակները, նրա անցյալի փառքն ու պարծանքը, նրա բաղձանքները ազատության, անկախ հայրենիքի նկատմամբ, դրանով իսկ նպաստել, օժանդակել են հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին՝ ընդդեմ օտար բռնակալների ու կեղեքիչների։ Յուրաքանչյուր անգամ, երբ վտանգ է սպառնացել հայ ժողովրդին, մեր գրականությունը ոգևորել է նրան իր հերոսական պայքարի ընթացքում, նա մի զորություն է եղել, որ մղել է հայ ժողովրդին «դեպի հերոսական մարտիրոսություն, դեպի աներևակայելի լարում հոգեկան ու նյութավոր էներգիայի» (Վ. Տերյան)։

Մեր օրերում հայ ժողովուրդը տեսավ իր դարավոր բաղձանքների իրականացումը։ Հայաստանում սովետական իշխանության հաստատումով նա ձեռք բերեց իր ըղձալի անկախությունն ու ազատությունը։ Սակայն թշնամին ձեռք բարձրացրեց Սովետական Միության վրա և սպառնում էր վերջ տալու ինչպես մեր, նույնպես և մեր Միության մյուս եղբայրական ժողովուրդների ազատությանը, որպիսին ձեռք է բերվել Հոկտեմբերյան Սո-

ցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ։ Մենք ապրում էինք պատմության մեջ չտեսնված դաժան պատերազմի օրեր։ Եվ ինչպես միշտ, պատերազմի այդ օրերին նույնպես մեր գրականությունը զորավիգ էր հանդիսանում հայ ժողովրդին՝ մղվող այդ ազատագրական պայքարում, նա ոգեշնչում էր մեր մասսաներին կատաղի պայքար մղելու վայրագ թշնամու՝ գերմանա-ֆաշիստական բանդաների դեմ։

Սովետական Միության ժողովուրդները ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ հաղթանակով դուրս եկան պատմության մեջ օրինակը չունեցող այդ պատերազմից։ Ազատագրական այդ ընդհանուր պայքարում հայ ժողովուրդը իր ակտիվ մասնակցությունը ցուցաբերեց և քիչ չէին նրա այն հերոս զավակների անունները, որոնք անօրինակ սխրագործություններով անմահացրին իրենց՝ Հայրենական այդ մեծ պատերազմում։ Կարմիր բանակի հուժկու հարվածների տակ վերջնականապես ջախջախվեց բոլոր ազատասեր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի ոխերիմ թշնամի՝ գերմանական ֆաշիզմը։ Երկրի երեսից ջնջվեց քսաներորդ դարի այդ բարբարոսների անունը, բարբարոսների՝ որոնց հայ ժողովուրդը շատ է հանդիպել իր հերոսական պատմության ընթացքում։

Այս ժողովածուի մեջ զետեղված են մեր գրողների միայն արձակ ստեղծագործություններից (ասույթներ և հատվածներ մեր հայրենիքի մասին*)։ Ժողովածուն չի ընդգրկում բոլոր հայ գրողներին, ինչպես նաև հայրենիքի, մեր գրականության ու կուլտուրայի վերաբերյալ նրանց բոլոր ասույթները։ Նրա մեջ ընդգրկված են մեր նախասովետական շրջանի գրողները (այն էլ ոչ բոլորը), նկատի ունենալով, որ նրանց հայրենասիրական ասույթներին մեր լայն մասսաները համեմատաբար ավելի քիչ են ծանոթ։ Ժողովածուի նպատակն է տալ մեր մասսայական ընթերցողի ձեռքը մի հրատարակություն, որով նա կարողանա մոտավոր ծանոթություն կազմել, թե ինչ են ասել նախասովետական շրջանի մեր

---

*) Մեր գրողների չափածո ստեղծագործությունները հայրենիքի մասին, Հայպետհրատը լույս է ընծայել առանձին գրքով հետևյալ վերնագրի տակ՝ «Հայրենիքի հետ»։ Կազմեցին՝ Ա. Ինճիկյան, Հ. Մուրադյան։ 1942 թ.

գրողները հայրենիքի, նրա հերոսական անցյալի, մեր կուլտուրայի ու գրականության մասին և ընդհանրապես այն մասին՝ թե ինչպիսի ժառանգության համար է, որ մենք պայքարել և պայքարում ենք թշնամու դեմ։

Մեր գրողների հայրենասիրական այդ ասույթները ավելի քան համապատասխան են ներկա մեր օրերին. ինչպես «Պրավդան» է գրում՝ «սիրել իր մեծ, ազատ հայրենիքը—նշանակում է գիտենալ նրան, հետաքրքրվել նրա անցյալով, պարծենալ նրա պայծառ, հերոսական էջերով և ատել նրան ճնշողներին, տանջողներին»։

Ա. ԲԱԲԱՅԱՆ

24 սեպտ. 1945 թ.
Երևան

Հայրենասիրությունը ամենախոր զգացմունքներից մեկն է, ամրացված դարերով ու հազարամյակներով:

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Դավիթ ելավ, թռավ վեր իր ձիուն,
Աստծու անունն տվեց,
Դարձավ, առավ խաթրը քաղքցոց,
Դարձավ, առավ խաթրը գեղացոց,
Առավ Դավիթ խաթրը մարդ ու կնկտոց, ասաց.
— Աղբերնե՛ր, քուրե՛ր, դուք մի վախենաք
Աստծու կամքով կերթամ ես կռիվ.
Օ՜ քուրեր, դուք գացե՛ք բարով,
Դուք ինձի քուրություն եք արե.
Օ՜ մերեր, դուք գացե՛ք բարով,
Դուք ինձի մերությո՛ւն եք արե.
Բարի՛, դրկիցներ, դուք կացե՛ք բարով,
Դուք կացե՛ք բարով մեծ ու պստիկով.
Իմ դուռ-դրկիցներ, ձեր երես չա՛տ եմ թռեր,
Ինձ հալա՛լ արեք:
Բարի տանտիկիննե՛ր, ինչ հա՛ց կը թխեք,
Դավթի անուն հիշեցեք:
Ջահելնե՛ր, դուք էլ, ինչ որ քեֆ կանեք,—
Դավթի անո՛ւն հիշեցեք:
Իմ քուրե՛ր, մերե՛ր, իմ յավ դրկիցներ,
Մնացե՛ք բարով:

Ասաց, քշեց, գնաց Մըսրա Մելիքի դեմ.
Տեսավ՝ երկնուց աստղին հաշիվ կար,
Էնոնց վրաններին հաշիվ չը կար,
Կայնեց բարձր սարի վերա,

Տեսավ՝ որ զորք քանց ծովու ավազ շատ է:
Գլուխ թափ էտու, ասաց.
«Տեր աստված, ինչպես տերթամ կռիվ,
Թշնամք շա՛տ է մեծ թագավորին:
Էնոնք ըլեն գարնան մատղաշ գառներ,
Ես ըլեմ անոթի գել՝
Չե՛մ կարնա էնոնց խեղդի.
Էդ վրաններ ըլեն դեզեր, ես ընեմ կրակ,
Չե՛մ կարնա ես էդոնց վառի:
Էդոնք ընեն մոխիր, ես ընեմ քամի՝
Չեմ կարնա էնոնք ահլեց վերցուցի»:

Գնաց, հասավ Մըսրա Մելիքին, ասաց.
— Մըսրա՛ Մելիք, էն դեր ինձ խաբեցիր,
Մըկա էլ ի՞նչ ա՛նես:
Մելիք տեսավ՝
Դավիթ դրեր էր ձեռ գուրզին:
Ահից դողաց, ասաց:
— Դավի՛թ ջան, դե արի՛, նստի՛:
— Ասաց.— Ես չե՛մ նստի. կռիվ անենք:
Մըսրա Մելիք հրաման ավեց.—
Բյահլան ձին դուրս բերին:
Հագավ չորեր, կապեց զենքեր,
Նստեց իր ձին, գնաց մեյդան:
Ըսկսեցին մեջ մեյդանին էրթալ ու գալ:
Մըսրա Մելիք ասաց.
— Դավի՛թ, կռիվ զուռվե՞ն անենք, թե հերթով:
Դավիթ ասաց— Ինչպես քո ջան կուզի:
Մըսրա Մելիք ասաց.
— Կուզեմ հերթո՛վ անենք.
Իրեք զարբ մեկ զարկի,
Իրեք զարբ մեկէլ զարկի:
Առաջ ո՞վ տի զարկի:
Դավիթ ասաց.— Առաջ դո՛ւ զարկ,
Տարիքով մեծ դո՛ւն ես:

Դավիթ ձիուց էկավ տակ·
Գնաց, կանգնեց մեջ դաշտին։
Ասաց․— Մըսրա Մելիք, քո զարբըր զարկ։
Մըսրա Մելիք իր գուրզ առավ։
Քըշեց, գնաց մինչև Ցարկին·
Իրեք ավուր ճամբա՛ անցավ,
Քըշեց, էկավ հասավ Դավթին,
Գո՛ւրզ մի զարկեց Դավթին։
Ինչպես չո՛ւն մի ոռնա՝ գետին պոռթեց·
Ինչպես քառասուն ջուխտ գոմեշնե՛ր լծես,
Գութան վարես՝ գետին պոռթա,
Թոզ ու դուման երկիր-երկինք բռնեց,
Օր ու գիշեր էդ թոզ չիջավ գետին։
Մելիք ասաց․— Է՛, Դավիթ հող էիր,
Հող դարձուցի։
Դավիթն ասաց․— Մելիք, դեռ ես կենդանի՛ եմ։
Էդ մեկ, մե՛կ էլ զարկի։
Մելիքն ասաց․— Հա՞, անավեր,
Էս մեկ անգամ ճամբաս մո՛տ էր·
Թափ չը մնա՛ց մեջ իմ գուրզին։
Ասաց, դարձավ, մեկ է՛լ քշեց։

Գընաց հասավ չոր Դիարբեքիր,
Ու էնտեղից քըշեց, էկավ Դավթի վերա։
Էկավ՝ իր գուրզ թալեց Դավթին։
Ինչպես առյուծ ոռնա՝ գետին պոռթեց,
Ինչպես հեղեղ ավերի, գետին պոռթեց։
Թոզ ու դուման երկիր-երկինք բռնեց,
Արեգական երեսն առավ։
Երկու գիշեր ու երկու օր էդ թոզ կանգնեց
Դավթի վերա։
Մելիք ասաց․— Դավի՛թ, հալա կենդանի՞ ես։
Հող էիր, քեզ հող դարձուցի։
Դավիթ ասաց․— Մելի՛ք, կենդանի՛ եմ·
Էսիկ էրկու, մեկ էլ զարկի։

— Հա՛յ-հա՛յ.— ասաց Մելիք,—
Իմ ձիու մանգղիլ քի՛չ էր:
Թափ չը մնաց մեջ իմ գուրզին:

Նորեն Մելիք դարձավ, գընաց,
Քըշեց հասավ Մըսըրա քաղաք:
Ու Մըսըրից քըշեց, էկավ Դավթի վերա:
Էկավ, գուրզ մ՚էլ զարկեց:
Ինչպես գարնան ամպ գոռգոռա՝ երկիր պոռթեց,
Ինչպես երկրաշա՛րժ մի զարկի՝ երկիր պոռթեց:
Թոզ ու դուման երկիր-երկինք բռնեց,
Արեգական էրեսն առավ.
Իրեք ցերեկ, իրեք գիշեր
Էդ թոզ կանգնեց Դավթի վերան:
Մելիք ասաց.— Մեռա՛վ Դավիթ.
Հող էր Դավիթ, հող դարձուցի:
Ինչ թոզ-դուման գետնեն էլավ,
Դավիթ, իր ձին, էլան, իրենց տեղ կանգնեցին:

Դավիթ ասաց.— Մելիք դու, քո զարբեր պրծար:
Հերթ ի՛նձ հասավ:
— Է՛յ,— ասաց,—Տնավե՛ր, մեկ է՛լ էրթամ:
— Չէ, չէ՛,— ասաց,— դու ո՞ւր տ՚երթաս:
Հերթ ի՛մն է. աշխարհ հերթո՞վ է, թե զոռով:
Մելիքի մեր էկավ, ասաց.
— Դավի՛թ, Մելիք քու աղբե՛րն է.
Բերախտություն չանես:
— Հա՛, մարե՛, չե՛մ անե բերախտություն.
Իրեք զարբ տի զարկեմ Մելքին:
Մելիք ասաց.— Դավիթ, քեզնե կը խնդրիմ.
Ցոթ սհաթ ժամանա՛կ տաս ինձ:
Թող ես էրթամ, վրանի տակ պառկեմ,
Դու գաս ու ինձ զարկես:
Ասաց.— Գընա, պառկի,
Մենակ թե ինձ ասա, Մելիք,
Ինչո՞վ զարկեմ, թրո՞վ զարկեմ, թե՞ գուրզո՛վ:

Մելիք իր մոքի մեջ ասաց.
«Ջա՜նըմ, էդ գուրզ որ ինձ զարկի՝
Էդ գուրզին դիմանա՞լ կ՚ըլնի»։
Ասաց.— Դավի՛թ, թրո՛վ զարկի։

Գընաց Մելիք վրանի տակ, ասաց.
— Ես իրեք զարբ Դավթին զարկի,
Դավթին ըսկի բա՛ն մի չ՚եղավ։
Հիմի Դավիթ կըգա, էստեղ ինձ կըզարկի։
Մելիքի մեր ասաց.
— Մելի՛ք, արի մտի մեջ էդ հորին։
Մելիք մտավ մեջ հորին։
Քառասուն գոմշու կաշի բերին քաշին վրան,
Քառասուն ջաղացի քար դրին վրան,
Վերմակ քաշին քարի վրան։
Մելիք մեջ էն հորին հանգիստ նստեց, ասաց.
— Հիմի հերթ Դավթի՛նն է։
Դավիթ գիտի՛, թե էն ինչ արեր է.
Կըգա, կը տեսնա ջաղացի քար,—
Չէ՞ որ հորու բերնին դրած էսպես բարձրացեր է—
Վերմակ քաշած քարի վրա։
Գիտի, որ էնքան Մելիքի ջանդաք չի՛։
Ապա Մելիքի մեր էնտեղ կայնուկ է։
Դավիթ չ՚ասաց՝ զՄելիք հանեք դուրս, տեսնեմ։
Հեծավ Դավիթ Քուռկիկ Ջալալին,
Գնաց հասավ չուր Ծովասար.
Քաշեց իր Թուր Կեծակին,
Քըշեց իր Քուռկիկ Ջալալին,
Էկավ, որ տի զարկեր՝
Իսմիլ Խաթուն իրեն ծծեր հանեց,
Դավթի առաջ վազեց, ասաց.
— Դավի՛թ, քաղցր ծիծ եմ տվե քեզի,
Դու իմ կաթի խաթեր էդ զարկ ինձ բախշի։
Դավիթ ասաց.— Մարե, ինչի՞ դու չուր հիմիկ,
Մելքի զարկ կգար մեջ իմ գլխուն,
Մեկ մ՚էլ չ՚ասիր՝ Մելի՛ք, զարկ մի ինձի՛ բախշի։

Դավիթ իր Թուր իջեցուց, տարավ, բերեց,
Բարձրացուց էդ Թուր, համբուրեց,
Դրեց ճակատին, ասաց։— Մարե՛,
Էս մեկ զարկ քո՛ խաթեր։
Մեկ էլ դարձավ, գնաց Դավիթ,
Իր ձին քշեց էկավ. էկավ, որ տի զարկեր՝
Մելիքի քուր վազեց էնոր առաջ, ասաց.
— Դավիթ, դու որ պատիկ էիր
Ես քեզ չա՛տ եմ գրկեր, պահեր, խաղցուցեր եմ,
Էդա մեկ Թուրն էլ ինձ բախշի։
Դավիթ էդ Թուր իջեցուց, տարավ բերեց,
Բարձրացուց էդ Թուր, համբուրեց,
Դրեց իր ճակտին, ասաց.
— Էս մեկ զարկ էլ քո՛ խաթեր։
Մընաց մե՛կ զարկ, մեկ աստված, մեկ ես—
Յա կըսպանեմ, յա կը թողում։

Դավիթ դարձավ
Գընաց, հասավ Սասնա սարեր,
Քըշեց, էկավ Մելիքի վերա։
Որ տի հաներ հորի բերան՝
Իմիլ Խաթուն իր հետ բերած կնիկներուն,
Էդա ապալ աղջիկներուն,
Էդա չավար քաղաղներուն ասաց.
— Շո՛ւտ, չա՛վար քաշեք,
— Շո՛ւտ, փողե՛ր փչեք,
— Շո՛ւտ թմբո՛ւկ զարկեք,
— Շո՛ւտ, ձեր քաֆկիրնե՛ր բռնեցեք ձեր ձեռ,
— Խաղացե՛ք, խորո՛տ խաղացեք,
— Դավիթ որ գա՝ ապալ տըղա է,
Կ՚իրիչկի ձեզի, զարկ Թո՛ւյ կըզարկի,
Մեյիք չի՛ սպանի։
Աղջիկներ էյան,
Չավա՛ր քաշեցին,
Փողե՛ր փչեցին,
Թմբուկնե՛ր զարկին,

Էլան, խաղ կանեն։
Ապա Դավիթ գիտի՛.
— Էդա ինձի՛ համար կանեն,— ասաց,—
Կ'ուզեն ինձի շըշկըռացնեն։
Կանչեց, ասաց.
— Յա՜ Մարութա Բարձրիկ Աստվածածին,
Յա Խաչ Պատերազմին, ինչ վեր իմ աջ թևին։
Կանչեց զարկեց Թուր Կեծակին։

Կըտրե՛ց քառսուն ջաղացի քար.
Կըտրե՛ց քառսուն գոմշու կաշին,
Կըտրեց հըրեշ Մըսրա Մելքին,
Կըտրեց ճակտից, ոտքերաց դուրս էլավ,
Ու յոթ գազ էլ մտավ գետին,
Գնաց հասավ Սև ջուր։
Թե հրեշտակ իր թև չ'առներ առջև,
Սև ջուր տ'էլներ աշխարք առներ։
Մըսրա Մելիք կանչեց, ասաց.
— Դավիթ, ես էստեղ եմ,
Մեկ էլ զարկի։
Դավիթ ասաց.— Մըսրա Մելիք, քեզի թա'փ տուր։
Մըսրա Մելիք, զինք թա'փ ետուր։
Մեկ կտոր ընկավ էստեղ, մեկել՝ էնտեղ։
Մըսրա Մելիք խատա'վ։

Դավիթ ձիու գլուխ շըջեց,
Էլավ, գընաց մեջ զորքերին.
Ինչ զորք զորական մնացե,
Կանչեց, հրամայեց, ասաց.
— Ամենիդ իրավունք կըտամ.
Ուր տեղեն էկեր եք՝ էլեք գնացեք ձեր տեղ
Էլեք, գնացեք ու ձեր տներ նստեք,
Դուք ինձ համար աղո'թք արեք,
Իմ հորն ու մորն էլ օղորմի' տվեք.
Հանդա'րտ կացեք,
Մեկ էլ չելնեք ու գաք վեր Սասնա։

Մեկ էլ որ զենք առնեք մեր դեմ
Թե որ դուք կռվի գաք վեր մեզ՝
Քառսուն գազ խոր հորում ըլնեք,
Թե ջաղացի ջոջ քարի տակ,
Տ'էլնի ձեր դեմ Սասնա Դավիթ,
Տ'էլնի ձեր դեմ Թուր Կեծակին։

«Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոսից։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Քաջերի սերունդները քաջերն են։
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհումն էլ քաջության շատ գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի։

«Հայոց պատմություն» գրքից, 5-րդ դար։

Ինչպես որ ինձ, պատմողիս, սիրելի է հավատով պատմել այս պատմության մեջ բուն և առաջին Տիգրանի և նրա գործերի մասին, նույնպես սիրելի պետք է լինեն ընթերցողին ինչպես այդ մարդն ու նրա գործերը, այնպես էլ նրան վերաբերյալ պատմությունները։ Ուստի ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել—Հայկ, Արամ, Տիգրան. որովհետև քաջերի սերունդները քաջերն են, իսկ նրանց միջև եղածներին ով ինչպես ուզում է՝ թող կոչի։

«Հայոց պատմություն» գրքից, 5-րդ դար։

Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկնավետ, խիստ գանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով։ Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք

П 30496

են բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների վրա տիրապետելու: Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնավորության դեմ այն ժամանակ, երբ մարդկային ազգը սփռվում տարածվում էր բոլոր երկրի լայնության վրա, բազմամբոխ հսկաների, անչափ կատաղիների և ուժավորների մեջ: Որովհետև այս ժամանակ ամեն մի մարդ, խելագարված, սուրը ընկերի կողն էր կոխում, ձգտում էին մեկը մյուսի վրա տիրելու, և Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և բոլոր երկիրը գրավել: Որին Հայկը չկամենալով հնազանդել, Բաբելոնում Արամանյակ որդին ծնելուց հետո. չվեց գնաց Արարադի երկիրը, որ գտնվում է հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, որ զորավոր մարդիկ էին, թվով մոտ երեքհարյուր հոգի, և ուրիշ ընդոծիններով, նրան հարած եկվորներով և բոլոր տունուտեղով: Գնում բնակվում է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց ցրվածներից: Հայկը նրանց իրեն հնազանդեցնելով՝ այնտեղ կալվածում շինում է բնակության տուն և տալիս է ժառանգություն Կադմոսին, Արամանյակի որդուն:

Իսկ ինքը, ասում է Մար Աբասը, իր մնացած մարդկանցով և տունուտեղով չարժվում է դեպի հյուսիսային արևմուտք և գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք...

Տիտանյան Բելը իր թագավորությունն ամենքի վրա հաստատեց, ապա իր որդիներից մեկին հավատարիմ մարդկանց հետ ուղարկում է հյուսիսի կողմը Հայկի մոտ, որ նա հնազանդության գա և խաղաղությամբ ապրի: «Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, ասում է, սակայն տաքացրո՛ւ և մեղմացրո՛ւ քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով խաղաղ ապրիր՝ որտեղ որ կհաճես իմ երկրում բնակության տեղ ընտրել»: Հայկը

Բելի պատգամավորներին հետ է դարձնում խստությամբ պատասխանելով: Ուղարկված պատգամավորը վերադառնում է Բաբելոն:

Այն ժամանակ Տիտանյան Բելը զորք է ժողովում նրա դեմ և հետևակ զորքի մեծ բազմությամբ գալիս հասնում է հյուսիս, Արարադի երկիրը, Կադմոսի տան մոտ: Կադմոսը փախուստ է տալիս Հայկի մոտ, իրենից առաջ արագագնաց մարդիկ ուղարկելով: «Գիտցած եղիր, ասում է, ո՛վ մեծդ դյուցազունների մեջ, որ Բելը դիմում գալիս է քո վրա հավերժական քաջերով և երկնադեղ հասակով մրցող հսկաներով: Եվ ես լսելով, որ նա մոտեցել է իմ տանը՝ փախա և ահա տագնապած գալիս եմ քեզ մոտ: Ուրեմն շտապիր մտածել, ինչ որ անելու ես»:

Իսկ Բելը հանդուգն ու անձոռնի ամբոխի զորությամբ, ինչպես մի հեղեղ, որ գահավայրից ներքև է վիժում, շտապում էր հասնել Հայկի բնակության սահմանները, վստահ լինելով զորավոր մարդկանց սրտերի և անձերի վրա: Այս ժամանակ ուշիմ և խոհեմ հսկան, խիստ գանգուր մազերով, վառվռուն աչքերով, շտապում հավաքում է իր որդիներին և թոռներին, քաջ և աղեղնավոր մարդկանց, թվով շատ նվազ, և ուրիշ մարդկանց, որ ձեռքի տակ ուներ, գնում հասնում է մի ծովակի ափ, որի ջրերն աղի են և մանր ձկներ են պարունակում: Եվ իր զորքերը կանչելով՝ ասում է նրանց. «Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի խուռն բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի և մենք հաղթություն տանենք»:

Եվ ամբողջ ասպարեզներ դեպի առաջ անցնելով՝ հասնում են բարձրագույն լեռների միջև մի դաշտաձև տեղ: Եվ ջրերի հոսանքի աջ կողմում բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գլուխները վեր

բարձրացնելով տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան վազվզում էին երկրի երեսի վրա, իսկ ինքը, Բելը, մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր Ջրի ձախ կողմում մի բլրակի վրա՝ իբրև դիտանոցում... Հայկը տեսնելով պինդ սպառազինված Տիտանյանին և նրա աջ և ձախ կողմի ընտիր մարդկանց՝ կանգնեցնում է Արամանյակին երկու եղբայրներով աջ կողմը, Կադմոսին իր ուրիշ երկու որդիներով ձախ կողմը, որովհետև աղեղ և սուր գործածելու մեջ կորովի մարդիկ էին, ինքը կանգնեց առջևից և մյուս բազմությունը կանգնեցրեց իր հետևում, դասավորեց մոտավորապես եռանկյունի ձևով և հանդարտ առաջ շարժվեց:

Երբ երկու կողմի հսկաներն իրար մոտ հասան, երկրի վրա ահագին դղրդյուն բարձրացրին իրենց գրոհներով և իրար վրա ահ ու սարսափ էին գցում իրենց հարձակումների ձևերով: Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ սրի բերանի հանդիպելով թավալվում ընկնում էին գետին, և կռիվն անորոշ էր մնում, երկու կողմերն էլ անպարտելի մնալով: Այս անսպասելի տարակուսական դրվածքը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց, և հետ քաշվելով սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր, որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչև բոլոր զորքը հասնի, որպեսզի երկրորդ անգամ ճակատամարտ սարքի: Աղեղնավոր Հայկը այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, պինդ քաշում է լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը չեչտակի թափ անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում. այս կերպով՝ ճոխացած Տիտանյանը կործանվում, ընկնում է գետին և շունչը փչում է: Իսկ ամբոխն այս քաջության ահագին գործը տեսնելով փախչում է, ամեն մեկը իր երեսը դարձած կողմը:

«Հայոց պատմություն»
գրքից, 5-րդ դար:

Արամի մասին պատմում են, թե շատ քաջ գործեր է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից...

Սա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով, ինչպես ցույց է տալիս նույն պատմագիրը, լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգեր ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա:

Այս Արամը Նինոսի Ասորեստանին և Նինվեին տիրելուց քիչ տարիներ առաջ, շրջակա ազգերից նեղվելով՝ ժողովում է ընտանի քաջ և աղեղնավոր մարդկանց բազմություն, մոտ հինգ բյուր մարդ, վարժ նիզակավոր, շատ ուժեղ երիտասարդներ, հաջողակ ձեռքերով, սրտոտ և պատերազմելու հմուտ: Նա պատահում է Հայոց սահմաններին մոտ Մեդացոց երիտասարդներին, որոնց առաջնորդում էր մի ոմն Նյուքար Մադես, մի հպարտ և պատերազմասեր մարդ, ինչպես ցույց է տալիս նույն պատմագիրը: Որ մի անգամ քուշանների նման ասպատակելով ձիերի սմբակներով ոտնակոխ արավ Հայաստանի սահմանները և երկու տարի իրեն ծառայեցրեց: Արամը հանկարծորեն նրա վրա հարձակվելով արևը ծագելուց առաջ՝ կոտորեց նրա բազմաթիվ ամբոխը և իրեն՝ Նյուքարին էլ, որ Մադես էր կոչվում ձերբակալ անելով բերեց Արմավիր և այնտեղ պարսպի աշտարակի ծայրին հրամայեց պատին վարսել, երկաթե ցից մխելով ճակատի մեջ, ի ցույց դնելով անցորդներին և բոլոր եկվորներին, իսկ նրա աշխարհը, մինչև Զարասպ կոչված լեռը, իրեն ծառայեցնելով հարկատու դարձրեց մինչև Նինոսի թագավորելն Ասորեստանի և Նինվեի վրա... Նույն այս Արամը, արևելցիների հետ ճակատամարտը վերջացնելուց հետո, նույն զորությամբ շարժվում է Ասորեստանի կողմերը. այնտեղ ևս գտնում է մի ուրիշ ապականիչ իր երկրի, Բարշամ անունով, հսկաների ցեղից, չորս բյուր սպառազեն հետևակներով և հինգ հազար

հեծյալներով. նա խիստ հարկերով սաստիկ նեղելով անապատ էր դարձրել բոլոր շրջակայքը: Արամը պատերազմով նրան ընդհարվելով՝ հալածում է նրան Կորդուքի միջով մինչև Ասորեստանի դաշտը, շատերին կոտորելով. Բարշամն էլ նրա զինակիցների առաջը պատահելով սպանվում է: Այս Բարշամին ասորիները երկար ժամանակ աստվածացրած պաշտում էին նրա բազմաթիվ արիական գործերի պատճառով: Իսկ Ասորեստանի դաշտերի մեծ մասը Արամ հարկատու ծառայության մեջ պահեց երկար ժամանակ:

Իսկ ինչ քաջության գործ որ նա կատարեց արևմտյան կողմը Տիտանյանների հետ, մենք դեռ պետք է պատմենք: Սա դեպի արևմուտք շարժվելով, առաջինի վրա չորս բյուր հետևակ և երկու հազար հեծյալ ավելացնելով, հասնում է Կապադովկացոց կողմերը, մի տեղ, որ այժմ Կեսարիա է կոչվում: Որովհետև նա արևելյան և հարավային ազգերը նվաճելով և հանձնելով այս երկու ցեղերին, արևելքը Սիսակյաններին և Ասորեստանի կողմերը Կադմոսի տան հաջորդներին՝ այլևս ոչ մի տեղից շփոթության կասկած չուներ՝ ուստի երկար ժամանակ մնաց արևմուտքում: Այստեղ նրան պատերազմով հանդիպում է Տիտանյան Պայապիս Քաաղյան, որ բռնացել գրավել էր տարածությունը երկու մեծ ծովերի միջև, այսինքն Պոնտոսի և Օվկիանոսի: Արամը նրան ընդհարվելով վանում և փախցնում է մի կղզի ասիական ծովում, այնտեղ աշխարհի պահպանության համար թողնելով Մշակ անունով մեկին իր ցեղից և մի բյուր զորք՝ ինքը վերադառնում է Հայաստան:

Բայց այս աշխարհի բնակիչներին հրամայում է սովորել և խոսել հայերեն, այս պատճառով հույները մինչև այսօր այդ երկրամասը կոչում են Պռոտին Արմենիան...

Սա [Արամը,— Ա. Բ.] այսպես հզոր և անվանի դառնալով՝ նրա անունով մինչև այսօր մեր աշխարհն անվանում են մեր շրջակա ազգերը, ինչպես ամենքին

հայտնի է: Սա ուրիշ շատ քաջության գործեր էլ ունի կատարած, բայց ինչքան որ ասեցինք՝ բավական ենք համարում:

«Հայոց պատմություն» գրքից, 5-րդ դար:

Անցնենք այսուհետև գրելու Տիգրանի և նրա գործերի մասին: Որովհետև սա մեր թագավորներից ամենահզորն և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ: Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով իրեն հնազանդեցրեց, և մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներիս ցանկալի թե՛ ինքը և թե՛ իր ժամանակը:

Եվ ո՞ր իսկական մարդը, որ համակրում է արիական բարքի և խոհականության, չի պարծենա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա նման մարդ լինել: Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ օտարների լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ. մթերքներ ոսկու և արծաթի, և պատվական քարերի և զգեստների և զանազան գույների և գործվածքների՝ տղամարդկանց և կանանց համար՝ առհասարակ բազմացրեց, որոնցով տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկներն այն ժամանակի համեմատ դյուցազուններին էին նմանվում: Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողներն հաջող աղեղնավորներ, կոպալներով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով. մերկերը պատսպարվեցին վահաններով և երկաթե զգեստներով: Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլմունքը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու: Նա խաղաղու-

թյուն և շենություն բերեց, բոլորին լցրեց յուղով և մեղրով:

Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր աշխարհին այս խաղաղաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը, գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր, որի մասին մեր հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր հատկություններով, որ պիտանի են մարդուն: Եվ այս գրքում ի՞նչ կա ինձ ավելի սիրելի, քան սրա մասին եղած գովեստներն ու պատմությունը երկարել: Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով. չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը:

«Հայոց պատմություն»
գրքից, 5-րդ գլ.:

Իսկ Տրդատ թագավորը Հայաստանի բոլոր զորքերով Գարգարացոց դաշտն իջնելով՝ հանդիպում է հյուսիսականներին և ճակատամարտ է տալիս: Երբ երկու կողմերն իրար են խառնվում, նա հսկայի նման հարձակվելով, թշնամիների բազմությունը երկուսի է ճեղքում: Չեմ կարող նկարագրել նրա ձեռքի արագությունը, թե ինչպես անհամար մարդիկ նրանից զարկվում՝ թավալվում գետին էին ընկնում, ինչպես հմուտ ձկնորսի ձկներով լիքը ցանցից ձկները գետին են թափվում ու վխտում հողի երեսին: Բասիլների թագավորն այս տեսնելով՝ մոտ է գալիս Հայոց թագավորին, հանում է ձիու վրայից ջլերից հյուսված կաշեպատ պարանը և հետևի կողմից ուժեղապես նետելով, հաջողու-

թյամբ գցում է նրա ձախ ուսից մինչև աջ կողմի ա-նութը, որովհետև այդ միջոցին Տրդատը ձեռքը բարձրացրած էր՝ սրով մեկին խփելու համար. Նա կրում էր զրահ պինդ պահպանակներով, որի վրա նետերը նույնիսկ գիծ չէին թողնում: Բասիլների թագավորը չկարողանալով հսկային տեղից շարժել ձեռքով քաշելով՝ պարանը իր ձիու յանջին գցեց, բայց չկարողացավ այնքան շուտ մտրակել ձին, որքան որ շուտ հսկան անապարելով ձախ ձեռքով բռնեց պարանը և սաստիկ ուժով ցնցելով դեպի ինքը քաշեց և երկայրի որի հոմջող հարվածով կորեց կես արավ մարդուն և նրա հետ ձիու պարանոցն ու գլուխը:

Իսկ բոլոր զորքերը տեսնելով, թե ինչպես իրենց թագավորն ու զորավոր կռվողը միջակտուր եղավ այնպիսի ահավոր բազուկից, փախուստի դիմեցին. Տրդատը նրանց հետամուտ լինելով հալածեց մինչև Հոնաց աշխարհը: Եվ թեպետ իր զորքին էլ փոքր հարված հասավ և շատ մեծամեծ մարդիկ ընկան, և մեռավ Արտավազդ Մանդակունին՝ բոլոր Հայոց սպարապետը, բայց Տրդատը հայրենական կարգի համաձայն նրանցից պատանդներ առավ ու հետ դարձավ: Այս կերպով բոլոր հյուսիսը միաբանելով՝ շատ զորք այնտեղից հանելով բանակ է կազմում և դիմում է Պարսից աշխարհը, Արտաշիրի որդի Շապուհի վրա, իր մարդկանցից չորս զորավար նշանակելով—Վրաց առաջնորդ Միհրանին, նրան փառահանալով քրիստոնեական հավատի պատճառով, Բագարատ ասպետին, Ռշտունյաց Մանաճիհր նահապետին և Ամատունյաց Վահան նահապետին...

Բայց Տրդատը թեպետ հաղթություն էր տարել, միայն թե իր զորքի կոտորվելու և շատ նախարարների սպանվելու պատճառով չվստահացավ մենակ իր ուժերով Շապուհի հետ կռվելու, մինչև որ հասավ Հռովմայեցիների զորքերի բազմությունը, որոնք Ասորեստանի վրայով հարձակվեցին, Շապուհին փախստական

դարձրին և ավերեցին ամբողջ երկիրը: Այն ժամանակ Տրդատն էլ բոլոր իշխաններով և իր ձեռքի տակ եղած զորքերով արշավեց Պարսից իշխանության հյուսիսային կողմերը տարեոր ապստամբությամբ... Տրդատը յոթնպարսպյան Եկբատանեն ուրելով՝ թողնում է այնտեղ իր երկրորդին և վերակացուներ և վերադառնում է Հայաստան:

«Հայոց պատմություն» գրքից, 5-րդ դար:

ՓԱՎՍՏՈՍ ԲՅՈՒԶԱՆԴԱՑԻ

... Հողմի կրակի պես էր անցնում նա մեր գնդի միջով, ինչպես բոցը՝ եղեգնի միջով:

ՓԱՎՍՏՈՍ ԲՅՈՒԶԱՆԴԱՑԻ

Այն ժամանակ Պարսից թագավոր Շապուհը ժողովեց յուր անթիվ և անհամար զորքը ինչպես ավազը ծովի ափին, և բազմաթիվ փղեր: Երեք գնդի բաժանելով զորքը, երկու գնդերին զորագլուխ կարգեց Անդիկան և Հազարավուխտ զորավարներին և մի գնդին ինքը թագավորը եղավ զորագլուխ: Եվ հրաման տվեց թագավորը զորքերին՝ երեք տեղից արշավել և մտնել Հայոց աշխարհը: Այս մասին վաղօրոք հայտնված էր Հայոց Արշակ թագավորին և նրա զորավար Վասակին. սրանք ևս երկրից անթիվ անհամար զորք ժողովեցին, որ բազմությանը թիվ չկար: Եվ չնայած, որ շատ արագ գործեցին, բայց և այնպես Պարսից զորքերը արշավում էին Հայոց երկիրը և երեք տեղերից ասպատակում էին:

Արշակ թագավորը յուր զորքը նույնպես բաժանեց երեք գնդի. մի գունդը տվեց Վասակ սպարապետին, երկրորդ գունդը նրա եղբայր Բագոսին, որն անչափ քաջ էր արիության գործերի մեջ, բայց տկար՝ իմաստության մեջ, մյուս գունդը ինքը թագավորը վերցրեց: Եվ տվեց հրաման առաջ շարժվելու և դեմ հանդիման դուրս գալու Պարսից զորքերին: Ապա եկավ

Վասակ սպարապետը, գտավ Պարսից Հազարավուխտի զորքերի առաջապահ զորամասերին, որոնք արդեն հասել էին Վանանդ գավառի Երևյալ կոչված վայրը. և մարտական պատերազմով հարվածեց Պարսից զորքերին։ Պարսից զորքը պարտություն մատնվելով փախուստի դիմեց և ցիրուցան եղավ։ Վասակ զորավարը վրա հասնելով հարվածում էր Պարսից զորքերին նրանց բոլոր թաքստոցներում, կենդանի չթողնելով և ոչ մեկին. որոնք թողեցին շատ ավար և բազմաթիվ փղեր։

Նույն ամսի, նույն շաբաթվա նույն օրը հասավ Բագոսը իր զորքերով. գտավ Պարսից երկրորդ զորքի առաջապահներին իրենց Անդիկան զորավարով, որոնք հասել և ամրացել էին Առեստի ձկնորսարանի մոտ։ Պարսից զորքերը շուտ իմացան Բագոսի գալը և պատրաստվեցին Հայոց զորքերի դեմ մարտ մղելու։ Հասավ Բագոսը իր ամբողջ գնդով հարձակվեց Պարսից ճակատի վրա, հարվածեց, կոտորեց Պարսից բոլոր զորքերին և սպանեց նույնիսկ Անդիկանին։ Այս Բագոսը հանդիպեց փղերի գնդին և տեսավ որ փղերից մեկը ճոխ զարդարված էր և կրում էր իր վրա արքունական նշաններ։ Բագոսը ենթադրեց, որ այն փղի վրա ինքը թագավորն է նստած. իջավ ձիուց, հանեց սուրը և հարձակվեց փղի վրա. զենքը վեր պահելով մտավ փղի տակը և սկսեց խոցել նրա փորոտիքը. վայր գցեց նրան իրեն վրա և երկուսն էլ անշնչացան, որովհետև ժամանակ չեղավ, որ փղի տակից դուրս գար։ Այդ ճակատամարտում մեռավ միայն զորավարը Բագոսը, բայց Պարսից զորքերից և ոչ մեկին կենդանի չթողեցին։

Իսկ նույն տարվա, նույն շաբաթվա և նույն օրում, քանզի միևնույն օրը եղան երեք ճակատամարտերն էլ, վրա հասավ Արշակ թագավորը յուր հետ եղած զորքերով. գտավ իրեն Շապուհ թագավորին, որն եկել բանակ էր դրել Բասեն գավառում, Ոսխա անվանված տեղում։ Արքա Արշակը գիշերով հարձակվեց

Պարսից բանակի վրա և սրի մատնեց բոլորին. միայն միաձի Շապուհ Թագավորը մազապուրծ կարողացավ ճողոպրել և փախչել Պարսից աշխարհը: Ապա այն ժամանակ երեք գնդերը հանդիպեցին միմյանց և ավետեցին տարած հաղթությունները: Բացի Բագոսից, որ մեռավ մի ճակատում, ուրիշ ոչ մի կորուստ նրանցից չէր եղել, աստծուց եղավ այս մեծ և հաջող հաղթանակը: Եվ սրանք ասպատակեցին Պարսից կողմերը, հալածեցին պարսիկներին մինչև Խարախան կոչված կողմերը: Ձեռք բերեցին բազմաթիվ գանձեր, զենքեր, զարդեր ու շատ ավար և մեծապես հարստացան:

«Պատմություն Հայոց»
գրքից, 4-րդ դար:

Հայոց երկիրը հիմնիվեր անելու, այրելու և տապալելու համար եկավ հասավ Պարսից զորքերից Հազարավուխտը: Եվ առաջ շարժվելով դեպի Աղձնյաց երկիրը, կամեցավ տարածվել Հայոց երկրում և նրա բոլոր սահմաններում: Սակայն Վասակը տասնըմեկ հազար զորքով նրա դեմ դուրս գալով հարվածեց, ջախջախեց նրան ու զորքի մնացորդներին փախցրեց Պարսից երկիրը. և այնտեղ սպանեց Հազարավուխտին:

«Պատմություն Հայոց»
գրքից, 4-րդ դար:

Ապա Պարսից Շապուհ Թագավորը հրավիրեց իր մոտ կախարդներին, աստղագետներին և մոգերին. խոսեց նրանց հետ և ասաց. «Ես շատ անգամ ցանկացա սիրել Հայոց արքա Արշակին, բայց նա միշտ անարգեց ինձ: Ես խաղաղության ուխտ կնքեցի նրա հետ և նա իրենց քրիստոնեական օրենքներով երդվեց ավետարանի վրա. բայց նա խախտեց իր երդումը: Ես նրան շատ բարիք ցանկացա անել, ինչպես հայրը որդուն կաներ, բայց նա իմ այդ բարիքին չարիքով հատուցեց: Այս երեսուն տարի է, ինչ Արիները [պարսիկները,—Ա. Բ.] պատերազմում են Հայոց Արշակ ար-

քայլ հետ և չի եղել մի տարի, որ նրան հաղթեին: Եվ ահա Արշակը վեր է կացել և իր ոտքով եկել է այստեղ: Բայց եթե իմանայի, թե այսուհետև հավատարիմ կմնա իմ ուխտին մեծ պատիվներով կարձակեի նրան խաղաղությամբ դեպի յուր աշխարհը»:

Իսկ մոգերը պատասխան տվին նրան և ասացին. «Մեզ այսօր արձակիր, վաղը պատասխան կտանք քեզ»: Իսկ հետևյալ օրը այնտեղ եկան ժողովեցին բոլոր մոգերը և աստղագետները և ասացին արքային. «Հիմա որ Հայոց Թագավոր Արշակը եկել է քեզ մոտ ի՞նչպես է խոսում քեզ հետ, կամ ի՞նչ է ասում, կամ ի՞նչպես է պահում իրեն»: Արքան ասաց. «Համարում է իրեն իբրև իմ ծառաներից մեկը, ջանում է իմ ոտի հողը լինել»: Նրանք ասացին. «Արա այն ինչ կասենք քեզ. պահիր դու նրան այստեղ և ուղարկիր դեսպան Հայոց երկիրը և բերել տուր այնտեղից մոտ երկու բեռ Հայաստանի հողից և մի կահույր ջուր: Եվ հրաման տուր սենյակի հատակի կեսը ծածկել Հայաստանից բերված հողով. ապա բռնիր Հայոց Արշակ արքայի ձեռքը և տար նրան նախ այնտեղ, որտեղ տեղական հողն է, և հարցեր տուր նրան: Եվ նորից բռնիր դու նրա ձեռքից և տար նրան հայահատակ՝ թափված հողի վրա. և լսիր նրա խոսքերը. ապա կիմանաս դու՝ թե նա հավատարի՞մ է քո ուխտին և կպահե՞ արդյոք քո դաշինքը, երբ դու նրան արձակես և նա գնա Հայաստան: Իսկ եթե հայ հողի վրա խիստ խոսի, իմացիր որ, այն օրը երբ հասնի Հայոց երկիրը, նույն լեզվով կխոսի քեզ հետ, նույն պատերազմը կնորոգի, նույն ճակատը կտա և նույն թշնամությունը կգրգռի»:

Պարսից Թագավորը երբ այս մոգերից լսեց արագավազ ուղտերով մարդիկ ուղարկեց Հայաստան՝ հողի և ջրի, որ գան և Արշակի վրա կատարեն գուշակություններ: Եվ մի քանի օրից հետո բերին այն, ինչի համար ուղարկել էր: Ապա Շապուհ Թագավորը հրաման տվեց, յուր դահլիճի հատակի կեսը ծածկել Հայաստանից բերված հողով և բերած ջուրը ցանել

վրան․ իսկ մյուս կեսում թողնել էր երկրի հողը։ Բերել տվեց յուր առաջ Հայոց Արշակ արքային, և կողմնակի մարդկանց հրամայեց հեռանալ։ Եվ ինքը Արշակի ձեռքից բռնած ճեմելով շրջում էր։ Եվ դահլիճում երթևեկելով ասաց նրան երբ Պարսից հողի վրա էին ճեմում․ «Ինչո՞ւ դարձար իմ թշնամին Արշակ Հայոց արքա․ չէ որ ես քեզ որդու պես սիրեցի և կամեցա իմ դուստրը կնության տալ քեզ և քեզ իմ որդին դարձնել․ իսկ դու ինձ չլսեցիր և քո կամքով, առանց իմ կամքի եղար ինձ հետ թշնամի․ և ահա ամբողջ երեսուն տարի է պատերազմում ես իմ դեմ»։

Արշակ արքան պատասխանեց․ «Ես մեղավոր և հանցավոր եմ քո առաջ․ ես եկել կոտորել և հաղթել եմ քո թշնամիներին․ և ակնկալում էի քեզանից կենաց պարգև, բայց իմ թշնամիները գայթակղեցրին ինձ, իմ մեջ երկյուղ գցեցին քեզանից և ինձ հեռացրին քեզանից։ Եվ իմ երդումը, որ երդվել էի քեզ՝ հիշեցրին ինձ և ահավասիկ եկա քո առաջ։ Եվ ահա քո ծառան քո ձեռքումն է․ ինչ որ քեզ հաճո է արա ինձ հետ, ինչ որ քո կամքն է․ սպանիր ինձ, քանի որ ես քո ծառան լինելով խիստ հանցավոր եմ, մահապարտ եմ»։

Իսկ Շապուհ արքան նրա ձեռքից բռնած ճեմելով շրջում էր և չքմեղ անելով նրան տանում է հատակի հայակողմը՝ ուր թափված էր բերված հողը։ Իսկ երբ այնտեղ հասան և Արշակը հայկական հողը կոխեց, մեծապես գոռոզացավ, հպարտացավ․ այլ կերպ սկսեց խոսել և ասաց․ «Հեռու կաց ինձանից, քո տերերին տիրացող չարագործ ծառա․ ես չեմ ների քեզ և քո որդիներին իմ նախնիների վրեժը և Արտևան արքայի սպանությունը։ Ձեր ծառաները մեր տերերի բարձը հափշտակել են, բայց չեմ թողնի, մինչև որ մերը մեզ չվերադառնա»։

Նորից բռնեց նրա ձեռքից, նորից տարավ Պարսից հողի վրա։ Այստեղ նա ապաշխարում էր իր ասածների համար, խոնարհվում էր նրա ոտքերի առաջ, մեծա-

պես զղջալով ասած բաների համար: Իսկ երբ նրա ձեռքից բռնած տանում էր հայ հողի վրա, նա նախկինից ավելի խստագույն կերպով էր խոսում: Իսկ դարձյալ երբ տանում էր մյուս հողի վրա, նա նորից զղջում էր: Առավոտից մինչև երեկո այդպես շատ փորձերով փորձեց նրան. երբ բերված հողի վրա էր տանում՝ սաստիկ ամբարտավանում էր, իսկ երբ բուն գետնի վրա էր բերում՝ զղջում էր:

Իսկ երեկոյան, երբ Պարսից թագավորի ընթրիքի ժամը եղավ, սովորություն էր, որ Հայոց թագավորը բազմում էր նրա մոտ՝ նույն թախտին. օրենք էր, որ Պարսից թագավորը և Հայոց թագավորը միևնույն թախտին էին բազմում և միևնույն գահին նստում: Իսկ այդ օրը նախ բազմականների շուրջը դասավորեցին և բոլորից հետո, ամենից ներքև Արշակին նստեցրին հենց այնտեղ, որտեղ հատակը հայ հողով էր ծածկված: Նախ ամենքը բազմեցին, յուրաքանչյուրն ըստ իր մեծության, բոլորից հետո բերեցին և նստեցրին Արշակ արքային: Սա եկավ նստեց ուսած գետնի վրա, հետո ոտքի կանգնեց և ասեց Շապուհ թագավորին. «Իմն է այդ տեղը, ուր դու ես բազմել. վեր կաց այդ տեղից, թող ես այնտեղ նստեմ, որովհետև մեր ազգի տեղը այդ է. ապա թե ոչ երբ իմ աշխարհը հասնեմ՝ մեծապես վրեժխնդիր կլինեմ քեզանից»:

Հետո Պարսից արքա Շապուհը հրաման տվեց՝ շղթաներ բերել և գցել Արշակի վիզը և ոտքերն ու ձեռները շղթայել և տանել նրան Անդմըշն՝ որ Անհուշ բերդ է կոչվում և պահել այնտեղ, մինչև որ մեռնի: Դրանից հետո Շապուհ արքան անմիջապես հրաման տվեց յուր առաջ բերել Վասակ Մամիկոնյան զորավարին, Մեծ Հայքի սպարապետին. սկսեց ծաղրել նրան, որովհետև Վասակը մարմնով փոքր էր. ասեց նրան Պարսից Շապուհ արքան. «Աղվե՛ս, դու էիր խանգարիչը, որ այսքան մեզ չարչարեցրիր. դո՛ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր Արիներին [պարսիկներին,—Ս. Բ.], ինչո՞ւ էիր այդպես անում. աղվեսի

մահով ես քեզ պիտի սպանեմ»։ Իսկ Վասակը պատասխան տվեց՝ ասելով. «Այժմ դու տեսնելով ինձ մարմնով փոքրիկ, չե՞ս զգում իմ մեծության չափը. մինչև հիմա ես քեզ համար առյուծ էի, հիմա աղվե՞ս դառա։ Բայց երբ ես Վասակն էի՝ հսկա էի. մի ոտս մի լեռան վրա էր, մյուս ոտս մյուս լեռան վրա էր. երբ աջ ոտիս էի հենվում՝ աջ լեռն էի գետնի տակ տանում, երբ ձախ ոտիս էի հենվում՝ ձախ լեռն էի գետնի տակ տանում»։ Ապա հարցրեց Պարսից Շապուհ թագավորը և ասաց. «Լավ՝ ասա իմանամ, ովքե՞ր են այն լեռները, որ դու գետնի տակն էիր տանում»։ Եվ Վասակը ասաց. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ Հունաց թագավորը։ Քանի աստված բարեհաճ էր իմ նկատմամբ, և մեր հայր Ներսեսի օրհնությունը մեզ վրա էր և աստված մեզնից երես չէր դարձրել քեզ էլ Հունաց թագավորին էլ գետին էի գցում։ Քանի որ մենք նրա խոսքն էինք կատարում՝ նրա խրատը մեզ հետ էր և կարողանում էինք քեզ էլ խրատ տալ. մինչև որ ինքներս բաց աչքով ընկանք խորխորատը։ Արդ՝ ինչ որ կամենում ես արա»։ Սրանից հետո Պարսից թագավորը հրաման տվեց՝ Հայոց Վասակ զորավարի մորթին հանել և խոտով լցնել ու տանել նույն Անդմըշն բերդը, որ Անհուշ է կոչվում և որտեղ բանտարկված էր նաև Արշակ թագավորը։

«Պատմություն Հայոց»
գրքից, 4-րդ դար։

Իսկ Պարսից Շապուհ թագավորը յուր բոլոր զորքերով հանդերձ եկավ հասավ պատերազմի վայրը և գտավ Հունաց և Հայոց զորքերին միահամայն պատրաստ՝ պատերազմելու։ Տեղի ունեցավ ճակատամարտ և Պարսից զորքերը պարտության մատնվեցին։ Մանավանդ նիզակավորների գնդերը հարձակվում էին մոլեգնաբար և քաջաբար իրենց ախոյաններին ձիերի վրայից գետին էին տապալում հենց իրեն՝ Պարսից Շապուհ թագավորի առաջ. և վայր գլորելիս Հայոց

ամբողջ պատերազմիկ զորքը շարունակ խրախույս էր տալիս իրեն, աղաղակելով՝ քաջ Արշակի համար։ Բոլոր ախոյաններին, որոնց սպանում էին այդ ճակատամարտում նվիրաբերում էին իրենց Արշակ Թագավորին և ամեն մեկին սպանելիս ասում էին. «Մեր Արշակ Թագավորին զոհ եղի՛ր»։ Եվ երբ Հայոց նիզակավոր ազատանին մարտաբար հարձակվում էր Պարսից նիզակավորների վրա և սպանում, խրախուսելու համար ասում էր՝ քաջ Արշակի համար։ Իսկ երբ սպանելով գլխատում էին ախոյանին, ասում էին. «Արշակի զոհը եղիր»։

Շապուհ Թագավորը երբ իր իշխանության աշխարհը հասավ, զարմացած էր մնացել Հայոց գնդի քաջության վրա այն կռվից, որ տվել էր իր դեմ, և ասում էր. «Ես զարմացել եմ ինչ որ տեսա. որովհետև իմ մանկությունից սկսած շարունակ ես ճակատել և կռիվներ եմ մղել, և շատ տարիներ են ինչ Թագավորում եմ ու առանց կռվի տարի չեմ անցկացրել, սակայն իմ ամենաջերմ կռիվը այս իմ տեսածն էր, որ այս անգամ հանդիպեց ինձ։ Քանզի երբ Հայոց նիզակավորները առաջ էին ընկնում՝ այնպես էին հարձակվում, ինչպես մի բարձր լեռ և կամ ինչպես մի հաստաբեստ, հզոր ու անշարժ աշտարակ. և երբ մենք նրանց մի փոքր ետ էինք տալիս, ապաստանում էին նրանք Հռոմայ լեգեոնում. սրանք իրենց վահանափակոցները բացելով մեջ էին առնում նրանց և պատնեշում էին, ինչպես ամրացված քաղաքապարիսպ։ Եվ այնտեղ մի փոքր ոգի առնելով, նորից դուրս էին գալիս, կռվում էին մինչև վերջինը կոտորելով Արյաց զորքը։ Մյուս բանը, որի վրա ես զարմացել եմ՝ դա Հայոց գնդի մտերմությունն է, համերաշխությունը և տիրասիրությունն է։ Քանի որ այնքան տարիներ են, որ նրանց տերը՝ Արշակը հեռացված է նրանցից, բայց և այնպես նրանք պատերազմի մեջ նրանով էին խրախուսվում։ Եվ երբ ախոյաններին տապալում էին, բոլորը միշտ ասում էին՝ հանուն Արշակի, մինչդեռ նա

նրանց մեջ չէր, և նրանք տոգորված իրենց տիրասիրությամբ և այն գութով, որ ունեին դեպի իրենց հարազատ տերը, նրանք էին [illegible] բոլոր ախոյաններին, որոնց սպանում էին: Իսկ Մուշեղի [Մամիկոնյան,— Ա. Բ.] մոլեգին գո՛ւնդը. ինձ այնպես էր թվում, թե բոց էր ժայթքում այդ գնդից և զինանշաններից. հրդեհի կրակի պես էր անցնում նա մեր գնդի միջով, ինչպես բոցը՝ եղեգնի միջով: Եվ այնքան ժամանակ է, ինչ նրանց տեր՝ Արշակը կորսված է նրանցից, որովհետև գտնվում է Խուժաստան երկրի Անդմըշն բերդում, բայց նրանք նրա սիրույ մղված՝ համարում էին, թե նա իրենց գլխին իբրև թագավոր կա, և կամ նրանց հետ գնդումն է և պատերազմում մարտի գլուխն է կանգնած և իրենք, նրա առաջ, նրան են ծառայում: Բայց,— ասում էր Շապուհը,— երանի՜ նրան, ով Հայոց գնդի տերը կլինի, որն այնպիսի տիրասեր և միաբան համերաշխ զորք է»:

«Պատմություն Հայոց»
գրքից, 4-րդ դար:

Ապա Վասակի որդի Մուշեղը, Մեծ Հայքի սպարապետը հավաքեց իր շուրջը քառասուն հազար միաբան, միակամ և համերաշխ ընտիր ազգային ազատանի, և ապահովեց նրանց ձիերով, թոշակով և զենքով. և վերցնելով նրանց յուր հետ գնաց նստեց Ատրպատականի սահմանները՝ պահպանելու Հայոց աշխարհը: Նույն ժամանակ պատրաստվեց Պարսից Շապուհ արքան և յուր բոլոր զորքերով եկավ և հասավ Ատրպատական երկիրը. և նրա բանակի գնդի առաջնորդն էր Մերուժանը, իսկ թագավորի բուն բանակը գտնվում էր Թավրեժում:

Վրա հասավ Հայոց զորավար Մուշեղ սպարապետը իր քառասուն հազար մարդկանցով, հարձակվեց բանակի վրա և գործի անցնելով՝ կոտորեց: Ապա Պարսից Շապուհ թագավորը մազապուրծ լինելով միաձի ճողոպրեց փախավ. և Մուշեղը Հայոց զորքերով բա-

նակի ամբողջ կարավանը սրի քաշեց: Ծառաներին կոտորեց, և Պարսից ավագանիներից շատերին ձերբակալեց, և ավարի առավ Պարսից թագավորի գանձը. բռնեց և տիկնանց տիկնոջը՝ Պարսից թագուհուն այլ կանանց հետ միասին: Մուշեղ սպարապետը ձեռք ձգեց Պարսից բանակի ամբողջ ճամբարը. և Հայոց զորավար Մուշեղը հրամայեց ամբողջ Պարսից ավագանուն՝ մոտ վեց հարյուր մարդ մորթել և լցնել խոտով և ուղարկեց Հայոց արքա Պապին: Սրանով նա յուր հոր՝ Վասակի վրեժը առավ:

Բայց Պարսից Շապուհ թագավորի կանանց, Հայոց զորավար Մուշեղը թույլ չտվեց որ որևէ մեկը անարգի. հրամայեց պատգարակներ պատրաստել նրանց համար և նրանց բոլորին ետ արձակեց իրենց ամուսնին՝ Շապուհ արքայի մոտ. և նրանց հետ եղած պարսիկներին էլ ազատեց, որպեսզի նրանք կանանց ողջ և անարատ հասցնեն Պարսից թագավորին: Իսկ Պարսից թագավորը զարմացավ Մուշեղի մեծահոգության, բարության և ազնվության վրա՝ որ նա ոչ մի թշնամություն չէր ցույց տվել իր կանանց նկատմամբ: Եվ այն ժամանակ Մուշեղի երիվարը մի ճերմակ ձի էր. իսկ Պարսից թագավոր Շապուհը երբ գինի էր խմում, երբ խնջույքի ժամանակ ուրախանում էր իր զորքերի հետ, ասում էր. «Թող ճերմակաձին գինի խմի»: Եվ նկարել տվեց իր գավաթի վրա Մուշեղին իր ճերմակ ձիով. և իր ուրախության ժամանակ դնում էր գավաթը իր առաջ և շարունակ հիշում էր, նույն խոսքն ասելով՝ «Թող ճերմակաձին գինի խմի»:

«Պատմություն Հայոց»
գրքից, 4-րդ դար:

Բաջ զորավար և Հայոց սպարապետը [Մուշեղ Մամիկոնյան,—Ա. Բ.] մեծ կրքով և նախանձախնդրությամբ էր անցկացնում իր կյանքի բոլոր օրերը. հա-

վատարմությամբ ու արդար վաստակով միշտ ջանում էր և աշխատանք թափում Հայոց աշխարհի թագավորության համար: Գիշեր և ցերեկ չարչարվում էր, ճիգ ու ջանք էր թափում պատերազմի ճակատում լինելու և երբեք չէր թողնում, որ մի կտոր հող Հայոց սահմաններից խլեն:

«Պատմութիւն հայոց» գրքից, 4-րդ դար:

Ե Ղ Ի Շ Է

Մահ ոչ իմացեալ՝ մահ է,
մահ իմացեալ՝ անմահութիւն է:

Որ զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի
մահուանէ. իսկ որ գիտէ զմահ՝
ոչ երկնչի ի նմանէ:

ԵՂԻՇԷ

... Սրանք բոլորը [ուխտյալ հայ նախարարներն իրենց զորախմբերով,— Ա. Բ.] միախմբված հասան պատերազմելու Արտազ դաշտը. և նրանց թիվը եղավ վաթսունվեց հազար մարդ՝ ձիավոր ու հետևակ:

Սպարապետը [Վարդան Մամիկոնյանը,— Ա. Բ.] նախարարների միաբանությամբ սկսեց այսպես խոսել զորքին.

«Շատ պատերազմներ եմ մտել ես, դուք էլ ինձ հետ. տեղ կար, որ քաջությունով հաղթեցինք թշնամիներին, տեղ էլ կար, որ նրանք մեզ հաղթեցին. բայց ավելի շատ հաղթել ենք, քան հաղթվել: Ով փախչում էր՝ վատանուն էր համարվում աշխարհում և անողորմ մահ ստանում նրանից. իսկ ով քաջությամբ առաջ էր անցնում՝ ազգի մեջ քաջ անուն էր ժառանգում և անցավոր ու մահկանացու թագավորից մեծամեծ պարգևներ էր ստանում: Եվ ահա մենք ինքներս ամեն մեկս շատ վերքեր ու սպիներ ունենք մեր մար-

մինների վրա, և էլի շատ քաջություններ են եղել, որոնց համար և մեծամեծ պարգևներ են ստացել:

«Այժմ, աղաչում եմ ձեզ, իմ քաջ նիզակակիցներ, մանավանդ որ ձեզանից շատերը քաջությունով վեր եք ինձանից և հայրենական դահով բարձր, բայց երբ ձեր հոժար կամքով ձեզ առաջնորդ և զորագլուխ կարգեցիք ինձ՝ թող ախորժելի ու բաղձալի թվին իմ խոսքերը մեծերիդ ու փոքրերիդ ականջին: Չվախենանք, չխրտնենք հեթանոսների բազմությունից և ոչ էլ մահկանացու մարդու ահավոր սրի դեմ թիկունք չդարձնենք. որպեսզի եթե տերը հաղթություն մեզ թողնի, սատկացնենք նրանց զորությունը, որ բարձրանա ճշմարտության կողմը. իսկ եթե հասել է ժամանակը, որ այս պատերազմի մեջ սուրբ մահով վճարենք մեր կյանքը, ընդունենք ուրախ սրտով, միայն թե մեր քաջության մեջ վատություն չխառնենք:

«Մանավանդ ես չեմ մոռացել, թե ինչպես ես և ձեզանից ոմանք մի ժամանակ անօրեն իշխանին խաբեցինք ինչպես մի անպիտան տղայի, երբ երեսանց կատարեցինք նրա ամբարիշտ կամքը. բայց ծածուկ, տերը ինքը վկա է մեզ, թե ինչպես խորհրդով անբաժան էինք մնացել: Դուք ինքներդ էլ իմանում եք, որ հնարք էինք պտրում ազատելու մեր սիրելիների կյանքը, որոնք մեծ նեղության մեջ էին, որպեսզի նրանց հետ միասին կռիվ տանք անօրեն իշխանի դեմ, հայրենի աստվածատուր օրենքների համար: Եվ երբ նրանց չկարողացանք օգնել՝ այժմ անկարելի բան է, որ մարմնավոր սիրո համար աստծուն մարդկանց հետ փոխանակենք:

«Արդ՝ երկու-երեք կռիվների մեջ ինքը տերը մեծ զորությամբ օգնեց մեզ, որով քաջ անուն ժառանգեցինք և արքունի զորքը չարաչար ջարդեցինք, մոգերին էլ անողորմ կերպով սատկացրինք և մի քանի տեղերից կռապաշտության պղծությունը սրբեցինք, թագավորի անօրեն հրամանը անարգեցինք, ծովի խռովությունը իջեցրինք, լեռնացած ալիքները

դաշտացան, բարձրադեզ փրփուրը ոչնչացավ, գազանացած կատաղությունը դադարեց: Նա, որ ամպերի վրայից էր որոտում՝ խեղճացած սովորական բնությունից էլ ցածրացավ, խոսելով մեզ հետ: Նա, որ բերանացի հրամանով կամենում էր յուր չարությունը կատարել սուրբ եկեղեցու վրա, այժմ աղեղով ու նիզակով և սրով է կռվում: Նա, որ կարծում էր թե մենք քրիստոնեությունն ինչպես շոր ունինք հագած, այժմ չէ կարողանում փոխել՝ ինչպես մեր մարմնի գույնը, և գուցե չկարողանա էլ մինչև վերջը: Որովհետև սրա հիմքը անշարժ վեմի վրա է դրված ամուր կերպով, ոչ թե երկրիս վրա, այլ վերև երկնքում, ուր ոչ անձրևներ են գալիս, ոչ քամիներ են փչում, ոչ էլ հեղեղներ բարձրանում:

«Վախը թերահավատության նշան է․ Թերահավատությունը մենք վաղուց ենք հեռացրել մեզանից․ Նրա հետ թող երկյուղն էլ փախչի մեր մտքից ու խորհըրդից»:

Առաքինի զորավարը այս ամենը խոսեց բոլոր բազմության առաջ․ դարձյալ և նրանցից սրան-նրան քաջալերում էր ու սիրտ տալիս ծածուկ և ամեն կարոտություն ու պակասություն լրացնում: Զորականներից որը ոչինչ չուներ, հոգում էր յուր սեփականությունից և ընկերներից․ ով զենք չուներ՝ զենք էր պատրաստում, որին զգեստ էր պետք՝ զգեստ էր հագցնում, և որին ձի՝ ձի էր տալիս: Առատ թոշակներով ուրախացնում էր ամենքին և ինքն ամենքից զըվարթ էր ցույց տալիս իրան: Եվ պատերազմների կարգերի համեմատ քաջ տղամարդկանց գործերը շարունակ կրկնում էր նրանց առաջ:

Մի քանի օրից հետո Պարսից զորագլուխը առաջ խաղաց բոլոր հեթանոս բազմության հետ միասին և հասավ Հայոց աշխարհի Հեր և Զարևանդ գավառները: Այնտեղ՝ գավառում տեղավորվելով՝ բանակ դրեց, փոս փորեց, պատնեշ շինեց, ցցապատերով փակեց, և ամեն պատրաստությամբ ամրացրեց ինչպես մի քա-

ղաք: Նրա զորքերից շատ գնդեր դուրս եկան, արշավելով ասպատակեցին և կամենում էին բազմաթիվ գավառներ ավերել ու կողոպտել:

Երբ այս բանը լսեց Հայոց զորքը՝ բոլոր բանակից ընտրեցին՝ Ամատունյաց ազգից Առանձար անունով սեպուհին, որ մի իմաստուն ու քաջ մարդ էր. սա երկու հազար հեծյալներով դուրս եկավ նրա դեմ, ջարդեց սատկացրեց նրա գնդից շատերին, և մնացածներին փախցրեց մինչև բանակը: Իսկ ինքը ողջ և առողջ ետ դարձավ, և այն օրը մեծ ուրախության տոն կատարվեց Հայոց զորքի մեջ:

«Վարդանի և Հայոց պատերազմի
մասին» գրքից, 5-րդ դար:

Երբ որ Պարսից գնդի զորավարը [Մուշկան Նյուսալավուրտ,—Ա. Բ.] տեսավ որ էլ պատգամավոր չմընաց հայերին խաբելու և իր հույսը կտրվեց նրանց անբաժան միությունից զրկելու՝ այն ժամանակ կանչեց անօրեն Վասակին և նրա հետ եղած Հայոց աշխարհի բոլոր ուրացած իշխաններին, հարց ու փորձ արավ և իմացավ նրանցից հաղթության հնարները: Եվ երբ տեղեկացավ ամեն մեկի քաջությանը, կանչեց նաև իր ձեռքի տակ եղած զորագլուխներից շատերին. և հրամայեց առաջ բերել փղերի երամակները, գունդ-գունդ բաժանեց այդ գազանները և ամեն մեկ փղի մոտ երեք հազար զինված մարդ դրեց, բացի մյուս բոլոր զորքերից:

Թագավորի հրամանով խոսում էր նաև մեծամեծների հետ և ասում. «Ամեն մեկդ հիշեցեք մեծ Թագավորի պատիվները և քաջության անուն հանեցեք: Մի մոռանաք այն յուղը, պսակը, ուռերը, և առատաձեռն պարգևները, որ շնորհում է ձեզ արքունիքը: Ամեն մեկդ գավառների տեր եք և շատ իշխանություններ ունեք. ինքներդ գիտեք Հայոց աշխարհի քաջությունը և ամեն մեկի քաջ նահատակության փորձը առել եք ու ճանաչում եք. մի գուցե հաղթվեք և կենդանավույն զրկվեք այն մեծ կյանքից, որ պիտի ունենաք: Հիշե-

ցեք ձեր կանանց ու որդոց. հիշեցեք ձեր սիրելի բարեկամներին. մի՛ գուցե ոտնակոխ լինեք դրսի թշնամիներից և ողբալի դառնանք մոտիկ սիրելիներին»:

Հիշեցնում էր նրանց նույնպես բազմաթիվ փախածընկերակիցներին, որոնք թեպետ պատերազմից ազատվել էին, բայց սրով ենթարկվեցին մահվան. նրանց տղերքն ու աղջկերքը և բոլոր ընտանիքը ցրվեցին և հայրենական բոլոր գավառները խլվեցին նրանցից:

Այսպես էր խոսում և էլ ավելի էր սաստկացնում թագավորի հրամանը: Կարգի դրեց բոլոր զորքը և տարածեց մեծ դաշտի երկայնությամբ: Ամեն մի փղի աջ ու ձախ կողմից դասավորեց երեք հազարական սպառազեն գնդեր և ընտիր-ընտիր քաջագործ մարդկանց ժողովեց իր շուրջը. և այսպես Մատյան գունդը[1]) այնպես ամրացրեց, ինչպես մի հզոր աշտարակ կամ անառիկ մի բերդ: Նշաններ բաժանեց, դրոշակներ տարածեց և հրամայեց, որ մեծ փողի ձայնը լսեն թե չէ՝ պատրաստ լինեն կռվի: Իսկ Ապարհացի գունդը, և Կատչաց, Հոնաց և Գեղաց գնդերը, և էլի ուրիշ ընտիր-ընտիր զորական մարդկանց միասին ժողովեց և հրաման տվեց յուր գնդի աջ կողմում պատրաստ լինել Հայոց զորավարին դիմադրելու:

Իսկ քաջ Վարդանը առաջ եկավ և խորհրդակցեց մեծամեծների հետ և ամենքի համաձայնությամբ զորագլուխներ նշանակեց այս ձևով:

Առաջին գունդը հանձնեց Արծրունյաց իշխանին, և նրան նիզակակից Մոկաց մեծ իշխանին, և ուրիշ ամեն նախարարներին այս երկուսին աջակից կարգեց և գնդի բոլոր բազմությունը օգնական տվեց այս ու այն կողմից:

Երկրորդ գունդը հանձնեց Խորեն Խորխոռունուն.

---

1) Մատյան գունդը, որին օտարազգիները «անմահների գունդ» էին անվանում, բաղկացած էր տաս հազար ընտիր ձիավորներից, և երբ նրանցից մեկն սպանվում էր կամ շարքից դուրս էր գալիս, տեղն անմիջապես գրավում էր մեկ ուրիշը:

և նրան նիզակակից նշանակեց Ընծայինին և Ներսես Քաջբերունուն:

Երրորդ գունդը հանձնեց Թաթուլ Վանանդեցուն, և նրան նիզակակից շնորհեց Տաճատ Գնթունուն, և շատ քաջ մարդիկ էլ օգնական տվեց այս ու այն կողմից:

Ինքը վերցրեց չորրորդ գունդը, և իրեն նիզակակից քաջ Արշավիրին և իր հարազատ եղբայր Համազասպյանին:

Այսպես կարգավորեց պատերազմի գործը, դասավորելով զորքը ամբողջ դաշտի երեսին թշնամու գնդի դեմ առ դեմ, Տղմուտ գետի ափին:

Եվ երբ ամեն ինչ այսպես պատրաստվեց, երկու կողմերն էլ լցված կատաղությամբ և մեծ բարկությամբ, գայրացած և գազանացած զորությամբ միմյանց վրա հարձակվեցին. երկու կողմերի աղաղակի թնդյունը ճայթում տրաքտրաքում էր՝ ինչպես խառնված ամպերի միջից. և ձայների դղրդյունը շարժում էր լեռների քարանձավները: Բազմաթիվ սաղավարտներն ու զինված քաջերի մերկ սրերը փայլում, շողշողում էին, ինչպես արեգակի ճառագայթներ: Նույնպես էլ անթիվ ասպարների շողալուց և բազմախառը նիզակների ճոճելուց կարծես կրակ էր թափվում երկնքից: Ո՞վ կարող է նկարագրել այդ ահավոր ձայների առաջացրած մեծ տագնապը և թե ինչպես վահանավորների կափկափյունը և աղեղների լարերի ճայթյունը ամենքի ականջ էին խլացնում առհասարակ:

Պետք էր տեսնել, թե ինչ մեծ տագնապ ու անչափ աղետ էր առաջանում երկու կողմերումն էլ, երբ նրանք հանդուգն հարձակումով իրար էին բախվում. թանձրամիտները հիմարանում էին և թուլասիրտները վհատվում, քաջերը խիզախում էին և նահատակներն պապակում: Եվ բոլոր բազմությունը միասին խռմբվելով՝ գետը ամեն կողմից փակեցին և պարսից գունդը գետի դժվարությունից վախեցած սկսեց տեղն ու տեղը եռալ: Իսկ հայերի գունդն անցավ գետը և մեծ

ուժով հարձակվեց թշնամու վրա: Ուժգին թափով զարկվելով միմյանց, երկու կողմից էլ բազմաթիվ վիրավորներ գլխիվայր գետին թափվեցին:

Այն մեծ տագնապի մեջ աչքը վեր ուղղեց քաջ Վարդանը և տեսավ, որ Պարսից զորքի ընտիր քաջերը խախտեցին Հայոց գնդի ձախակողմը. նա մեծ ուժով հարձակվեց այնտեղ և Պարսից գնդի աջ թևը ջարդելով՝ քշեց գազանների ետևը և չորս կողմից շրջապատելով կոտորեց նույն տեղում: Եվ այնպիսի մեծ նեղության մեջ գցեց թշնամուն, որ այնպես ամրակուռ կազմակերպված Մատյան գունդը ցրվեց և սկսեց փախչել:

Հետո աչքը վեր բարձրացրեց Մուշկան Նյուսալավուրտը և տեսավ, որ Հայոց գնդից ոմանք բաժանվել և ետ են մնացել լեռների հովիտներում: Ուստի սկսեց աղաղակել ու քաջալերել յուր չորս կողմը Արյաց [Պարսից,— Ա. Բ.] զորքին, որոնք կանգնած էին Վարդանի գնդի հանդեպ: Այնտեղ երկու կողմերն էլ հաղթված էին զգում իրենց, և ընկած դիակների թիվը այնպես մեծ էր, որ նմանում էր ավերակների քարակույտերի:

Երբ այս տեսավ Մուշկան Նյուսալավուրտը՝ սպասում էր Արտաշիրին իր փղերով, որ նստած էր նրանց վրա բարձր դիտանոցում, ինչպես ամուր քաղաքում և գալարափողերի բարձր ձայնով կանչեց իր գնդերին ու առաջամարտիկ զորքով շրջապատեց նրան:

Իսկ կորովի Վարդանը իր քաջ նիզակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, որտեղ և ինքն էլ արժանի եղավ ստանալ կատարյալ նահատակության պսակը:

Պատերազմի գործողությունը երկար տևելով՝ օրը տարաժամեց և երեկոյան մոտ դադարեց. շատերին հասավ մահվան օրհասը, մանավանդ դիակների խռնությունից, որոնք միմյանց մոտ էին թափված, ինչպես անտառի կտրած փայտեր:

Պետք էր տեսնել այնտեղ, թե ինչքան նիզակներ կային կոտրտված և ինչքան աղեղներ խորտակված.

այս պատճառով էլ չէին կարողանում ստուգիվ որոշել երանելիների սուրբ մարմինները. և մեծ իրարանցում կար երկու կողմից ընկածների համար: Իսկ որոնք կենդանի էին մնացել, ցրվեցին անմատչելի ձորերի լեռնային տեղերը. և երբ նորից պատահում էին միմյանց՝ դարձյալ ջարդում էին իրար: Եվ այսպես մինչև արևի մայր մտնելը անդադար շարունակվեց պատերազմի գործողությունը:

Բայց որովհետև Հայոց մեծ սպարապետը ընկած էր պատերազմի մեջ, այնուհետև էլ ոչ ոք գլխավոր չկար, որի շուրջը ժողովվեին մնացած զորքերը: Թեպետ և ողջ մնացողներն ավելի շատ էին, քան մեռնողները, սակայն ցրվեցին այս ու այն կողմ և քաշվեցին երկրի զանազան անմատչելի տեղերը, և ուժով տիրեցին շատ գավառներին ու բերդերին, որոնց ոչ ոք չէր կարողանում առնել:

«Վարդանի և Հայոց պատերազմի մասին» գրքից, 5-րդ դար:

Իսկ երանելի առաքինիների և կապվածների և պատերազմում ընկածների կանանցը՝ Հայոց ամբողջ աշխարհում՝ ես հաշվել չեմ կարող. որովհետև չիմացածներս ավելի շատ են, քան իմացածներս: Հինգ հարյուրի չափ մեկ մեկ ճանաչում եմ. ո՛չ միայն ավագներից, այլ շատերին ավելի կրտսերագույններից:

Նրանք ո՛չ միայն իրենց հոգիների մեջ մխիթարված էին աներևույթ զորության հավիտենական հույսով, այլև մարմնի նեղություններով առավել ևս կրեցին ծանրության բեռը: Թեև ամենքն էլ իրենց ազատավորներն ունեին, բայց չէր երևում, թե նրանցից ո՞րն է տիկինը, և կամ ո՛րն է նաժիշտը. մի տեսակ չոր էին հագնում, և միապես գետնին պառկում երկուսն էլ: Ոչ ոք մյուսի համար անկողին չէր գցում. որովհետև խստեղենների մեջ անգամ խտրություն չէին դնում. միևնույն թխագույն փսիաթն էր ամենքի տակ և միևնույն սևացած բարձերը գլխատակերին:

Իրենց աչքով տեսան իրենց կայքի հափշտակությունը և ականջներովը լսեցին իրենց սիրելիների չարաչար վշտերը. Նրանց գանձերը արքունիք գրավեցին, և ամենևին չմնացին նրանց երեսների զարդերը:

Հայոց աշխարհի փափկասուն տիկինները, որ դրդվանքով ու քնքշությամբ մեծացել էին փափուկ բազմոցների ու գահավորակների վրա, շարունակ բոբիկ ու ոտքով էին գնում աղոթքի տները, անդադար ուխտելով ու խնդրելով, որ կարողանան համբերությամբ տանել այն մեծ նեղությունը: Նրանք, որ մանկությունից սնված էին գվարակների ուղեղով և էրեների փափուկ մսով, վայրենիների պես մեծ ուրախությամբ խոտեղեն էին ընդունում և ամենևին չէին հիշում իրենց սովորական փափկությունը: Նրանց մարմնի մորթերը սևացան, որովհետև ցերեկները արևից էին այրվում և ամբողջ գիշերները գետնին ջարդվում:

Մոռացան կանացի տկարությունը և եղան առաքինի տղամարդիկ հոգևոր պատերազմում. մաքառեցին կարևոր մեղքերի դեմ, կտրեցին և դեն ձգեցին նրա մահաբեր արմատները: Միամտությամբ հաղթեցին խորամանկությանը և սուրբ սիրով լվացին նախանձի կապուտակ ներկը:

Նրանց մեջ գտնվող այրիները նորից առաքինության հարսներ եղան և վերացրին իրենցից այրության նախատինքը: Իսկ կապվածների կանայք կամովին կապեցին իրենց մարմնավոր ցանկությունները և կցորդ եղան կապվածների չարչարանքներին. իրենց կյանքում նմանվեցին մեռած քաջ նահատակներին, և հեռվից մխիթարող ուսուցիչներ եղան՝ բանտարկվածներին: Իրենց մատներով աշխատեցին և կերակրվեցին, և արքունիքից նրանց նշանակված հասույթը տարեց տարի ուղարկեցին բանտարկվածներին՝ մխիթարելու համար: Անարյուն ճպուռներին նմանվեցին, որոնք իրենց երգի քաղցրությամբ առանց կերակրի են ապրում և կենդանի են միայն օդ ծծելով:

Շատ ձմեռների սառույցներ հալվեցին. հասավ

գարունը և նորեկ ծիծեռնակներ եկան. կյանք սիրող մարդիկ տեսան և խնդացին, բայց նրանք երբեք չկարողացան իրենց կարոտյալներին տեսնել: Գարնանային ծաղիկները նրանց մտաբերել տվին իրենց պսակավոր ամուսիններին և իրենց աչքը կարոտ մնաց տեսնելու նրանց երեսի ցանկալի գեղեցկությունը: Որսի շները վերջացան և դադարեցին որսորդական արշավանքները: Գրված հիշատակարաններով միայն հիշվեցին նրանք և ո՛չ մի տարեկան տոն չբերեց նրանց հեռու օտարությունից. նրանց սննդարաններին նայեցին և արտասվեցին և ամեն հանդեսներում հիշեցին նրանց անունները: Շատ արձաններ կանգնեցրին նրանց անունով և ամեն մեկի անունը նշանակվեց նրանցում:

Եվ մինչ այսպես ամեն կողմից ալեկոծվում էին նրանց մաքերը, նրանք երբեք չթուլացան: Դրսից նայողին երևում էին ինչպես սգավոր և չարչարված այրիներ, իսկ իրենց սրտներում զարդարված ու մխիթարված էին երկնավոր սիրով:

Այլևս չէին հարցնում հեռու երկրից եկողներին, թե՝ ե՞րբ կլինի, որ տեսնենք մեր սիրելիներին. այլ այն էր նրանց խղճը, որ ինչպես սկսել էին, այնպես էլ քաջությամբ վերջացնեն:

«Վարդանի և Հայոց պատերազմի մասին» գրքից, 5-րդ դար:

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Մեռնողները քաջի նման մեռան,
առավել ևս ապրողներդ քաջի նման
ապրեցիք և կենդանի եք։
ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Արշակ Թագավորը իր մտքում այս բոլորը խորհելով, ձգեց, թողեց իր նախնիների բարի ու բնիկ ժառանգությունը՝ Այրարատի գավառը—հոյակապ, հրաշակավոր և ականավոր. ամեն բան աճեցնող, ամեն բարություն արտադրող, լիառատ,— լավագույնը՝ մարդկային կյանքի կարիքների և վայելչության ու ուրախության, օգտավետության և զարմանների մեջ: Մեծատարած և որսով լի դաշտերը, շրջապատի գեղեցկանիստ և խոտավետ լեռները, որոնք լիքն են կճղաբաշխ ու որոճող էրեններով և նրանց հետ ուրիշ շատ կենդանիներով: Այդ լեռների բարձր գագաթներից հոսող առատ ջրերը, ոռոգում, արբեցնում են դաշտերը, անսպառ մատակարարելով մայրաքաղաքում ապրող կանանց, տղամարդկանց և ընտանիքներին հաց և գինի, անուշահոտ, մեղրահամ քաղցրություն ունեցող բանջարներ և զանազան յուղալի սերմեր: Իսկ եթե մի նոր տեսնող մարդ իր հայացքն ուղղի դեպի լանջակողմերն ու սարահարթ տեղերը, կկարծի՝ թե հանդերձներ են և ոչ թե ծաղիկների գույներ, տարածված համով ու հոտով: Նրանց թանձրախիտ աճած խոտերում արածող ընտանի անթիվ

էշերն ու վայրի էրեների խմբերը ունեն թավ մորթեր, գլորուկ գավակներ և ամբողջապես պարարտ մարմիններ: Հապա՛ անուշահոտ ծաղիկների առատ բույրը, որ նետավոր, որսասեր քաջ մարդկանց և բացօդյա դաշտերում ապրող հովիվներին առողջություն պարգևելով՝ խելքի զգայունությունն է զորացնում ու նորոգում: Այնտեղ գտնվում են տեսակ-տեսակ բույսերի արմատներ, որոնք ըստ խելացի ու հմուտ բժիշկների ստուգագույն խորհուրդների օգտագործվում են՝ իբրև դեղ, արագաբույժ ախտահալած սպեղանիներ և այնպիսիք, որ խմելով՝ առողջանում են երկարատև հիվանդություն ունեցողները:

Իսկ ամեն տեսակ բարիքներով լի դաշտերը կարծես խոսելով դեպի իրենց են քաշում աշխատասեր մարդկանց, և ամեն տեսակի բարիքներ պարգևելով նրանց՝ առավել ևս կապում են իրենց հետ: Այդ դաշտերը ոչ միայն արտաքուստ երևացող բաներով են ցույց տալիս մարդկանց՝ իրենց շահավետությունը, այլև հետաքրքրվողներին սովորեցնում են երկրի տակը թաքնված հարստությունները՝ ոսկին, պղինձը, երկաթը և պատվական քարերը օգտագործել անձնական շահի՝ այս աշխարհի վայելքի, ինչպես և թագավորների մեծության համար: Այդ գանձերն արհեստավորների ձեռքում մշակվելով՝ թագավորներին զարդարում են փառավոր զարդարանքներով՝ շողշողալով նրանց խույրերի, թագերի ու ոսկեհուռ հանդերձների վրա: Նույնպես և ջրերը համածին անուշություն են տալիս ամեն տեսակի խորտիկներին: Եղեգնեղեն բույսերի արմատներն ևս իզուր չէ աճեցնում իր ծոցի մեջ մեր ամենաբաղձալի Այրարատյան դաշտը, ինչպես և այնտեղ ծնված որդերը՝ կարմիր գույնի, զարդ են պարգևում շահ և շքեղություն որոնողներին: Եվ վազող ջրերը, որ լցված են մեծ ու փոքր, համով ու տեսքով տարբեր, բազմատեսակ ձկներով՝ ուրախություն պատճառելով, մեծացնում են մարդու հարստու-

թյունը և հաղորդ են տալիս ժիր ու վստահ ջանասերերի որովայնին:

Երկիրը իր մաքուր ջրերով սնուցանում է իր մեջ բազմաթիվ թռչուններ՝ ի ուրախություն և վայելք որսատենչ ազատանու. առապարասեր, վիմասույզ, կրկչացող կաքավների ու սալամբների երամներ, կամ եղեգնաբնակ, թփերում ու մացառներում թաքնվող, պարարտամարմին, անուշահամ վայրի աքարներ, այլև ջրի մեջ սուզվող, մամռասեր, խոզակեր, մեծամարմին հավեր, փորեր, թանձրեր ու սագեր և ուրիշ շատ ու անթիվ ցամաքային ու ջրային թռչուններ: Իսկ նախարարների գունդերը ազատների որդիների հետ միասին՝ բարակներով ու թակարդներով որսի դուրս գալիս՝ ոմանք վայրի էշերի ու այծյամների ետևից վազում ու հորդորական և միայն աղեղի վերաբերյալ խոսքեր խոսելով, մյուսները՝ եղջերուների ու եղնիկների խմբերի ետևից ձիերը քշելով— իրենց քաջ նետաձգությունն են ցույց տալիս. և նրանց մի մասը իրենց սրերով, իբրև մենամարտիկներ, հաղթանդամ վարազների երամներին գետին գլորելով՝ սպանում են: Նախարարների կրտսեր որդիներից շատերը իրենց դաստիարակների ու ծառաների հետ բազեների միջոցով որսալով բազմազան թռչուններ, այդ ևս բերում են ուրախ ընթրիքի սեղանին. և այդպես ամեն մեկը որսով լիացած՝ վերադառնում է ուրախ և գոհ:

Իսկ ամենօրյա սովորության համաձայն, ջրին վարժված և որս փնտրող ձկնորսների երեխաները ակնդետ սպասում են նրանց, առաջ ընթանալով դիմավորում են նախարարներին ու իշխաններին և գետի կղզիներում իրենց որսած ձկները, ինչպես և վայրի բազմատեսակ հավերի ձագերն ու ձվերը բերելով՝ ընծայում են իշխաններին: Իսկ սրանք հոժարությամբ ընդունելով մի մասը նրանց ընծաներից, իրենք էլ իրենց ունեցածից ընծայում են նրանց ավելի շատ. և այդպես, յուրաքանչյուրն ամեն բարիքներով լի իր ապարանքը հասնելով, ընծայում են տանը մնացողնե-

րին և մանավանդ օտարներին իրենց բերածը: Տեսնելու արժան է յուրաքանչյուրի ընթրիքում միմյանց վրա դարսված էրեների բազմությունը և նրանց գլուխների՝ իրենց առաջ դարսելը. դրանցով ուրախանում են ձկնակեր և մսակեր մարդիկ...

Եվ ահա, այսպիսի ցանկալի, անման, ամեն բարիքներով լի Այրարատյան գավառը, որ Հայոց աշխարհի գլուխն է, լիառատ, հռչակավոր այդ գավառը, որ ինքը լիության օրինակ է եգիպտացիների երկրի և աստծու դրախտի նման, և Արշակունյաց ազգի բնիկ սեփականություն Վաղարշապատ քաղաքը՝ Արշակունյաց թագավորների մայրաքաղաքը— անթիվ պալատների բարձր շինվածքներով, լիառատ դաշտերի բերկրությամբ, հրեշտակացույց աստծո սուրբ տունը՝ Կաթողիկե մեծ եկեղեցին և ճգնազգյաց երանելի կույսերի վկայարանները... հունաց և պարսից թագավորների մեջ բաժանվեցին. նրանք Հայոց մեծ աշխարհը իրենց մեջ բաժանելով՝ ծառայացրին իրենց:

«Պատմութիւն հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան» գրքից, 5-րդ դար:

Նիխորը Հայոց աշխարհը գալով՝ չվստահացավ Հայոց տեղերը մտնել, այլ մնաց Հեր կոչված գավառի Նուարսակ կոչված գյուղում: Նա պատգամավոր ուղարկեց Վահանի մոտ խորհրդի դպիր Տապուհին և Ծուարշացի Միհր-Վշնասպին, որոնց միջոցով իր Հայաստան գալու նպատակը հասկացրեց նրան, և թե՝ «Վաղարշ թագավորից ու Արյաց աշխարհում գտնված բոլոր մեծամեծներից հրովարտակ և պատգամ ունիմ խաղաղությամբ բավարարություն տալ ձեզ. արդ եկե՛ք, լսեցե՛ք. և ինչպես մտածում եք, որը ձեզ բարի ու հաճելի է, ա՛յն ընտրեցեք»:

Վահան Մամիկոնյանը տեսնելով Նիխորի պատգամավորներին, և լսելով նրանցից պատգամի այս բոլոր խոսքերը, իր մոտ ժողովեց բոլոր հավատարիմ ուխտապահների գունդը, այն է՝ նախարարներին, ազատ-

նքերին և բոլոր այրուձիուն: Մամիկոնյան Վահանը հրամայեց Նիխորի կողմից եկածներին՝ որ Վաղարշ Թագավորի և Արյաց մեծամեծների բոլոր խոսքերը ասեն ամենքի առաջ: Վահան Մամիկոնյանը լսել տալով Նիխորի պատգամը բոլոր հայ մարդկանց, տալով Պարսից պատգամավորներին, որ վաղը կպատասխանեն նրանց:

Առավոտյան ժողովեցին բոլոր հայ մարդիկ Վահան Մամիկոնյանի մոտ, և նախ խորհեցին իրար հետ՝ իրենց հին ունեցած իրավունքների և գործի պահանջի մասին: Եկան և Նիխորի պատգամավորներն ատյան. Վահանն սկսեց խոսել և պատասխանել Նիխորի խոսքերին. «Մենք ապստամբության և այսպիսի խիստ ու մահաբեր գործին մեր անձերը մտնելու համար կարևոր խոսքեր ունինք, և հնար չէ գրով կամ պատգամով վերջացնել, բայց միայն Արյաց [պարսից,—Ա. Բ.] Թագավորի և ձեզ հետ, որ պալատի մեծամեծներն եք, երես առ երես խոսելով: Սակայն երեք առաջարկություն կանեմ ձեզ, թե որ այս երեք առաջարկությանս պատասխան կտրվի ինձ այնպես, ինչպես ես և այստեղ գտնվող բոլորս կամենում ենք, և կարող եք այս երեք պահանջը մեզ տալ Թագավորի գրով ու կնիքով, ինչ որ ասեք, վայելուչն ու արժանը կկատարենք, և ձեր խոսքը կլսենք, ինչպես մեր նախնիքը լսեցին: Վասն զի այժմս ձեզ հետ խոսածս խոսքերն իմը չեն, այլ ներկայումս ձեր առաջ կանգնած ամենքի՝ մեծերին ու փոքրերինն են. ոչ թե այսօր մենք խորհել ու հասկացել ենք այս պահանջները, այլ այն օրը, երբ մեր անձերը մահի մատնեցինք, առաջ այս երեք որոշումը մտածեցինք և ընտրեցինք ամենքս: Թե որ պարսիկները հանձն առնեն տալ մեզ այս երեք պահանջները, կծառայենք նրանց սեփական և հավատարիմ ծառաների նման. իսկ եթե չհաճին հանձն առնել և խոստություն գործ դնեն աշխարհից կհեռանանք, կկորչենք, և ուրախությամբ կմեռնենք, բայց պարսիկ մարդու երկրպագություն չենք տալ:

«Երեքից մեկն է՝ նախ և առաջ այս կարևոր և պի-
տանի պահանջը. որ մեր հայրենի սեփական օրենքները մեզ թողնեք, հայ մարդուն մոտ չդարձնեք, ոչ մեկին մոտության համար իշխանություն ու պատիվ չտաք, Հայոց աշխարհից կրակարանները հեռացնեք, մինչև այժմ եղած աղանդի ու անպիտան մարդկանցից եկեղեցուն հասած անարգանքները այսուհետև չթողնեք որ մենք տեսնենք, և քրիստոնյաներին ու քահանաներին քրիստոնեության կարգն ու պաշտոնը թույլ տաք պաշտել համարձակ ու աներկյուղ, ուր և կամենան. հետո բարի է. մեր առաջին պահանջն այդ է:

«Երկրորդ պահանջն այս է. որ մարդուն իշխանությամբ չճանաչեք, այլ արդարությամբ լավն ու վատթարը հասկանաք, պիտանուն ու անպիտանին որոշեք, պատվավոր ու աննշան մարդն իմանաք, քաջ ու օգտակար մարդուն լավերի և պատվականների կարգումն ընդունեք, վատին ու անպիտանին արհամարհելով՝ բանի տեղ չդնեք. աշխատավորներին սիրեք ու անաշխատներին ատեք. իմաստուններին մոտ պահեք և խորհրդակից անեք, և հիմարին չմոտեցնեք, այլ հրապարակից էլ հալածեք: Երբ այդ ամենն այսպես լինի, Արյաց աշխարհի բոլոր գործերը հաջող ու անսխալ կլինեն. ապա թե հակառակը սիրեք, ինչպես մինչև հիմա՝ և ոչ վայելը, գործերն էլ այդպես ընդդեմ կլինեն, ինչպես խակապես եղան և տեսաք:

«Եվ մեր երրորդ պահանջն այս է. ով որ Արյաց աշխարհի թագավոր տերն է՝ կամենում ենք, որ ինքն իր աչքերովը տեսնի, իր ականջներովը լսի, և ինքը հասկանա լավ ու վատ մարդուն, և ուրիշի բերանով չխոսի պետք եղած բաները: Այդ պատճառով ուղիղ չի լինի նայած գործը, և ոչ արդար՝ դատը, այլ հաճախ խոսքերը սուտ կճանաչվեն և հրամանները՝ դատարկ, և բոլորովին տակն ու վրա կլինի ամեն ինչի իմաստը: Երբ որ այս ամենն այսպես լինի, բոլոր աշխատությունները ոչնչանալով՝ ծառաների ձեռքով կկորչեն, և աշխարհն ու նրա վրա բնակվողները չեն

կարող անշարժ ու հաստատուն մնալ: Բայց այն թագավորը, որ իր առողջ աչքով է նայում և աննախանձ լսում ու արդար խոսքով խոսում իր ծառաների հետ, ծառաները քաջալերվելով՝ աշխատելուց չեն կշտանում, այլ ջանքերի մեջ զորանալով՝ օրե օր աշխատում են բարին աճեցնել. աշխարհն այսպես է շինվում և տերը փառավորվելով՝ միշտ պայծառանում:

«Ուրեմն՝ եթե այդ այդպես կարող եք խոստանալ, խոստացածները գրով ու կնիքով կտաք մեզ, ապա կանչիր և հոժարությամբ կգանք ու կլսենք ձեր խոսքերը և թագավորի հրամանին հավան կլինենք, ինչ որ ասե: Իսկ եթե այս երեք պահանջը չեք կարող մեզ տալ, և գիտեք որ հնար չկա, ինչպես մենք մահը առաջներս ենք դրել, պատրաստ ենք մեռնել, բայց Արյաց թագավորին ծառայել չենք կարող: Ունեցածս մյուս խոսքերը՝ եթե ես գալու լինեմ, ինքս կխոսեմ նրա հետ. ապա թե գալս չհաջողվի, այն խոսքերն էլ կմնան գործերն էլ»:

Վահան Մամիկոնյանն այս բոլոր խոսքերը խոսելով խորհրդի գլխի Տապուհի և Ճուարչայի Վշնասպ Միհրի հետ, ճանապարհ դրեց նրանց:

Նիխորը լսելով Վահան Մամիկոնյանի խոսքերն ու առաջարկությունները, ուրախությամբ լցված՝ ասաց ամենքի առաջ. «Այդ ամեն պատգամները, որ ուղարկել է Վահանը, ճշմարիտ որ աստվածներին արժանի է: Ես մինչև այսօր մխիթարված չէի այն մեծ հարվածից, որ հասավ Արյաց աշխարհին, բայց այդ լուրն այսօր ինձ ուրախացնելով մխիթարեց, սակայն՝ թող աստվածները տան այն օրը տեսնել, որ Վահանն իմ ձեռքով բավականություն գտած՝ հնազանդվի Արյաց ծառայելու համար»:

Այնուհետև Նիխորը շուտով կանչեց նույն պատգամավորներին, խորհրդի գլխի Տապուհին և Ճուարչացի Միհր-Վշնասպին, ու Վահան Մամիկոնյանին նամակ գրեց այս ձևով. «Լսեցի,— ասում է,—

քո ասած բոլոր խոսքերը պատգամավորներից, որոնց ես ուղարկեցի քեզ մոտ, և քո նույն բոլոր խոսքերը գրեցի այս նամակում, քեզ հայտնելու համար, որ արդարև ինձ հետ խոսեցին բոլորը և ես լսեցի: Ուրեմն՝ ե՛կ ինձ մոտ վստահությամբ և քո բոլոր պահանջները, որ նրանց ձեռքով ինձ ուղարկեցիր, և ուրիշ ինչ որ դու ասես, Արյաց տերն ու բոլոր մեծամեծներն ուխտել են լիովին տալ ու կատարել, և քեզ ու քեզ հետ եղածներին ինչպես քո կամքն է, Արյաց տերը կվարձատրի և Հայաստան կուղարկի»:

Այնուհետև գնաց հայոց զորավար Վահան Մամիկոնյանը բոլոր ուխտապահ նախարարների և մյուս պատրաստ գնդի հետ միասին, որոնք լսելով Նիխորի՝ Վահան Մամիկոնյանին երդումով արած խնդիրը՝ իրենց կամքով և սրտի ցնծությամբ էին գնում նրա մոտ: Մոտենալով այն գյուղին, որտեղ Նիխորն էր գտնվում, Վահան Մամիկոնյանը հրամայեց իր հետ եղած զորքին՝ պատերազմի պատրաստության կանոնի համաձայն զինվորվել: Նրանք Վահան Մամիկոնյանի հրամանը լսելուն պես՝ ամեն կերպով կազմ և պատրաստ եղան: Վահան Մամիկոնյանը հրամայեց պատերազմական փողերը հնչեցնել: փողերի սաստիկ ձայներից երկիրը թնդաց, որից Նիխորի զորքերը զարհուրելով կարծեցին, թե Վահան Մամիկոնյանը խաբեությամբ եկավ իրենց վնասելու, և ոչ թե սիրով՝ խաղաղություն ձեռք բերելու:

Նիխորը ուղարկեց մեծամեծ մարդիկ նրան ընդառաջ և ասաց Վահան Մամիկոնյանին՝ «Պարսից սովորության համաձայն չես անում դու այդ, այլ՝ նոր գործողությամբ այլ կերպ ես ձևանում. այսուհետև դու պարսից սովորությունը պետք է ընդունես և հավանես, որովհետև երբեմն ժամանակ միայն պարսից սպարապետն իրավունք ունի փող հնչեցնելով բանակը մտնել. պարսիկների մեջ և ոչ ոք այդ վստահությունը իրավունք չունի անել»: Վահան Մամիկոնյանը Նիխորին պատասխանելով ասաց. «Նախ արա՛ ինձ պար-

սից Թագավորի ծառա, ապա նույնիսկ առանց քեզանից սովորելու՝ երևի թե ես նույնպես գիտեմ Պարսից աշխարհի կարգն ու արժանը. դու ինձ շատ մոռացկոտ մի կարծիր, ըստ որում շատ տարի չէ, որ ես հեռացել եմ ձեզանից»:

... Նիխորն սկսեց խոսել Վահան Մամիկոնյանին և ասաց. «Թեպետ միևնույն երկրում չես ապրել ինձ հետ, բայց շատ անգամ տեսնելով քեզ պալատում և լսելով ձեր աշխարհի ոչ թե անծանոթ ու անվարժ, այլ լավ՝ գիտող և իմաստուն հայ և պարսիկ մարդկանցից, որ այժմ հայտնապես փորձով հասկացանք ամենքս՝ այն որ պատերազմի գործը ինչպես քաջությամբ, նույնպես և առավել քան հանճարով ու խելացիությամբ է կատարվում. ինչպես այդ երկուսն էլ դու Արյաց աշխարհին կատարելապես տեսնել ու ճանաչել տվիր: Որովհետև քաջություն ցույց տվիր սակավ մարդկանցով. քանզի ցանկանում ես քչերով կռվել շատերի հետ և այդպիսի մեծամեծ հարվածներ տալ ու անհանգստացնել: Եվ իմաստություն ցույց տվիր հասկանալով կռվելու և ետ քաշվելու, զորքն անվնաս պահելու և մյուս ժամում առանց վախենալու կռվելու պատրաստ լինել: Եթե այդ երկու շնորհքը քո մեջ կատարելապես չլինեին, ապա ի՞նչպես կարող էիր դու այդքան քիչ մարդկանցով դեմ կանգնել պատերազմող մարդկանց այնքան անթիվ բազմության, և երբեմն մեծապես հաղթել, երբեմն սարսափեցնել ու անհանգստացնել: Ուստի, ես մտածելով քո այդպիսի գործն ու խելացիությունը, շատ լավ եմ հասկանում այն ամեն պատասխանը, որ դու մեզանից լսած ամեն խոսքին տալու ես: Ըստ որում, եթե քո ապստամբության մասին հարցնենք, թե ինչպե՞ս վստահեցիր մտածել, ուր մնաց կատարել, կպատասխանես, թե՝ Պերոզի [պարսից արքա,— Ա. Բ.] չճանաչողությունը և դեպի ետ մղելն ինձ՝ հարկադրեց մտնել: Վասն զի քաջ մարդը շատ ժամանակ հարվածներով ապրելուց ա-

վելի, շատ լավ է մի օր իր անձի քաջությունը ցույց տա ու մեռնի։ Եվ պարսիկներից ոչ մեկը չի կարող քեզ մեղադրել, որ դու այդպես խորհուրդ մտածեցիր ու կատարեցիր․ ոչ մեկը, ոչ պարսից թագավորը, ոչ պալատի մեծամեծները, որոնք այժմ կան մեջտեղում և դու ճանաչում ես։ Քո կատարած գործերը ոչ մեկը չէր կարող և չէր վստահանալ գործել այն ժամանակ։ Բայց դու և քեզ հետ միաբանված մարդիկ, մահն առ ոչինչ համարելով, քաջի նման դիմեցիք դեպի ապըստամբությունը․ ձեզանից սպանվածների արյունն ազատվածները կպահանջեն Պերոզի ամբարտավանությունից․ և դուք փրկվածներդ, որ այժմ կենդանի եք, անպարտ եք ու անմեղ։ Վասն զի պարսից այժմյան թագավորն ու բոլոր մեծամեծները միայն այդ են խոսում ամեն օր, և անմխիթար ողբում ու արտմում, հիշելով Պերոզի անհավան և դառը բնավորությունը, որ նման էր ոչ թե մարդու, այլ չար և վայրենի գազանի»։

«Պատմութիւն հայոց և Թուղթ առ Վահան
Մամիկոնեան» գրքից, 5-րդ դար։

Վաղարշ թագավորը [պարսից,—Ա․ Բ․] սկսեց խոսել Վահան Մամիկոնյանի հետ․ «Լսեցինք,— ասում է,— մանրամասնաբար քո բոլոր պատմածները Նիխորից․ ինչ որ պատգամավորներով էին խոսել, ինչ որ նամակով, և ինչ որ երես առ երես դու և նա խոսել էիք իրար հետ, պատմեց մեզ․ դու քո խոսած խոսքերից և ոչ մի բան սուտ չէիր ասել։ Վասն զի իմ եղբայր Պերոզի ինքնահավանությունը, խորհուրդի չհավանելը, ոչ մեկին չլսելն ու ամբարտավանությունը, եթե միայն քեզ կորցրած լիներ Արիներից [պարսիկներից,— Ա․ Բ․], վնասը փոքր էր․ բայց նա իր հպարտությամբ այնքան անթիվ քաջ մարդկանց կորցրեց, որոնց փոխանակն այսօր չկա․ ապա կորցրեց իրեն, և իր որդվոցն ու կանանցը։ Արդ՝ եթե դու ես եղել կործանման պատճառ քո և այնքան բազմության, որ քո ձեռքով ոչնչացան՝ այսօր դու հարցափորձի, պատժի

և չարաչար մահվան արժանի էիր: Բայց երբ այդ ամեն գործի [ապստամբության,—Ա. Բ.] և կորստյան պատճառն այլ է, որ դու գործեցիր, քեզ ուրիշի բռնության և վնասի փոխարեն պատժելը խիստ ծանր է, և մեր օրենքները չեն հրամայում: Քանզի այդ գործը [ապստամբությունը,— Ա. Բ.], որ դու կարողացար գործել Պերոզի արհամարհող և կամակոր բնավորության պատճառով պարսիկներից շատերը մտածում էին գործել, բայց չկարողացան. որովհետև աշխարհիս կյանքը քաղցր համարելով, չվստահացան այդպես աներկյուղ իրենց անձերը մահի մատնել, ինչպես դուք ինքներդ մատնեցիք: Բայց դուք այս աշխարհը բոլորովին առ ոչինչ համարելով՝ մեռնողները քաջի նման մեռան առավել ևս ապրողներդ քաջի նման ապրեցիք և կենդանի եք»:

Վահան Մամիկոնյանը պատասխանելով Վաղարշ թագավորին ամբողջ բազմության առաջ, ասաց. «Այն կամքը և ինքնահավան բնությունը, որ դուք ձեր եղբոր Պերոզի մասին ասացիք, շատ էր և թագավոր մարդուն անվայել...Մեզ հոգով էիք սպանում, այդ նեղությանն ու վտանգին ոչ մեր պապերը և ոչ մենք չկարողացանք դիմանալ: Մինչ բողոքել և բողոքում ենք, որ ձեր օրենքները սուտ են թվում մեզ, և անմիտ մարդկանց ցնդաբանություն. մի ստիպեք մեզ թշնամանալ, ինչ որ կամքով պատվել ու սիրել չենք կարող: Մեր չլսված բողոքի համար իշխանաբար և բռնությամբ կամենում էիք կորցնել մեզ և կորցրիք: Որովհետև մեր օրենքները սրբություն են պահանջում, և ամեն աղտեղություն, որով մարդկանց հոգիները կորչում են, հանձն չեն առնում և չեն կամենում... Ձեր պարսիկների շատ գործակալները եղել են զանազան տեղերում, թող ցույց տան նրանցից մեկի մի երևելի գործը, որ նրանք արել են, և ձեր գործակալները տեսել, և նրանց այդպիսի աշխատության համար դուք վարձատրել եք: Իսկ նրանց աղտեղի գործերն ու մահապարտությունը հայտնապես գիտեն Հայոց աշխարհի

նրանց հետ ապրող մարդիկ և ուրիշները, թե նրանք ինչպիսի մարդիկ են. ամեն աղտեղությամբ լի, սուտ, անպիտան, չարագործ, ծածուկ շրջող, գող, լեռները քաշվող, գերեզմաններ բաց անող, խաբեբա. Եվ նրանց հետ Հայոց աշխարհի շինական մարդիկը գարշում են հաց ուտելու կամ բոլորովին մոտենալու...

«Այդ պատճառով համարձակ բարձր ձայնով այսօր ասում եմ ձեր առաջ. հեռացրե՛ք այդ խաբեության առևտուրը Հայոց աշխարհից»:

Վաղարշ թագավորը նրան պատասխանելով՝ ասաց Վահան Մամիկոնյանին և նրա ուխտակից բոլոր հայ նախարարներին. «Ամեն բան, ինչ որ դուք մտածել եք և իմացել, և մեր առաջը խոսեց ձեր Վահանը, տալիս եմ ձեզ գրով ու կնիքով բոլոր ձեր պահանջը՝ այսօր և մինչև հավիտյան: Եվ ապստամբության գործը, որ Պերոզի բռնության պատճառով գործեցիք, և ոչ ձեր կամքով, ներվում է ձեզ այսօր. այս գահի վրա նըս-տող թագավորներից ոչ մեկը, և կամ մի պարսիկ մարդ թո՛ղ չվստահանա հիշել այդ կամ առանձին ի-րենց մեջ, և կամ հայ մարդու առաջ, այսուհետև մինչև հավիտյան»:

«Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան» գրքից, 5-րդ դար:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԱՄԴԱՐՅԱՆ

Անցնում է 5-րդ դարը՝ ո՜վ Հայաստանի որբեր, որից սկսած մենք զրկված ենք մնացել թագավորությունից, հայրենիքից և մեր նախնիների բոլոր ժառանգությունից, տանջվում ենք Քրիստոսին ատող պարսիկների ծանր լծի տակ այս բարբարոսների անվերջ ծառայությունից վշտով ու թախիծով համակված: Սրանք մեզանից կողոպտեցին ոչ միայն մեր ըստացվածքը, այլ և ավարի մատնեցին մեր Հայկազունների բարոյական և բնատուր ձիրքերը: Մենք մեր նախնիների ստվերներն ենք. նրանց կատարած գործերի և առաքինության ժառանգորդները չենք, այլ՝ նրանց ուրվականները: Դարձրե՛ք ձեր հայացքը հայրենի պատմագրության վրա՝ որ գրված է արյուններկ տառերով՝ և համոզվե՛ք այս դառնաղետ ճշմարտությունը:

Այժմ, Քրիստոսի անունը կրող զինվորություն, Աստծու բարկության չափը լցվել է: Տիրոջ աջը, որ մինչև այժմ կափում էր, ներկայումս սրբում է մեր արտասուքները. մեր ընկածի վիճակից մեզ բարձրացնում է. իր բարձրագույն օծյալի ամենաբարեպաշտ մեր օգոստափառ կայսեր միջոցով իր ողորմության և գթության դռներն է բանում մեր առաջ:

Մեզ սուգը փոխում է ուրախության, հեռացնում է մեզանից փորձությունը և մեզ ուրախություն բերում:

Սքանչելի է Աստված իր շավիղների մեջ. սքանչելի է և նրա օգոստափառ օծյալը, որ որբացած Հայաս-

տանի խաղաղությունն ու մխիթարությունն է: Աստծու և Նրա օծյալի բարությունը միայն բավական չէ վերադարձնելու մեզ մեր կորուստը, բավական չէ մեր անարգ վիճակից մեզ բարձրացնելու, բավական չէ մեր վերքերը ապաքինելու. այլ իր անքննելի տնօրինությունով նա մեզ՝ Հայաստանի տառապած որդիներիս խրախուսում է գործակցել մեր ազատության, մեր ամենասիրելի հայրենիքը նորոգենք իր բազմադարյան փլատակներից:

Աստծու և Թագավորի ձայնը հրավիրում է ձեզ, հո՛տ փոքրիկ, փառքի և առաքինության ասպարեզ: Արիացե՛ք և հսկայի պես քայլելով դիմեցե՛ք այնտեղ:

Ձեր գործերը, վարքը, ջերմեռանդությունը և ջանքը կատարելապես իրագործելու ձեր ուխտը, որ այժմ ուխտում եք այստեղ, այս սրբության վայրում՝ թո՛ղ ընթացակից լինեն ձեզ ձեր ամբողջ կյանքի ընթացքում:

Զոհվե՛ք ինքնակալ կայսեր և ձեր Հայրենի աշխարհի համար Աստծու բարեպաշտություն, արդարություն և հավատարմություն ճանապարհից: Աշխատեցե՛ք արյան չափ կատարել այն բոլոր պարտականությունները, որ հանձն առաք այսօր Աստծու առաջ: Եվ մեր Տեր Աստվածը՝ որ անտեսանելի կերպով հովանավորում է ձեզ ու օգնություն է հասնում նրանց, որոնք ճշմարտությամբ նրա անունն են տալիս, նա կվերցնի իր զենքը և վահանը և վեր կկենա ձեզ օգնելու:

Այդ դրոշակը, որ այսօր տիրոջ ահավոր անունը հնչեցնելով սրբագործվեց և տրվեց ձեր գնդին, Աստծու և Նրա օծյալի երաշխիքն է դեպի ձեզ: Պահեցե՛ք այս անգին ավանդը ինչպես աչքի բիբը: Ահա և կամաչեն ու կպառկեն ձեր բոլոր հակառակորդները և կոչնչանան, կկորչեն ձեր բոլոր դատախազները:

Ռուս-պարսկական պատերազմին Հայոց կամավոր գնդի զինվորության երդվեցնելու և դրոշակի օրհնության օրը արտասանած ճառից, 1827.

ՄԵՍՐՈՎԲ ԹԱՂԻԱԴՅԱՆ

Տեր՝ կեցո՛ զՀայս
Եվ արա զնոսա պայծառս:
Մ. ԹԱՂԻԱԴՅԱՆ

Աչքներդ հազար լույս որ մեր քաղցր Աշխարքն պարսից դառն չարչարանքից ազատվեց, Քրիստոսի տերության ներքո ընկավ: Փառք բարերարին Աստուծո որ այսուհետև, ավել նեղություն չեք ունենալեց, ազատ քաղաքի քաղաքացի պիտի ըլնիք, ձեր ազգասիրության, իմաստասիրության յուղն, և արվեստից հառաջադիմությունն բոլոր աշխարհ պիտի տարածվին:

Երևանի առման առթիվ երևանցիներին ուղղած նամակից, 1828.

Վերջապես, երբ որ լսեցի ներկա մեր աշխարհի ազատությունն, սիրտս ուրախությամբ վառվեց, ֆրանկ ազգաց լուսավորությունն տեսնելով և մեր ազգի անլուսավորությունն, նախանձ մեծ ընկավ հոգիս, և թեպետ ես ո՛չ շատ փողատեր վարդապետ եմ, ո՛չ վաճառական, ո՛չ կարգ ունեմ, ո՛չ աստիճան, սակայն Աստված, որ միշտ տկարաց ձեռքովն մեծ մեծ բաներ ա կարող կատարել, վստահացնում ա ինձ, իմ կարյաց գյորա ի՛մ Ազգիս, ի՛մ քաղաքիս և իմ ծնող Աշխարհիս պիտանի ըլնիմ ձեր շնորհքովն:

Երևանի առման առթիվ երևանցիներին ուղղած նամակից, 1828.

Իմ ազնիվ Քաղաքացիք, գիտեմ որ մեր աշխարհի այսքան երկար ժամանակայ գերության տակ մնալն գիտության հարգն ոչ կարե ներկա լավապես ցուցանել ձեզ, բայց հուսամ որ շուտով կարողանեք ճանաչել: Գիտությունն է՝ ազնիվ Թագուհին ա, որ հախա՛ աղ-քատ հագուստով բախտավորաց դռանն կղեգերի, ամ-մա՛ թագավորաց թագին պարծանքն ու փառք ա: Տե-րություն չկա, որ էս անտեր գիտությամբս կանգնած և պահվում չլինի· Ռուսաց էդ մեծ կայսրությունն, թե հառաջ քան դուրբն Պետրոս յուրյանց իմաստա-սեր Թագավորն ի՞նչ էր և ներկա ի՞նչ ա, հայտ է ձեզ: Մին երեխա եթե կարդալ գրել գիտենա, էն ար-վեստանքին, որ բազում չարչարանքով, որ վեց կամ յոթն տարումն ա սովորում, մին երկու տարումն կարե հեշտ ու հանգիստ սովորած արվեստն հնարքով հեշ-տացնել, և նոր նոր արվեստանք ես հնարել:

Ո՞ւր է ձեր վեհ հոգին, ո՞ւր է ձեր աշխարհի ծա-նոթացած անունն, կորյա՞ն արդյոք, ո՛չ: Աստուծո հատուկ ողորմություն բացվել է ձեզ վրա, իմ ազնիվ Քաղաքացիք· մի ասեք, թե ջանք անենք, փող ժողո-վենք, լավ ապրենք· մոխիր է մեր փողն, փուչ է մեր կյանքն, սնոտի է մեր հույսն, եթե չենք ջանալեց, որ մեր ազգի երեխայքն էլ լուսավորության դուռն բա-նալ, որ վաղն և մյուս օրն կարողանան մարդի միջում մարդ երևիլ:

Պարտ է ուրեմն Աստուծո ողորմությունն ոտնա-տակ չտալ, նոր ձեզ տված ազատությունն անմահ փրկություն համարել· ջանալ, որ ձեր խանդակաթ որ-դիքն կարողանան իմաստությամբ թուր բռնել ընդդեմ թշնամյաց Աստուծո և բարերար կայսեր ձերո· և ձեր աղջկերքն գրիչ· նոքա քաջություն առնեն, և սոքա նորանց քաջությունն գրեն· նոքա դառնան քաջ զորք ու զորաբանակ և սոքա քաջ իմաստուն և լավ տան-տիկնայք· Ե՛ եթե կարենա մեր աշխարհն մին անգամ իր որդիք և դստերքն էսպես կատարելությամբ ծաղ-կած տեսանել, չգիտեմ՝ ո՞ր մին Ֆրանկի աշխարհից

պակաս կմնա, թե լուսավորությամբ, թե արվեստով, թե ազնվությամբ, և թե երջանկությամբ, և ոչ թե մինիցն: Ահա էս ա իմ ցանկությունս իմ քաղցր Աշխարհիս համար, եթե որ հաճելի կլինի վերն գրածիս համաձայնիլ և կատարել, ուրեմն հեշտ է, մենք հիմն կդնենք Աստված կշինի. և ես ուրախ կլինեմ ապրել ձեզ համար. և մեռնիլ ձեզ համար:

Երևանի առման թվին երևանցիներին ուղղած նամակից, 1828.

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

Վա՜յ է՛ն ազգին, որ աշխարհումս անտեր ա,
Վա՜յ է՛ն երկրին, որ թշնամու գերի ա,
Վա՜յ է՛ն խալխին, որ ինքն իր կյանքն,
աշխարհը
Չի պահպանիլ, ու հարամու ձեռ կտա:

Խ. ԱԲՈՎՅԱՆ

Շունչդ տուր, հոգիդ, բայց քո հայրենիք
Մի տուր թշնամյաց, ու անաշխարհիկ
Ընկնիլ սարեսար, լինիլ չարաչար
Ծառա օտարաց, կամ գերի անճար:

Խ. ԱԲՈՎՅԱՆ

Ոչ քսան-երեսուն տարուց ավել ա՝ իմ ազիզ հե՛ր, ի՛մ սիրելի ազգ, որ սիրտս կրակն ա ընկել, էրվում, փոթոթվում ա, գիշեր, ցերեկ լացն ու սուգ իմ աչքիցը, ա՛խն ու ո՛խը իմ բերնիցս չի՛ պակասում, այ իմ արյունակից բարեկամք, որ մեկ միտքս ու մուրազս ձեզ պատմեի ու հետո հողը մտնեի: Ամեն օր գերեզմանս առաջիս տեսնում էի, ամեն սհաթ մահվան հրեշտակն սուրը գլխիս պտտում էր, ամեն րոպեի ձեր սիրտն ու դարդը՝ հոգիս էրում, մաշում էր, լսում էի ձեր քաղցր ձենը, տեսնում էի ձեր սիրուն երեսը, իմանում էի ազնիվ միտքն ու կամքը, վայելում էի ձեր ազիզ սերն ու բարեկամությունը, մտածում էի ձեր կորցրած փառքն ու մեծությունը, մեր առաջին՝ է՛ն հինավուրց թագավորաց, իշխանաց գործքն ու կյանքը, մեր հայրենյաց, մեր սուրբ աշխարհքի առաջվան

սքանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի աննման բնությունն ու արած քաջությունները։ Մասիս առա-ջիս էր կանգնած միշտ, որ մատով ցույց էր տալիս՝ թե ի՞նչ աշխարքի ծնունդ եմ ես, դրախտը մտքումս էր կենդանի, որ ինձ երազում, թե լուրջ՝ միշտ մեր երկրի անունն ու պատմականությունն՝ իմ առաջս էր բերում, Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ՝ քնած տեղս էլ ինձ ասում էին՝ որ ես իրանց որդին եմ. Եվ-րոպա թե Ասիա ինձ անդադար ձեն էին տալիս, թե Հայկա զավակն եմ ես, Նոյան Թոռը, Էջմիածնա որ-դին, դրախտի բնակիչը, դաշտում թե ժամում, չո-լում, թե տան՝ էն քարերն էլ ուզում էին՝ որ սիրտս պոկեն, հանեն ուր տեղ որ իմ ազգի տեր կոխել ա, ու էս օր էլ կոխում ա, շատ անգամ մեկ հայ տեսնելիս, ուզում էի՝ էլած չունեցս էլ հանեմ, նրան տամ. բայց ա՜խ՝ լեզուս փակ էր, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարճ. գանձ չու-նեի, որ գործով ցույց տայի ուզածս, անունս մեծ չէր՝ որ ասածս տեղ հասնի, մեր գրքերն էլ գրաբար, մեր նոր լեզուն էլ անպատիվ, որ սրտիս հասրաթը խոսքով **հայտնեի...**

«Վերք Հայաստանի» պատմական
վեպի առաջաբանից, 1840.

Է՜ս հո էս՝ Եվրոպիումն էլ, որ չէի կարդում բազի գրքերում, թե հայ ազգը պետք է՝ որ սիրտ չի՛ ունե-ցած ըլի, որ էնքան բաներ գլխովն անց են կացել, մեկ մարդ էլա չի՛ դուրս եկել, որ մեկ սրտի բան գրի, ինչ կա՝ եկեղեցու վրա յա, աստծու ու սրբերի, բայց հեթանոս Հոմերի, Հորացի, Վիրգիլի, Սոփոկլեսի գրքերը՝ էրեխեքն էլ գլխատակներին ունեին, չունքի բոլոր աշխարհի բաներ են։ Թե ասեի՝ բոլոր եվրոպա-ցիք են անխելք, անհավատ, որ աստծու բանը թո-ղած, էսպես ծուռ մուռ բաների հետ էին ընկել, հի-մարություն կըլեր։ Թե չէ մեր Նարեկը թողած, ախր ի՞նչպես էին նրանք էն գրքերին հավանում։ Լավ գիտում էի, որ մեր ազգն էնպես չէ՛ր, ինչպես նրանք

ասում էին, ամա ի՞նչ անես, անաղուն ջաղացի քարն՝ էլ չի՛ պտտի գալիս, ո՞ւմ ասես: Միտք էի անում՝ որ թե կորիչ մարդ ասես մեր միջումը հազարավորն են էլել ու էս օր էլ կան. թե խելոք խոսք ասես, մեր պատավներն էլ հազարը գիտեն: Թե աղ ու հաց ասես, սեր, բարեկամություն, քաջություն, երևելի անձինք՝ ասես, մեր գեղըցոնց սիրտն էլա լիքը էսպես մտքերով: Ասակ, մասալա, սուր սուր խոսքեր՝ որ ուզենաս հո՝ էն հետին ռամիկ մարդը՝ մեկի տեղակ հազարը կասի: Ախր ի՞նչ պետք էր արած՝ որ մեր սիրտն էլ ուրիշ ազգեր իմանային, մեզ էլ գովեին, մեր լեզուն էլ սիրեին, մնացել էի տարակուսած: Լավ գիտեի, որ թե օսմանցվի, թե ղզլբաշի երկրումը՝ ինչքան էնպես երևելի, խելոք, հունարով մարդ են էլել, ինչքան խանի, շահի, սուլթանի դռներին սիրեկան աշըղ, լավ խաղ ասող, տանավոր շինող մարդն են էլել, շատը հայ ա էլել...

Էսպես բաները մտածելով, օրս ու ամբրս մաշվել էր: Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ: Չէի իմանում՝ թե սրա չարեն ի՞նչ կըլի: Թող լողը չհավատա, ամա էս ցավն էնպես էր սիրտս առել, որ շատ անգամ գժվածի պես ընկնում էի սար ու ձոր, ման գալիս, մտածում, էլ եդ սիրտս լիքը տուն գալիս...

Բանը հենց էս էր՝ որ ասում էի մտքումս՝ թե նստիմ, ինչքան խելքս կրերի, մեր ազգին գովեմ, մեր երևելի մարդկանց քաջությունները պատմեմ...Միտք արի, միտք արի, մեկ օր էլ ասեցի ինձ ու ինձ, արի՛ քո քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն ծալի՛ր, դրադ դի՛ր. ու մեկ աշըղ էլ դու դա՛ռ, ինչ կըլի, կըլի, խանչալիդ քարը հո վեր չի՛ ընկնիլ, գառ վարագդ հո չի՛ գնալ: Մեկ օր էլ դու վեր կընկնիս, կըմեռնիս, մեկ ողորմի ասող էլ չես ունենալ...

Սի՛րելի կարդացող՝ չնեղանաս՝ որ բանն էսքան երկարացրի: Էնդուր համար եմ էստոնք հիշում, որ

խմանաս՝ թե ազգի սերը ի՞նչ լազաթ ունի, ի՞նչ զորություն։

«Վէրք Հայաստանի» պատմական
վէպի առաջաբանից, 1840.

Հայաստանու հողն՝ որ հազար տարուց հետ սկըսած՝ դառել էր գողի ու ավազակի բնակարան։ Է՛ն հողը, է՛ն հիանալի աշխարհը... ուր որ անպարտելին Հայկ՝ անաստված Բելա չար մաքին չհավանելով՝ իր ընտանիքը, իր քաջ, պատվական զորքը հավաքեց, եկավ ու Հայաստանի զարմանալի սարերի, սիրուն դաշտերի տեսուլն մայիլ մնացած, Զանգվի դրախտանման ձորը, Զանգվի փրփրադեղ, անահ ջուրը, Երասխի մարմանդ ծոցը, Մասիս ու Արագածի երկնանման գլուխը՝ Սևանա ծաղկափթիթ ձորերն ու սարերը տեսնելով, իր մըրախը ցցեց ու իր սուրը անունովը Հայաստան կանչեց ու Բելա անհոգի մարմինը իր ոտու ու աղեղին մատաղ արեց։ Է՛ն սուրբ տեղը, ուր որ Շամիրամ՝ աշխար ավերելով, ո՛չինչ տեղ էն պատկերը չճարեց, որ իր սիրուն ուզում էր ու մեր հրեշտականման Արայի սիրուն երեսին կարոտ՝ զորք ժողովեց, եկավ, որ թե նրա սուրբ սիրտը լալով, սիրով չգրավի, գոռով նրան գերի անի, որ բալքի նրա սուրբ չունչը իր երեսին դիպչի ու մեռած ժամանակն էլ՝ նրա մարմինը առաջին դրածն՝ դիշեր ցերեկ սուգ էր անում, որ կամ նա կենդանանա, կամ ինքը նրա ոտի տակին հոգին տա։ Է՛ն աշխարը, ուր որ Զարմայրն՝ Աքիլեսի հետ Հեկտորի դեհն ուզեցավ պահի, Պարույր՝ Արբակի հետ Սարդանապալին էրեց, Տիգրան՝ Կյուրոսի հետ Աժդահակա հոգին առավ, Վահե՝ Դարեհ Կոդոմանի հետ Աղեքսանդրի ձամփեն ուզեցավ բռնի. Վաղարշակ Պարթեն՝ իր եղբայր Արշակա տալ իր երկրիցը կարեց ու Հայաստանին կարգ ավեց, նախարարներ հաստատեց. Տիգրան՝ արքա արքայից՝ Ասորոց աշխարն իր ձեռի տակը բերեց ու կարթագենացոց հռչային Անիբալ զորապետին իր մոտ հրավիրեց՝ ուր որ

քաջահաղթն Տրդատ՝ Հսկայ իր քաջութիւնովը ու իմաստութիւնովը զարմացնելէն հետո՝ եկավ իր հայրենական հողին տիրեց ու պահեց, պարսից շունչն ու ոտը կտրեց... Էն տեղը որ Վարդան Մամիկոնյան, Վահան ընտիր եղբայր նորա՝ անօրինակ քաջությամբ, որ աշխար դեռ չի տեսել, իրանց օրէնքն ու սուրբ եկեղեցու պատիվը արնով գնեցին. Էն տեղ՝ որ Վռամշապուհ՝ բոլոր աշխարհի լուսավորութեան ու իմաստութիւնը իր կողմը քաշեց, իր աշխարհը բերեց: Էն ընտիր աշխարհը, ուր Ռուբինյանք, Բագրատունյանք իրանց՝ հազար թշնամու ձեռի տակի մնացած հայրենիքը (վաթանը) էլ էդ գերեզմանիցը հանեցին, էլ էդ նոր հոգի տվին: Էն օրհնյալ հողը, ուր տաճարք, պարսիկք, հոնք, ալանացիք, մակեդոնացիք, Հռոմայեցիք, արաբք, օսմանցիք՝ ջրհեղեղի պես վրա եկան, հարյուրավոր ազգ ու աշխար՝ ոտնակոխ արին, ջնջեցին, սրբեցին, թրի, կրակի ճարակ արին, ուր տեղ որ ոտը չի մնացել, որ արին չտեսնի, քար չի մնացել, որ մարդ տակին չանի ու հարիր մեր հարեվան ազգեր ինչպես են հողի հետ հավասարվել, կորել, որ էս օր ո՛չ նրանց շունչը կա, ոչ անունը, բայց սուրբ հայոց ազգը, անհաղթելի՝ Հայկա որդիքը՝ իրանց կյանքը, թագավորութիւնը, մեծութիւնը, փառքը, իշխանութիւնը, գորքը կորցնելէն ետև, որ տեսա՛նք՝ թե է՛ս աշխարհակործան ջրհեղեղին, է՛ս գազան ազգերին՝ որ մեկը մյուսի ոտէցը ձոյալի՝ ուր ու կամենում էին գնալ, Եվրոպա, թե Ասիա, հայոց հողովը պետք է անց էին կացել, չէ՛ն կարող դիմանալ, աչքերները երկինքը քցեցին, գլուխները գաղները դրին ու հազար թրի տակից, հազար կրակի միջից՝ սիրտ սրտի տված, հոգի հոգու կպցրած, մինչև էս օր էլ՝ իրանց գլուխը, իրանց սուրբ հավատը, իրանց սուրբ օրէնքը՝ է՛ն վեհանձնութիւնովը պահպանեցին, որի օրինակը աշխարքում ո՛չ էլել ա, ո՛չ կլի, է՛ն աշխարհը, էն անօրինակ ազգն էր էս վերջին ժամանակը՝ շունչը բերանը հասած՝ աչքը երկինքը կթել՝ որ սու-

սաց հզոր արծիվը գա ու իրանց հողն ու զավակը իր թևի տակովն անի: Քսան տարու միջում լուսավորյալ, քրիստոնյա, խաչապաշտ եվրոպացոց տեր՝ ողորմելի Ամերիկա էնպես քանդեց, ջնջեց, հողի հետ հավասարեց, որ հինգ վեց միլիոն ազգերիցը՝ էս օր հազար հոգի էլ չեն մնացել, էն էլ սար ու ձոր ընկած, վայրենի գազանների պես են իրանց սև օրը լալիս ու կոտորվում. բաս ի՞նչ աներ հայոց խեղճ ազգը, որ Նոյան դեսը վեց հազար տարի՝ ո՛չ թե քրիստոնեի, կամ լուսավորյալ ազգի, այլ հեթանոսի, կռապաշտի, մահմեդականի, անօրենի ձեռին էր աչքը բաց անում, նրանց հետ քյալլա տալիս, ու շատին շատ անգամ՝ իր տուն տակը քցում, բայց կարո՞ղ է վարդը ծովի միջում զորանալ, մանիշակը կրակի առաջին դիմանալ. կարո՞ղ է կակուղ ցորնի հասկն, է՛ն կայծակին ու կարկտին համբերել, որ մեր ազգը իր թշնամուն համբերել էր, յա դիմացել:

Հայո՛ց ազգ, հայո՛ց ազգ, ձեր ջանին մեռնիմ. հայոց ազգ՝ քո հողին մատաղ՝ հայոց աշխարհ՝ էն ո՞ր կաթը դուք ծծեցիք, է՛ն ո՞ր մեջքը ձեզ բերեց, էն ո՞ր ձեռը ձեզ դրկեց, է՛ն ո՞ր բերանը ձեզ օրհնեց, որ դուք է՛ս հոգին ունենաք, է՛ս սիրտը ձեր միջումը ըլի, է՛ս հրաշքը դուք աշխարքին ցույց տաք: Է՛ն ի՞նչ աչք պետք է ըլի, որ քոռանա, ձեզ չտեսնի, ձեր դարդը չիմանա. էն ի՞նչ բերան պետք է ըլի, որ կապվի, ձեր փառքը չգովի, ձեր անունը չպաշտի. էն ի՞նչ քարացած սիրտ պետք է ըլի, որ ձեզ չսիրի, ձեզ իր հոգին մատաղ չտա: Օրհնեցե՛ք ուսի տոր, ջան ջանի տվե՛ք. իրար սիրեցեք. դուք էն աշխարքի ծնունդն եք, էն ազգի զավակը՝ որ աշխար ամենայն զարմացրել են ու կզարմացնեն: Դո՛ւք, դո՛ւք իրար պահեցե՛ք, ինչպես ձեր նախնիքը, դուք իրար թասիբ քաշեցե՛ք, ձեր նախնիքը միտք բերե՛ք, ձեր հողն ու ազգը պաշտեցե՛ք, ես եդ եմ դառնում, էլի իմ պատմությունն անեմ, բայց աչքս ճամփի ա, անկաջս ձենի՝ ձեր ջանին ղուրբան՝

չթողաք, որ էս մուրազը հետս գերեզմանս տանեմ ու հողումն մարմինս քրքրվի, երկնքումը հոգիս տանջվի, երբ իմանամ՝ թե ձեր սերը պակսել ա, ձեր բարեկամությունը ցամաքել։

«Վերք Հայաստանի» պատմական վեպից, 1840.

Աշխարքումն ո՞վ տար բարձրացրեց՝ Հայաստանու վրովը պետք էր լոք տար, հայոց ազգին պետք էր ոտնատակ տար, ձեռք քցեր որ իր թշնամու հախիցը կարենար գալ։ Ո՛չ ասորիք, ո՛չ պարսիկք, ոչ մակեդոնացիք, ո՛չ հռովմայեցիք, ո՛չ պարթևք, ոչ մոնղոլք, ո՛չ օսմանցիք չէին կարող էն զորությունը ստանալ, եթե հայոց ազգը մեկի դեհը չէ՛ր պահել։ Դեհը պահելով ղորդ ա իր տունը քանդեց, չունքի իր բարեկամը վեր ընկնելուց եդո իր թշնամին ավելի ևս իր չարությունը գործում, իր ինադը (ջիգրը) հանում էր. բայց էստով հայոց ազգը արարած աշխարքին հավիտյանս հավիտենից կարող է համարձակ ցույց տալ, թե ի՛նչքան հոգի ուներ, ի՛նչքան կամաց զորություն, սրտի հաստատություն, որ իրան չորս կողմի էն հզոր ազգերը կորան, փչացան, անունները չկա, հայոց ազգը անունն էլ ունի ու իրան հավատըն ու լեզուն մինչև էս օր արնի գնովը պահեց, հասցրեց՝ որ մեկ ազգ էլա էսպես օրինակ չունի։

«Վերք Հայաստանի» պատմական վեպից, 1840.

... Է՛ս սիրտը, է՛ս հավատը, է՛ս հոգին, է՛ս սերն ուներ հայ ազգը, որ թշնամու, գազանի ձեռի՝ երկիր, աշխար, ազատություն, թագավորություն, իշխանություն, մեծություն, բոլոր, բոլոր կորցրեց, իր հավատին մատաղ տվեց, աղքատություն, նոքարություն, գերություն, զարկություն, տանջանք, չարչարանք, սով, մահ հանձն առավ... Է՛ս ա հսկայություն, սրտապնդություն, մեծահոգություն, քաջություն, կամաց հաստատություն, հոգու կարողու-

թյուն ու գոյություն, որ՛ աշխարքիս վրա ջրհեղեղիցը դեսը մեկ ազգ էլա մինչև էսօր՝ չի՛ կարաց ու չի՛ էլ կարող ցույց տալ: Սար ըլեր՝ փուլ կգար, երկաթ ըլեր՝ կհալվեր, կմաշվեր, ծով ըլեր՝ կպակսեր, կցամաքեր. բայց աստվածասեր հայ ազգը՝ մինչև էս օր գերօրինակ հսկայությամբ տարավ բոլոր ու իր անունը պահեց...

Խոսքս բաներս լսեցիր սիրելի կարդացող՝ բաս ի՞նչպես չի սիրտդ փառվի, որ դու է՛ն ազգի որդին ես, որ էսքան տանջանք քեզ համար քաշեց, ինքը նահատակվեց, քո կաթդ ու արինդ ուրիշ ազգի հետ չխառնեց: Ինչպես կարծո՞ւմ ես քիչ բան ա, հազար տարով էս օրը քաշել, էլի ազգ պահել, որդի մեծացնել, անուն, լեզու, հավա՞տ ունենալ: Ա՛խ՝ էս միտք անողը՝ էլ ի՞նչ սիրտ պետք է ունենա, որ իր լեզուն, իր ազգը չսիրի:

«Վերք Հայաստանի» պատմական վեպից, 1840.

Ա՛խ՝ լեզուն, լեզուն, լեզուն որ չըլի, մարդ ընչի՞ նման կըլի: Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը: Լեզուդ փոխի՛ր, հավատդ ուրացի՛ր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թե ո՞ր ազգիցն ես: Ինչ քաղցր, պատվական կերակուր էլ տաս երեխին, էլի իր մոր կաթը նրա համար շաքարից էլ ա անուշ, մեղրից էլ: Մեր կաթն էլ որ ծախենք տանող չի ըլի: Մեր աչքը որ հանենք ուրիշին տանք, ուրիշը կարելի՞ ա դնել տեղը: Մեր օրորոցի վրա մեր լեզվով մեզ նանիկ ասեցին. էն էլա մեր միտքը չի՞ պետք է ընկնի...

Ձե՛զ եմ ասում՝ ձեզ՝ հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անումին մեռնիմ, ձեր արևին ղուրբան, տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը ղայիմ բռնեցե՛ք: Մեկ դատարկ լեզուն ի՞նչ ա, որ մարդ չկարենա սովորի:

«Վերք Հայաստանի» պատմական վեպից, 1840.

Երեխնե՛ք՝ ձեր ջանին մեռնիմ. ձեզ եմ տալիս իմ դարդը. ձեզ համար եմ գրում. ձեր երեսին ղուրբան՝ հոգումն էլ ըլիմ, եկե՛ք, սրտս կանգնեցե՛ք. թե աղգասիրությունն ու հայրենասիրությունը ձեզ մտածե՝ անիծեցե՛ք ինձ, թե օգուտ՝ օրհնեցե՛ք ու խնցե՛ք ձեր ընկերների լույն ու սուրը, նրանց հորնըմոր կաթիծն ու ձեր հորնըմոր ծոցումը գինջ հանգստանալիս՝ տառծներս մարթներդ բերե՛ք:

«Վերք Հայաստանի» պատմական վեպից, 1840.

Ինչպես մեկ կատաղած վիշապ՝ երկնքիցը թռած, գլխիվեր կախված, մեկ տուտը Սևանի հանդարտ ծոցումը, մեկ տուտը Արագի քրքրված երեսքումը, սար ու ձոր կլխշոր տալով, քանդելով, տապալելով, քար ու քարինքը բերանը կոխած, գզված, մազերը գագաթին ցցած, կապը կարած, գժված, բերանի ավազով, քարով, աղբով լիքը, էս կողմն, էն կողմն փնչացնելով, ճռթռելով, ջարդելով, տակ ու գլուխ ծամելով, փրթելով,—... վառված, կրակված, աչքերը արնով լիքը, բաշը ցցած, տառմները կրճտացնելով, դաշտ ու տափ զմբզմբացնելով, դնդնդացնելով, ու կայծակի՛ թևերը բերնին՝ վրա պրծած որ չի՛ գալիս ամեհի Զանգին *ու Զարագեղ մռնում, որ Հայաստանի սուրբ գետինը ոտնատակ տվողին, մեր նախնյաց մաքուր գերեզմանը քանդողին, կործանողին, մեր նահատակաց սուրբ, անմեղ, արդար արինը թափողին, մեր հոյակապ թախթերը, քաղաքները խլողին, փչացնողին, մեր անճար, օրփան հային կարոտ, լեթիմ, ցրված, սասանած, գերի ընկած, հարամու, թշնամու ձեռին կոտորված, երկրե երկիր կորած, փչացած, խեղճ, անտեր* ազգի *տունը քանդողին, հոգի հետ հավասարողին,— ու մեր չար հարամու բունը, մինօրեն թշնամու տունը, մեր արինը խմողի թախթը, մեր աշխարքը քանդողի ամարաթը[1]), նրա արենաշաղախ բերդը, նրա ասկարային բուրջը, նրա գոզարնակ ու-*

1) *Սարդարի պալատը Ա. Բ.*

ղը, նրա գագաթնաբնակ հողը՝— քանդի՛, տապալի՛, փշրի՛, ավերի՛, տակուգլուխ, գլուխուտակ անի, կրանի,— ու նրանց միջի բնողներին, դրսի թաղածնե-րին, գլխումը բուն դնողներին, տակումը քուն մտնող-ներին քշի՛, տանի՛, սրբի՛, ողողի՛, թիքա թիքա, փառչա փառչա անի ու մեր խեղճ աշխարքի, մեր ո-ղորմելի՜ ազգի՜ այն արտասունքը սրբի, էրված, խո-րոված սիրտը հովացնի, զովացնի, մեր հազար տար-վան թունալից, անբժշկելի յարեն կտրի, վերջացնի···

Զանգի՛, Զանգի՛, գեղեցիկդ իմ Զանգի՛. քո երկ-նանման երեսը տեսնելիս, քո անուշ ձենը լսելիս, քո սուրբ ջուրը բերան առնելիս, քո ծաղկազարդ ձորերի միջումը, քո զովարար ափերի ղրաղին, քո սպիտակ, լուսաթաթախ փրփրի տակին, քո պարկեշտ Մամրու ափին, քո խնկահոտ ծառերի տակին, քո անմահական ծաղիկների միջին, քո էդ տրտում դառնա-վարան լացի, բոթի, ողի ձենն առնելիս,— բաս ի՞նչ կլիներ, որ քո բախտավոր, վաղուց հեռա-ցած, մեր գլխից պակասած— մեծագին, քաջազոր աշխարհասասան, անհաղթելի, անպարտելի իշխա-նաց, աշխարհակալուց թագավորաց, մեծազոր, քա-ջաբազուկ հսկայից, տարաբախտ, թշվառացյալ, գե-րեվարյալ, տառանյալ, տարտամյալ, զուրկ, թա-փուր, սրախողխող, հայրենամերկ, անանկ, ազավոր, աղքատ, չքավոր՝ որդիքը ու թոռունքը՝ մեկ միոք անեին, գլխներին վա՜յ տային, իրանց սև օրը լաց լինեին, թե ո՞վ առավ՝ ուրախ ձայնով ողջույն տվեց, քո համն առավ, քո ծաղիկներից՝ խնդալով, ցնծալով հոտ քաշեց, քո քաղցրահամ պտղներիցը ախորժանոք ճաշակեց, քո հով, զովարար ղրաղին էկավ, բազմեց, քո սուրբ անարատ գիրկը համբուրեց, քո անուշահոտ մարգը, քո պարկեշտ մանիշակը ողջագուրելով, խան-դաղատելով— քաղեց ու պերճ դիմոք, վսեմ ծանրու-թյամբ, իր քաջ բազուկը վրեդ մեկնելով, տարածե-լով, ու,— խրոխտ ձայնիվ, հզոր շրթամբք, վճռա-հատ, ազդու բարբառով, երկնալից բերանով, քերով-

բնական լեզվով գոչեց. «Հրազդա՛ն, (դու ես այսուհետև իմ նազելի բնակարան...»

Զանգի՛, Զանգի՛, անողոք իմ Զանգի՝ սիրտս մորմոքում է, աղիքներս գալարվում են, ականջներս քըստմընում են, ուշքս աղմկում է, հոգիս բորբոքվում է, տանջվում եմ, ցավերից, ալեկոծվում եմ, հառաչում եմ լալով, վերացրո՛ւ իմ արտասուքս, տո՛ւր ինձ սփոփում, հույս: Քանի քանի անգամ կանգնել եմ քո ահեղատեսիլ քարաժայռերի վրա, ուրախացել եմ քո ծաղկանկար, երփներանգ, հրաշագեղ ծոցով. երբ մանուկ էի ուրախանում, խաղում, ցնծում, զմայլվում, աղչում էի, մերթ զարհուրում էի, սասանվում քո ահեղ, գայրագին դեմքից՝ ահով, սարսափած՝ կամ ծնողներիս գիրկն էի վազում, կամ ցնծությամբ քո ալիքների մեջ նետվում,—իսկ այժմ թանձր հառաչանքներ և կուտակված թախիծը մրրկահույզ, վարանած սրտից քեզ են համբառնում, քեզ են կանչում, քեզ համար են մեռնում, քեզ են կսկծում:

Զանգի, Երասխ, Հրազդան, Արաքս, իմ սիրելի մոր և գորովագութ ծնողի՝ Մեծ Հայաստանի կաթնահամ ստինքներ: Ո՞ւր են ձեր ափեզերատոն անունը, ո՞ւր են այն ոսկեղեն դարերը, ո՞ւր են դյուցազունների խմբերը, ո՞ւր են հսկաների բազմությունը, ո՞ւր են աթոռանիստ, բարձրաշեն քաղաքները, ապարանքները, պանծալի տաճարները... .

Զանգի՛ իմ, Երա՛սխ, Մասի՛ս, Ալագյա՛զ. դեռ կանգնած եք անմռունչ, դեռ նայում եք անշունչ, ընթանում եք համերաշխ, մեր հովիտն եք հոսում, սպառնում եք ամպերին, խեղխում եք ձորերին. վարսագեղ ալիքներով, կատաղի դեմքերով՝ մեկդ ձյունափայլ, մեկդ արծաթափայլ, մեկդ փողփողալով, մեկդ փրփրալով, մեկդ վանում է երկինքին, մեկդ ձնչում է գետնին, մեկդ ձյունե պսակով, մեկդ ծաղկանց թագով. արշալույսին, պայծառ լուսնին հեզաբար ողջունում եք միմյանց՝ ձեր շուրթերից համբույր եք տալիս սուրբ

ստորոտներին՝ Հայկազանց վայրերի խնկածին պաշտա-րին: Երկիրն ավերակ, մեր պաշտերն անբնակ, դո՛ւք, անսիրտ, անողորմ, ինչո՞ւ վկա եղաք ազգի կորստյան, չքնաղ քաղաքների դաշտի ավերման, հզոր իշխաննե-րի կործանման, որոնց ցեղի մնացորդներն ընկան թըշ-նամիների, անօրեն ազգերի ձեռքը, բանտ, դառն չա-րագործությունների մեջ, գոհ եղան սրին, ընկան հրի ու բոցի մեջ. Թողին մեզ սգի մեջ, արյան արտասուքի մեջ, որ վտարվենք ուրիշ աշխարհ, սուրբ Հայրենյաց վայրերը սգանք, ողբերգենք, կոծենք, հեծեծենք, հեռվից՝ աչքի արտասուքով մաշվելով, աղեկեզ սըր-տով, կարոտից մեռնենք:

Զանգի՛, Զանգի՛, քաղցր իմ Զանգի՛, քո անհաղ-դող ճակատին նայելով՝ գինովանում էին քաջա-մարտ հսկաները: Հայկազյան առհմի ընտիր զավակնե-րը քո ահեղ, ամպորակ ալիքները տեսնելով՝ մղվում էին դեպի մարտ, իրենց քաջահաղթ, դինավառ բա-զուկներով, տեգերով, վահաններով, աղեղներով զին-ված, զրահներով զարդարված թշնամուն վանելու․ Բելի ահեղ գունդը, որի մտնելով ասպարեզ դուրս եկան, թշնամիներին դրոհ տվեցին․ ոսկեթել վարսե-րով, դափնյա պսակներով պսակելով իրենց գլուխը, անվախճան փառքով ճեմելով երկնքի խմբերի հետ, վայելում են երկնային անսպառ կյանքը, երկրում կանգնեցնելով անմահների անուն՝ անթիվ տարիների, դարերի ընթացքում:

Զանգի՛, Զանգի՛, հրաշագեղ Զանգի՛․ դու տակա-վին տածում ես քո սուրբ վրեժխնդրությունը, դու ա-հեղ թնդյունով տակավին դիմագրում ես, դղրդում ես հարձակվելով ու բարձրաձայն գոչում․ «Ելե՛ք, Հայկազյան սերո՛ւնդք քաջազունք, տարե՛ք գե՛նք, վա-հան՝ բարեսանունց զավակներ, խփե՛ք, փշրեցե՛ք ձեր թշնամիների գունդը, կրակ հոգի տվե՛ք, կրակ թի-կունք եղե՛ք: Թո՛ղ ջախջախվի չար գազանը. Ռուս-տամանի հզոր բազուկը թող ձեզ հենարան լինի․ Նրան զոհվելը, թող լինի ձեր ջանքը: Իմ մեծ քրոջ Վայդա-

յին, ես,—իմ քույր Երասխը համբույր տանք Կասպյան ալիքներում: Նա յուր բարությունը, ես էլ իմ չարությունը մեկմյանց խառնենք մեր մոր ծոցում: Ես իմ Սևանա օրհնության մաղթանքը, ես իմ սուրբ Մասիսի հայրական ողջույնը տանեմ, մատուցեմ իմ սիրելի քրոջը՝ բերեմ ձեզ նրա ավետաբեր ողջույնը:

«Ես խղճալի օրհասս չէի մեղավոր, որ չար թշնամին մտավ մեր դաշտը, այդ դառամյալ, հինավուրց քույրս՝ Արաքսը թույլ տվեց նրանց գալ բռնությամբ, անկոչ հյուրով: Տեսնելով իմ ծերունի սկեսրայր Մասիսին՝ ծածկում եմ գլուխս, փակում եմ երեսս, արդեսպի քաղցր, ձյունահեր ալևորը ծեր հասակում պատնությամբ չցցվի: Իմ քույր Երասխը, իր անհաշտ բնությամբ հանդիստ ու դադար չի տալիս խեղճին՝ ճեղքում է, պատառում է նրա սաքերը ցայտամամբ: Ես ստիպված եմ այդ վերքերը խաղաղ փաթաթել, բուժել...

Բացե՛ք ձեր ճակատները, ցնծացեք երկար. իմ քաղցր քույր Վոլգան միշտ կհոգա ձեր ճարը: Ես միշտ մտերիմ կլինեմ նրան, նա էլ յուր քաղցրությունը միշտ կտա ձեզ, որդիներս: Այս անխզելի կապը, այս սրբազան սերը կմնա մեր մեջ մինչև հավիտյան: Դուք գրկացե՛ք որդի՛ք Արամյան, եղե՛ք իրար հետ սիրով, միաբան: Սերը, խաղաղությունը բոլոր ազգերին և ժողովուրդներին կպահեն բարօրության մեջ:

«Զանգի» գրվածքից, 1840.

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Հրազդան, գետակդ իմ հայրենի,
Հրազդան, ջրիկդ իմ անուշիկ։

Ղ. ԱԼԻՇԱՆ

Հայոց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել.
Ո՞վ դու ի վաղուց մոռցված հայրենիք,
Ո՞վ դու իմ սրտիս անմոռաց տեղիք:

Ղ. ԱԼԻՇԱՆ

Թող աշխարհաց լուր լինի՝
Որ քանի՞ եմք կենդանի
Հայաստան ոչ տի մեռնի...

Ղ. ԱԼԻՇԱՆ

Հայրենի՜ք... Այն քիչ անուններեն մեկն է այս՝ զոր գրեթե ամոթ է բացատրել բարեկիրթ և զգոն անձի մը, թեև չըլլա շատգետ կամ բանիբուն. գրեթե մտքեն առաջ սիրտն կու հասնի, կըմբռնե, կիմանա զայս. կիմանա զայն նաև երբ չի կրնար քիչ բառով կամ խոսքով բացատրել. մանավանդ ուր քաղաքական և բարոյական տեսությունք՝ ասոր իմաստն այլ այլայլած կամ զանազանած ըլլան:

«Հուշիկք Հայրենյաց Հայոց», հտ. Ա. աշխատությունից, 1869.

Երբոր մեկն օրերով քալելով համազգյաց երկրի մը սահմանաց մեջ՝ տեսնե լերանց և բլրոց վրա հնացյալ և երբեմն կիսավեր բերդեր և դղյակներ, հաստամուր պարսպով քաղաքներ, հին և մեծ պալատներ բանուկ ճամբաներ և կամուրջներ, մեծամեծ հա-

սարակաց շէնքեր, փայլուն կամ մամռապատ կամարներ, իրենց տակ թաղվածներուն՝ պես հնացյալ գերեզմաններ, հանդերձ նոր և պայծառ շէնքերով, և ժամանակին զարգացման համեմատ օգտակար և չահավետ գործարաններ, կրթարաններ, ժողովարաններ, հանդիսի և զբոսանաց տեղեր, քաղաքական և զինվորական հրապարակներ, և այլն, և այլն. և այս ամենուն համար կարենա ըսել թե իմ համարյուն և համալեզու նախնյացս ձեռագործք են, որոց ոմանց վրայեն՝ երկայն դարեր այլ անցեր են, և դուցե հազարավոր տարիներու հիշատակարանք այլ կան անոնց մեջ. ի՞նչպես սիրտն կուլի, կընդլայնի, կու բարձրանա, կու խաղա և կու հանգչի ծոցին մեջ. ի՞նչ օրինավոր պարծանք և գրեթե հպարտություն մը կրնա ըսել՝ թե ասոնք իմ հայրենյացս են, ասիկա իմ հայրենիքս է. և թե անհիշատակ ժամանակաց հետե միշտ մեր ազգն այս երկրիս և այս շենքերուս տակ բնակեր է. ասիկա մեր հայրենական կալվածն է, զոր սեփական օրենք և քաղաքավարությամբ պահեր են նախնիքս իր հին սահմանաց մեջ 'ի միջի ուրիշ սահմանաց և ազգաց:— Ո՛հ, արդարև ասիկա կատարյալ և նախանձելի հայրենիք է. ասիկա ընդարձակ հասարակաց ընիկ տուն մ'է, որ ամեն համազգի մարդու մասնավոր տուները իր մեջ կու բովանդակե. ասիկա ամեն կերպ զորավոր սեր և զմայլումն կազդե բնակչին վրա. այդ է որ զգացուցեր և ազդեր է այն ամենայն հրաշալի հայրենասիրության կրքերը, այն աշխատությունները, համբերությունները, քաջությունները, և ինչվան կենսանվեր զոհերը, երբեմն միայնակ, երբեմն ընկերակցոք և երբեմն բովանդակ բանակներով. զոր հռչակեր են պատմիչք, քերդողք և ճարտար արվեստավորք. և որոց վրա կու զարմանան ընթերցողք և լսողք՝ նաև ետ երկար դարուց անցնելու, և կու պարծին անոնց ետին համազգի թոռանց թոռունքն այլ:

«Հուշիկք Հայրենյաց Հայոց», հտ. Ա. աշխատությունից, 1869.

Աշխարհք չի կրնար այսուհետեւ մոռնալ 3000 տար-ւան Տրոյիո առման դէպքը, եւ ոչ 2400 տարւան Սա-լամինա եւ Թերմոպիլէի յիշատակները, որոց վրայ մինչեւ պիտի պարծի, ո՛րչափ ատեն որ գտնուի հոյն մը: Այսպիսի յիշատակք երկրաւոր հաւիտենականու-թիւն մը են, ազգաց եւ սիրուն: Ասոնց նման քիչ շատ ուրիշ ազգեր ալ ունին իրենց սեփական եւ սիրուն յի-շատակներ, որ իրենց անվաղութեան հետ պիտի հնա-նան, եւ աւելի քան գինի եւ գրաւականութիւն հնաց-յալ՝ հին ախորժ յիշատակքն զօրաւոր եւ քաղցր են մարդկան, եւ հասարակաց հաւասար վայելելի ամեն ժամանակ... Ո՛հ, երբ այսպիսի յիշատակաց վրայ շարժի գրիչն, չի կրնար գոնե կայծեր չցատքեցրնել. պատմիչն հանկարծ վիպասան կըլլայ, բանասէրն՝ բա-նաստեղծ: Հայրենյաց հրեշեն հասանքեն չհալող սիր-տն՝ շատ ապառաժ, շատ ապառամ, շատ այլանդակ եւ այլանդակութիւն պիտի ըլլայ... Վա՜յ այդպիսի հրէշին. երկիր կու հալածէ զանիկա, երկինք չի կրնար ընդու-նել սիրտ մը՝ որ այնքան կարծր գտնուած ըլլայ երկրի վրայ. անհնար է, որ հայրենատյաց մը եւ լոկ անհայ-րենասէր մը՝ առաքինի ըլլայ...

«Հուշիկք Հայրենյաց Հայոց», հտ. Ա.
աշխատությունից, 1869.

Ազգային յիշատակարանք. ասոնք են բնիկ նշանք հայրենյաց. ասոնք են յուրաքանչյուր ազգի հայրեն-յաց ամենեն հայտնի, ամենեն ազդու եւ զօրաւոր ար-ձանագրութիւնք, միանգամայն եւ ամենեն սիրելի եւ սրտառուչ բաներ երկրիս վրայ: Կրնամք ուրեմն մենք Հայքս ալ եւ առաւելու մեր անցյալ կամ կորու-սյալ երկայն ինքնակացութեանը եւ բազմակերպ յիշա-տակաց վրայ, (որք 3000 տարի մը հանդիպեցան այն մի եւ նոյն երկրին վրայ՝ զոր բնիկք եւ օտարք միշտ կանուանեին Հայաստան եւ Արմենիա), կրնամք, կը-սեմ, դեռ հիմա ալ մխիթարուիլ՝ որ այս ցան եւ ցիր ազգերնուս գոնե կեսն դեռ իր հին եւ ամենահին հա-րանց հողուն վրայ կու բնակի, կու բանի, եւ կու հանգչի,

անոնց նշխարյալ ոսկերաց քով իրեններն այլ ավանդե-լով.— և կրնա դեռ ես այնքան ասպատակությանց և ավերանաց՝ որ թերևս ամեն աշխարհե ավելի իր երկրին վրա եղան, կրնա դեռ իր նախնի, տերագլուխ նախնյաց հնացյալ և կիսաքանդ հիշատակարանները տեսնել.— կրնա ճանչնալ այն տեղվանքը՝ ուր իր հա-մարյուն և համալեզու առաքինյաց և քաջաց գործք և արդյունքն կատարեցան, որք ի գիր անցան և դարուց ի դար կուպատմին և պիտի պատմին: Կրնամք և մենք հեռավորքս և մերձավորքս՝ մխիթարվիլ և օգտվիլ այն հիշատակարաններով և հիշատակներով, զոր եթե ժամանակն մեկ կողմեն կուզանա ավելի հնացնել և մո-ռացնել, մեկ այլ կողմեն դյուրություն նույն ժամա-նակի, արվեստք, գիտությունք, ջանք և կրթու-թյունք՝ ավելի կու հայտնեն, կունորոգեն, կենդա-նացնեն: Զանոնք փնտռելով և քննելով՝ կուստիպվինք անգամ մ'այլ վկայել մեր անաչառ պատմահոր հետ [Մ. Խորենացի, —Ա. Բ.], որ թեպետ և հիմա փոքր ազգ մ' ենք, տկար և օտարի իշխանության տակ ընկած «սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս»: Գործք արության են՝ քաջու-թյուն հոգվո և սրտի և ձեռաց. արդյունք առաքինու-թյան և կորճության:

Այո՛, այո՛. հայրենյաց ամենեն հզոր հրապույրքն են այսպիսի գործոց հիշատակք, եթե անոնց նյութա-կան հուշարարքն կամ արձանքն մնացած ըլլան և եթե չըլլան. ասոնք են տեսարանին գլխավոր պատկերքն: Եվ եթե այն պատկերաց հետ ենթակայքն և շրջանակ-քըն այլ համեմատ և գեղեցիկ ըլլան՝ ի հարկե բոլոր տեսարանն այլ ավելի գեղեցիկ կ'երևի. այսինքն, եթե այն գործոց հետ՝ տեղն ու դիրքն այլ 'ի բնե վայելուչ ըլլան՝ հայրենիք կրկին քաղցր և ցանկալի կ'ըլլա:— Արդ այս տեսությամբ այլ՝ մեր հայրենիքն Հայաս-տան՝ կրնա շատ չնախանձիլ ուրիշ աշխարհաց, այլ և շատերու նախանձելի ըլլալ. վասն զի բնությունն կամ տերն բնության շատ գեղեցկությամբ և հարստու-

թյամբ զարդարեր է զայն. զոր օր մը հատուկ համառոտ բնագրությամբ մը կուզեմ քեզի նկարագրել, Հայկակ: Իսկ եթե այս բնական և ազգային տեսարանաց հետ նկատենք մեր հայրենյաց վրա համաշխարհական երևույթներն այլ, այսինքն անանկ դեպքեր, որ կամ բոլոր աշխարհիս կամ շատ ազգաց պատմության այլ կու վերաբերին, կարծեմ թե քիչ երկիր կըմնա մեր հայրենյաց հետ բաղդատվիլ...

Այո, Հայկակ, դարձյալ կու կրկնեմ, որ թե՛ բնական, թե՛ ազգային և թե համաշխարհական տեսությամբք՝ շատ նշանավոր երկիր մ'է Հայաստան. և ըստ այսմ տեսության՝ կերպով մ' եռապատիկ կընդարձակի մեր հայրենիքն, որ արդեն իսկ բավական ընդարձակ էր թե՛ իր սահմաններովն և թե՛ մեր պատմական տևողությամբ, որ կու սկսի ամենեն հին ազգաց պատմության հետ. և իր ինքնագլխությունը կամ երկրատիրությունը կորուսանելու երկար միջոցն այլ՝ դեռ փոքրագույն մաս մ'է հայության կենաց 'ի վերա երկրի: Եվ արդ այս ամենն՝ անգամ մ' այլ կու հաստատեն՝ թե շատ գործք եղած են 'ի Հայաստան, շատ հիշատակներ պիտի ունենա մեր հայրենիքն...

«Հուշիկք Հայրենյաց Հայոց», հտ. Ա-
աշխատությունից, 1869.

Ուր որ լեզուն մնացել է՝ դեռ ազգասիրություն ալ կա հոն, ուր որ բոլորովին լեզվակորույս են եղեր՝ հոն նաև ազգասիրությունը բոլորովին կորածի պես է:

«Ազգասիրություն» հոդվածից, 1849.

Թե որ ազգաց մեջ հայ ազգին ի՛նչ ըլլալը կուզես իմանալ՝ առջևդ բեր հիմիկվան քո զարմացած երևելի ազգերդ կամ տերությունները, դիր թե անոնցմե մեկն ալ հայու ազգն է. վերջը ա՛ռ ան ամեն ազգաց հին պատմությունները ու սկսե ծայրեն կարդալ ի՛նչ որ անոնց վրա կամ անոնց երկիրը անցեր է սկզբնե 'ի վեր. մեկ մ'ալ հայոց ազգին և երկրին պատմությու-

նըն ալ կարդա մտադրությամբ. մեկեն կիմանաս, որ առաջ տղայահասակներու վարք կկարդաս եղեր, ետքը հարկևոր ծերու մը վարք կկարդաս, որուն գլխեն շատ մեծ, շատ փառավոր բաներ անցեր են. ժամանակին մեջ քիչ մը վեր ել, քիչ մ՚ալ, ու մեկալ ազգերը մեկմեկու ետև աչքեդ կծածկվին՝ քաղքի մը մեկմեկու ցած շենքերու պես, ինչվան ալ բան չերևնար. իսկ Հայոց ազգը դեռ իր Այրարատ լեռանը պես գլուխը վերև կեցեր է. ելի՛ր բարձրացիր քու օդապարիկ մտքդ, դեռ ան կեցած է. ելի՛ր ալ ավելի, բայց գրեթե չես հասնիր անոր արեգակնաճեմ գագաթանը:

«Ազգասիրություն» հոդվածից, 1849.

... Վասն զի անոր [Հայաստանի,— Ա. Բ.] մեջ կգտնես անանկ հին պարծանք, անանկ հին ազնվականություն, անանկ գլխավորներ, որոնց դիմաց՝ տերություն և ուրիշ անցավոր փառք ոչինչ կերևնա, որ բաղդին խաղալիք տուրքն է, այսօր կուտա, վաղը կառնու: Ուրեմն թոթափենք բաղդին հրապույրքը, և կտեսնենք, որ Հայոց ազգին վրա անոնք վերցնելեն վերջն ալ՝ կմնան անանկ պանծալի նշաններ, որոնք ամեն բաղդե վեր են, և հավիտյան ամեն ազգաց ալ նախանձելի կրնան ըլլալ:

«Ազգասիրություն» հոդվածից, 1849.

...Հայաստան ոչ միայն կրցավ մնալ և դիմանալ իր ինքնագլխությունը կորսնցնելեն վերջն ալ, հապա նաև կրցավ ամենեն դժվար գործ մը ալ գործել. այսինքն համաձայնել իրարու [illegible] երկուց աշխարհաց՝ որոց մեջ դրեր է զինքը նախախնամությունն. և եթե երբեմն այս բարակ և դժվարին պարտուց մեջ պակսած է, ավելի ինքզինքը խաբած է քան ուրիշները: Ապա և ոչ առանց արդյանց վաստըկեր է զհարգ և համարմունք և վստահություն տիրող և սահմանակից ազգերուն. ինքն տվեր է զորք և կորիճ զորավարներ Սասանյանց և Բյուզանդացվոց.

և իր ճարտարագույն որդիքները բազմեցուցեր է իբրև ինքնակալ Կոստանդնուպոլսի գահուն վրա, և փոխարքա Եգիպտոսի և Հնդկաստանի տերապետաց քով. զանազան հնարքներով Արաբացվույն սուրը բթացուցեր է, և իրեն սովրեցուցեր քանի մը օգտակար արվեստներ. որոնց հետ ճարտարապետության ոճ մը այլ, որ քիչ մը ձևափոխյալ ուրիշ հեռավոր աշխարհաց մեջ այլ մտավ. Եվրոպա անգամ առանց իմանալու առեր է զայն: Հայաստան Կոփրետոսի խաչակրրաց նիզակակից եղած զԵրուսաղեմ առավ. Հուլագունի նետողաց դաշնակից՝ զՊաղտատ առավ: Ոչ սակավ պաշտոնյաներ և քաջանշան զորավարներ ընծայեց օսմանյան, ռուս և պարսիկ տերությանց, որոց իշխանության տակ հիմա բաժնված է երկիրն: Իր ճարտարարվեստ գաղթականաց ձեռք շատ օգտակար ծառայություն ըրած է Ռուսաց, Լեհաց, Ավստրիո և Դանուբյան իշխանությանց, և իր վաճառականներովըն՝ միջին դարու Իտալիո ամեն տերությանց, Սպանիո, Հոլանտիո և քանի մը տերությանց այլ՝ որ հիմա Փռանկաց մեծ տերության մասն են:

«Հուշիկք Հայրենյաց Հայոց», հտ. Ա. աշխատությունից, 1869.

Ո՛վ Հայկակ, ո՛վ հայ պատանիք, աղեկ քաղաքացի ըլլալու համար՝ պետք է քննել և սովրել զհայրենիքս: Այս է առաջին ուսումն և ուսման հանդերձյալ կենաց: Քննեցեք և սովրեցեք ուրեմն այդ ազնիվ և բարեբեր Հայաստանը, իբրև հայրենիք ձեր. քննեցեք այդոր բնակչությունը, քննեցեք այդոր բարոյականը. քննեցեք այդոր բարգավաճումը 'ի հարուստ լեզվին, որ ապահով գրավական մ'է բազմատեսակ արկածներով հնձված գրականությանը.— Այդ քննությունքդ, այդ ուսմունքդ հորդոր ըլլան ձեզի ավելի քան զավելի հարգելու զհայրենիս և մշակելու զայն՝ ըստ ամենայն նշանակության բանիս:

«Հուշիկք Հայրենյաց Հայոց», հտ. Ա. աշխատությունից, 1869.

Ճշմարիտ հայրենասիրությունն չէ տաուպ կամ փայլակ մը հանկարծ երևցող և անցնող. ոչ հուր մոլի և թափառիկ, և ոչ կայծակն անկուշտ այրող լափող. այլ հանդարտ ջերմություն մը, հստակ լուսով, անստգյուտ խղճով:

Ո՛վ անձնուրաց ոգի, բարեխնդիր հայրենասիրություն. դու պատրաստե, վառե սրբե զսիրտ Հայկակա: Քեզմով վառված սիրտն՝ անխայթ և անմուխ լույս կարձակե. և եթե խարկե մըրկե սիրտն, և անցնի երկնավոր մասամբն, երկնունակ մասն՝ մնա 'ի վերա հայրենյաց, որպես հոտ մըշկի և կնդրըկի:

Եվ շատ սեղաններ, շատ տապաններ, շատ քարեր ու հողեր կան 'ի Հայաստան, ուսկից դարե դար և անդադար կու ծխե հոտն անուշության, հոտն հայրենյաց. զոր չեն կրնար ջնջել ոչ զենք և ոչ քենք:

Վասն զի մեր առաքինի և ճշմարիտ, ընկերասեր, ազգասեր, որդեսեր և հայրենասեր նախնիքն, այն երկրին վրա իրենց պարկեշտ նշխարքը թողլով, անմահության շնչով վերեն անոր վրա միշտ կու շընչեն և կու շըշընջեն:

Ծնչեցե՛ք ո՛վ շունչք մտաբացք, սրտարծարծք, հոգեխառք. շնչեցե՛ք հոգի՛ք Գրիգորյանց, Ներսիսյանց, Սահակյանց, Մովսիսյանց, Ղևոնդյանց, Վարդանանց, Վահանանց, Սմբատայ, Աշոտոյ, Լևոնյանց և Հեթմյանց. ո՛ւր թագավորք, հայրապետք, վարիչք և վարդապետք Հայոց, շնչեցե՛ք հերկնից հերկիր: Խառնվի՛ ձեր երկնավոր շունչն՝ հերկրավոր շունչ Հայկակա. որ երբ հասնի ավանդելու իր վերջին շունչն ալ՝ եթե հանդարտ ու հեզիկ, և եթե հրահատ ու հառաչաձայն, հավասարապես խառնվի՛ ձերիններուն հետ:

Եվ երբ իր օրական և տարեկան շրջաններուն պես՝ երկիրս իր բազմադարյան շրջանն ալ ավարտելով՝ դադրի և կորչի, և նոր երկրի մը հրավիրակ փողն հնչե, այս հին լուծյալ և լքյալ երկրիս վերջին

արձագանգաց միջեն՝ վերջնագույն արձագանգ մը ալ ըլլա՜ քուկդ, սուրբ սե՛ր հայրենյաց:

«Հուշիկք Հայրենյաց Հայոց», հտ. Բ. աշխատությունից, 1870.

... Ահա հագավ, հեծավ, զվարթացավ Վարդան [Մամիկոնյան,— Ա. Բ.], արևեն ավելի ցանկալի և սպասելի այն օր՝ իր սիրելյացն. ամենուն աչքն՝ ոչ այնքան թշնամյաց բազմությանը վրա սոսկմամբ կու նայեին, որքան սիրով կու դառնային այն բարձրասույր կաթողիկեաձև չիկակարմիր վրանին, որո դրան վերև ոսկի արծվին թևատարած, չորս բոլորն կարմիր-կանաչ-սպիտակ դրոշներ հովեն ծալլվելով ու բացվելով՝ իբր ծափ ծափի տված կու հրավիրեին զՎարդան. զՎարդան հրավիրելով՝ վրանին եզերքը պար առած պահապան ու պատվո գունդն՝ նշան տալին, և սկսան շարժիլ. հանկարծ վրանին փեղկերն վերնալով բացվեցան, թիկնապահք և սպայք, հեծյալք և հետևակք՝ փայլ փայլ զենքերով իբրև ամպե մը սկսան դուրս թափիլ. և խումբ մը ծաղկազգեստ կայտառ երիտասարդաց՝ 25 տարիեն վեր՝ լուծ ձայն մը ձգեցին, որոտալույր, ահավոր, վսեմ և քաղցըր ձայն մը, որ մեր նախնի Արշակունի Արտաշես թագավորին սև օրեն վեր չէր լսված... Արքունական երաժշտաց դասն էր, որ այն օր 'ի Վարդան կու ճանաչեր հայոց թագավորը, առաջնորդը, հույսը և փառքը. և երբ մեծամեծ ոսկեփայլ գալարուն և անգալար պղինձներն լայնաբոլոր բերաններին երկինք շոկած՝ իբրև եռ երկայն հառաչանաց՝ հայկական պատերազմի եղանակը հնչեցին, ո՜հ, բոլոր բանակն, գետին ու լերինք թնդալով դոփելով որոտացին. Փա՜ռք Հայոց, սուրբ սպարապետ, Վարդան քաջ: *Եվ ահա երևան եկավ քաջն այն, Կարմիրն այն Վարդան, ճառագայթներուն ետևեն դուրս վազող արևուն պես, իր նախապապուն Մուշեղի նման՝ ճերմակ, ճարտուկ, ճախրաըլլաց, բարձրապինչ, բարձրափռինչ ձիուն վրա հարմարած՝ քան թե հեծած կամ նստած. վասն զի*

ձին գրեթէ սանձի անկարոտ և տիրոջը տակ ավելի թեթևցած քան թե առաջ՝ չես գիտեր կու խաղա՞, թե կու թռչի. իսկ տերն իբրև եզեկիելյան անվի մը վրա հանգչած՝ թեթևությամբ ամեն դի կու դառնա, կու թռչի, կու հասնի: Ոսկեխառն արծաթակուռ սպառազինության վրա՝ ձգած է մեծ ծիրանի, ու ոսկեթել սամույր-օձիք վերարկուն, զոր արևակերպ ականակուռ ապիզակ կամ ճարմանդ մը կուրծքեն վեր կու միացնե, օղակներեն հակունթներ կախված, և ինչվան նռնագույն կոշիկները կիջնե. գլուխն արծաթախառն սաղավարտ՝ ոսկեքանդակ զարդմանակավ, որո կռնակեն դեպ ՚ի գագաթն ոսկի արծվի մը կա, և վարի եզերքը բոլորած պսակաձև թագ մը, անոր վրա այլ պլլված բոլոր դերագույն իշխանության նշանը՝ աշխարհավանդ. ըսված հանգույցը, որո ծայրերն ցցունագարդք՝ ուսոց վրա կիջնեն: Բայց արդարև տեսության արժանի մասն՝ այն հանգույցին ներքև էր. բոլորակերպ, կարմրայտ գրեթե ճառագայթարձակ, զվարթ դեմք մը. Նման եղիականն Արամազդա, բայց Ամպրոպայնույն աչքերով: Խաչգլուխ և խնձորգլուխ ձողերու և նիզակաց վրա՝ բաց եռագույն դրոշից կու ծածանին զանազան գունով և նշանով վառեր, Մամիկոնեից տերության, Հայոց սպարապետության, Հունաց ստրատելատության և հայ թագավորի տեղակալության. զորս ուրախությամբ ողջունելով 66.000 բերան՝ պարտից անհուն բանակին և անճոռնի փղերուն ձայնն այլ կու խափանեն պահ մը: Վարդան հառաջ անցնելով իր ապայից գնդեն՝ մեկ մը ճերմակովը կու թռչի բանակի մեկ ծայրեն ինչվան մեկայլը, ողջունելով, խրախուսելով, գրեթե նոր ուժ մը փչելով, և... Նշան կու տա սկսելու պատերազմն...

«Հուշկիք Հայրենյաց Հայոց», հտ. Ա. աշխատությունից, 1869.

Արդարև հիշատակա՞ց աշխարհ Հայաստան, և մեծ և շատ և հին և սուրբ հիշատակաց, սիրելի և զվարճալի և խնդալի և ահուելի հիշատակաց:

Հայաստան աշխարհ, որուն քաղաքներն և գեղերն չորս հինգ հազար տարուան անուններ ունին· որուն լեռներն և ժայռերն նույնպես հին բերդերու հիմունք ունին:

Հայաստան աշխարհ, որ երկրիս երևույթներուն մեծ մասը իր մեջ ալ կցուցընե· երկնաճեմ լեռներ, բյուրեղանման սարեր, ճերմակ ու սև ուսեր, կապույտ կանաչ կողեր, գույնզգույն քարերով բլուրներ, բնության ճարտարապետությամբը կանգնած բուրգեր և սյուներ ջրանման քարերով· մեծամեծ հրաբուխներ, մարած՝ բայց ոչ բոլորովին իրենց տաքությունը մոռցած:

Հայաստան, աշխարհ ջրոց և գեղեցիկ ջրոց, եդեմական քառավտակ գետույն, քաղցր և աղի ծովանման լճերու, մեծամեծ գետերու, անթիվ պայծառ առվակներու և աղբյուրներու, ջերմ և ցուրտ և հանքային ջրերու, երագասահ և մեծաշառաչ քարավեժ հոսանքներու:

Հայաստան, աշխարհ գեղեցիկ հովտաց, գեղեցիկ դաշտաց, ամենաբույս, ամենածաղիկ, ամենահոտ, ամենագույն, պտղաշատ, հացավետ, մեղրաբուղխ, մանանայաբեր, ծիրանաներկ, բժշկարմատ, բժշկահող· մեկ խոսքով՝ դրախտին ծնող և ազգակից կամ արենակից, թե որ կրնա այսպես ըսվիլ:

Հայաստան, աշխարհ ավերակաց և մնացվածոց շինից· իրավ ոչ եգիպտական և հնդկական կամ հունական մեծագործության, սակայն և ոչ աննշան՝ քարեղեն քաղաքաց, անձավարնակ քարայրից, անկոխելի լեռնադագաթ բերդերու, հաստակառույց հեղեղալուծ կամուրջներու, քարալերանց գագաթեն մինչև 'ի հատակ փորած սանդխավոր ջրհորներու, գետնափոր ջրանցքներու, և ջրանցքի տակ գետնաճամբաներու՝ անթիվ հին եկեղեցյաց և վանորեից, մատրանց և խաչվիմաց: Աշխարհ քան զամեն աշխարհ հարուստ սրբազան արձանագրությամբ:

Հայաստան, աշխարհ գերեզմանաց՝ նահապետաց,

հսկայից, Հայկազանց, Արշակունյաց, և շատ ազգաց, շատ թագավորաց, շատ բռնավորաց, հանգստարան շատ սրբոց և վկայից:

Հայաստան, աշխարհ մահու և պատերազմաց. ուր իբրև ի վրեժ նախկին երջանկության՝ ամենայն պատերազմող ազգք և մեծագույն զորավարք աշխարհի՝ դիմեցին գավառ մը խլելու կամ չափ մը արյուն թափելու. Բել, Նինոս, Շամիրամ և ասորեստանյայք. Կիաքսար, Աժդահակ և մարք. Սեսոստր և եգիպտացիք. Կյուրոս, Դարեհ և պարսք. Աղեքսանդր և հույնք. Անտիոքոս և ասորիք. Արշակ և պարթևք. Լուկուլլոսք, Պոմպեոսք, Կորբուլոնք և հռոմայեցիք. Արտաշիր, Շապուհք և սասանյանք. Ապույուսահման, Եզիտ, Յուսուփ և հագարացիք. Տուղրիլ և սելջուկք. Մելիք շահ և թուրքք. Ճինկիզ, Հուլագուն և թաթարք. Թողունք ալ հիշելու Լենկթիմուրներն, Սքանտարներն, Շահաբասներն, Նատիր շահերն. թողունք հին ու նոր ազգերն, հոնք, ալանք, քյուրտք, թյուրքմենք, օսմանյանք և այլն:

Հայաստան, աշխարհ վաճառականության, որ Ասիո առաջին կարավանները քալցուց, և երկայն դարեր անոր ամենեն ճարտար գործակալներն եղավ ցամաքի վրա, և ճարտար ձեռնավորներն, և թարգման Եվրոպիո:

Հայաստան, աշխարհ մուսայից, որ հունական հանճարույն նախանձորդ և դպրության գանձարան եղավ առեն մը, որ շատ պատմագիրներ հանեց և շատ ավանդություններ պահեց, որուն բոլոր աշխարհք երախտապարտ է:

Հայաստան աշխարհ, ծնողք երևելի մարդկանց, նահապետաց, հաբեթական քաջազանց, զորավարաց Ասիո, մեծագործ թագավորաց նաև աշխարհակալ իշխողաց, անթիվ իշխանաց և ազատաց, իմաստնոց, սրբոց և ճարտարաց...

Բայց մինչև ցե՞րբ չկանչեմ, թե Հայաստան աշխարհ հայրենասիրաց, որ ամենեն հին երկիր և ամե-

նեն հին ազգ ըլլալով, ավելի նոր ու կերև թե բոլորովին ընկճած ազգաց մեջեն ալ դուրս կկանգնես ծերացած այլ անմահ գլուխդ. և այնքան բազմադարյան մրրիկներու տակեն ալ եռանդուն կայծեր կքալցընես զքեզ սիրող որդվոց սրտերուն մեջ. որոնք հավիտենական հուսով մը քաջալերված երբեք զքեզ չեն մոռնար. նամանավանդ զքեզ մոռցողներն ալ իրենց մոռացության վհեն հանելով՝ հիշատակաց գետույն եզերքը կուզեն քալցնել. և տանել դեպի անոր աղբյուրը: Այսու հուսով քաջալերված ես ալ կելլեմ կդիմեմ ընծայելու քեզի, իբրև սիրասուն որդի ետ երկար պանդխտության՝ ու ցանկալի ծնողս՝ իմ սիրտս հանդերձ իր արյունովը, իմ աչքս հանդերձ իր արցունքովն, զոր ընդունելով ներս իմ ակամա պակասությանցս կամ սխալմանցս այս առաջարկած շրջապատմության մեջ. սրտին անշուշտ պիտի ներես, նաև քաջալեր պիտի տաս՝ եթե ասոր պատճառավ ինծի ուղեկից ըլլող ընթերցողք ալ քեզի նվիրեն իմինիս նման ընծաներ:

«Լույս և տես Հայաստանի»
հոդվածից, 1850.

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆ

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար.
Առաջին դու խոսք ականջիս հասած,
Դու սիրո քաղցրիկ առաջին հնչված,
Մանկական լեզվիս թոթովանք տըկար,
Հնչում ես իմ մեջ դու միշտ անդադար:
. . . .
Հնչիր դու, հընչիր այժմ և հավիտյան
Մայրենի լեզու, բարբառ սիրեկան.
Արի բարձրացիր հնության փոշուց
Դու իմ հայ լեզու, մոռացած վաղուց:

ՍՏ. ՆԱԶԱՐՅԱՆ

Հայերը միշտ ունեցել են յուրյանց համար և ունին այժմ ևս մի անդրժելի սեր դեպ ի Հայրենիքը, դեպ ի յուրյանց լեզուն, յուրյանց սովորությունքը…

«Հայերի կոչումը մարդկության մեջ» հոդվածից, 1859.

Ուրացող Մեհրուժաններ ու Վասակներ, քաջ և հոյակապ հայրենասեր Վարդաններ ու Սմբատներ կանգնած են այս տեղ միմյանց հանդեպ: Ո՛չ ոք կարող չէ ուրանալ հայերի քաջությունը և արիական գործերը պատերազմի մեջ:

«Հայերի կոչումը մարդկության մեջ» հոդվածից, 1859.

Այս դարը [հինգերորդ,—Ս. Բ.], երբ Հայոց կյանքի մեջ մտանում է մի նոր կերպարանագործության խմոր, երբ Հայոց ազգը պիտո է ճեղքվելով բաժանվեր հեթանոսական ժամանակների վայրենամիտ կյանքից և մտներ մի նոր կենդանության և աշխատասիրության ասպարեզ, կարելի է իրավացի, թեպետ ավելի փոքր և մասնավոր չափով, համեմատել արվեստների և գիտությունների լայնատարած վերածաղկության միջոցի հետ, որ միջին դարերից հետո 15 դարու սկզբումը եղած է միջին Եվրոպայի մեջ:

«Հայոց ազգի լուսավորության,
կամ սուրբ Թարգմանիչների դարը» հոդվածից, 1860.

Արդարև, Հայոց մատենագրությունը չեղավ այնպես ճոխ և բազմատարած, ինչպես Հնդկականը, Արաբականը, Պարսիկ և Չինեականը, բայց ստացավ ավելի հարուստ պարունակություն, քան թե Բյուզանդյանը և ավելի ընտիր մշակություն ոճի մասին, քան թե Արաբականը, ըստ որում ուներ յուր առաջնորդ ազնիվ հելլենական գաղափարներ: Սակայն Հայոց մատենագրությունը մեծակշիռ դարձավ յուր ժամանակակից հեղինակներով, որ իբրև ականատեսք նկարագրել են արևելյան և արևմտյան ազգերի մեջ պատահած անցքերը և մանավանդ իբրև միջնորդ պիտանի տեղեկությունների սկսյալ քրիստոնեական դարերից մինչև խաչակիր պատերազմողների և Մոնղոլյան պետությունների ժամանակը:

«Հայոց ազգի լուսավորության,
կամ սուրբ Թարգմանիչների
դարը» հոդվածից, 1860.

Ինչ խորհուրդ ունի լեզուն համորեն մարդկության համար առհասարակ, նույն խորհուրդը ունի նա մասնավորապես ամեն մի ջոկ ազգի համար. ուրեմն հայի համար յուր լեզուն, որ արդարև ամեն մինը մեզանից,

որի խելքը տեղումն էր, պարտական է համարել յուր ամենասուրբ բանը, յուր աչքի լույսը, յուր սրտի արյունը, յուր կենդանության հիմքը, յուր պատիվ ու պարծանքը:

«Հայկական լեզվի խորհուրդը» հոդվածից, 1858.

Այժմ ահա մեր հայոց հին լեզուն, որ մինչև այն դարը [հինգերորդ,—Ա. Բ.] եղել էր միայն ժողովրդի բերանացի խոսք կամ թե, շատ շատ, հեթանոս քրմերի ձեռքով մասնավորապես մշակված լեզու, այժմ հայոց լեզուն սկսեց բազմօրինակաբար գրավոր մշակության տակ ընկնել և բանալ ազգի առջև յուր հրաշալի ճոխությունքը, յուր պատվական գանձերը, որ այնքան երկար ու ձիգ դարեր մնացել էին թաղած ազգային հոգու խորքի մեջ և սպասում էին մի ելեքտրական կայծի, որ բորբոքե իմացականության կրակը:

«Հայկական լեզվի խորհուրդը» հոդվածից, 1858.

Հայությունը առանց հայաբար մտածելու և խոսելու մենք բարբարոսություն ենք համարում, վասն զի ազգ և լեզու՝ մի են. առանց լեզվի չկա ազգ, ինչպես և լեզուն առանց ազգի անկարելի բան է:

«Յաղագս փորձական հոգեբանութեան» ճառից, 1851.

Մեր ժամանակը պատերազմ է և կարոտ է անձնվեր նահատակների, ո՛վ տղամարդ է, ով զգում է յուր մեջ այրական հոգի, որի համար դեռևս կենդանի է հայրենիք ասած բանը, թող ժողովե և ամփոփե յուր զորությունքը հանդես մտնելու և վճռաբար գործ կատարելու... Հայրենասիրական եղբայրասիրության հիմնյալ առաքինության և ճշմարտության գաղափար-

ների վրա—ահա՛ մեր դրոշակը, որի հովանավորության ներքո պարտական ենք մենք ամենքյան պատերազմել և հաղթել, կամ, եթե անկարելի է հաղթությունը, քաջությամբը, սուրը ձեռքին, արժանապես դուրս փչել մեր հոգին:

Աբել վրդպ. Մխիթարյանին
գրած նամակից, 1859.

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի.
Բայց երանի՛, որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ներկա օրերում այլ ինչ սև հնար,
Սուր է հարկավոր կտրճի ձեռքին՝
Արյո՛ւն ու կրակ բռնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին.

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Մենք միջնադարյան ազգ չենք. միջին դարերում մենք ընկանք. միջին դարերում մեր հարստությունը կորուցինք: Չի կարող լինել մի այնպիսի բան, միջին դարերի պատկանավոր, որ օգտակար և փրկարար խորհուրդ ունենա մեր համար: Միջին դարերի ժանգը, որ նստել է մեր վրա մենք պարտական չենք պահել: Կան ազգեր, որ միջին դարերում ծնեցան, նոքա ամուր կապված են այդ դարերի հետ և սոցա ժանգը, եթե երևում է նոցա վրա, նոքա դեռ կարող են պատմական իրավունքով արդարացնել. ժանգոտ օրորոցի մեջ բացին նոքա իրենց աչքերը: Մեր հարաբերությունը միջին դարերի հետ այնպես չէ: Իբրև ազգ անտիկյան ենք. իբրև քրիստոնյա, եթե ոչ նույնպես անտիկյան, ըստ որում առաջին երեք դարերում քրիստոնեությունը քաղաքացու իրավունք չուներ Հայաստա-

նում, գեթ անտիկյան դարերի վերջի և միջին դարերին պատկանավոր:

«Կրիտիկա Սոս և Վարդիթերի»
աշխատությունից, 1862.

... Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե որպիսի օգուտ կարող է բերել պատմության ու լեզվագիտության հայ լեզվի և գրականության ուսումնասիրությունը՝ այդ բանը հեշտ կարելի է եզրակացնել ժողովրդի [հայ,—Ա. Բ.] պատմական կյանքից, որը, ինչպես տեսանք, կապված էր հին աշխարհի համարյա բոլոր ազգերի հետ և անմիջական կամ կողմնակի ազդեցություն է ունեցել այն բոլոր մեծ դեպքերի վրա, որոնք կատարվել են քաղաքացիական կամ կրոնական ասպարեզում: Եվ իրոք, հայ գրականությունը մեծ լույս է սփռում Արևելքի հին պատմության վրա, պահպանելով այնպիսի անհայտ մանրամասնություններ, որոնք վերաբերվում են Մարական և Ասորեստանյան թագավորությունների պատմությանը, նամանավանդ Շամիրամի և Կյուրոսի պատմությանը: Նա պարունակում է շատ հետաքրքրական և կարևոր տեղեկություններ Արշակունյան և Սասանյան հարստության պատկանող պարսից թագավորների մասին, ինչպես և լրացնում է Արևելյան կայսրության պատմության բացերը, պարզում է նաև շատ էջեր արաբացիների, սելջուկների, թուրքերի, մոնղոլների տիրապետության և խաչակրաց արշավանքների վերաբերյալ. Նա որոշ տեղեկություններ է հաղորդում Կովկասյան լեռների և Եվքսինյան Պոնտոսի ափերին բնակվող ժողովուրդների մասին. մյուս կողմից հայ գրականության ուսումնասիրությունը, գրականության, որ ունի սուրբ գրքի, եկեղեցու հայրերի ստեղծագործությանց, Պլատոնի, Արիստոտելի և հունական, ասորական և պարսկական այլ գրողների երկերի զարմանալի ճիշտ թարգմանությունները, վերին աստիճանի կարևոր է հիշյալ աշխատությունների շատ մութ կետերը

բացատրելու, արտադրողների աղճատած բնագրերը մաքրելու համար:

Հայ գրականությունը պահել է սուրբ հայրերի ստեղծագործություններից շատ երկեր, որոնց բնագրերը այլևս գոյություն չունեն: Այսպես. վերջերս նրա հետ ունեցած ծանոթությանն ենք պարտական Եվսեբիոսի ժամանակագրության, Փիլոնի հատվածների, ս. Եփրեմի, Հովհան Ոսկեբերանի և այլոց գործերի, որ անդարձ կորած էին համարվում, գյուտով: Քանի որ իսկականները կորած են, ուստի այդ թարգմանությունները, որոնք խոր հնությունից են գալիս, համարվում են թանկարժեք: Այդ թարգմանությունների ճշտության մասին՝ բացի հունարենի վերաբերմամբ հայերի ունեցած խոր հմտությունից, երաշխավորում է և ինքը—հայ լեզվի մեխանիզմը, հարուստ՝ բառագիտական տեսակետից և քերականական ձևերով, շարահյուսության ճկունությամբ և մի առանձնահատկությամբ, որ հնարավորություն է ընձեռնում վերին աստիճանի բազմազան ու բարդ բառակազմություն:

«Հայոց լեզվի ուսումնասիրությունը Եվրոպայում և հայ գրականության գիտական նշանակությունը» աշխատությունից, 1860.

Եթե հայոց ազգը դարերով ստրկանալով պարսից, մոնղոլների, սելջուկյան թաթարների, արաբացոց, օսմանցոց, եգիպտացոց, կամ դեռ չգիտեմ ինչացոց, այն պատմական դառը դեպքերի տակ ընկճված, մեռած ու հոգին բերանը եկած, չէր կարող բնական օրենքի ազդեցությունը քերել իր վրայից, չէր կարող չընդունել այն տիպը և կնիքը, որ այնքան դարերով, կրակով և բարձրաստիճան ճնշողությամբ դրոշմում էին նորա փափուկ սրտի վրա, եթե նորա կյանքը ենթակված էր այն ազգերի անպայման ազդեցության, միտքը, որ կյանքի հետ լծակից է, լեզուն, որ մտքի

հայտարարն է, ի՛նչպես կարող էին ազատ մնալ այն ազդեցությունից: Մի դեղ խոտ, մի բուռը հող գնում ես մեջ տեղը ու ետքը բոլոր աշխարհը ծածկում ես ջրհեղեղով, էլ խե՞լք է այնուհետև պահանջել, որ խոտը չոր մնա, կամ հողը չցրվի: Հայտնի է, թե հայոց ազգը գեդեոնյան բրդի կամ մովսիսյան մորենու սքանչելի որակությունքը չէր կարող ունենալ, որ ցողը նորան չթրջեր կամ կրակը չէրեր: Դեռ մեծ աղամարդություն է հայոց ազգի կողմից, որ այնքան կարողացել է պահել, որ այսօր մեզ պես, ազգի կորած չվարած որդիքը կարդում են նորա կենդանի խոսքով երկու տող գրել: Այո՛, մենք շատ խոսեր գիտենք, որ այսպիսի ջրհեղեղներից փթեցան, շատ հողեր գիտենք, որ ցիր ու ցան եղան, որոնց անունն անգամ մոռացված է այսօր:

«Հատվածներ «Աշխարհաբարի քերականության ներածությունից» գրվածքից, 1863.

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ

Թեպետ թռչնիկն ու հովն Հայոց
Ավերակաց երգին վերա,
Թեպետ պղտոր վտակն Հայոց
Նոճիներուն մեջ կուլա,
Նոքա հառաչ են Հայրենյաց –
Նոքա չեն բան արտես ի բաց:

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ

... Մռնչեցին ինչպես վիշապ
Ու մեր վրա հարձակեցան.
Ո՛վ Հայրենիք, ի հուր ի բոց
Քո համար մեր սիրտք վառեցան:

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ

...Բայց երբ գլուխն ի բարձ դրեինք հոգավեն,
Տեսանք ըղձեղ հակսին ու վերջին պայծառ,
«Ո՛վ պատանյակ, ըսինք ամենս մեկ բերնեն,
Վասն Հայրենյաց մեռար, դու ամս ապրեցար»..

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ

Հայրենի՛ք. ո՛ր ազգասեր սիրտը չի թնդար այս գեղեցիկ ու վսեմ անունը լսելով։ Հայրենի՛ք, չիկա ասկե ավելի ցանկալի ու սրտի հաճոյական անուն մը։ Հայրենյաց սերը սաստիկ բոց մըն է, որ կբորբոքի ազգասերին սրտին մեջը, որով կմաշի անիկա, չի կըրնար հանդարտիլ, պատեհավոր առիթ մը կսպասե այն սրտին մեջի վառած բոցը դուրս թափելու, ու այս կրակը չի մարիր բայց միայն մահվամբ։ Մեկը ո՛ր-

չափ անպիտան, անհանճար ու մարդկային կենցաղավարության բոլորովին անօգուտ անձ մը ըլլա նե ալ, իր Հայրենյացը փառավոր անունը բավական կսեպե իրեն, ու անով կպարծի օտարներուն առջին. իսկ առաքինին ու հանճարավորը միայն անով գոհ չըլլար, կնայի որ բոլոր իր մտքին զորությունը, կարողությունը, բոլոր իր ունեցածը ու ինչուան նաև իր անձը Հայրենյացը նվիրե, ու անով կջանա անոր անունը ավելի պայծառացնելու... Ճշմարիտ ազգասերը իր Հայրենիքին մեջ բնակելն ալ մեծ երջանկություն կսեպե. ու թե որ անողոքելի բախտին հրամանովը ստիպվի թողուլ իր ծննդյան տեղը ու օտար երկրներ պանդխտանալ, սիրտը հայրենյացը մեջ կթողու, տրտում աչքերը միշտ ան կողմը կդարձնե, ուր որ կբնակին իր սիրելի ազգակիցները, ու քանի որ պանդխտությունը երկնա, անչափ ալ հայրենյաց տեսության անձկալի փափագը կեռվեռա սրտին մեջ: Ճշմարիտ ազգասերը Հայրենիքին պաշտպանությունը ու անոր փառքը ու պարծանքը պահելու համար իր կյանքն ալ բանի տեղ չի դներ, որով և հոժարությամբ զոհ կըլլա անոր: Հայրենասերին սիրտը անհաղթելի է. չկա մեկ տակալի դժբաղդություն մը, որ կարենա ընկճել անոր հաստատուն ու ամուր միտքը և հոգին. ու թեև վիշտք, նեղությունք, տառապանք, հալածումն իրեն անհաշտ թշնամություն կայեն, ու սկսին անոր հետ կռվել, ինքը անշարժ կենա իբր մեկ քար մը կատաղի ալիքներուն դեմ, երկայնմտությամբ, ու միայն ազգին բարիք ընելու նախանձովը, անխռով ամեն բաներն կհաղթե: Այնպիսիները իրենց կենդանության ատեննին բոլոր աշխարհքիս հարգությունը ու մեծարանքը կվայելեն, հայր ու բարերար հայրենյաց կկոչվին. իսկ իրենց մահվան ատենը, բոլոր ազգին սիրտը, կսկիծը, ցավը ու տրտմությունը մեկտեղ գերեզման կտանին, քաղցր ու երախտագետ արտասուք կթրջեն ան ցուրտ քարը՝ որ անոր մարմնույն վրա կանգնված է իբրև վերջին պսակ անվանը, ու հավերժական նշա-

նակ մը, որ կցցնէ՝ թէ հոն կհանգչի առաքինութիւնը. իսկ անո՛ւնը, անմահ է անունը, ու դարէ դար ընծայվելով հավիտյան կենդանի կպահվի:

«Խօսեցեալ ի կաճառս Ընկերութեան Համազգեաց» ճառից, 1844—50 թ. թ.

Բանանք մեյ մը, աչքերնուս առջեւեն անցնենք հին և նոր պատմության գրքերը, որոնք մարդկային գործոց հիշատակարաններն են. ո՞վ են անոնք, որ դյուցազն՝ քաջ ու արդար անվամբ կդովվին ու մեր առջեւը դրված են իբր ընտիր օրինակներ առաքինության, և որոնց վարքը միմիայն ճամբա է անմահության հասնելու. ո՞վ են անոնք, որոնց փառավոր անունը ինչուան հիմա ամենուն բերանն է, ու ամենքը զարմացմամբ ու մեծարանքով կհիշեն զանոնք. հայրենասերներն են. հոս կտեսնենք մեկը, որ ուրիշ բանի չցանկար, բայց միայն ազգին բարիք ընելու, ու ազգը իրեն դեմ ապերախտ գտնվելով անոր աքսորանացը վճիռը կկարդէ, բայց անիկա անխռով կընդունի այն վճիռը, և ո՞վ է արդյոք, Արիստիդե՛ս. անդին մեկ ուրիշը մը, որուն բոլոր կյանքը անընդհատ բարերարություն եղեր է Հայրենյաց, չարաչար մահվան կդատապարտվի, ու իրեն վերջի կաթը, որ կթողու իր որդվոցը՝ անհիշաչարություն է. ո՛հ, առաքինին Փոկիոն: Մեկ ուրիշ մըն ալ ինքզինքը կամավոր զոհ կըմատուցանէ Հայրենյաց ազատության համար: Քանի՛, քանի՛ այդպիսի գեղեցիկ օրինակներ կգտնենք Հայոց առաքինի քաջերուն մեջն ալ. ո՞վ էր այն որ երեքթեյան նետը թռուց քաջին Հայկա ձեռքեն, ու ամբարտավան հսկան գետնին փռեց՝ սե՛ր Հայրենյաց. ո՞վ էր, որ զորող Նյուքարը Արամա ձեռքով աշտարակին ծայրը զամելով, բոլոր աշխարհքին առջեւ խայտառակեց, դարձյալ նույն ազնվական սե՛րը. անիկա էր իմաստուն Վաղարշակին օրենսդրություններուն ու կարգադրությանցը առաջնորդը ու վախճանը. անիկա էր սրբոց Սահակա, Մեսրոպա, Մեծին Ներսեսի բարերարությանց գոգերն ու պատճառը. ո՛վ է այն

քաջը, որ զենքերով զարդարված քրիստոսախումբ բանակի մը գլուխը անցած, կդիմե անվեհեր ու զվարթությամբ մահվան դիմացը. ա՛հ Վարդա՛ն, առաքինի Նահատա՛կդ, չե՞ս տեսներ, որ բոլոր դժոխք իրեն ահագին զորությունը քեզի դեմ պատրաստեր են. ի՞նչ կըսե. Հայրենիք իր օրհասական վտանգին մեջն է, միթե կարո՞ղ է մահը ազգասեր սրտի հաղթող ըլլալ, ու ինքզինքը հավատո և Հայրենյաց զոհ կմատուցանե: Այս է ահա Հայրենասիրությունը:

«Խոսեցեալ ի կաճառս Ընկերութեան համազգեաց» ճառից, 1844—50 թ. թ.

Ատեն մը ազգերնիս հայրենասիրությամբ ու միաբանությամբ կծաղկեր ու կպայծառանար, իր հզոր թագավորությունը բոլոր աշխարհը կդողացներ, հինգհատ մեծ թագավորներ գոտող Տիգրանին առջևը բարև բանած գերիի պես կծառայեին. Հայկա և Արամա փառավոր անունները ամեն տեղ հարգությամբ ու մեծարանքով կհիշվեին. ինչպես նաև ամբարտավան ու փառամոլ Հռոմման կպատկառեր անոնցմե. իմաստուն թագավորներ հետզհետե բարի կրթությամբ, քաղաքավարությամբ ու մեծագործությամբ կծաղկեցնեին ազգը. ինչպես որ քրիստոնեության համատարած արևը փարատեց կռապաշտության խավարը, որ ատենն ալ գիտությունները ու ուսմունքը իրենց լուսափայլ ճրագները վառեցին ան աշխարհին մեջ, ու մտքերը սկսան լուսավորվիլ. իմաստությունը իր տաճարները կանգնեց, ու անգին գանձերը սկսավ աննախանձ բաժնել ամենուն. Հայաստան մեկ գեղեցիկ պարտեզի մը պես զարդարվեցավ զանազան գիտության ծաղիկներովը, որոնց անուշահոտությունը ամեն տեղ կբուրեր, և ուսմանց բարելից ծառերովը, որոնց քաղցր պտուղները անոթի մտքերը կկշտացնեին. իմաստուն մշակները ժիրաժիր մեղուներու պես կաշխատեին, ու իրենց պատվական արդյունքը բոլոր աշխարհին չորս դին կտարածվեր. Հայաստան նախանձելի երկիր մը եղավ ամեն ազգաց. բայց ավա՛ղ, ո՛վ երջանկության օրեր,

դուք շատ երկայն չտևեցիք․ անմիաբանությունը ու անհոգությունը խոժոռ աչքով կնայեին այս աղվոր վիճակին վրա․ վերջապես կատղած գազանի մը պես վազեցին Հայաստան, կործանեցին գահը, ու երկիրը փլատակներու մեջ թաղեցին․ իմաստության տաճարները փլան, մեկեն ազատության թուխ ամպը եկավ գոցեց Հայրենիքը, գիտության ճրագները մարեցան, ու Հայաստան մնաց մութ խավարի մեջ․ անկե ետքը խեղճութենե խեղճություն գլորվելով, քանի գնաց՝ թշվառությունը ավելցավ․ կամաց կամաց կորստյան վիհին կմոտենար․ այն զարհուրելի վիճակին մեջ Հայրենիքը, ակար գլուխը վեր վերցուցած, դողդոջուն ձեռքերը ասդին անդին կշարժեր․ ո՜հ մեկ օգնական մը...

«Խոսեցեալ ի կաճառս Ընկերութեան համազգեաց» ճառից, 1844—50 թ. թ.

Միթե մենք նախնի դյուցազն հայերուն սերունդեն չե՞նք, միթե մենք սրբոց Սահակա՝ Մեսրոպա՝ Մեծի Ներսեսի հայրենակիցները չե՞նք մի․ մեր ճակտին վրա Հայկա անմահ անունը գրած չէ՞ մի․ թող տեսնա Եվրոպան, որ ճշմարիտ հայուն սիրտը թե որ մեյ մը գիտության սերը վառես, կրնա իրեն հավասարիլ։

«Խոսեցեալ ի կաճառս Ընկերութեան համազգեաց» ճառից, 1844—50 թ. թ.

... Հայրենյաց օգո՛ւտը, այս ըլլա մեր առջևի նպատակը, ու անոր հասնելու համար՝ նեղություն, նախատինք, ու ուրիշ ինչ ի՛նչ և իցե արգելք բանի տեղ չի սեպենք․ թեպետ մեծ ու փառավոր է մեր առջևի բացված ասպարեզը, բայց դժվարընթաց ու տաժանելի կրնա ըլլայ․ միայն մեր սիրտը անհաղթելի պետի ըլլա, մտքերնիս ամուր ու ազգասիրությամբ լեցված, ան ատենը կրնանք հաղթել, ամեն դժվարությանց, ու մեր գեղեցիկ վախճանին կհասնինք։

«Խոսեցեալ ի կաճառս Ընկերութեան համազգեաց» ճառից, 1844—50 թ. թ.

... Որչափ՛ փոփոխություն. ահա՛ ուսմանց ու քաղաքականության [քաղաքակրթության,—Ա. Բ.] արևուն ճառագայթներով ամենքը տաքցած, մտքերը լուսավորված, իմաստության տաճարներ ամեն անգլին կանգնած... Հոն գիտության հստակ ու մաքուր ջուրը իբր կենդանի աղբյուրե մը կըխե անդադար, ուր որ բոլոր ծարավի ժողովուրդ մը կվազե, ծարավը անցնելու. Հոս մեկը պիտանի գրություն մը գրած, Հոն ուրիշ մը միտքը կհոգնեցնե նոր ու կարևոր գյուտ մը Հնարելու, վերջապես ամեն տեղ միաբանություններ, ազգասիրություններ, ու քաղաքականություններ [քաղաքակրթություններ,— Ա. Բ.] տիրած, Հայաստանի ոսկեղեն դարը նորոգված, որոց Սահակա՝ Մեսրոպա ժամանակները Հասած, Հայրենիքը Հանգստացած՝ խաղաղ երջանկության պտուղը կվայելե, Հայու ազգը պատվավոր ու մեծարը եղած ուրիշ բարեկիրթ ազգերուն առջև: Ա՜հ, Հայրենի՜ք, Հայրենի՛ք իմ, վերցո՛ւր մեյ մը գլուխդ, տե՛ս կճանչնա՞ս արդյոք քու Հիմիկվան վիճակդ՝ առաջինին Հիշելով. տե՛ս քու առաքինի որդիքներդ որ Հայրենասեր ջանքով կփափաքին երջանկության պսակը կապել գլուխդ, զարդարել զքեզ իմաստության զգեստներով, գեղեցկացնել ուսմունքներով ու զքեզ կրթված ու ծաղկյալ ազգերուն կարգը անցնել. անշուշտ պիտի տեսնան զքեզ մեկ օր մը այն աստիճան իմաստության բարձր գահը բազմած, ու չորս կողմդ պար առած սիրասուն որդիքներ, որոնցմով կցնծաս կատարյալ ուրախությամբ: Երանի՛ այն ժամանակին. բայց Հիմակվնե այս քու որդիներդ քեզի կնվիրեն իրենց քրտինքը ու աշխատությունը, քեզի կնվիրեն իրենց բոլոր մտքին կարողությունը. քեզ կնվիրեմ ես ալ այսօր իմ տկար ու անզոր ձայնս, որ անշուշտ քեզմով ազդու և զորավոր եղավ և ընդունելի իմ սիրեցյալ ընկերներուս :

«Խօսեցեալ ի կաճառս Ընկերութեան Համազգեաց» Ճառից, 1844—50 Թ. Թ.

Հրավառ նյութեր երկրիս անդունդները այնչափ սաստիկ չեն տաղնապեր որչափ որ սա երկնային հուրը, այսինքն հայրենյաց ու մարդկային ազգին օգտակար ըլլալու սերը մարդուս սիրտը կբորբոքե. և դժա՛ր է ան բոցը դուրս թափել որ հանգչի:

«Ի նորակերտ ժողովարանն համազգեաց խոսեցյալ» ճառից:

Երբ թշնամիին մեզի բրած անարգանացը հատուցանենք ու վատության կնիքը արյամբ սրբենք, ան ատենը գերեզման իջնանք. ան ատեն գեղեցիկ ու փառավոր է մահը. մեռնինք վրեժխնդրության ժպիտը մեր շրթունքներուն վրա. մեռնինք մահվան վառ երկյուղը թշնամվույն սիրտը ձգելով:

«Կոռնակ» ողբերգությունից, 1856.

Կսիրեմ իմ ազգս, վասն զի ինքը ծնավ ու մեծցուց զիս. կսիրեմ իմ Հայրենիքս, վասն զի քաջությամբ և փառաց գեղեցիկ հայրենիք էր ատենոք. ու թե որ հիմա ամեն փառաց հիշատակները անցելոց մեջ ծածկվեցան գացին, թե որ յուր անմոռանալի դյուցազունքը շիրիմներու մեջ փակվեցան, սակայն անոնց ոսկորները բարձրաբարբառ կխոսին Հայկա ճշմարիտ և հարազատ որդվոց սրտին մեջ, ու կհորդորեն զանոնք սիրել Հայաստանը, ինչպես որ իրենք սիրեցին. սրբազան հող սեպել այն հողը, որ իրենք կոխեցին և իրենց արյունովը թրջած է. կգրկեմ ու կսիրեմ իմ ազգս...

«Արշակ» ողբերգությունից:

Ազատությունը նախ և առաջ մեր անմատույց լեռներուն մեջ ապաստան մը գտավ. և Հայերը անոր անդրանիկ ծնունդներն են:

«Վահե» ողբերգությունից:

Մարդուս ճշմարիտ քաջությունը այն՝ է, որ բախտին փոխվելու ատենն ալ ինքն անփոփոխ մնա. ու միենույն աչքով դիտե կապանքները ու դափնիները. աչվընիս թող արցունքներ թափեն Հայրենյաց համար, վասն զի արտասվաց արժանի է. բայց սրտերնիս ան-

չեջ բոցերու վառարան ըլլան զավկը վառելու ու կենդանացնելու համար· վասն զի ամեն բանե ավելի կարոտ է յուր որդվոց սիրույն ու ձեռնտվությանը:

«Արշակ» ողբերգությունից:

Ո՜վ փառավոր ժամանակներ, ո՞ւր եք դուք հիմա, ուր բոլոր Հայաստան պատերազմի դաշտ մը դարձեր էր ու սարսափելի որոգայթ մը, ուր կռնվեին պարսիկք, բասլանք և սկյութացիք, ու մենք անոնց վրա հսկաներու պես կցատկեինք· ան ատենը հայություն ըսելը, քաջություն, հաղթություն ու փառք ըսել էր:

«Կոռնակ» ողբերգությունից, 1856.

Քաղցր ու ախորժելի են այս կերակուրները, վասն զի մեր սիրելի հողին բերքերն են· անուշ են աս ծաղկի փունջերն ալ, վասն զի մեր Հայաստանին հողեն ու անոր օդովը սնաներ են· պայծառ կվառին աս ճրագները, ասանկ ալ պայծառ փայլին քո վրադ երջանկությունն ու փառքը ո՜վ Հայաստան:

«Կոռնակ» ողբերգությունից, 1856.

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ

Թող լռեն մունջը, անդամալույծը,
Կամ՝ որոց քաղցր է բռնավոր լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք բռնավոր առաջ,
Գոնե մեր փառքը մահով ետ խըլենք
Ու այնպես լռենք:

Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆ

Դե՛հ, ելե՛ք, Հայեր, ոտքի կանգնեցե՛ք,
Ահա՛ թշնամին կա ձեր հանդիման,
Ջըլոտ ձեր բազկաց ույժը փորձեցե՛ք,
Ինչպես սովորեցուց ձեզ Քաջըն-Վարդան:

Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆ

Աստված ինձ զրկելով ամեն արժանավորություններից տվել է մի կրավորական զգացմունք՝ սեր հայրենյաց, որն այնպես մեծացել է իմ էության հետ, որ մի օր չի մտածել հայի օգտին, մի օր չի ցավել նորա թշվառությանը, մի օր չի մտածել նորա ապագայի վրա, ինձ համար մահ է: Ինչեր չէի բերի զոհ նորա համար, եթե հարկը պահանջեր:

Գևորգ Քանանյանին գրած նամակից, 1856.

Մարդու սրտի մեջ բնությունն դրած գեղեցիկ զգայություններու մեկն է, Հայրենիքի սերն է: *Այս սերը ծնվում է մարդու հետ միասին, աճում է հասակի հետ միասին, երբեք նրան մենակ չէ թողնում, մինչև*

անգամ երբ որ մահը հասնում է նրան հայրենի հարկեն դուրս (օտար երկրումը), նրա հետին նայվածքը դառնում է դեպ յուր հայրենիքը:

Եթե որ մարդ օտարության մեջ է նախասահմանության կամքով վիճակված լինում, պահում է յուր սրտի մեջ այն անցերու քաղցրիկ հիշատակները, որոնք որ տեսել են նրա ծնունդը՝ նրա խորհուրդը թռչում պտտում է այն հեռավոր տարածությունը· նոր է նորա տեսնում է յուր գյուղը, գեղջուկ խրճիթը, այն փոքրիկ վտակը՝ որ ոռոգում էր նրա դաշտը, հովիտը՝ ուր որ յուր մանկության ժամանակը ծաղկունք էր հավաքում. և երբ այս մտածության ցնորքը նրանեն հեռանում են, նա ափսոսում է այս քաղցր անձնախաբության համար, որ նրան բարեբախտ էր արել մեկ քանի վայրկյան:

«Մեր հայրենյաց» հոդվածից, 1864.

Այո՛, այո՛, սիրելիներ, գեղեցիկ է մեր հայրենին, գեղեցիկ է նա մինչև անգամ այս լքյալ, վայրենացյալ վիճակի մեջ, ուր ես տեսնում էի այժմ նրան: Մեկ ձգում էի աչքերս մուգ-կապույտ երկնքի վրա, մեկ՝ ներկված հեռավոր սարերի վրա ու մեկ՝ այն անհուն դաշտերի վրա, որոնք չորս կողմից պատում էին մեզ: Չէ՛, որբացած ու այրիացած կնկա չէի նմանեցնում մեր անգին Հայաստանը, այլ այն խաթուն մորը, որն յուր ամուսինին ու որդոցը ճամփել է հեռավոր աշխարհ և այժմ ինքը, աչքերը դուռը, սպասում է նրա վերադարձին: Չէ՛, հայերս էլ լքած ու մոռացած չենք մեր զավակասեր ու բազմակարոտ մորը, այլ միայն երկնքի պարզվելուն ու ճամփաների չորվելուն ենք նայում, որ գոտիներս կապենք, ցուպերը ձեռքներս առնունք ու մեր բղձալի հետադարձ գաղթությունը կատարենք: Մենք լքած չենք Հայաստանը, այլ միայն ժամանակավորապես թողել ենք նրան:

«Ճանապարհորդության տպավորություններ» հոդվածից, 1879.

Որի՞ն հայտնի չէ, որ Ռուսաստանի մտավոր հառաջադիմությունը և հետադիմությունը սաստիկ ազդում է հայերուս վրա. ռուսաց գրականությունը տալիս է հային ո՛չ միայն գրականություն, այլ և նորա բարոյական ուղղություն հզոր զարկեր, թերևս ավելի հզոր, քան թե նույնիսկ ռուս ազգին: Ռուսաց օրագիրների և լրագիրների մեջ արտահայտած միտքը մենք ոչ միայն 'ի նկատի ենք առնում, այլ և ամբողջապես կուլ ենք տալիս: Ռուսի կենցաղը մեզ համար օրինակ է. ռուսի միտքը մեզ համար քարոզ է, որ մտնում է մեր կյանքի ամեն մանվածքի մեջ. ինչ որ անում է ռուսը նույնը մեզ համար օրինակելի գաղափար է, ինչ որ ասում է ռուսը մեզ համար օրենք է: Ես տակավին չեմ ճանաչում մի ազգ, որ այնքան սիրահարված լիներ ռուսի վրա, որքան որ հայը... [Ռուսը,—Ա. Բ.] հայից ավելի մտերիմ, անխարդախ, հավատարիմ բարեկամ չունի, բարեկամ, կրկնում եմ, ցվերջին կաթիլ արյան, ցվերջին շունչ կյանքի:

«Ճանապարհորդության տպավորություններ» հոդվածից, 1879.

Հայը կույր գնալու ազգ չէ՛, թեկուզ Պրուսացվոց ամեն մեթոդները գործ դրվին: Բանի վրա թեթև նայողներին կարող եմ հավատացնել, որ այս խնդրության մեջ կրոնը ամենաթույլ դեր է խաղում: Կան մարդիկ, որոնք մինչև այժմ հավատացնում են, որ եթե խղճի ազատությունը հրատարակվի՝ հայությունը հիմքեն կքայքայվի: Ո՛չ միայն սխալական, այլ և ցվերին աստիճան ծիծաղելի երևում է ինձ այդ կարծիքը: Հայությունը այնպիսի պինդ պայմաններ ունի, որ թե՛ խղճի ազատությունը և թե՛ նորա հետ սերտ կապված խառն պսակը, մի փոքրիկ միջոցումը, հակառակ վերոհիշյալ կարծիքին, կկրկնապատկե հայ ժողովրդի թիվը: Հարցնում եմ, օտար ազգերը ի՞նչ այնպիսի ազգային արժանավորություններ ունին, որ հայը ուրանար յուր ազգությունը և ընդուներ նոցանը: Կրոնական ազատությա՞մբ պիտի պարծենան

մեր առջև օտարազգիները, թե՞ ընտանեկան մաքրակենցաղությամբ, թե՞ լեզվի դյուրությամբ, թե՞ նախնյաց հարուստ պատմական ժառանգությամբ, թե՞ ցեղական ուղեղի և ներդերի հաջողակ զարգացմամբ, ինչո՞վ, ինչո՞վ: Մեր եկեղեցին ազատ է, մեր տանընին օճախը սուրբ է, մեր հայերուս գանգի ուղեղը զարգացած ու հասուն է, հայի լեզուն ճկուն, հարուստ և դյուրին է: Հայը դրսի անտանելի հալածանքին չդիմանալով միայն և այդ՝ հազարումեկ ներքին ազդմամբ, ուրանում է յուր ազգությունը. եթե հայը ակներև հալածանքի մեջ անգամ գիտե զարգանալ ազգովին, ապա ո՞րքան նա պիտի բարգավաճեր բարոյապես և նյութապես, եթե ունենար ազատության նման մի բան յուր քանդքնդած, բայց հարազատ Հայաստանի մեջ:

«Ճանապարհորդության տպավորություններ» հոդվածից, 1879.

Իմ ճանապարհորդությունը մի հատուկ նպատակ ուներ, որ է՝ տեսնել իմ հայ եղբայրներու ցավը և ուրախությունը, բախտը ու տարաբախտությունը, նոցա անոթի ու կուշտ լինելը, նոցա աչքերի արտասունքը և երեսների ծիծաղը, լսել նոցա ուրախության երգ երգելը և տրտմության սուգ կարդալը. ես ուզեցի Հայաստանի մեջ տեսնել կենդանի հայեր և ոչ թե փնտրել այնտեղ մեր պապերի գերեզմանները և նոցա տաճարների ավերակները. ես հետամուտ չէի վերանորոգելու մեր նախնյաց անմխիթար պատմությունը. մտքիս մեջ ասում էի, «թող մեռելները թաղեն մեռելներին»: Ես ուզում էի իմ եղբայր հայերի հետ ճաշի նստել նոցա ծխոտ գոմերումը, սազ ու թառով, զուռնայով և դափով քեֆ ու զող անել հայրենիքիս ձորերումը և անտառներումը. ուզում էի տեսնել հայ կնոջ վարպետ ձեռքով տուն տեղ կառավարելը,— ես ուզում էի տեսնել, լսել և շոշափել այդ ամենը, և վերադառնալ իմ տեղը (Նոր Նախիջևան), ու ձմեռվա ցուրտ երեկոները, տան սուրբ օջախի առջև նստած,

չորս կողմս իմ սիրական զավակներին ժողոված՝ պատմել նոցա Հայաստանի ու հայերու լավն ու վատը, բաղդն ու անբաղդությունը:

«Ճանապարհորդության տպավորություններ» հոդվածից, 1879.

Ի՞նչ բան չէ կարող անել հայ քաջ երիտասարդությունը. եթե կամենա:

«Ճանապարհորդության տպավորություններ» հոդվածից, 1879.

Հայըն ճանաչելով հեզ, աշխատասեր, շիտակ, ճարպիկ ժողովուրդ, ամեն օտարազգի թագավոր զանազան արտոնություններով յուր աշխարհը կհրավիրե, որ նա գա և յուր խելքով, ձեռքի ճարպկությունով և տնտեսական կառավարությունով ո՛չ միայն ծաղկեցնե յուր երկիրը, այլ և յուր համազգի հպատակներին քաղաքականապես [կուլտուրապես,—Ա. Բ.] դաստիարակե և կրթե յուր կենդանի օրինակով: Հայը, ինչպես վերը հիշեցինք, մի կարճ ժամանակի մեջ, ոչ միայն յուր տնական գործը կբարվոքե, այլև երկրի գանձին և հարստության տեր կդառնա ու կհզորանա, և ընդնմին հավատարիմ կմնա յուր կրոնին և ազգային ավանդություններուն. հայը չի խառնվիլ օտար ազգի հետ, արհամարհելով նորա խոստացած ամեն հրապուրիչ օգուտները և յուր ազգությունը չի ուրանալ:

«Նոր Նախիջևանի հիմնարկության պատմությունը» աշխատությունից, 1879.

Հայերը, որ Եվրոպացոց հրավիրանոք, մանավանդ Խաչակրաց ողոքանոք՝ իրանց արվեստները և իրանց առևտուրը տարան Եվրոպա, մինչ Եվրոպա դեռ չէր այնքան ծաղկած, և կարոտ էր այլոց օգնության, և իրանց գործունեությամբ Եվրոպայի շատ թագավորությունների մեջ ձգեցին արվեստագիտության և վաճառականության սերմունքը, և ճոխացուցին բնակիչներուն, միշտ փախչելով բողոքարկվաց տերություններեն, և նախընտիր համարելով հռոմեադավան-

երկիրները, Իտալիայի և Լեհաստանի մեջ բյուրավոր բազմությամբ հաստատեցին բնակություն. եթե դևլեթներու չարությունը թողած լիներ նրանց հաստատ իրանց տեղերումը՝ այժմ եվրոպացվոց նման և եվրոպացվոց առաջին լուսավոր բարեհրահանգ և քաղաքակիրթ ազգերու նման ազգ կլինեին, և ամեն կողմանց երևելի կհանդիսանային աշխարքի ասպարեզի մեջ:

«Հայոց ազգի նպատակը ի՞նչ է»
հոդվածից, 1864.

Միայն ազգի իսկական օգուտը ինձ ստիպեց և միշտ ստիպելու է ճշմարտախոս լինել թե կենդանի խոսքով և թե գրությամբ և ամեն ինչ ձեռնարկություն հանուն ազգի՝ միշտ մուտ ունենալու է իմ սրտի մեջ և ցնծության արձագանք պիտի լսվի այնտեղեն:

Գևորգ Քանանյանին գրած
նամակից, 1858.

«Գ[ամառ] Ք[աթիպա]»-ն[1]) անպատճառ պիտի լինենա ուղղության ներքին պարունակության կողմանե. նա պիտի լինի մեր օրերու, սեպհական մեր կարծիքների և մեր նվիրական խորհուրդների արձագանքը. նորա կարդացողները թող չի գտնեն մեջը այնպիսի հատվածներ, որոնք կարող են պատճառ լինել հային անզորր կենցաղ սիրող լինել. թող չի անեն նոցա կրոնասեր քրիստոնյա, զավակասեր կամ ընտանեսեր ծնող, այլ ամեն մի գորա մեջ պարունակած հոդվածը թո՛ղ կարողանա արծարծել նոցա սրտի մեջ, եթե ոչ ուղղակի կերպով հայրենասիրությունը, գոնե թո՛ղ հիշեցնեն նոցա նոցա կորցրած երջանկությունը. թո՛ղ [հայը,—Ա. Բ.] կամաց կամաց սովորի պաղ արյունով նայել այն մահվան վրա, որ նա կարող է ստանալ զոհելով անձը ազգի ազատությանը. մեկ խոսքով՝ այն

---

1 «Գամառ Քաթիպա» ընկերության նույնանուն ժողովածուների մասին է խոսքը: Ա. Բ.

ամեն զգացմունքները, որոնք խորը տպավորվել են մեր մեջ, որ մենք չենք համարձակվում հրապարակավ քարոզել և որն որ հային ըստ մեծի մասին անհայտ է, թո՛ղ անգամ կերպով սերմանվի նոցա սրտի և հոգվո մեջ։ Ուստի՝ մենք պետք աշխատենք մուծել «Գ[ամառ] Ք[աթիպա]»-ի մեջ վարք երևելի արանց՝ ինչպես որ էին Գուստավ Ադոլֆը, Վիլհելմ Թելը, Բոցարիսը, Դիմիտրի Դոնսկոյը, Լեոնիդը և շատ ուրիշները, որոնք փառք են իրենց հայրենյաց։ Ընդհակառակն եթե մենք կտեղավորենք այնպիսի չարագրություններ, ուրտեղ որ ապստամբությունը (ազգասիրական) համարվում է հանցանք, կսովորեցնենք հային խաղաղ, առորնին կյանք վայելել՝ այն ժամանակ ինչի՞ պետք նմանին նոքա։ Իմ կարծիքով՝ ավելի լավ է նկարագրել ապստամբ ավազակների կյանքը, օրինակ Պուգաչովի, Ստենկա-Ռազինի, Օտրեպիևի՝ քան թե գերմանական կյանքից առած մեղր ու կարագով ծեփած և սերով կոկած Էռնեստներու, Վոլդեմարներու և Գյուվալյներու։ Երբեք թող պարունակեն իրանց մեջ հուսահատություն, կասկածանք (սկեպտիցիզմ), կյանքից զզվումն՝ քան թե բնության և աստուծո ողորմությունը, բարոյականության հաղթանակը։ Թող հայ աղջիկը սիրե քաջություն, քան թե բարոյական առաքինություն, սև և խուճուճիկ մազեր, զգայուն հոգի, տխրոտ աչքեր, քան թե փայլուն ոսկեզիրներ, հարուստ կամ աստիճանավոր փեսա։ Գիտեմ՝ մեզ կըհայհոյեն, անբարոյական կանվանեն, խելացնոր կկարծեն, բայց մենք եթե չի հասնենք էլ մեր նպատակին, գոնե կմոտենանք. հնար չի կա, որ հետևողներ չունենանք։

Գևորգ Քանանյանին
գրած նամակից, 1855.

Ոչ ոք մեզ չի օգնիլ. մենք պետք հարթենք մեր ճանապարհը, կատաղաբար պետք մարտնչենք ամեն

դժվարության և արգելքների հետ․ աղքատություն, գրկանք, հալածանք, տառապանք պիտի լինի մեր բաժինը․ օգուտ ոչինչ, վարձատրություն ոչինչ։ Ազգը մեզ փող չի տալ, մենք մեր քրտնաջան վաստակի արդյունքը պիտի թափենք նոցա համար գրքեր տպելու։

Գևորգ Քանանյանին
գրած նամակից, 1855․

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶ

Ո՜հ մեծ է սերը հայրենյաց, թեև
տնանկության և թշվառության մեջ։
Ս. ՇԱՀԱԶԻԶ

Ո՛վ սուրբ հայրենիք, այդ ինչ զորություն
Որ կապ է քո հետ սերը մեր սրտի։
Ս. ՇԱՀԱԶԻԶ

Անդավաճան, ջերմ սիրով
Ես սիրել եմ հայրենիք,—
Գնա և դու նույն ճամփով։
Ս. ՇԱՀԱԶԻԶ

Թող տխուր անցյալ մեր համար փոխվի
Մի պայծառազարդ փառավոր ներկա,
Որ վերանելով ազգության ծիլեր,
Երևան հանե ոսկե ապագա։
Ս. ՇԱՀԱԶԻԶ

Եթե անցած օրերի հանգամանքները չարահաջող էին հայրենասերների համար, այսօր այլ հանգամանքներ են և ցանկալի է, որ դոքա մայրենի հողի վրա կենդանանան: Հայրենիքը, արյունո՛վ և արտասուքո՛վ թրջված հայրենիքը, այժմ կանչում է յուր զավակներին թքել անձնական օգտի երեսին և բոլոր յուրյանց անձը նորան նվիրել:

«Հրապարակախոս ձայն» աշխատությունից, 1881.

Եթե հայրենասեր հայը յուր փառավոր գործերը կամենում է տեսնել գալոց թոռների մեջ, այսօ՛ր պիտի կռե այդ գալոց թոռների շղթայաշարը. ոչ թե մահից հետո, այլ անպատճառ այսօր չպիտի խնայե յուր կարողության չափ օգնել ազգի օրինավոր պահանջմունքներին:

«Հրապարակախոս ձայն»
աշխատությունից, 1881.

Ընդհանուր նորությունների շարքից խոսելով,—մի մարդ, որ արյան և երկաթի կշեռքով կշռեց ժամանակակից քաղաքակրթությունը, հեռացավ մեր միջից, միայն ոչ դեպի հավիտենական հանգիստ, այլ դեպի հավիտենական նզովք. այդ գերմանացի պատգամախոս Բիսմարկն է: Արդարև, որքան ոսկորներ ու մեռելների կմախքներ թողեց դա աշխարհի վրա. որքան անբարոյականացրեց դա Գերմանիայի կառավարիչներին, որ դոքա փայփայեցին մի վայրենի ժողովուրդ, երբ նրանք հարձակվում էին անմեղների [հայերի,— Ա. Բ.] վրա և լույս ցերեկով մորթում իրենց ներկայացուցչի առջև: Անբարոյական մարդիկ, անբարոյական գերմանական դիպլոմատիա, որ այնքան ավեր բերիք մեր խեղճ հայրենիքի գլխին:—Էհ, եղբայր, ինչո՞ւ ձեր նանիր ցավերը նորոգենք, մենք ամենաթշվառ սերունդն ենք, որ աչքով տեսանք մեր սրբավայրի պղծությունը և անզոր ենք օգնելու նրան:

Խաչատուր Հովհաննիսյանին
(Քուչակ Հովհաննիսյան) գրած նամակից, 1898.

Արաբացվոց մտավոր շարժումը, որով նոքա շատ բաներում ուսուցիչ հանդիսացան եվրոպացիներին, անտարակույս, առանց ազդեցության չանցավ և հայոց գրականության համար: Գիտության այն ճյուղերը, որ սակավ ծանոթ էին հինգերորդ դարին, արաբացվոց տիրապետության ժամանակ, Աբասիդների

օրերով, սկսվում են արծարծվել և մեր հոգևոր կյանքում: Եվ մեր մեջ երևում են գիտության բոլոր տեսակների գրվածներ, որպես իմաստասիրական, մաթեմատիկական, աստղաբաշխական, բժշկական, աշխարհագրական, բանաստեղծական և այլն: Սրանով մենք չենք ուզում ասել, որ այդ գիտությունները հայերը քաղեցին արաբական աղբյուրներից. ընդհակառակն, հայերը քաջ հունագետ լինելով, բոլոր թարգմանում էին հունարենից և սակավ ասորերենից: Արաբացվոց երախտիքը այն բանումն էր, որ նոքա յուրյանց օրինակով մեծ զարկ տվին գիտությունների ծավալման հայերի մեջ:

«Ամառնային նամակներ»
գրքից, 1897.

Հինգերորդ դարի հայերն էլ, պարսից «Հրահանգը» տեսնելով, պարսպաձև շարվեցին միմյանց ետեվից «կյանքի և մահվան» գնով պաշտպանել իրանց լեզուն, կրոն ու հայրենիք:

Այնուհետև ուրիշ քաղաքական ալիքներ եկան և ավերանքներով ծածկեցին մեր հայրենիքը: Բայց ոչ մի ալիք, ոչ մի հալածանք չկարողացան հային բաժանել յուր սիրած հողից: Մինչև այսօր էլ հայը, մի աչքը ձգած յուր պապերի գերեզմանների վերա և մյուսը յուր արտի վերա, մնաց յուր հողին հավատարիմ ընկեր: Իրավի. եթե բնությունը երկու ձեռքով չէ բաշխել հային աշխարհի բարիքը, բայց նրա երկու ձեռքն էլ չի կապել ծուլության ձիրքով: Ընդհակառակն, նույն բնությունը դրել է հայի մեջ աշխատասիրության ոգի, որ կուլտուրական կյանքի ամենահաստատ գրավականն է: Բայց ափսոս որ այդ գեղեցիկ հատկությունը շատ փոքր նշանակություն կունենա, եթե լուսավորության դրոշակն էլ չծածանվի հայի գլխին: Զայն տալ հային դեպի նոր կյանք ու հարություն, որոնել միջոցներ, որ մեր սերունդը չլուծվի օտարի

մեջ,— այն անանցանելի վիհն է, որի առաջ շաղվում է գործողի միտքը:

«Հիշողություններ Վարդանանց տոնի առիթով» աշխատությունից, 1901.

Ազգերի պատմության մեջ մենք սովորաբար երեք տեսակ հերոսներ ենք նկատում, որոնք այլևայլ ճանապարհներով են գործում ազգը փրկելու նպատակով նրա ընդհանուր ճգնաժամին: Առաջին կարգի հերոսները նրանք են, որոնք առանց հաշվելու իրանց ույժը, համարձակ դուրս են գալիս ահագին թշնամու դեմ և, արիաբար նահատակվելով, ընկնում պատերազմի դաշտում: Սոքա համոզված են, որ իրանց մահը կմնա մի անջնջելի արձան գալոց սերունդների առջև, նրանց կրծքի մեջ սեր ներշնչելով դեպի հայրենիքը:— Այսպես են մեր պատմության մեջ Վարդանանք և գլխավորապես ինքը Վարդանը:

Իրավի, հենց այդ հերոսների պատկերը մի դեղարվեստական քանդակի պես է տպավորվում ազգի գիտակցության մեջ, այնպես որ ավելի հեշտ է նրա թոքերը դուրս քաշել կրծքից, քան թե այն պատկերը, որ արդեն տարրացած է նույն ազգի հոգու հետ:

Մեր անցած կյանքի մեջ փառավոր հաղթություններ էլ են եղել, բայց ոչ մի փառավոր հաղթություն չի ունեցել այնքան կախարդիչ ազդեցություն, որքան ունեցել է Ավարայրի փառավոր պարտությունը: Եվ իրավի այնուհետև Ավարայրի դաշտը գեղեցկացավ մի երկնային գեղեցկությամբ: Դարերի արտասունքը, հայրենասերի աչքերից ցողելով, թարմ և դալար պահեցին մարտիրոսական ծաղկունքը,— Վարդանանց ոսկորները, որոնք նվիրական խավերով մեծացրին, բարձրացրին Ավարայրը և կազմեցին մի կատարյալ Գողգոթա:

«Հիշողություններ Վարդանանց տոնի առիթով» աշխատությունից, 1901.

Պատմությունից հայտնի է, որ եթե այս և այն ազգի տնտեսական և մյուս կուլտուրական աղբյուր-

ները սկսում են ցամաքել, հետևաբար նրանց գործիչներն էլ ներկայացնում են ինչպես «լքեալք, լուծեալք և անդամալուծեալք»— այն ժամանակ ազգերին անխուսափելի մահ է վրա հասնում։ Բայց ազգերի մահը, մանավանդ փոքր ազգերի, միշտ էլ չի հետևում բնական օրենքին. այդպիսի ազգը, առաջ ենթարկվելով զորավորի չարունակ հարվածներին, ապա կորցնում է միայն յուր ինքնուրույն կացությունը։ Բայց որովհետև այդպիսի ազգը դեռ կենդանի է հոգով ու մարմնով, անդադար փորձ է փորձում նորից ձեռք բերել անկախ կյանք։ Մենք հին օրինակներից առնենք միայն մինը,— այն, որ մոտ է մեր սրտին։ Հայտնի է, որ Վարդանանց նահատակությունից հետո թեպետ պարսիկները հաղթեցին ու նվաճեցին հայերին, բայց նրանց մեջ չհանգավ ազատության շունչը, որը, այն ժամանակից սկսած, մոխրի տակ ծածկված խանձողի պես երկար ոգևորել է ազգի ընտրյալներին։

«Մի քանի խոսք իմ ընթերցողներին» աշխատությունից, 1903.

Ահա անցել է 1400 տարի և այդ երկար շրջանում հայերի լավագույն մասի մեջ միշտ կենդանի է մնացել ազգային գոյության գաղափարը, լեզվի ու գրականության ուսումնասիրությունը։ Այս գեղեցիկ հատկությունների շնորհիվ վերականգնել են Բագրատունյանց և Ռուբենյանց իշխանությունները, ապա առաջ են եկել այլևայլ մելիքություններ ու Զեյթունի արյունահեղ խլրտումները նույն ազգային բարօրության նպատակով, բայց չկարողանալով դիմանալ մահմեդականների բուռն արշավանքներին, վերջ ի վերջո պիտի տեղի տային նրանց առջև և հրաժարվեին իրանց անկախությունից։

«Մի քանի խոսք իմ ընթերցողներին» աշխատությունից, 1903.

Հայերը այն խորին հնության մեջ լինելով մի կըրթական ժողովուրդ, յուրյանց երջանկության առաջին աղբյուրը համարել են հողը. ամեն մի լարաբաժին,

ամեն մի Թիզ գետին վարելով և ցանելով ոչ միայն բնիկ մարդերին են կերակրել, այլ և հեռավոր երկիրները յուրյանց բերքերովն են լցրել:

«Հրապարակախոս ձայն»
աշխատությունից, 1881.

Եթե լուսավորյալ ազգերը ընդհանրաբար և յուրաքանչյուր մարդ առանձին, սովոր են պատվել մի չնչին նշխարք հնության, մի նշանախեց անցած գնացած օրերի, մենք ինչպես մոռանանք մի լեզու, որ երբեմն խոսել է և խոսում է մի ազգ, ունի յուր պատմական հիշատակարանները և բոլոր յուր մարդկային իրավունքը. մեր հայրերը կրակից, արյունից, երկաԹից փրկելով տվել են մեզ այդ լեզուն, իսկ մենք, որպես երախտապարտ որդիք, պիտի կտակենք դորան մեր Թոռներին:

«Հրապարակախոս ձայն»
աշխատությունից, 1881.

Այո՛, ես հավատում եմ մի առավել պայծառ ժամանակի ա՛յն ազգի համար, որի մեջ ծնել եմ և մեծացել. ես հավատում եմ, որ այս իմ առաքինական զգացմունքը փոխանորդաբար պիտի անցնի ազգից ազգ, մինչև այդ ազգը կհասներ յուր ցանկացածին. և եթե իմ սիրտս չբաբախվեր այդ սուրբ ոգևորուԹյամբ, ապա ի՞նչ հուսով այսքան երկար խոսում եմ ձեզ հետ, հայե՛ր: Ես գիտեմ, որ մարդկությունը եԹե ոչ չարունակաբար, բայց մշտապես առաջ է գընում, և մենք, որպես մի փոքրիկ հասարակություն, մարդասեր դարուս օրենքով ապահովված, չպիտի դադարենք այդ առաջադիմության ճանապարհին:

«Հրապարակախոս ձայն»
աշխատությունից, 1881.

Նոր սերո՛ւնդ. չմոռանաք հայրենի սրբավայրերին էլ ակը տալ, Թեև ավերակ:— Գեղեցիկ է ասում ռուս բանաստեղծը [Մ. Լերմոնտովը,—Ա. Բ.].—

«Ամայի տաճարն՝ էլի տաճար է,
Կործանված բագին՝ էլի բագին է!»

Այնտեղ են դրած ազգային բարբառների ու գործիչների նշխարքը և այսօր ձեր կուրծքի մեջ կարող են կենդանի շունչ փչել,— այն, որ չէ կարող տալ ձեզ ոչ մի փիլիսոփայական դիտություն: Այն ավերակները և այն նշխարքը, մեր դժբախտ անցածի վրա լինելով, սերտ կկապեն ձեզ հայրենի հիշատակարանների հետ և թույլ չեն տալ, որ մեր մեջ տարրանա մի մեռելատիպ անտարբերություն դեպի հարազատ գրականությունը: Վերջապես դուք այդ ավերակների արձանագրություններից կիմանաք, որ մեր աշխարհը, հին ազգերի մի հայտնի մասի միջասահման լինելով, ամփոփում է յուր մեջ թանգագին հնախոսական մնացորդներ, որոնք մի կողմից ցույց կտան ձեզ այն մարդկային ցեղերի խլրտումները և մյուս կողմից՝ թե ինչպես ձեր պապերը հասել են այնտեղ և ազգով նստել: Միայն վայրենի ազգերին և բոշաներին հատուկ է կապը կըտրել անցածից և առօրյա կյանքով բավականանալ:

Լուսաբանելով անցածը, դուք գլխավորաբար պիտի գործեք ներկայի համար, որովհետև այժմյան քաղաքաշինության սնունդ տվողը ներկան է: Բազմակողմանի և ծանրակշիռ հայացքով պետք է վերաբերվեք դեպի հասարակաց իրերի և երևույթների պատճառները: Եթե ձեր գործողության ճանապարհին պատահեք կրքոտ կարծիքների կամ հարձակումների, լավ է ուշ չդարձնել: Բայց եթե ձեր լռությունը նոր ույժ է տալիս այն անարժան հարձակումներին, չեմ ասում, որ միշտ էլ սպունգի կամ լաթի պես կակուղ մնաք. երբեմն էլ հարկավոր է փակել ամբարտավան բերանը և վերջ դնել նրա արշավանքին: Համենայն դեպս գործեցեք առանց որոտալու. հո մեծ պարծանք չէ դարիդուսից դարիվայր գլդոններ թող անել և ահագին դղըրդոցներ հանել:

Ահա թե ինչքան ծանր հարցեր են դրած ձեր առջև, ձեր տաղանդի ու ազնիվ հատկությունների առջև, որ պետք է լուծանեք:

Միայն սեր է պահանջվում դեպի ազգը, և գլխա-

վորը՝ ջերմ սեր աշխատելու, որովհետև աշխատությունը բարոյապես և նյութապես սոված չի մեռնել. Նրա ձեռները տոկուն են, կամքը երկաթի, միտքը դալար ու պտղաբեր, եթե կամենում եք, երբեմն տաղանդից էլ գերազանց, որ շատ անգամ երես առած երեխի պես անփույթ է, այլև ծույլ գործելու և ստեղծագործելու: Եվ, հավատացեք, որ ամեն դժվարության կհաղթեք:

«Մի քանի խոսք իմ ընթերցողներին» աշխատությունից, 1903.

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

Չեմ մարդկության մեկ ոսոխ գոռ՝
Հայրենիք մը ունիմ թշվառ,
Չօգնած անոր՝ մեռնիլ անճար;
Ո՛հ, այս է սոսկ ցավ ինձ համար։

Պ. ԴՈՒՐՅԱՆ

..Պիտի սիրեմ զանի ես
Ցհետին շունչ իմ սրտես,
Մինչ որ ժպտի Հայաստան
Հանդեպ շիրիմիս բոցակեզ։

Պ. ԴՈՒՐՅԱՆ

Հայրենիք մը ունիմ միայն՝ որ կսիրեմ, և զայն սիրելու համար կզգամ որ պետք է մեռնիլ, մեռնի՛լ, խառնել իմ երակացս արյունը այն դյուցազանց թափած արյան հեղհեղներուն՝ որք իրենց աշխարհեն քշեցին տարին գերության ահագին շղթաները և անդունդը թափեցին։

«Ասպատակություն պարսկաց ի Հայս...»
թատերգությունից, 1870.

Թշնամվույն դեմ անվեհեր զինվոր մը ըլլալու համար պետք է մորմե մը՝ ատել սորվիլ, և հորմե մը՝ կռվիլ։

«Ասպատակություն պարսկաց ի Հայս...»
թատերգությունից, 1870.

Եթե չխայտա մեր երակացը մեջ դյուցազն Հայկա արյունը, եթե եռանդ ի սիրտ և սուր ի ձեռին չպաշտպանենք հայրենիքնիս, վա՛յ մեզի, կորստյան տխուր

ժամն ալ պիտի հնչե. ուրեմն հաղթենք և մեռնինք և թող մեր զավկըները դափնիներ սփռեն մեր գերեզմաններուն վրա, թող մեկ մեկ հաղթության կամարներ ըլլան մեր շիրիմները և թող մեր արյունը խաղաղություն սփռե մեր զավակաց ընտանյացը վրա... մեռնինք կսեմ ամենքնիս ալ և երբեք անձնատուր չըլլանք այն անգութ և վատազգի մարդոց:

«Սև հողեր...» ողբերգությունից, 1868.

... Եվ ի՞նչպես մեր կյանքը հայրենյաց չզոհենք, ի՞նչպես արյուննիս անոր չպարտինք, մինչդեռ հայրենիք իր գրկացը մեջ ծնավ և սնույց մեզ. մեր կուրծքերն անոր պարիսպ պիտի ըլլան և մինչև որ դիտապաստ չգլորինք, մեր սուսերն իրենց պատյանը չէ պիտի դառնան... վատ է այն, որ ավելի կյանքը կսիրե, քան թե ազգը:

«Սև հողեր...» ողբերգությունից, 1868.

... Վա՛յ քեզի, որ կյանքդ հայրենիքեդ ավելի կսիրես. ի՛նչ ես դու աշխարհիս վրա. հրեշ մը, որուն սրտին խորերը մարեր է հայրենասիրության կայծը... նախատինք քեզի, որ սուր կկրես ձեռքիդ մեջ և չես ուզեր զայն ի սեր հայրենյաց շարժել... ուրեմն ի՞նչպես հանգիստ պիտի ըլլայիր դու, երբ վարձատրեիր զքեզ, մինչդեռ բոլորտիքդ բյուրավոր արենակցացդ դիակները դիզվեր են, ի՞նչպես քու կյանքդ չի պիտի խռովեր եղբարացդ հեծեծանքներեն և առ քեզ ուղղած անեծքներեն, մինչդեռ դու անոնց կորուստը պատճառեցիր վատաբար... քանի որ եղբարացդ դիակները շղթաներուդ շառաչյունը լսեն, նախատինք կարդան քեզ իրենց գերեզմաններուն խորերեն... Թափառե եղբարցդ արյամբը կարմրած դաշտերուն վրա մինչև որ գտնես քու գերեզմանդ այ...

«Սև հողեր...» ողբերգությունից, 1868.

Հայաստա՜ն... քաղցր հայրենիք... իմ արյունս ալ ընդունե քու անցկալի գիրկը... որչափ սիրելի է ինձ այս մահը, երբ կզգամ, որ հայրենյացս հողերը կծծեն արյունս և դարձյալ հայրենյացս հողերը պիտի ծածկեն ոսկերքս... արդյոք գերեզմանիս խորերը պիտի թափանցե՞ երբեք հուսալից ձայն մը — ցնծացե՛ք... Հայոց ազատության արշալույսը ծագեցավ... Եվ դուք, լերինք Հայաստանյայց, արձագանք տվեք այս ձայնին և թող լսեն այն վատերը, որոնք իրենց եղբարցն արտասվոքն ու արյամբը օտարներեն երջանկություն գնել կհանդգնին... ինչո՞ւ ծնար այդպիսի որդիներ, Հայաստան, որոնք սուրերնին ապերախտությամբ քեզի դեմ դարձուցին փոխանակ զքեզ պաշտելու և պաշտպանելու...

«Սև հողեր...» ողբերգությունից, 1868.

Հայը այնպիսի ազգ մ'է, ո՛ր իր վերքերեն քաջ կծնի:

«Ասպատակություն պարսկաց ի Հայս...» թատրերգությունից, 1870.

Հայրենիքես ետև կսիրեմ այն զինվորը, որ պատերազմի դաշտը կխոյանա, օրհնյալ ըլլաք, քաջեր, որ կջանաք ձեր հայրենիքը վերականգնել, դուք մի՛ լաք Հայաստանի վրա, այլ զարկեք այն բազուկը՝ որ աղետք կտեղացնե անոր գլխուն. լալը ծերերուն թողուցեք, և այն մայրերուն, որոնք իրենց զավակաց գերեզմանները կորուսած են. ծերերուն և մայրերուն վրեժը առե՛ք քաջե՛ր...

«Ասպատակություն պարսկաց ի Հայս...» թատրերգությունից, 1870.

Զինվորդ հայրենյաց, եթե լավ ուշ դնենք, Հայաստանի բոլոր խորշերը վրեժ կմռնչեն: Հայաստանի մեջ չկա մեկը, որուն սիրտը չլափե վրեժխնդրության

բոյը: Մենք մեր հայրենակցաց վրեժը պիտի առնենք...

«Ասպատակությունք պարսկաց ի Հայս...»
Թատրերգությունից, 1870.

Զարհուրելի պիտի ըլլա գուցե օր մը այն հայը, որ փլատակաց խորշերու մեջ կծկած՝ ատելություն կնուցանե իր թշնամաց դեմ:

«Ասպատակությունք պարսկաց ի Հայս...»
Թատրերգությունից, 1870.

Շատ սքանչելի կտեսնեմ հայուն արիությունը, կպնդեմ թե աշխարհի վրա հայրենասիրության կրակով հրահրած պայծառ ճակատե մը ավելի գեղեցկություն չկա... և իր վիրաց արյան հոսումը մեկ ձեռքովը բռնող, և մյուս ձեռքովը թշնամին զարնող զինվորին ճգնաժամեն ավելի վսեմ տեսարան մը չկա:

«Ասպատակությունք պարսկաց ի Հայս...»
Թատրերգությունից, 1870.

Հայրենասիրությունն ի՜նչ գեղեցիկ ճառագայթ մը է վեհ և անմեղ ճակատի մը վրա:

«Ասպատակությունք պարսկաց ի Հայս...»
Թատրերգությունից, 1870.

Հայը բարեսիրտ՝ մինչ ուրիշեն բարեսրտություն կակնկալե և մինչ կխաբվի... դեռ զարմանալին կա. այսչափ ներքին խռովություն և ատելություն և մինչ ամեն կողմեն արտաքին հարված.(դեռ հայը կանգուն է և ազգ մը է...ես կսեմ, որ եթե բոլոր աշխարհ կործանի ու խառնակվի՝ դարձյալ հայը հայ է:

«Անկումն Արշակունի հարստության» Թատրերգությունից, 1870.

Աչերս չունին չանթեր, որ հայության ոսոխները զարնեմ... ի՜նչ ընեմ, կսիրեմ հայը, կսիրեմ ազգս սրտիս խորեն... ո՛վ երկինք, այրե հոգիս դժոխոց

անծախ բոցերուն մէջ, բայց կայծ մը տուր Հայաստանի մարած սրտին:

«Անկումն Արշակունի հարստության» թատերգությունից, 1870.

Հայրենասիրությունն այնպիսի բուռն կրակ մը է, որ մարդս մոխիր կդարձնէ:

«Անկումն Արշակունի հարստության» թատերգությունից, 1870.

Ես կուզեմ մաշիլ, դեղնիլ, մարիլ և մեռնիլ հայրենյացս համար, աչերս բաց և կուրծս պատռած:

«Անկումն Արշակունի հարստության» թատերգությունից, 1870.

Հայաստանի փլատակաց մեջէն միշտ հայու գլուխներ կփթթին հետզհետե.— Ազատության արմատ ձըգած ծաղիկներ են անոնք, այն ազատությունը, որ Հայկ իր նետովը հնչեցուց ու տարածեց...

«Ասպատակությունք պարսկաց ի Հայս...» թատերգությունից, 1870.

Երանի թե ես ալ փոխանակ տկար և վախկոտ կին մը ըլլալու՝ հողի վրա պառկող և սուրին կրթնող զինվոր մը ըլլայի, և Թուրս լոկ ընկեր առած խոյանայի արծվո մը պես պատերազմի դաշտը, թափեի թշնամյաց սև կառափները, ազատություն պոռայի և գոռայի, իսկ երբ սուրս խորտակեր, անոր բեկորին վրա ինկած տայի շունչս հայրենյաց խոցյալ սրտին վրա:

«Ասպատակությունք պարսկաց ի Հայս...» թատերգությունից, 1870.

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆ

Հայրենասիրությունը մի անկեղծ և գերհարգո առաքինություն է և իսկական բարյաց բուն արմատ:

Գ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆ

Հրաշալի է արդարև մեռնելով հաղթել, իյնալով քաջալերել, մահու անմահանալ, զոհվելով փրկել:

Գ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆ

Մարդկային ընկերավարությանց սովորությունն է, երբ հեռավոր տեղե մը գան, իրենց գտնված երկրի քարիքներեն կամ հազվագյուտ իրերեն ընծա մի կբերեն բարեկամին: Հետևելով այսմ, երբ Պոլիս եկա այս անգամ ուզեցի ընծա բերել ձեզ իմ երկրեն... Ի՞նչ:

Ի՞նչ կգտնվեր հոն, ուր ես էի. հող և ջուր միայն, և հողով ու ջրով և եթ կյանք վարող Հայ ժողովուրդ:

Գրոց և բրոց ծրար մ'ընծա բերի ձեզ այն հողեն ու ջրեն, որ Հայաստանի անունը կկրեն տակավին, ժողովրդե մը՝ որ սերունդ և անուն Հայության ունին: Այս հողն և ժողովուրդ, կամ այսպես ըսեմք, Հայաստանն ու Հայ, որ հազար անգամ խորամանկության ու բռնավորության փորձեր անցուցեր են, փորձեր՝ խլելու այս ազգի արմատը այդ արտեն, կամ փոխելու այն հողի հատկությունը, որ այլևս չբուսցընե զՀայ, և չերևի Հայության նշույլ մը: Բայց Հայերը մանգաղով հնձված ժամանակ՝ սերմերը թափեր

են փոշիներուն մեջ, արմատեն խլված ժամանակ՝ չեզ մը թողուցեր են քարի մը տակ, ձորի մը մեջ, և նորեն բուսեր, ծլեր, արմատ ձգեր, ոստ արձակեր, ծաղկեր ու պտղաբերեր են անդրեն: Անկարելի է գըտնել աշխարհ մը և ազգ մը, որ համեմատվի Հայուն և յուր երկրին. որ այնքան ավեր, մահ, սուր, ուրացություն, արյուն, գերություն կրած լինի, ու նորեն ցայսօր ապրի:

Յուր քաղաքականն ու կրոնականը, յուր նյութականն ու հոգեկանը առհասարակ կողոպտված. գանձն ու զենքը առնելեն զկնի, մարդն ու յուր բնակարանը, տաճարներու քարերը, և լեզուն ու մագաղաթներն անգամ գերի գնացած են, ստրկության ենթարկված են: Բայց մեր երկրի հողն ու ջուրը, օդն ու եթերքը օծված են հրեղեն լեզվով, հրեղեն հոգվով, որք ո՛չ միայն վերաստեղծեր են զՀայեր, այլև վերապատմեր են հետագայից՝ Հայաստանի Նահապետաց, դյուցազանց, թագավորաց և առաքինյաց անուններու գործերը: Այս լեռները, հովիտները, ձորերը, գետերը, չեները, ավերները, հողմերը, աստղերը, ամենքն ալ խորհրդավոր անուն մը ունեցած են. և այդ ամեն մեկ անունը կպարունակե յուր մեջ անձի մը կամ անցքի մը պատմություն, թե առասպել համարվի այն առայժմ և թե իրական, և այսպիսյաց շարունակությունը՝ մագաղաթներեն ավելի տոկուն և անջինջ մատյան մը շարունակած է, այն է բնակչած բերանացի ավանդությունք, կամ վեպք և զրույցք:

— Ասոնց մեկ նշմարն է իմ ընծայս:

«Գրոց ու բրոց» գրքի
նախաբանից, 1874.

Հինգերորդ դարը Հայոց ազգի վերածնության դարըն է. ծանր երկունք կրեց մեր մայր Հայաստանը, և առ ցավս յուր սաստկագինս ճչեց. բայց և այնպիսի զավակներ հարույց, որոց մեն մի հոգին կարժե մեն մի ազգ ամբողջ, ազգ ընտիր, ազգ պատվական և ազնիվ:

Ո՞վ էր Վարդան,՝ հայ մը՝ պարսկին սպարապետ. Ղեվոնդ՝ գեղի մը տերտեր. Գարեգին՝ մանուկ տղա մը. Աբրահամ՝ ճգնավոր մը. նախարարք՝ կապյալք. տիկնայք՝ տկար կանայք. քահանայք՝ պաշտոնատարք. ժողովուրդ՝ օտարին հպատակք, քաղաքականք և գեղջկականք առ հասարակ. բայց միաբան առաքինիք, հավասարք մեծ. հավասար արիացյալք. հավասար անմահացյալք:

«Շուշան Շավարշանա» թատերական երկից, 1875.

Եղիշեի պատմագիրքն է Հայոց համար այն մատյանը, որ հետ ավետարանին է նոր ավետարան:

Ընթեռնուն թող հայոց ծերերը այդ մատյանը, և պիտի նորոգվե անոնց արևը. ընթեռնուն թող ծնողք, և ուսանին դաստիարակել իրենց զավակունքը այն հոգվով, զոր կներշնչե այդ սուրբ գիրքը. ուսանին և 'ի գործ դնեն իրենց ծնողական ընտանեկան մեծ պարտավորությունը:

Ընթեռնուն թող. ընթեռնուն այդ դպրու Հայոց արյունով ու ավյունով զվարթապարար դրչագիրը՝ մեր խանդալից երիտասարդք, փափկասուն հարսունք, մեր աշխույժ պատանիք ու վառ վառ օրիորդք, և թող ապրիլ ուսանին, ապրիլ հայաբար:

Ընթեռնուն զայն թող՝ մեր մամիկն ու պապիկը, որ իրենց ծնգաց վրա կհանգուցանեն, իրենց թեվոց և յանջաց վրա կդդվեն իրենց մատղաշ թոռները, մրմնջելով անոնց փափուկ լսելյաց՝ Եղիշեի աղվական մրմունջները:

Այս մատյանը, հորում լի է ազնիվն և բարենսերն և շնորհք. որ երկինքն ու հայրենիքը 'ի մի կզանդե. և իր ընթերցողները կբարձրացնե կթեվավորե, երջանիկ և հրեղենս կառնե:

«Շուշան Շավարշանա» թատերական երկից, 1875.

Քանի կապրի ժողովուրդ մը իր սեփական ազգա-

յին կյանքով, կապրի ազգային լեզվով, կապրի իր հայրենյաց մեջ, այն ժողովուրդը՝ թեև հետին դեղջուկ մնացած լինի, սակավավոր և հետին աղքատ, հետին ստրուկը համարված լինի, բայց նա ազնիվ է, կենդանի է, լուսավոր է, որ մի փառաց կհասնի. անոր սիրտն հայրենիքը չի՛ մոռնար, և հայրենյաց ու ազգային հիշատակներ կեռացնեն անոր երակներ, կվառեն անոր խորհուրդը, կհարուցանեն անոր հոգին, և այն օրն է ահա, որ ավազակեն գողցված և անոր բռնավոր ցուպին տակը մատնված վիրավոր մեջքակոտոր գառնուկը, եղջերավոր խոյ կդառնա, իր հոտին մեջ կխոյանա, զարնելով, խորտակելով իր դեմ ելնողները. այն օրն է ահա, որ իբրև տկար ճնճղուկ որսացյալ նենգողեն արծվո ձագերը՝ ճանկռտելով իրենց սուր ու զորացած մագիլներով որսացողին երեսը կթռչին ազատ, և կխոյանան իրենց երամին մեջ:

«Շուշան Շավարշանա» թատերական երկից, 1875.

Վարդա՛ն, Խորե՛ն, Հմայա՛կ, Արտա՛կ, Տաճա՛տ, Ներսե՛հ, Վահա՛ն, Արսե՛ն, Գարեգի՛ն. Ո՛վ անմահ անուններ... Քաջ, կորովի, արի, զարմանալի, իմաստուն, հրաշակերտ, վեհ, ցանկալի, առաջադեմ... Առաքինիք, ո՞վ իմ ընկերներ, մեռած և միշտ կենդանի Հայեր, ո՛վ երեսուն ու վեց հազար Հայ նահատակներ:

Ավարայրի, Ավարայրի դաշտ գերեզմանական, դաշտ նվիրական. քո հողը սուրբ է այսուհետև, դու քան զերկինքն եղար առավել: Քույդ ծոց ննջեցին Հայոց արեգակներ. ալ պետք չեն քեզ համար ցող և անձրևներ. ալ Հայոց համար ծաղիկ մի՛ ծլիր. Թող գան, թող գան Հայոց աղջիկներ, քեզ մեջ շրջելու, վարդի տեղ Վարդան խնդրելու, քաղցր մանուշակի տեղ Հայոց արյունը հոտոտելու:

Իրենց կուսական ճակտին պսակ, իրենց գեղեցիկ պարանոցին մանյակ՝ թող փոխանակ շուշանի՝ Հայոց քաջաց փշրված ոսկորներ հյուսեն. և երբ ծիծեռն ու

սարեկ կու գան քո կանաչներուն մեջ գարունը գեղգե-
ղել, թող Հայոց մանկտին ուսանի անոնց հետ կանչել
հեղհեղել, արձագանք տալ և առնել, Վարդան, Խորեն,
Արտակ, Ներսեհ, Հմայակ, Տաճատ, Արսեն, Վահան,
Գարեգին, և երեսուն ու վեց և հազար Հայեր, Հայաս-
տանի սիրույն, փառաց և կենաց ընտիր մատաղներ:

Դու Տղմուտ, միշտ պղտոր մնաս, պղտոր ընթա-
նաս. ինչ որ քո աչքովդ և քո չուրջ տեսար, բնավ
չմոռանաս. քեզմե ջուր խմողին՝ Վարդանա համբ
տաս, քույդ տխուր պատկեր քույդ մանրիկ ու մեղմ
ալյաց վրա գրված հիշատակներ ամեն Հայուն կար-
դաս, և վկայես, թե՝ ինչպես քո ցուրտ ծոցին մեջ,
քույդ թաց աչքերուդ առջև քաջացան, կռվեցան, հայ-
րենյաց և սուրբ հավատո համար ամեն բան մոռացան
զարկին, զարնվեցան, փռեցին, փռվեցան, թշնամին
ջարդեցին, ու իրենք ինկան. հայրենիք սիրող Հայեր,
և իրենց զորավար Մամիկոնյանն Վարդան:

Քեզ անեծք, ո՜վ Տղմուտ, եթե մոռանաս այս իմ
ուխտ: Խցվին, ցամաքին քույդ աղբերակունք. զքեզ
տեսնեն օրինակ առնեն հայրենիք մոռացողք, Հայու-
թյուն ուրացողք:

Այլ դու մի՛ լար Հայաստան. թե մեռավ Վարդան,
բայց զքեզ սիրող, քեզ պաշտպան Հայեր տակավին
շատ կան:

«Շուշան Շավարշանա» թատե-
րական երկից, 1875.

Մեծին Հայաստանի Չորրորդ Հայք նահանգի գա-
վառներեն մինն է Ծոփաց աշխարհ, Ծոփք մեծ. գր-
ված է նաև՝ Ծովք. առավել անվանի եղած՝ Ծոփք կամ
Ծովք, Շնորհալվույն հոր, տոհմին և եղբարց բնա-
կավայր լինելով: Իսկապես ծով կամ ծովիկ մը կա (4
ժամ երկայն՝ 1 ժամ լայն՝) Խարբերդին, Արղնու և
Մալաթիո լերանց միջև, բաժակաձև, բայց գավառն
Խարբերդու կվերաբերի և անոր ավելի մոտիկ է, իբր
վեց ժամ: Ես կկարծեմ թե՝ Ծոփք կամ Ծովքն է Ծո-
վիկ բառ, որ յուր մեջն ուներ գյուղակ մը, ուստի և

անվանված է Ծովք-դղյակ: Հոս ծնած, հնչած, լացած; երգած, գրած և աղոթած է Ներսես Շնորհալին, ուստի և իմ այս անգամի ուղևորության ամենամեծ չահս եղավ հանդիպիլ և երկրպագանել այս Ծովկին և դղեկին, ջրոց և տաճարի ավերակին, ուր ամենայն ինչ շնորհալի էր…

Բոց ու կրակ եղած էր փափագ սրտիս մեջ, կտտչուրեր հոգիս և մարմինս. այնպես կզգայի, եթե նույն օրը չհասնիմ, չտեսնեմ, չհամբուրեմ այդ ջուրն ու հողը, պիտի մեռնիմ կարոտակեզ՝ աչքս բաց մնալով… Արդեն հնար չէր ձի նստել. կքալեմ, կվազեմ կթռիմ, և ահա պաղ հով մը, քայլ մի ես, և ահա Ծովքն յուր ցանկալի երեսը ցցուց… կարկամեցա՜… Ո՞վ կարող է նկարագրել այն բուռն և խոր հուզմունքը, որ տիրեց իմ հոգեկան և մարմնական բովանդակ մասանց վրա: Ո՜վ իմ պաշտելի Շնորհալվույս տված ու առած, օրհնված ու օրհնած, աղոթած ու երգած տեղի, տեսարան ու հանդիսարան… Այժմ կզգամ թե մարդ ո՜ր աստիճան հափշտակության մեջ կգտնվի, երբ յուր ամենեն ավելի սիրածին հանդիպի: Քարերու գըլուխը քարացած մնացեր եմ, և ապա գետինը թավալեցա երեսացս վրա: Կփարիմ, կգրկեմ, կպագեմ, կաթափիմ, և, այլ աչերս չվերցուցի երկինք: Երկինքեն բարձր փառք մը գտած էի: Աչքս 'ի ծովն, միշտ 'ի ծովն, շեշտ 'ի ծովն:

Ծո՜վ, դու է՞ր չես ծիծաղեր:

Բաներ կորսնեմ յուր մեջ՝ չցուցըներ. Հարցումներ կընեմ իրեն՝ չպատասխաներ: Յուր ափանց ալիքներ՝ որ կծփծփան առանց հողմակոծության և առանց փոթորկի, նշան է թե փոթորիկը զանի, այնքան վեր ու վայր հուզած է, որ կուրծքը ուռչած է և ծոցույն խորերը կոծով լի,նման թշվառ դշխոյի մը, որո գլուխըն ու դեմքը փայլուն երևի ադամանդներով, ոսկեհուռ) ճեղենակներով, բազմյալ բարձրաչուք փղոսկրե գահոյից վրա, արտաքուստ երևույթ երանելի և նախանձելի, բայց շարունակ արտասվեն յուր աչերը,

ցավն ու կսկիծը կրծե ներսեն անոր սիրտն, լա ու հեծեծե, քանզի կորուսածե նա յուր երկու աչաց լույս երկու զավակները, երկուքն ալ թագակիր գլուխներ, մին փառք եկեղեցվո, մյուսն փառք դյուցազնության: Ծովլիկն աչքի ձև ունի, կույսի մը աչքին պես ըսեի, բայց ո՛չ ճիշդ՝ մանկամարդ այրիի մը կնմաներ, խորհրդավոր գեղեցկությամբ և շնորհքով դեղձան ականողի մը, զոր արտասուքն ավելի հրապուրիչ կդարձեն, լերանց շրջանակի մը մեջ ամփոփված, և ինչպես սև ռապ մը՝ աչքին ըիբը, այնպես կմնա և կերևնա սև ու քայքայված շենք մը այս ծովուն մեջ, կղզյակդղյակին վրա ս. Նշանի տաճարին ավերակն: Օ՜ ավերակ, որ քան զերկինս բարձր ես և մեծավայելուչ իմ սրտիս համար... Գիշերը անքուն անցուցինք, արշալուսին նավ նստեցանք կղզին երթալու. ավա՛ղ աչերուս, սև ու սպիտակ քարեր ցիր ու ցան՝ խարխալյալ որմունք և եթ կան...

Համբո՛ւյր քարերուն, համբո՛ւյր հողերուն, համբո՛ւյր փլատակաց վրա բուսած խոտերուն: Եվ ցողն՝ Հայաստանի հովվույն արցունքն, որ ամեն առավոտ կիջներ շաղախել կղզեկիս փոշիներու քարերու խնճերեն ծլած թուփերը, լզեցի, կրծեցի, ճաշակեցի, իմ ալ ցողերս թափելով հոն: «Դեռ 50 տարի հառաջ աստ կրնակեինք Ծովեցի Հայքս, և նախ թերակղզի էր․ մեզմե շատերը այս ավազանի մկրտված են» և այլն․ կըսեին իմ նավիչներս: Լուսանկար մը պետք էր ճիշդ այս պահուս, սույն աստվածարնակ ավերակին և աստվածարյալ Ծովկին ախուր ու վսեմ տեսիլն ապեր, պատկեր՝ զոր ավելի կկենդանացներ արևուն ծագման քնքույշ ճառագայթն, և լերանց ու ծառոց ստվերները կկախեր երկնափայլ ծովուս բյուրեղյա ծոցույն մեջ...

Ո՜վ կրնա բաժնվիլ ձեզնե, ափ ու ավեր ս. Նշանա: Ո՜վ կրնա թողուլ զձեզ, քարինք և ալիք Ծովկդզեկիս: Արդյոք որքա՞ն պիտի ապրինք դուք կամ ես. տա՞յր ինձ երկինք այն երջանիկ առիթն կրկնելու անհագ համբույրս և անհատ արցունքս 'ի ձեզ:

Լերինք և եթերք Տովկիս, ձեզ, որ արձագանք տուած ու առած էք շնորհալի երգոց և մեղեդյաց Շնորհալվույն:

Ջուր և Թռչունք, ձեզ, որ զվարթ խայտանոք ազդած ու շարժած էք երկնային Աշուղին զգացմանց քնարին հոգեղեն թելերը:

Աստեղք և արեգ, ձեզ, որ պայծառ և շքեղ ճառագայթներով ոգևորած էք պայծառ հոգին Հոգենվագին «Աստուօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեայ» գեղգեղողին:

Դեռ ցամաքը չելած, հավք մը կտեսնեմ, սևորակ փետուրով, բարակ վզիկով, գլորիկ գլխով, զոր ծռած էր մեկ կողմ, թխորակ աչերով, սլխտակ լանջով, ծնկները ծալած ջրույն ալյաց վրա կերերա, սգավորի մը կամ անգին կորուստ ունեցողի մը կնմանի, բնության և առավոտյան բոլոր գեղեցկությունն ու զվարթությունը իրեն վրա չազդեր, անփույթ հայացք մը կձգե աչքի ծայրով դեպ 'ի մեզ երբեմն: Մինակ միայնակ է ինքն բոլորովին: Հանկարծ ծովուն հատակը կիջնե կանհետանա, խորերը կհուզե, և ահա ջրոցն երեսը կելնե պարապ և ունայն միևնույն տխուր տիպով ու դիրքով...

Ի՞նչ կորոնես, խեղճ հավուկ:

— Ի՞նչ է այս Թռչնույն անունը,— հարցուցի ծովացի ընկերներես:— Պատասխանեցին. Թորոս աղբար է յուր անունը:

Թորո՛ս աղբար, ա՛ռ նոր զարկ մը սրտիս... Արդյոք որո՞ անձնավորությունն էր այն:

Ա՛յ Թորոս աղբար, որ կհուզես ծովուս խորերը, կհուզես սրտիս անդունդները: Թորո՛ս աղբար, ո՛ր մեկ կորուստներդ կխնդրես, արդյոք տաճարի՞ն եթե դահլիճի՞ն, Լևոնյա՞նց եթե Ներսիսյանց, Հեթումյա՞նց եթե Գրիգորիսյանց, խո՞ւյրն եթե սաղավարտն, խա՞չն եթե գայիսոնն, փետուրի՞կն եթե պողովատիկըն, դրո՞շմն եթե դրոշակն, ատամածարան մատյա՞նն եթե գահույք արքունական, ծիրանի՞ն եթե եմիփորո-

նըն, Վկայասէրին բուրվառն ու աղօթամատո՞ւյցն ե-թէ Թորոսի սո՛ւրն վրիժուց... Է՛յ Թորոս աղբար, Թռի՛ր ինձ հետ, թռի՛ր զքեզ տանիմ հայրենիքէն հե-ռացյալ Հայոց 'ի տես, 'ի հույզ և 'ի հույս...

«Թորոս աղբար, Հայաստանի ճամ-բորդ» մասն 1-ին գրքից, 1879.

Ր Ա Ֆ Ֆ Ի

Ո՛վ իմ Հայաստան, սիրուն հայրենիք,
Հայկի և Արամա էր իր գեղեցիկ,
Թող քաջքն Արտավազդա ինձ կորուսանեն,
Թե ես մոռանամ քո սերը քաղցրիկ:

Թող իմ բազուկս չորանա իսպառ,
Թող լեզուս լռվի, չխոսի մի բառ,
Երբ պատերազմում, քո թշնամու դեմ,
Չզոհեմ արյունս քո սիրո համար:

ՐԱՖՖԻ

Արդյոք գալու է մի օր, ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ
Եվ ամեն կողմից պանդուխտ Հայազգիք
Դիմեն դեպ յուրյանց սիրուն Հայրենիք:

ՐԱՖՖԻ

Հայրենասիրությունը, ազգասիրությունը ամեն մի անհատի սուրբ պարտականությունն է: Եվ հայրենիքի ազատության, հայրենիքի պաշտպանության համար կատարված պատերազմը սուրբ պատերազմ է:

«Դավիթ բեկ» պատմական վեպից, 1881.

Հայի սրտում չի հանգչում հայրենասիրության կայծը, նա հանգամանքներից փոքր ինչ նսեմանում է միայն. բավական է փչել նրա վրա և ահա նա կբորբոքվի, կբոցավառվի...

«Դավիթ բեկ» պատմական վեպից, 1881.

Ծառայել հայրենիքի թշնամուն, իր ազգի կործանողին, բարձրացնել նրա փառքը և զորությունը,— այդ նշանակում է ի վնաս իր ազգի գործել:

«Դավիթ բեկ» պատմական վեպից, 1881.

Ով որ իր ազգը, իր հայրենիքը չի սիրում, իրավունք չունի օտարներից սեր պահանջելու:

«Դավիթ բեկ» պատմական վեպից, 1881.

Ի՞նչով ես դու կատարում քո պարտքը դեպի հայրենիքը: Ախար այն մարմինը, այն արյունը, այն սիրտը, այն հոգին,— բոլորը, ինչ որ ունես դու, պատկանում են քո հայրենիքին, բոլորը այստեղից ես ստացել: Ի՞նչու չես ետ տալիս նրան այն, որ ստացել ես: Միթե դու այն վատ պարտապաններից մեկը չես լինի, եթե կուրանաս քո վճարը: Այո, կլինես, և մեզանից ամեն մեկը նույն վատությունը արած կլինի, եթե այդպես վարվի:

«Դավիթ բեկ» պատմական վեպից, 1881.

Հարազատ եղբոր սուրը իր մերձավորի վրա պիտի բարձրանա, երբ որ նա դավաճանություն կգործե ուխտի և միաբանության դեմ: Հայրը պիտի չխնայե իր որդուն, և որդին ակնածություն չի պիտի անե հոր պատվին: Կինը պետք է կռվե իր ամուսին այրի հետ և ծառան պիտի դառնա իր տիրոջ դեմ, երբ նրանում անհավատարմություն նկատի: Հայրենիքի սերը և նրա ազատության միտքը պետք է թագավոր լինի ամեն գործողությունների վրա, և ամեն ինչ պիտի զոհվի այդ ազատությունը գնելու նպատակին: Անպայման հնազանդություն դեպի գործի գլխավորը,— պետք է լինի օրենք, և այդ օրենքի հակառակորդը կընդունի իր դատապարտության պատիժը նույն գըլխավորից:

«Դավիթ բեկ» պատմական վեպից, 1881.

... Բայց գուցե շատերը չգիտեն, թե ի՛նչ էր Վարդանը [Մամիկոնյան,— Ա. Բ.]։— Վարդանը մի ամբողջ ժողովուրդ էր. Վարդանը այդ ժողովուրդի մարմնացած բողոքն էր։ Բողոք՝ բռնության դեմ. բողոք՝ անարդարության դեմ. բողոք՝ անազատության դեմ։

Մեր պատմությունը տվել է մեզ շատ նշանավոր մարդիկ։ Մենք ունեցել ենք Հայկ, որ տիտանների հետ էր պատերազմում։ Մենք ունեցել ենք Արամ, որ սպանեց ասորոց արևի որդուն։ Մենք ունեցել ենք Տիգրան, որ ջնջեց վիշապների ցեղը։ Մենք ունեցել ենք մի ուրիշ Տիգրան, որ ջարդում էր Լուկուլլոսի ու Պոմպեոսի լեգեոնները։ Մենք ունեցել ենք ուրիշ շատ հերոսներ, բայց դրանցից և ոչ մեկը Վարդան չէ կարող լինել։

... Բայց Վարդանի անձնավորության մեջ միացած էր ժողովուրդը։ Նրա փառքը ժողովրդին էր պատկանում։ Վարդանը— ինքը ժողովուրդն էր։

Նրա հետ միացած էր կղերը, մի ձեռքում խաչ՝ մյուս ձեռքում սուր բռնած։ Նրա հետ միացած էր շինականը, մի ձեռքում բահ՝ մյուս ձեռքում նիզակ բռնած։ Նրա հետ միացած էր ազնվականը, քաղաքացին, և որ ամենագլխավորն է—հայ կինը։

Սկսյալ նախարարների շքեղ պալատներից, մինչև գյուղական աղքատ խրճիթը, զարթնեց ազատասիրության վսեմ հոգին։ Զարթնեց և հայ կինը։ Նա իր հրեշտակային կենսատու շնչով ավելի վառեց, ավելի բորբոքեց ժողովրդի եռանդը։ Նա թողեց իր պաճուճանքը, մոռացավ իր փափկությունը և սովորեց տանել զինվորի կյանքի խստությունները։ Թանգագին բեհեզների, նուրբ կերպասների փոխարեն զգեցավ պատերազմող մարդու կոշտ հագուստը։ Ոսկեհուռ մարգարիտների փոխարեն նա իր կուրծքը զարդարեց երկաթե զրահով։ Գոհարեղեն պսակի փոխարեն նա իր գլխին դրեց պողպատյա սաղավարտ։ Ոսկի մատա-

իլիկների փոխարեն կրեց սուր, վահան, նիզակ: Ամեն ինչ տվեց նա, ամեն ինչ զոհեց հայրենիքը փրկելու համար:

Երբ կինը խառնվում է գործի մեջ, դա նրա հաջողության ամենապարզ նշանն է: Հայ կինը շարժեց, ոգևորեց, ոտքի կանգնեցրեց ժողովրդի բոլոր դասակարգերը: Իսկ Վարդանը այդ դասակարգերի միավորիչ հողը, նրանց միմյանց հետ կապող օղակը դարձավ:

Այդ միությունն էր պատճառ, որ հայոց քաջերը Ավարայրի դաշտում կատարեցին այն փառավոր հաղթությունը, որը մեր պատմության մեջ մինչև դարերի վերջը կփայլի որպես մի պայծառ աստղ:

«Դավիթ բեկ» պատմական վեպից, 1881.

Դարերի ընթացքում համաշխարհային դարբնոցի սալի վրա, հայը այն աստիճան ծեծվեցավ, տաշվեցավ և կոփվեցավ, որ ստացավ երկաթի ամրություն: Հայը տարավ, հայը համբերեց ամենամեծ մոնղոլների բարբարոսություններին: Դրանք անցան հեղեղների և փոթորիկների նման, ջարդվեցան և վերջապես անհետացան. բայց հայը դարձյալ մնաց:

Բայց ի՞նչ էր, որ կապում էր հայերին մի այնպիսի երկրի հետ, ուր նրա կյանքը հանապազօրյա վտանգի մեջ էր, ուր նրա կայքը ապահովված չէր, ուր նրա ապրուստը խառն էր արյան ու քրտինքի մեջ, ուր նրա ընտանեկան սրբությունը արատավորվում էր, ուր նրա կրոնքը, և ամեն ինչ որ նվիրական էր նրա համար, սրբապղծվում էր: Ի՞նչ էր, որ կապում էր հայերին այսպիսի երկրի հետ.— Հայրենիքի սերը:

Հայրենիքը լի էր անթիվ հիշատակարաններով, որոնք ասում էին հային՝ «դա քո երկիրն է, այստեղ էին ապրում քո նախնիքը, և այստեղ մեռան նրանք, դու էլ պետք է այստեղ մեռնես, և քո ոսկերքը խառնես նրանց ոսկերքի հետ»:

Վանա բերդի պարսպաքարերի վրա և Վասպուրականի մեջ՝ բլուրների գագաթին՝ հայը տեսնում էր անթիվ արձանագրություններ, իրանց սեպաձև բևեռագրերով, որոնք հազարավոր տարիներ պատերազմելով ժամանակի հետ, պահել էին հայոց հին, շատ հին թագավորների հիշատակարանները։ Այն անբարբառ և խուլ նշանագրերի մեջ հայը կարդում էր իր վաղեմի մեծությունը։

Նույն երկրում հայը դեռ չէր մոռացել իր հին աստվածներին, որոնց հետ այնքան շատ դարեր ապրել էր նա միշտ հաշտ կերպով, որոնց նվիրել էր իր զոհերը, որոնցից խորհուրդներ և պատգամներ էր հարցրել իր գործերի մասին։

Դեռ Աստղիկը, Աշտիշատի գեղեցիկ դիցուհին, իր վաղեմի սովորության համեմատ, ամեն օր վաղ-առավոտյան, լողանում էր Մուրադ գետի (Եփրատի) ալիքների մեջ։

Նույն ժամուն հայոց երիտասարդ դյուցազունները հավաքվում էին Տարոնաց սարի գլխին, այնտեղից գաղտնագողի կերպով դիտելու գեղեցիկ աստվածուհու մարմինը։ Բայց Աստղիկը Մշու դաշտի ամբողջ երեսը և նրա լեռները պատում էր թանձր մշուշով, և անթափանցիկ օդեղեն վարագույները անտեսանելի էին կացուցանում նրա լողարանը անհամեստ աչքերից։ Դեռ Արշակա ծովակի մեջ բնակվում էին հայոց ջրային հավերժահարսունքը։ Եվ հայ պատանին, լի ախտաբորբոք կրքերով, լուսնկա գիշերներում թափառում էր լճի ափերի մոտ, «հրեղեն աղջիկներ» որսալու համար։ Դեռ հայոց ամենահին և ծերունի աստվածը— Արեգը— հրային-լուսափայլ ճաճանչներով, ամեն գիշեր հանգստանում էր Վանա ծովակի մեջ, որի հատակի վրա դրած էր նրա ոսկեղեն անկողինը։ Այնտեղ ջրային կույսեր իրանց գողտրիկ երգերով անուշացնում էին ցերեկվա հոգնած լուսատուի քունը։ Դեռ Լեզք կոչված բլուրի վրա ապրում էին Հարալեզ դիք,

որոնք լեզվելով կյանք էին շնորհում պատերազմի դաշտում ընկած հայոց քաջերին:

Այն երկրում, Հայոց ձորով անցնելու ժամանակ, հայը միշտ հիշում էր իր նախահոր— Հայկ դյուցազնի, այն մեծ հսկայի կռիվը տիտանների հետ: Ցույց էր տալիս իր զավակներին Նամրութա սարը, ուր մեր Հայկ պապը վեր հանեց Ներրովթի դիակը, նրան ըսպանելեն հետո: Եվ իր աշխարհին ցույց տալու համար գոռոզ վիթխարիի ամբարտավանությունը, նույն սարի բարձրության վրա մեխեց նրա դիակը և հետո այրեց նրան: Մինչև այսոր մնում են նույն սարի մոտ Ներրովթա քարավանի ուղտերը, երկար, քարացած շարքերով, որոնք նրա զինվորների համար պաշար էին կրում և հայոց աստուծո հրամանով քար դարձան: Եվ հայը միշտ պարծենալով է հիշում իր նախահոր—Հայկ դյուցազնի հաղթությունը, և հպարտանում է, որ ինքը մի այնպիսի մեծ մարդու սերունդ է, որ շառավիղում էր աստվածների արյունից:

Այն երկրում դեռ չէին ցամաքել չորս գետերը, որոնք բխում էին աստուծո դրախտից, և Բինգյոլի ծաղկավետ դաշտերին նայելով, հայը ասում էր իր որդուն՝ «տես, տես, այստեղ էր մեր նախահոր և նախամոր բնադավառը»: Նա ցույց էր տալիս «Կայենի ծառերը», որոնց հովանու տակ հանգստանում էր առաջին երկրագործը: Նա ցույց էր տալիս «Ղամեքա բերդը»— այն քաջ որսորդի ամրոցը, որը սպանեց Ադամի անդրանիկ, բայց դատապարտյալ որդուն: Նա ցույց էր տալիս դաշտերը, ուր առաջին խաշնարած Աբելը արածացնում էր իր ոչխարները:

Ջրհեղեղը մինչև անգամ իր աշխարհավեր սասանմունքով չկարողացավ դուրս մղել հային հայրենի երկրից: Գրդուռ սարին նայելով, նա միշտ հիշում էր այն ավանդությունը, թե Նոյի տապանը այս սարին քսվելով, անցավ դեպի Սիփան լեռը, խնդրեց նրանից ընդունել իրան իր գագաթի վրա: Սիփանը համեստությամբ պատասխանեց, թե ինքը հայոց լեռների ամե-

նակրտսերն է, և ցույց տվավ դեպի իր անդրանիկ եղբայրը— հսկա Արարատը, ասելով՝ «գնա՛ ի Մասիս, որ բարձր է քան զիս»:

Ահա՛ այսպիսի պատմական հիշատակներով էր կապված հայի սրտի հետ հայրենիքը, ուր սկսյալ ամենախորին հեթանոսական դարերից, ժողովրդի մեջ կենդանի մնացած ավանդությունները՝ հիշեցնում էին նրան իր հին առասպելավիպական անցյալը:

Այս հիշատակները պահպանել էին հսկայական լեռները, որոնք ստեղծվել էին ժամանակի հետ և ապրում էին քանի որ նա կար: Այս հիշատակները պահպանել էին ահագին գետերը, ծովակները և լճերը, որոց կյանքը տևում է անթվելի դարերով: Այս հիշատակները պահպանել էր վերջապես ժողովրդի ոգին, որ երբեք չէ մեռնում:

Հայը չէր ուզում բաժանվել հայրենիքից: Հայրենիքը նրա սրբությունն էր: Այնտեղ ամեն մի քար, ամեն մի ավերակ հիշեցնում էին նրան իր վաղեմի մեծությունը: Դեռ բոլորովին չէին անհետացել բերդերի, ամրոցների փլատակները, ուսկից մի ժամանակ նրա ազգի պետերը տարածում էին իրանց իշխանությունը: Դեռ մնում էին հին քաղաքների ավերակները, որոց փշրանքի մեջ երևում էր հայ մարդու արհեստը և ճարտարությունը, որոնք քարոզում էին, թե ո՛րքան հանգիստ էր քաղաքացու կյանքը, ո՛րքան զարգացած էր նրա մեջ գիտությունը: Դեռ բոլորովին չէին անհետացել հետքերը բազմաթիվ ջրանցքների, ստորերկրյա խողովակների, որոնք ցանցատեսակ հյուսվածքով տարածվել էին ընդարձակ դաշտերի վրա, անցնում էին ամենադժվարին լեռների և բլուրների միջով, որոնք ցույց էին տալիս, թե որքան ծաղկած էր մշակ մարդու գործը, որքան նա սերտ կերպով կպած էր բնության և երկրի հետ:

Քիչ չէր այն հիշատակարանների թիվը, որոնք կոչվում էին «խաչքար» կամ «թուխմանուկներ»· դրանք կանգնած էին զանազան բարձրավանդակների վրա, ուր

մի նահատակ թափել էր իր արյունը հավատքի համար, կրոնական հալածանքների ժամանակ: Ժողովուրդը ջերմեռանդությամբ հարգում էր սուրբի հիշատակը և ծխում էր այնտեղ իր խունկը:

Իսկ եկեղեցիները ոչ թիվ ունեին և ոչ համար: Յուրաքանչյուր գյուղ, որ բաղկանում էր մի քանի գետնափոր խրճիթներից, ուներ մի փառավոր եկեղեցի: Իսկ այդ հոյակապ տաճարը շատ հին ժամանակների գործ էր, երբ գյուղի ժողովուրդը բազմաթիվ էր և հարուստ, և ոչ այնպես աղքատ և փոքրաթիվ, որպես այժմ:

Ահա ինչ էր, որ կապում էր հային իր հայրենիքի հետ:

«Կայծեր» վեպից, 1883.

Սասնո հայը երբեք իր պատյանը չէ դնում մերկացուցած խենջարը առանց նրան թաթախելու հակառակորդի արյան մեջ: Նա շատ դժվարությամբ է դուրս քաշում իր սուրը, իսկ երբ սուրը մերկացավ պատյանից, գործը վճռված է. նա պետք է կոտորե:

«Կայծեր» վեպից, 1883.

Սկսյալ ազգերի պատմության ամենախորին հնությունից, Հայաստանը միշտ տվել է թե իր դրացիներին և թե հեռավոր ժողովուրդներին իր զավակների ամենաընտիրները: Բաբելացոց, եգիպտացոց նշանավոր պետական մարդիկների թվում առաջին տեղը բռնում են հայերը:

Հայերը տվեցին Հռոմին և Բյուզանդիային ոչ միայն քաջ զորապետներ, այլ մինչև անգամ կայսրներ: Ահռելի Պարսկաստանը իր ամենանեղ ճգնաժամի միջոցին փրկություն էր գտնում հայ զորապետների ձեռքով: Վայրենի մոնղոլները, միջին Ասիայի խորքերից դուրս գալով, հայ զորապետների առաջնորդությամբ, ոտնակոխ արեցին ամբողջ պետություններ: Բաղդադի և Դամասկոսի արաբական խալիֆաները հայ զորապետների ձեռքով տիրեցին անսահման երկր-

ներ։ Ոմնչակերները իրենց ամենահաջող պատերազմներով պարտական են հայոց քաջերին։ Մինչև անգամ ամենահեռավոր Հնդկաստանի թագավորությունները երկար ժամանակ օգուտ էին քաղում հայ զորապետների խելքից և քաջությունից։

«Դավիթ բեկ» պատմական վեպից, 1881.

Մի քանի ամիսների համառ պաշարումից հետո, մի քանի ամիսների սաստիկ կռիվներից հետո, Շապուհը յուր բաղձանքների մեջ բոլորովին հուսախաբ գտնվեցավ։ Նրա զորքերի անթիվ բազմությունը, իրանց ռազմական աճարկու պատրաստություններով, ո՛չ միայն բերդը [Արտագերս,—Ա. Բ.] գրավել չկարողացան, այլ ամեն անգամ պաշարվածներից չարաչար ջարդ կերան։ Արյաց արքայից արքան, որի առջև ամբողջ արևելքն ու արևմուտքը դողում էր սարսափից, ակսեց կատաղությունից մրրկածուփ ծովի նման ալեկոծվել, ակսեց գազանային բարկությամբ փրփրել,—երբ տեսնում էր, որ յուր բոլոր զորությունները՝ ապարդյուն կերպով փշրվում էին, խորտակվում էին Արտագերսի անսասան ապառաժների վրա։

Արտագերսը ծանոթ էր Հռոմին, ծանոթ էր և Բյուզանդիային։ Կայսոս կեսարը, Օգոստոս կայսրի որդեգիրը, նրա հզոր պարիսպների մոտ մահացու վերք ստացավ բերդի Ատոոն իշխանից։ Իսկ Շապուհը համառությամբ պաշարումը շարունակում էր, համոզված լինելով, որ եթե զենքի ուժով չկարողանա գրավել, անշուշտ քաղցը և սովը կտրիպեն անձնատուր լինել...

Ավելի քան բերդի ամրությունը, անխորտակելի էր պաշարյալների եռանդը։ Անձնազոհությունը չափ և սահման չուներ։ Ազատանի կանայք գիշերները պարիսպների վրա էին պառկում։ Ազատանի օրիորդները անքուն հսկում էին աշտարակներից թշնամու ամեն մի շարժումը։

Ինքը Թագուհին յուր ձեռքով էր դարմանում յուր զինվորների վերքերը: Այր և կին վառված էին հայրենասիրության ջերմ ոգիով, և մեկը մյուսին աշխատում էր գերազանցել: Եվ բոլորին ոգևորողը, բոլորի քաջությունը բորբոքողը էր Ինքը Թագուհին:

Մի անգամ Շապուհը հրամայեց վճռական հարձակում գործել: Պարսից վահանափակ և տապարապատ զինվորները բարձրացան մինչև բերդի պարիսպները: Կռվում էին նրանք հերոսաբար, և բերդից կարկուտի նման տեղացող նետերը չէին կարողանում զսպել նրանց կատաղությունը: Թագուհին, զրահավորված, կանգնել էր պարսպի վրա և խրախույս էր տալիս յուր զինվորներին: Մի նետ դիպավ նրա ուսին, ծակեց զրահը, և ցցված մնաց յուր տեղում: Զորապետներից մեկը շտապով մոտ վազեց, ձեռքը մեկնեց, որ դուրս քաշե նետը: «Ինչո՞ւ ես իզուր ժամանակ կորցնում,— նկատեց նրան Թագուհին,— այդ հետո էլ կարելի է հանել»: Այդ խոսքը այն աստիճան ազդեց, որ զինվորները, խորին քաջալերություն ստանալով, կրկնապատկեցին իրանց եռանդը, և վանեցին թշնամուն պարիսպների մոտից:

Երբեմն գիշերով, երբեմն ցերեկով, բերդից դուրս էին գալիս զանազան խմբեր և զարկվում էին պարսիկների հետ: Այդ փոքրիկ խմբակները, հանկարծահաս կայծակի նման, ո՛չ միայն շփոթում էին թշնամու ամբողջ բանակը, այլ շատ անգամ հաջողվում էր նրանց՝ գերիներով կամ ավարով հետ դառնալ:

Անցավ համարյա մի ամբողջ ամիս:

Արտագերս բերդը զվարճանում էր ընդհանուր ցնծության մեջ: Փողոցները զարդարված էին, գույնզգույն դրոշակները ծածանվում էին աշտարակների բարձրության վրա: Բնակիչների խուռն բազմությունը լցրել էր հրապարակները: Այր և կին, տղա և աղջիկ,

պար էին բռնել, և նվագարանների ուժգին հնչյուն-ների եղանակով թնդեցնում էին գետինը։ Արքայական պալատի շուրջը հավաքված էին՝ հարուստ զենքերով ու զարդերով պճնված, զինվորականների ուրախ խմբերը։

Երբեկ Շապուհը թողեց բերդի պաշարումը և հեռացավ դեպի Պարսկաստան։ Այսօր բերդը տոն էր կատարում։

«Սամվել» պատմական վեպից, 1886.

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

Ծիծեռնակը բույն էր շինում
Ե՛վ շինում էր, և՛ երգում,
Ամեն մի շյուղ կպցնելիս՝
Առաջվա բույնն էր հիշում։
. . . .
Բայց նա կրկին բույն էր շինում,
Ե՛վ շինում էր, և՛ երգում,
Ամեն մի շյուղ կպցնելիս՝
Առաջվա բույնն էր հիշում։

Ղ. ԱՂԱՅԱՆ

Երբ ես մտածում եմ, որ իմ ազգը մի զառամած և իր դերը կատարած պրծած ազգ չէ, այլ նոր, թարմ, ջահել, ես ուրախանում եմ անսահման ուրախությամբ։ Ով որ երևակայում է նրա անցյալը, ես երևակայում եմ նրա ապագա հսկայական քայլերը։ Այո՛, մի օր պետք ջախջախվեն Արտավազդի դարավոր կապանքները և նրա ահեղ ձայնից պետք թնդան ու որոտան Հայաստանի լեռներն ու ձորերը և նոր հոգի ու նոր կյանք պետք փչվի քարացած աշխարհի սրտում։

«Հայոց գրի մասին» հոդվածից, 1892.

Հայերը չունեին գիր և գրականություն [հինգերորդ դարից առաջ,— Ա. Բ.], բայց ունեին շատ ճարտար և ճոխ լեզու. ունեին ամենահարուստ բանավոր գրականություն։ Ոչ մի քրիստոնյա ազգ չունի ոչ

մեր Շարականը և ոչ մեր Նարեկը, երկու զուտ բանաստեղծական հրաշագործության և ճոխ լեզվի ու երևակայության արգասիք:

«Հայոց գրի մասին» հոդվածից, 1892.

Հայերը սննդարար ժողովուրդ են, մեղվի և շերամի հատկություն ունին: Ամենաբարբարոս ազգերն էլ, եթե հայերին տիրել են, չեն ուրացել հայ ժողովրդի օգտակարությունը, եթե խմբերով գերի են տարել, դարձյալ նրանցից օգտվելու համար: Քանի քանի պետություններ հայերի օգտակարությունը ճանաչելով՝ զանազան արտոնություններ տալով՝ հրավիրել են իրենց երկիրը…

Հայն աշխարհաշեն, երկրաշեն է, հողագործ է, մշակ է, արհեստավոր է: Հայն ազգ է և նշանավոր ազգ, պատվական և ազնիվ ազգ, ամեն ազգերի համակրությանը և սիրուն արժանի, հայը մարդկության ամենապատվական անդամներից մեկն է, թշնամի լինել հային, կնշանակե թշնամի լինել մարդկությանը:

«Մի երես մեր նորագույն պատմությունից» աշխատությունից, 1890.

ՄՈՒՐԱՑԱՆ

... Իսկ երբ հեռվից մեր թշնամին երևի,
Հայ տղաներ, թողեք արորն ու եզինք
Հարձակվեցեք թշնամու դեմ կատաղի,
Կռվեցեք քաջ և փրկեցեք հայրենիք։
ՄՈՒՐԱՑԱՆ

Հայրենիքի թշնամու դեմ կռվելը, նրա ազատության համար մեռնելը՝ սրբազան պարտք է, այդ պարտքից ոչ ոք չպիտի փախչի. բայց եղբայրասպանությունը մի ոճիր է, աստծուց և մարդկանցից անիծված։

«Գևորգ Մարզպետունի» պատմական վեպից, 1896.

Նվաստացուցիչ է այն կյանքը, որ մարդ վայելում է յուր թշնամու առաջ խոնարհելով. մահն այդպիսի կյանքից ավելի գերադաս ենք համարում մենք։

«Գևորգ Մարզպետունի» պատմական վեպից, 1896.

Մեզանից ամեն մեկի իսկական տունը և հարազատ ապաստանարանը ապահով հայրենիքն է։ Եթե մենք վտանգում ենք նրա խաղաղությունը, նմանում ենք այն մարդուն, որ յուր մարմինը տաքացնելու համար վառում է յուր տունը, չմտածելով, թե երբ այդ կրակը հանգչի, երբ հարկի սյուները մոխիր դառնան, ինքը պիտի մնա անտուն, անպատսպարան, միշտ հա-

ջածական պառնաչունչ հողմերից, կամ թե ավելի կիզիչ ճառագայթներից:

«Գևորգ Մարզպետունի» պատմական վեպից, 1896.

Ո՛վ որ չարերի ույժն է պարտում, ապացուցանում է, որ ինքը վատարանց մեկն է:

Ո՛չ մի զինվոր, եթե իրոք նա զինվոր է, չպետք է սպասե ընկերին, երբ հայրենիքը վտանգի մեջ է գտնվում: Ո՛վ որ ույժ ունի կռվելու, ո՛վ որ կարող է հարված տալ թշնամուն կամ մի նետ ուղղել նրա կրծքին և սակայն թագչում է պարսպի տակ, կամ ձեռքը ետ քաշում, նա մի մատնիչ է:

«Գևորգ Մարզպետունի» պատմական վեպից, 1896.

Պատերազմի դաշտո՞ւմ... Օ՜, այնտեղ մեռնողը ապրում է ավելի՝ քան ամենից երկարակյացը աշխարհի մեջ: Եվ կա՞ արդյոք մի կյանք ավելի փառապանծ, քան այն՝ որ ժառանգում է զինվորը՝ հայրենիքի համար մեռնելով: Այո՛... չկա նույնպիսի մի տեղ, ուր քաջի կուրծքը կարողանար շունչ քաշել ա՛յնպես ազատ, ինչպես պատերազմի դաշտում, ուր բանակները կռվում են մահու և կյանքի դեմ... չկա ավելի մեծ հաճույք՝ քան տեսնել հայ քաջերին արյունախանձ կատաղության մեջ՝ երբ բորբոքում է ճակատամարտը, կամ սուսերամերկ և սրարշավ՝ երբ նահանջում է թշնամին: Ամեն անգամ, երբ կռվի խառնակության մեջ, փշրվող նիզակների մոտ, կամ նետերի տարափի տակ աչքիս է ընկնում հայրենական դրոշակը, որ ազատ ծածանում է քաջերից մինի ձեռքում, ամեն անգամ երբ տեսնում եմ այդ դրոշակի փառքի համար նահատակվող մեր մանկտին, սիրտս լցվում է հրճվանքով, բազուկներս գերբնական ուժ են ստանում և իմ ձայնը որոտում է ինչպես մի մրրիկ, որ շառաչում է անտառի մեջ: Այո՛... սիրելի է պատերազմի դաշտը, մանավանդ ա՛յն ժամանակ, երբ

այնտեղ դարբնվում է հայրենիքի փառքն ու փրկությունը:

«Ռուզան» պատմական դրամայից, 1882.

Եթե պետք մեռնենք, ապա թող այդ լինի սուրը մեր ձեռքին և կռվի դաշտի վրա: Անարգ կյանքից ավելի, ազատ մահն է գովելի:

«Ռուզան» պատմական դրամայից, 1882.

Կա մի ուրիշ մարմին, որ ավելի սիրելի և ավելի պաշտելի է, քան մեր սեփականը.— այդ մարմինը, Հայրենիքն է: Ես ուխտել եմ իմ անձը նրան նվիրել, նրա սիրուց զատ աշխարհում ուրիշ սեր չճանաչել, նրա ցավերից զատ՝ ուրիշ ցավերով չվշտանալ, նրա բախտավորությունից զատ՝ ուրիշ բախտավորություն չխնդրել:

«Խորհրդավոր միանձնուհի» վեպից, 1889.

«Երդվում եմ ձեր առաջ, երդվում եմ հավիտենականի անունով, երդվում եմ իմ հայրենիքի արևով և այս սուրբ գերեզմանով, որ ես չեմ վերադառնալ այլևս իմ ընտանյաց գիրկը, չեմ մտնել իմ հարկի տակ, մինչև վերջին հագարացին չհալածեմ հայրենի սահմաններից: Թո՛ղ կործանե ինձ աստված. Թո՛ղ քրիստոնյան ինձ Հուդա և հայր՝ Վասակ անվանե, եթե ես երբեք դրժեմ իմ ուխտին ու երդմանը: Ես պետք ապացուցանեմ, որ ամրոցների և իշխանական զորության մեջ չէ ամփոփվում հայրենիքի ույժը, այլ նրա որդիների անձնվիրության մեջ. պետք ապացուցանեմ, որ քսան անձնազոհ նահատակներն ավելի արժեն քան քսան հազար զինվորներից կազմված բանակը...»

«Գևորգ Մարզպետունի» պատմական վեպից, 1896.

Գիշերից բավականին անցել էր. առավոտյան աստղը ծագում էր արդեն և արևելքի մեջ խավարն սկսում էր լուսից բաժանվել:

Հագարացիների բանակը ընկղմած էր խոր քնի մեջ: Կրակները վաղուց հանգել և շարժումն ու շշուկը դադարել էին: Չէր լսվում նույնիսկ պահապանների քայլատրոփը: Ըստ երևույթին ոչ մի երկյուղ չունեին նրանք հայերից: Եվ ո՞վ պիտի համարձակվեր հազար մարդուց բաղկացած այդ բանակի հանդիստը վրդովել: Նույնիսկ Բեշիրի վրանի առաջ պահապաններն անուշ խռմփում էին, երազելով անշուշտ Գեղա ամրոցի առումը, բնակիչների կոտորածը և գեղեցիկ հայուհիների գերումը:

Հանկարծ հովտի մեջ որոտաց Մարգպետունու ձայնը:

Բլուրների վրա և լեռնալանջերում ամբոխն սկսավ գոռալ: Արձագանքը որոտաց հովտի մեջ և բանակի վրանները սկսան վառվել:

Հագարացիք սարսափահար եղած դուրս թռան վրաններից, աղմուկն ու շփոթը տիրեց ամեն տեղ և ուխտի զինվորները իրանց կոտորածն սկսան: Հետզհետե վառվող վրանների լույսն ընկավ բլուրների վրա և երևան հանեց ամբոխի խմբերը, որոնք իրանց գոռյուն-գոչյունով և զանազան շարժումներով նմանում էին այդ բարձրություններից իջնող սավար բանակների: Հագարացիք կարծելով թե շրջապատված են արդեն բազմաթիվ զորքերով, սկսան իրար կոտորելով փախուստ տալ դեպի Վեդիի հովտաբերանը. ամեն ոք աշխատում էր յուր անձը փրկել. ձի ունեցողը ձիով էր փախչում, հետևակը հետիոտն էր վազում, ամենքը թեպետ սրերը մերկացրած, բայց գրեթե ոչ ոք հարված չէր կշռում, այլ վահանը գլխին բռնած՝ հարվածներից ազատվել էր աշխատում:

Չնայելով որ Բեշիրը կատաղած դուրս թռավ վրանից, հեծավ իսկույն յուր ձին ու սկսավ գոռալ և կարգի հրավիրել զորքը, բայց լսող չկար: Կրակի և մթության խառնուրդում չէր որոշվում որոնք են հայերը և որոնք հագարացիք: Բեշիրին այնպես թվաց, թե մի հսկայական զորություն սեղմել է յուր գրկում

հազարացոց բանակը․ բայց և այնպես մի քանի թիկնապահների օգնությամբ նա սկսավ վանել յուր վրանի վրա հարձակվող քաջերին։

Բեշիրը, չնայելով յուր հաղթանդամ հասակին, ճարպկությամբ դուրս սողաց խռնված մարտիկների միջից և մահը իրեն հետամուտ տեսնելով, արագությամբ աշտանակեց թիկնապահներից մեկի ձին և սրարշավ դուրս փախավ հովտից։

Այնուհետև փախուստն ընդհանրացավ․ էլ ոչ մի տեղ դիմադրող չկար, ամենքն իրանց կյանքը փրկելու վրա էին մտածում։

Այս տեսնելով բլուրների վրա եղող խուժանը՝ որոտընդոստ աղաղակով ընկավ փախչողների հետևից։ Ուխտի զինվորներից ազատվողները ցոհ էին դառնում նրանց բրերին և տապարներին։

Հաղթությունը կատարյալ էր։

«Գևորգ Մարզպետունի» պատմական վեպից, 1896.

Հայրենիքը փրկելու համար՝ չպետք է սպասել հաջող հանգամանքների և ոչ էլ իշխանների ձեռնտվությունը մուրալ․ այլ պետք է հուսալ միայն սեփական բազկի վրա և անձը նվիրելու չափ հայրենասիրություն ունենալ։

«Գևորգ Մարզպետունի» պատմական վեպից, 1896.

... Հետևյալ առավոտ, դեռ արևը չծագած, Բեշիրը նորեն յուր զորքերով դեպի բերդը [Բյուրական, Ա. Բ.] դիմեց։ Նորեն նետաձիգներն ու պարսպահարները իրանց գործն սկսան։ Բացի այդ, պաշարյալները երկյուղով տեսան, որ փայտակերտ աշտարակն ու ահագին կրիան, որոնց նախընթաց օրը թողել էին պարիսպներից հեռու (որովհետև հույս ունեին ավելի թեթև գործիներով պարիսպները փլցնել), արդեն մոտեցնում են՝ առաջինը պարիսպներին, իսկ երկրորդը՝

բուրգերից մինին: Նրանց երկուսը ոչ թե աշտարակի ու կրիայի տալիք հարվածներից էր, այլ այն մտատանջությունից, թե չլինի՞ այդ գործիները չմոտեցնեն այն տեղերին, ուր ցանկալի էր, այսինքն ուր որ դարան էին լարել իրանք: Այս պատճառով ինչպես նախընթաց, նույնպես և այդ օրը, հայ զինվորները չմոտեցան պարսպի ա՛յն մասին, որ ամենից թույլն ու գյուղամատույցն էր, կամենալով մոլորեցնել թշնամուն: Իսկ վերջինս, որ օր առաջ արդեն նկատել էր՝ ինչպես այդտեղի հարմարությունը՝ աշտարակից կամուրջ ձգելու համար, նույնպես և այն, որ զորքերը չեն պաշտպանում այդ մասը, եկել էր այն եզրակացության, թե ներսից ուրեմն կռվան չունի պատվարը և այդ է պատճառը, որ զորք չէ կանգնում այդտեղ: Ուստի շուտով եռհարկյան մարտկոցը, անիվների վրա տատանելով սկսավ մոտենալ պարսպի այդ մասին: Պաշարյալների ուրախությանը չափ չկար: Որովհետև նա կանգ պիտի առներ հենց այնտեղի վրա, ուր իրանք փորել էին ընդարձակ գետնափոր, որի վերին երեսը պահպանվում էր ներսից դարկած և հենարանների վրա հաստատած մի տախտակամածով: Այդ գետնափորի մեջ տեղ-տեղ դարսված էին նավթով թաթախուն խըռիվ ու խրձիկներ: Եթե աշտարակը կանգնեցնեին գետնափորի վրա, իրանք հենարանները հանելով՝ տախտակամածը պիտի քանդեին: Այդպիսով հողի ծածքը աշտարակի ծանրության չդիմանալով՝ պիտի փլչեր, որով և մարտկոցը վայրահակ կործաներ: Այնուհետև խռան ու խռիվը կրակելով՝ պիտի այրեին նաև աշտարակը:

Պաշարյալների ակնկալությունն ի դերև չելավ: Փայտակերտ մարտկոցը կանգնեցրին պարսպի գյուղամատույց տեղի մոտ, իսկ և իսկ գետնափորի վրա: Հազարացիների մարտիկները աշտարակ մտնելով իրանց գործն սկսան: Նրա ներքին հարկից սակրերով ու նիզերով փորփրում էին պարսպի հիմքը: Երկրորդ հարկից՝ փոքրիկ խոյերով խախտում էին նրա պըր-

դունքի քարերը: Այդ երկու բաժանման աշխատավորներին պաշտպանում էր պաշարյալների հարվածներից տամուկ կաշվով պատած հաստ տախտակամածը, որ երկրորդ հարկի հատակից բացվելով՝ կառչում էր պարսպին և այդպիսով ծածկում պարսպահարներին:

Հայ զորքերի մի ստվար խումբ վազեց իսկույն աշտարակի կողմը և սկսավ կռիվ մղել նրա երրորդ հարկի մարտիկների դեմ, որոնք աշխատում էին երկաթապատ կամուրջը պարսպի վրա իջեցնել:

Երկու կողմից էլ կատաղի կռիվ սկսավ: Նետերը տեղում էին աջ ու ձախ․ նիզակները ճռճռում ու հարվածում․ ժանիքավոր սվինները խփում ու միմյանց կառչում․ բայց կռվողներից ոչ մինը տեղի չէր տալիս մյուսին:

Հանկարծ երկաթե ձողապատ կամուրջն աշտարակի բարձունքից ճռնչալով իջավ պարսպի վրա և հագարացի մարտիկները միմյանց հետևից սկսան նրա վրայով խուժել դեպի պարիսպը:

Այստեղ փրթեց հուսահատ կռիվ․ ներսինները դիմադրում էին հերոսաբար, դրսինները խիզախում համարձակորեն: Նիզակներ էին՝ որ փշրվում, վահաններ՝ որ ջախջախվում, սրեր՝ որ շողում կամ թռչում էին աջ ու ձախ, և մարտիկներ, որոնք կամրջի ու պարսպի վրայից թոթափվում էին դեպի վայր: Հագարացի ընկած զինվորներին շարունակ փոխարինում էին նորերը, որոնք ներքին հարկից վազում էին դեպի վեր դիվական ճարպկությամբ․ մինչդեռ հայ զորաց թիվը գնալով նվազում էր: Որովհետև մյուս կողմերի վրա կռվողներից սրանց օգնության հասնել չէին կարող․ ամեն մի խումբ յուր դիմադիր հակառակորդն ուներ: Բայց և այնպես այդ սակավաթիվ քաջերը կռվում էին հուսահատ կատաղությամբ և միևնույն ժամանակ զարմանում կամ զայրանում, որ աշտարակը այդքան ժամանակ կանգուն է մնում յուր տեղը:

Փոքր մի ևս և հայ կտրիճները պիտի հաղթահարվեին, և աշտարակի զորքերը վերջին հարվածը տալով

նրանց, պետք խուժեին պարսպից ներս: Բայց ահա՛ հանկարծ լսվեց մի թմբկյուն, ապա մի դղրդոց, և փայտակերտ աշտարակը, ալիքների մեջ ընկղմող հըսկայական նավի նման ճոճալով ու տատանելով սկսավ մի կողմից խրվել գետնի մեջ և մյուս կողմից հակվելով զարնել պարսպին: Կամուրջն ու ներքին տախտակամածը փշրվեցան, վերին հարկը մյուս երկուսից բաժանվելով կործանվեցավ, իսկ վերջիններին շրջապատեց մի սոսկալի հրդեհ, որ առաջացել էր գետնափորի մեջ նավթով ողողած խռիվների վառվելուց:

Հազարբեկյանները այդ տեսնելով հուսահատության աղաղակ բարձրացրին, մինչդեռ հայերն ուրախության ու ցնծության ձայներ էին արձակում: Թեպետ հրշեջների խումբը շրջապատեց իսկույն վառվող աշտարակը և թափեց նրա վրա յուր այծատիկների ջուրը, սակայն կրակը հանգցնել չկարողացավ: Բոցեղեն լեզուները, որոնք գետնի միջից անընդհատ ծառանալով շրջապատել էին աշտարակը, գրեթե կես ժամում այրեցին ու մոխիր դարձրին նրան՝ յուր մեջ ունեցած զենքերով ու զորքերով:

Աշտարակից ավելի լավ բախտի չհանդիպեց կրիան, որ գլխավոր բուրգին մոտեցնելով՝ կամենում էին նրա ներքին հարկը խրամատել: Կրիան մի քառակուսի և լայնադիր տախտակամած էր, մի քանի կանգուն բարձրությամբ, հաստատված ութ անվար անիվների վրա և չորս կողմից պատած անեփ ու թաց կաշվով, որ նրան վերին կողմից ազատ էր պահում հրդեհից: Այդ ծանրաշարժ գործքն առաջ էին մղում գլանների վրա ձգած տախտակների վրայով: Բուրգին կամ պարսպին մոտեցնելուց ետ, նրա տակ մտնում էին մի քանի տասնյակ մարդիկ, որոնք և բրերով ու նիգերով սկսում էին քանդել պատվարը, չվախենալով ամրոցական հարվածներից, որովհետև հաստաշեն տախտակամածը պաշտպանում էր նրանց:

Սակայն բյուրականցիք ուրիշ հնար էին մտածել նրան կրակելու համար: Հենց որ հազարացիք առաջին

փոքրիկ խրամատը բացին, իրանք այդ տեղով սկսան թափել ահագին քանակությամբ թեփախառն նավթ: Հեղուկը հոսելով լճացավ կրխայի տակ· ապա մի ակնթարթում կրակեցին նրանք այդ հեղուկը հենց խրամատի բերանում: Բոցը ծավալվելով մտավ կրխայի մեջ: Պարսպահար գունդն սկսավ փախչել. շատերն էլ կրակից բռնվեցան, իսկ կրխան մնաց բոցեղեն լեզուների մեջ: Այդ միջոցին բուրդի վերևից սկսավ տեղալ նետերի սաստիկ տարափ այն խիզախ խմբերի վրա, որոնք կարթավոր չվանները ձեռքներին մոտենում էին կրխային՝ կրակների միջից նրան ազատելու համար: Այդ անել, իհարկե, թույլ չտվին նրանց հայերը, և կրխան հետզհետե այրվելով դարձավ մի մոխրակույտ:

Զորապետի կատաղությանը չափ չկար: Արաբական նժույգը հեծած, սուսերամերկ և սրարշավ նա դիմում էր մերթ այս և մերթ այն կողմը, և ահեղ որոտալով՝ առաջ էր մղում մարտիկներին, ոմանց թշնամանում, ոմանց խրախուսում էր. հայ կտրիճներին օրինակ էր տալիս նրանց. վառում, բորբոքում էր պատերազմը: Բայց բոլորն իզուր, բոլորն ապարդյուն: Հայոց նետերն ու կրակը ահագին կոտորած էին անում նրա զորքի մեջ: Շատերը նրանցից ձգում, փախչում էին և զորավարի հրամանն ու սպառնալիքը չէր վերադարձնում դասալիքներին:

Վերջապես մի քանի ժամվա կատաղի կռվից ու խիզախ հարձակումից ետ Բեշիրը հրաման արավ զորքին նահանջ տալու և բանակատեղը դառնալու:

Այդպես էլ կատարվեցավ:

Իսկ բյուրականցիք ուրախության աղաղակներով ծաղր ու ծանակ էին անում նրանց:

Այդ գիշեր թշնամու բանակը կարծես սուգի մեջ էր, մինչդեռ Բյուրականը ջահերով ու ղամբարներով լուսավորված հաղթության տոն էր կատարում:

«Գևորգ Մարզպետունի» պատմական վեպից, 1896.

Այն գեղջուկ խրճիթները, այն աննշան տնակները, որոնց մեջ ապրում են ցնցոտիներով ծածկված մանկլուկք և որոնց շատ անգամ արհամարհում են մեծամեծ իշխանները, նույնիսկ դրանք են, որ ամփոփում են իրանց մեջ հայրենիքի ույժը։

«Գևորգ Մարզպետունի» պատմական վեպից, 1896.

ԼԵՈ

Հերոսները երկնքից չեն ընկնում,
Հերոսները ծնվում են ժողովրդից...
Լեո

...Այնտեղ էր, երևի, Յուչ-Թափայի և Ալաջայի սարերի այն մեծ դաշտավայրերում, որ ահագին բանակներ էր դնում բյուզանդական զորքը: Չորս անգամ նա ամբողջ թափով արշավեց դեպի Շիրակ, չորս անգամ ավերանքով ու կոտորածով հասավ Անիին, որպեսզի կատարե Վեստ-Սարգսի և նրա նմանների բաղձանքը և խլե Անին իր թագավորության ձեռքից: Ահագին զորակույտերը ճնշող, հուսահատեցնող տպավորություն էին թողնում հայ ազգաբնակության վրա: Բայց դեռ չէր մեռել հայի բախտը, դեռ կար մի բազուկ, որի մեջ կայտառ զարկում էր հերոսությունը: Կենդանի էր Վահրամ Պահլավունին: Ծեր առյուծը չվախեց այն հսկայական դժվարությունից, որը հաղթելուց հետո միայն պիտի կարողանար վերջին Բագրատունուն նստեցնել հայրենի գահի վրա: Երեք անգամ նա հետ մղեց բյուզանդական արշավանքը, երեք անգամ Վեստ-Սարգսին ամաչեց, բայց դեռ այդքանը բավական չէր:

Մի օր Անին իր գեղեցիկ պատերի վրայից տեսավ ահեղ մի տեսարան: Շրջակա դաշտերը ծածկվել էին զինվորներով: Եկել էին այդ գեղեցիկ պարիսպները խլելու: Բյուզանդականությունն այս անգամ այնպիսի զորությամբ էր հանդես եկել հափշտակողի դերում, որ ահ ու սարսափ պիտի տարածեր: Մեր պատմիչներն ասում են, թե բյուզանդական բանակը 100·000 հոգուց էր բաղկացած: Նա կատաղած էր նախկին անհաջողություններից և զենքի լեզվով խոսելուց առաջ

իր այդ կատաղությունը թափում էր այն նախատինքների և հայհոյանքների մեջ, որ ամեն օր ուղարկում էր պաշարվածներին...

Ահա նրանց ետևում, այս կողմ, քաղաքի մեջ գնդեր են կազմվում, պատրաստվում։ Մեծ բազմություն է, ամբողջ 30 հազար մարդ։ Նրանք ծածկել են մայրաքաղաքի բոլոր ազատ տեղերը— հրապարակները, Մխչնաբերդը, պարիսպները։ Շարժվելու նշան տրվեց, Ավագ դուռը բացվեց, զինված բազմությունը դուրս է գնում, դուրս, դեպի պատերազմի դաշտը։ Վահրամ մեծ իշխանն իր տեղն էր. նա է հայ բանակի հոգին, նա տանում է, հարդարում է ճակատը։ Ի՜նչ տեսարան։ Ալեզարդ հերոսն իր ամբողջ բանակով կայծակի պես հարվածում է բյուզանդական բանակը։ Ահռելի թափ ունի այդ հարվածը։ Նա ոտի տակ է գցում, տրորում է թշնամուն, չէ թույլ տալիս, որ սա ուշը գլուխը հավաքե։ Կոտորածը սոսկալի է։ Հայերը կատաղած են իրանց լսած հայհոյանքներից, այս ամբողջ անարդար, ավազակային գործից։ Եվ այնքան անխնա, անգութ են այդ կոտորողները, որ Վահրամը, նույնքան քաջ քրիստոնյա, որքան քաջ զորավար, միջամտում է, խնայել է հրամայում։ Նա արդեն տեսնում էր, որ բյուզանդական պարտությունը կատարյալ է, որ ընկածին ջարդելը այլևս ավելորդ անգթություն է։ Մեր պատմիչները հավատացնում են, որ Անիի շրջականերում 20.000 բյուզանդական դիակներ էին փռված։

Արյունոտ պայքարը վերջացած էր։ Անին հաղթանակի ավետիսն ստացավ...

«Անի» անտիպ աշխատությունից, 1904.

Սրա [Վահրամ Պահլավունու,— Ա. Բ.] քաջագործությունները այնքան որոտալից էին, որ տարածվեցին աշխարհի բոլոր կողմերում, Հայաստանի սահմաններից դուրս էլ ահագին արձագանքներ տվին։ Վրացիները— հավատացնում է Մագիստրոսը— տաղեր

և երգեր հորինեցին Վահրամի վրա և պարելով երգում էին հրապարակներում: Հայաստանում գտնվեցին այնպիսիները, որոնք սկսեցին գրի առնել Վահրամի գործերը, որպեսզի նրա մահից հետո դուրս բերեն նրա կյանքի ամբողջ պատմությունը: Տարաբախտաբար իրանք, այդ կենսագրողները Վահրամից շուտ մեռան և նրանց հավաքած նյութերը կորան:

Հայաստանի սահմանակից մեծ և փոքր պետությունների տերերը մեծարեցին հռչակված հայ զորավարին իրանց պատվավոր տիտղոսներով և հարուստ ընծաներով, որ ուղարկում էին Վահրամի տունը՝ հատուկ պատգամավորությունների ձեռքով: Բյուզանդական կայսրը շնորհեց նրան անթիպատ պատրիկի տիտղոսը... Բաղդադի խալիֆը և Պարսկաստանի կիսանկախ էմիրները կողմնակալի, բդեշխի պատիվ հատկացրին նրան: Սրով ու կրակով նվաճած այդ հռչակն ու փառքը, սակայն, չկուրացրին Պահլավունի իշխանին, չարծարծեցին նրա մեջ փառասիրական մեծատենչեր: Այստեղից է ահա նրա բնավորության ամբողջ վսեմությունը, ամբողջ մեծությունը: Հայաստանը, ինչպես վերևում ասեցի, մի երկիր էր, որ ռազմիկ նյութեր էր տալիս հարևան երկրներին, գլխավորապես Բյուզանդիային: Վահրամը իր հռչակի վրա հենված, կարող էր մեծ փառք գտնել իր հայրենիքի սահմաններից դուրս, օտարների ծառայության մեջ: Բայց նա չհրապուրվեց այդպիսի փառքով, չդարձավ մի անձնամոլ հերոս, որի համար դափնիներն ու պսակներն ունեն նշանակություն ուր էլ կարելի լինի նրանց հնձել: Զանազան կողմերից, առավելապես, երևի, Բյուզանդիայից նա ստանում էր հրապուրիչ առաջարկություններ: Առաջարկում էին թողնել հայրենի երկիրը, առաջարկում էին օտար երկնքի տակ ստանձնել զորավարի, գլխավոր հրամանատարի պաշտոններ: Բայց նա չլսեց և ոչ մեկին:

Ի՜նչ ազնիվ, անշահասեր հայրենասիրություն: Մի ուրիշը, գոռոզացած այնքան զարմանալի հաջողություններից, շողոքորթված թագավորների, կայսրների և ազդեցիկ իշխողների հաճոյական նամակներից, որոնց պատասխաններն սպասվում էին արքունիքներում, կարհամարհեր իր հայրենի աղքատ ու դժգույն խրճանությունը, իր փառքին ու ընդունակություններին արժանի չէր համարի իր փոքրիկ երկիրը և կգնար ոչ թե նոր-նոր հռչակ վաստակելու, այլ ունեցածի պտուղները լիուլի վայելելու: Սակայն Վահրամի մեջ առաքինությունը քաջարի զինվորի. հաստատակամության հետ ձուլված էր: Եվ նա մնաց իր տանը, որպեսզի իր ժողովուրդը խնամե, նրա լավ օրի գաղափարին նվիրվի... Եվ չգիտես թե ինչի վրա ավելի հիանաս—անվեհեր քաջությա՞ն թե քաղաքացու պարտաճանաչության վրա, փայլուն ճակատագրի՞ թե զարմանալի համեստության վրա: Ամեն ինչ խոշոր է այս մարդու մեջ: Ոչինչ ցած, ոչինչ մանր բան նրան չէր տրված...

Հայրենիքի հավատարիմ սպասավորը մինչև վերջին շունչը չդավաճանեց իրան և վերջացրեց նրանով, որ իր սպիտակ մազերը շաղախեց հայրենիքի փրկության համար թափած արյունի մեջ: Ի՜նչ մահ...

«Անի» անտիպ աշխատությունից, 1904.

Հերոսներր երկնքից չեն ընկնում:
Հերոսները ծնվում են ժողովրդից...

Եվ ինչպես որ ժողովուրդն իր կենդանի խոսքի մեջ սուրբ և անմահ է պահել իր հսկա իշխողների հիշատակը, այնպես էլ սիրով ու գուրգուրանքով այսօր պատմություններ է անում և այն անվախ տղամարդկանց մասին, որոնք կռվի և վտանգի երկար տարիներում դուրս եկան հայրենի լեռների ծոցից՝ հայրենի ժողովրդի սրբազան իրավունքներին արդար սրտով և անարատ հավատով ծառայելու համար:

Շատերն են եղել այդպես։ Բայց շատերի մեջ ընտրյալներ կան և ընտրյալների մեջ դարձյալ ընտրյալներ։

Ահա այդպիսիների մասին է ժողովրդի խոսքը և՛ ավելի երկար, և՛ ավելի տաք ու ոգեշունչ...

«Հայ հերոսներ» գրվածքից, 1920.

,,ՀԱՅՐԵՆԻՔ,, /ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ / ԺՈՂՈՎԱԾՈՒԻՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Տանում ենք հընուց մեր գանձերն անգին,
Մեր գանձերը ծով,
Ինչ որ դարերով
Երկնել է՝ ծընել մեր խորունկ հոգին,
Հայոց լեռներում,
Բարձր լեռներում։

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Մենք պատմական շրջաններ ենք ապրել, մենք կուլտուրաներ ենք տեսել, մենք Ասորեստանի ու Բաբելոնի հետ ենք ապրել, մենք հին Իսրայելի ու Եգիպտոսի օրերից ենք գալիս։ Հարազատ են մեզ կուլտուրաները, գիրն ու գրականությունը, լույսն ու լուսավորությունը...

Եվ էն մեծ ժառանգությունն արդեն, որ մեր ազգային կյանքում մեզ, հետնորդներիս, թողել են մեր պանծալի նախորդները— Սահակն ու Մեսրոպը, Եղիշեն ու Շնորհալին, Փարպեցին ու Նարեկացին, Նահապետ Քուչակն ու Սայաթ-Նովան, Աբովյանն ու Նազարյանը, Արծրունին ու Րաֆֆին, Ագայանն ու Պռոշյանը, Սունդուկյանն ու Ալիշանը ու շատ իրենց նմանները, որոնք իրենց հոյակապ գործերով լցրին մեր երկիրը ու իրենց հիշատակներով մեր սրտերը ու ինչպես պայծառ արևներ լուսավորում են մեր ճանապարհը դեպի ապագա լավ օրերը և որոնց ապավինած մենք զգում ենք մեզ հզոր ու անսասան— ասում եմ՝

նրանց մեզ թողած ժառանգությունն արդեն նյութական հարստություն չէ, այլ բարոյական, հոգեղեն, մտավոր, խոսքի ու բանի կարողություն:

«Հայ գրողների Կովկ. ընկերության երեկույթին Հովհ. Թումանյանի բացման խոսքը» հոդվածից, 1912.

...Բայց փոքր ժողովուրդներն էլ երբ գիտակցության են գալիս, երբ նրանց մեջ խաղում է կենդանության շունչը, կարողանում են առաջ բերել մեծ գրականություններ: Օրինակ· առեք Հին Հունաստանը իր Աթենքով· մի՞թե թվով մեծ էր նա· մի՞թե մեծ էր Շեքսպիրի Անգլիան, մի՞թե մեծ են այսօր Շվեդիան ու Նորվեգիան, մի՞թե մեծ են Դանիան, Բելգիան կամ Հոլանդիան, որ տալիս են մեծ գեղարվեստագետներ ու գրողներ:

Այո՛, թվով մենք էլ ենք փոքր նրանց նման: Բայց թվական մեծությունը գուցե անհրաժեշտ է մեծ պատերազմներով ազգեր ու աշխարհներ կործանելու համար, իսկ գրականության ու գիտության մեջ, որ նույնպես մի մեծ պատերազմ է— պատերազմ լույսի ու խավարի— այստեղ խնդիրը վճռում է ժողովրդի բարոյական մեծությունը: Շուտով կենդանության շունչն ավելի ու ավելի զվարթ կխաղա և մեր կյանքում, ու մեծ է մեր հավատը հայ ժողովրդի կուլտուրական ուժի ու նրա պայծառ ապագայի վրա, որ հենց ինքը՝ հայ ժողովուրդը իր ազգային առասպելի մեջ նմանեցրել է մշտավառ կանթեղի, որ սրբազան Արագածի վերևից կախված է երկնքի բարձրությունից ու ոչ մի ձեռք չի հասնիլ նրան, ոչ մի փոթորիկ չի հանգցնիլ նրան: Նա հայ ժողովրդի հույսն է անմարելի ու մշտավառ:

«Հայ գրողների Կովկ. ընկերության երեկույթին Հովհ. Թումանյանի բացման խոսքը» հոդվածից, 1912.

Զարմանալի է մեր ազգի կենսունակությունը. ես լիքն եմ էդ մեծ կենսունակության անսասան հավատքով: Կենսունակությունն էլ որ ասում եմ՝ ասում եմ խոսքի բարձր ու ազնիվ իմաստով: Եվ ոչ մի բռնակալ, և ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի էդ հզոր հատկությունը: Ամեն անգամ, ամեն մի բռնակալի հայ ժողովուրդը կարող էր կրկնել Վարդանանց խոսքը, թե՝ դու կարող ես հայի մարմինը տանջել, բայց նրա ոգու հետ ի՞նչ ես անելու...

Եվ ահա, ինչպես ամեն ժամանակ, էնպես էլ էսօր, շարժվում է հայ ազգի հզոր ու աննկուն ոգին: Մեծ աղետի օրերումն էլ նա, ասես թե մի վերածընունդ նախատոնելով, շարժվում է լայնածավալ ու բազմակողմանի:

«Ողջունում ենք» հոդվածից, 1916.

Եվրոպական նշանավոր գիտնականներից մինը մի մասնավոր նամակում գրում է. «Մենք ճանապարհ ենք բաց անում Թորամանյանի թնդանոթների համար»:

Հարգելի գիտնականը թնդանոթներ անվանում է պ. Թորամանյանի ուսումնասիրած ու հավաքած հայկական ճարտարապետության էն նմուշները, որոնք մոտիկ ապագայում իրենց լուսաբանություններով լույս պետք է տեսնեն Եվրոպայում: Ասում են «դրանք նորություններ են Եվրոպայի համար» և առայժմ դրանց մասին ծանոթություններ են տալիս եվրոպացիներին, այսինքն ճանապարհ են բաց անում Թորամանյանի թնդանոթների համար:

Այո՛, դրանք թնդանոթներ են, հայկական թնդանոթներ, և թնդանոթներից ամենաազնիվն ու ամենաուժեղը, որ երբևիցե հնարել է մարդը. իրենց հետ տանում են հայ ժողովրդի ստեղծագործական հանճարն ու կարողությունը, գնում են հայերի համար նվաճելու լուսավոր ազգերի սերն ու համակրությունը, հարգանքն ու հիացումը...

«Թորամանյանի «թնդանոթները» հոդվածից, 1914.

Ահա վեր է կացել հայ ճարտարապետ պ. Թորամանյանը, ցույց է տալիս Եվրոպային ու ամբողջ աշխարհին, թե գոյություն է ունեցել հայկական ինքնուրույն ճարտարապետություն և հայկական ինքնուրույն ճարտարապետությունը ազդել է թե՛ հարևան և թե՛ հեռավոր ազգերի ճարտարապետությունների վրա, ստիպում է ազգերի, արվեստների պատմության մեջ նոր գլուխ բաց անել «Հայոց ճարտարապետությունը» վերնագրով:

«Թորամանյանի «Թնդանոթները» հոդվածից, 1914.

...: Նա [Թ. Թորամանյանը,— Ա. Բ.] խոսեցնում է այն քարերին ու պատերին, որ մեր ազգային հանճարը աշխարհ է նետել՝ իբրև իր ստեղծագործական ուժի, իր հուժկու թափի անհերքելի վկայություն:

«Մի երևույթ» հոդվածից, 1914.

Փառք ու պարծանք մեր նախնիքներին, որ աշխարհավեր հեղեղներին դիմագրավելով հանդերձ, մեզ էսքան չքեղ ժառանգություն են թողել, և փառք ու պարծանք գիտության մարդկանց և հատկապես պ. Թորամանյանին, որ մեր ազգի մեծությունը ավերակների միջից հանելով՝ ոչ միայն օտարների առջև, այլև մեր աչքում դարձնում է մեզ մեծ ու հարգելի:

«Թորամանյանի «Թնդանոթները» հոդվածից, 1914.

...Սակայն անխորտակելի է մեր ցեղի կուլտուրական հակումն ու ձգտումը, և ստեղծագործության տենչն ու կարոտ անդիմադրելի:

«Ջոն», 1918.

... Արշալույսին երևացին Անիի ավերակները, ապա թե ծավալվեց Արարատյան դաշտը, մի կողմում սրբազան Մասիսը վեհափառ համարձակությամբ մըտած երկնքի ծոցը, մյուս կողմը՝ չքնաղ Արագածը իր լայն փեշերը փռած ու բազմած լեն ու բոլ:

Բիբլիական, խորհրդավոր ու համարձակ են Արարատյան աշխարհի գեղեցկությունները:

Շատ գեղեցիկ է տեսարանը և Երևանի առաջնորդարանի պատշգամբից: Ես շարունակ այնտեղից հիանում էի ու մտորում:

Հենց հասա Երևան, իջա թե չէ, պատշգամբում նստեցինք— աշուղն էլ մեր ետևից մտավ:

Ես չեմ մոռանա այդ րոպեն: Ոտներիս տակ, ներքև, պղտոր, մռնչալով, ոլորապտույտ անցնում է պատմական Հրազդանը (Աբովյանի սիրած Զանգին), հիշում եմ Աբովյանի՝ Զանգվին նվիրած կրակոտ տողերը, հիշում եմ Ալիշանի

«Հրազդա՛ն, գետակդ իմ հայրենի,
Հրազդա՛ն, ջըրիկդ իմ անուշիկ...»

Նայում եմ Արարատյան դաշտին, մտքովս անց են կենում մեր պատմության փառավոր շրջանները, կենդանանում են հոյակապ հերոսները, որ ապրել ու թաղվել են այդ դաշտում, սրտիս խոսում են սքանչելի լեգենդները, որ դեռ ապրում են այստեղ: Վերջապես դեմ ու դեմս ամպերից բարձր փայլատակում է Մասիսը, ծերունու քմահաճույքներով մին մթնում, մռայլում, մին բացվում ու ժպտում, բայց միշտ սիրուն, միշտ խորհրդավոր,— այն ինչ աշուղը, հայոց կույր աշուղը, երգում է.

«Գողգոթայից բարձր է Սասունի սարը,
Գողգոթայից դըժար է Սասունի սարը,
Իմ խաչն առած ես բարձրանում եմ
Սասունի սարը...»

Վ. Խանդամիրյանին գրած նամակից, 1904

Հայկական էպոսն էլ թեև պատմական տարրեր ունի իր մեջ, թեև իր մեջ ամփոփում է հայ ժողովրդի մեծ մաքառումներն ու մեծ իդեալները, բայց ամենից առաջ նա մի համամարդկային ստեղծագործություն է, դյուցազնական ու սիմվոլիկ, մի հավա-

քական գործ, որի վրա աշխատել են ոչ միայն որոշ ազգի անհատներ, այլև բոլոր ազգերը—իբրև անհատներ:

Էս պատճառով էլ սխալվում են մեր բանասերները, որ հայոց պատմության բանալիով են ուզում բաց անել հայկական էպոսի մեծ փականքը, կամ ազգային ճրագով են ուզում լուսավորել նրա մութ անկյունները, ենթադրելով, թե նա էս կամ էն հայ իշխանի կամ թագավորի— ապարանքն է: Մինչդեռ նա հսկայական մի աշխարհք է, ուր ամենքն ունեն իրենց հայրենիքը և նրան լուսավորում է արեգակը...

«Հայկական էպոսի բառարանից» հոդվածից, 1920.

Էն ժողովուրդները, որոնք աշխարհքում ապրել են լայն կյանքով ու բարձր ձգտումներով, միշտ ունեցել են իրենց դյուցազնական ու հերոսական դարաշրջանները՝ լիքը հրաշքներով ու առասպելներով:

Էս տեսակ ժողովուրդներն են, որ ունեցել են նաև քաղաքական ու քաղաքացիական մեծ կյանք ու կուլտուրա:

Ժամանակի ընթացքում սրանք ի մի հավաքելով իրենց հերոսական դարերի առասպելներն ու իրենց պատմության մեծ հիշողությունները՝ հյուսել են իրենց ազգային էպոսները:

Ամեն մի ժողովուրդ չի ապրել աշխարհքում էս տեսակ կյանք և ամեն մի ժողովուրդ չունի համաշխարհային գրականության մեջ իր ազգային էպոսը:

Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն ու իր մեծության անհերքելի վկայությունն է աշխարհքի առջև:

«Հայկական էպոսի բառարանից» հոդվածից, 1920.

Ահա՛ հայ ժողովուրդը, խտացած իր ազգային էպոսի— Սասունցի Դավթի մեջ:

Եվ էսպես էլ, հայկական էպոսի մեջ մշտապես

անսասան կանգնած են հայոց հսկայի— Սասունցի Դավթի և վրացի հսկայի— Գիորգիի (այլ վարիանտով՝ Համզոլ) հսկայի դեմքերը իրար կողքի, ուր Դավիթը Գիորգիին է տալիս իր բարևը, Գիորգին էլ միայն Դավթի բարևն է առնում, նա է Դավթին զգուշացնում վերահաս վտանգի հանդեպ և նրան է հավատում Դավիթն անվերապահ: Նրանց սրերը երբեք չեն խաչաձևվում և բացառապես սիրո և բարեկամության համար է Դավիթը Գիորգիի երկիրը գալիս:

Ահա՛ ձեզ ամբողջ ժողովրդի արտահայտած կարծիքը, սերունդներով ամրապնդված կապը, հավերժորեն գծված ճանապարհը: Հայ լինի թե վրացի, եթե շեղվում է էդ ճանապարհից, նա դավաճանում է իր ցեղի ոգուն:

«Հայկական էպոսի մասին» հոդվածից, 1920.

Ներքուստ, իրենց ոգով ու հիմքով սրանք [մեր երկու գրական լեզուները,—Ա. Բ.] մի ամբողջություն են, մի լեզու են կազմում, մի հայոց լեզու, թեև տեղ-տեղ ջախջախված, ինչպես ինքը հայոց ազգը, թեև երբեմն աղճատված, ինչպես հայի ազգային ոգին, բայց ընդհանրապես կենդանի ու կենսունակ, ինչպես հայոց ազգը, և՝ առասպելական Փենիքսի նման՝ ընդունակ ավերակներից հառնելու, նորափետուր սավառնելու դեպի գեղարվեստի ամենաբարձր ոլորտները և գիտության անհուն խորությունները:

Բայց ասում են, գեղեցիկ ու հարուստ չի հայոց ժողովրդական լեզուն:

Այո՛, գեղեցիկ ու հարուստ չէր ինքը— հայոց ազգային ոգու մարմնացումը—Սասունցի Դավիթը, քանի որ մի արհամարհված նախրապանի վիճակի մեջ էր և կոշտ լեռնականի պարզությամբ նախիր էր արածեցնում ու չգիտեր, թե ինչ ուժ կա թաքնված իրեն մեջ կամ ինչ ապագա՝ պահված իր առջև. մինչև որ խորհրդավոր ժամը հասավ, ունեցավ իր ուժի գիտակցությունը, մտավ արդարությամբ վերապահված ի-

րավունքի մեջ, հագավ հայրական զինավառությունը, հետո հեծավ Քուռկիկ Ջալալին, ձեռքն առավ Թուր Կեծակին ու... միանգամից վերջացավ ամեն վեճ ու ամեն տարակուսանք:

«Հայոց գրական լեզվի խընդիրը» հոդվածից, 1916.

Նա [Վ. Բրյուսովը,— Ա. Բ.] հայոց բանաստեղծությունը անվանում է հայ ազգի ազնվականության վկայական:

Այո՛, հիրավի, հայ հանճարը կարողացել է խոսել մարդկային սրտի ամենանվիրական ու ամենաքնքուշ զգացմունքների հետ և կարողացել է հասնել մինչև Նարեկացին, որ, ապաշխարողի կերպարանքով, իր գլուխը բարձրացրել է մինչև երկինք ու զրույց է արել աստծու իրեն հետ երես առ երես:

«Ճառ՝ արտասանած Վ. Բրյուսովի դասախոսության երեկոյին», 1916.

... Ապա թե կանգ առնելով [Վ. Բրյուսովը,— Ա. Բ.] մեր երկու հին բանաստեղծների՝ Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի վրա, որոնց երգերից թարգմանություններ է տալիս, չեշտում է, թե՝ հենց միայն էս երկուսը հերիք են, որ նրանց ծնող հայ ժողովուրդը միանգամ ընդմիշտ մտնի էն կուլտուրական ժողովուրդների շարքը, որոնք միասնաբար մասնակից են մարդկության ստեղծագործությանը...

«Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի ռուսերեն թարգմանությունների առթիվ» հոդվածից, 1915.

Վերջապես կցանկանայինք, որ մեր ազգն էլ կարողանար տեսնել, տեսնել, գնահատել ու պաշտպանել իր ծնած ուժերը: Եվ երբ որ տեսնի—կհամոզվի, որ նրանց մեջ էլ կան այնպիսիները, որոնք իրենց տաղանդով մրցում են ու հավասար են եվրոպական ժողո-

վուրդների սիրված, հանրահռչակ հեղինակներին, տարբերությունը միայն սրանց ու նրանց բախտի մեջ է:

«Շիրվանզադեի հոբելյանը» հոդվածից, 1910.

Մեր ազգը, որ աշխարհքի ու արևելքի ամենահին ազգերից մինն է և ազգագրության տեսակետից հանդիսանում է վերին աստիճանի հետաքրքրական մի աղբյուր ուսումնասիրության, և մեր աշխարհքը, որ մի լիքը թանգարան է ամեն տեսակի կենցաղագիտական, պատմական, կրոնական, բանահյուսական և այլ մեծարժեք նյութերի, տակավին մնում են խավարի մեջ, իրենց փառքերը ավերակների ու հողի տակ, իրենց պարծանքները մոռացության ու անհայտության մեջ:

«Ազգագրական գործը մեզանում» հոդվածից, 1910.

Չմոռանանք, որ հայ ժողովուրդը ինչ բարձր բան կատարել է, միշտ կատարել է՝ չնայելով նեղ ու դառն ժամանակին...

Եվ սրա մեջ է մեր ցեղի մեծությունն ու մեր կյանքի մեծ դրաման:

«Հայկազյան ընկերությունը» հոդվածից, 1917.

... Սակայն ոչ մի կողմնակի հանգամանք և ոչ մի ժամանակավոր խառնակ դրություն չպետք է մեզ դարձնի ապերախտ Ռուսաստանի առջև էն խաղաղության ու բարիքի դեմ, որ մենք վայելել ենք նրա հովանու տակ:

«Բողոքի դեմ» հոդվածից, 1910.

Եվ ի՛նչ իմաստուն ու գեղեցիկ է դնում նա [Տերենցը,— Ա. Բ.] իր գործի հիմքը՝ իրեն հերոս առնելով Թորոս Լևոնին, բյուզանդական բանտում փակված հայ իշխանազնը, որ բանտից դուրս փախչելով,

հասնում է իր հայրենիքը, ազատասիրության շունչ է փչում, սիրտ տալիս, ոտքի է հանում իր ժողովրդին ու կանգնեցնում է ամուր՝ իր ազատ կյանքով ապրելու:

Էպիկով նա հանդիսանում է մի խորհրդանշան— հայ ժողովրդի ազատասիրության ոգին, մի ոգի, որ թագավորում է հայոց թե պատմական, թե ժամանակակից կյանքի վրա հիմնած գրականության մեջ և զորանում ու ամրանում է ժողովրդական ուժով՝ հերոսական խորհուրդների հերոսներ ծնելով:

Ծերենցի գերեզմանի վրա
արտասանած խոսքից, 1913.

Այո՛, ճշմարիտ է՝ գեղեցիկ գրականությունը, իբրև հոգու պարզ ու կատարյալ արտահայտություն, ժողովուրդների անխարդախ վկայականն է, և ինչքան բարձր է գրականությունը, էնքան բարձր վկայական է մի ժողովրդի կուլտուրականության, բայց միաժամանակ նաև բարձր հոգեկան կապ է ժողովուրդների մեջ:

Մենք ունեցել ենք էդ բարձր վկայականը, բայց էդ վկայականը մնացել է մեր գրպանում, կարդացող չի եղել, դրա համար էլ չունենք էն մեծ փոխադարձ չափը, որին պիտի ... Մենք ենք միայն օտարների հանճարները ճանաչել, սիրել ու սրտով կապվել նրանց հետ, իսկ մեր ցեղի հանճարը ոչ ոք չի ճանաչել, դրա համար մեզ ոչ ոք չի գնահատել, չի սիրել ու հոգեպես չի կապվել մեզ հետ:

«Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի
ռուսերեն թարգմանությունների առթիվ» հոդվածից, 1915.

Վերջապես ժամանակ է, թող իմանան մեր ռուս եղբայրները, ինչպես էլ ավելի հեռուները թող իմանան, որ «եթերային բարձունքները» երբեք խորթ ու անմատչելի չեն եղած հայի հոգուն, որ հայի հանճարն էլ է միշտ սավառնացել էն վսեմ, էն սուրբ ու նուրբ

ոլորտներում, թեև նա ինքը՝ հայը միշտ լողացել է արյան ծովի մեջ, ահա ճիշտ էնպես, ինչպես մի Սայաթ-Նովա:

«Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի ռուսերեն թարգմանությունների առթիվ» հոդվածից, 1915.

Թե ինչ է քաշել հայ ժողովուրդն իր երկրում, մինչև էսօր դեռ ամբողջովին հայտնի չի... Դարավոր անլուր տառապանքների բոլոր նյութերն ու դոկումենտները դեռ ի մի չեն բերված ու դեռ մի պատմություն չկա դրանցից գրված նույնիսկ հայերեն լեզվով: Բայց ով որ շատից քչից ծանոթ է էդ ցաք ու ցրիվ վկայություններին— կհաստատի, որ էն տեսակ տանջանք ու տառապանք, ինչ որ հայ ժողովուրդն է տեսել արևելյան բռնակալներից ու բարբարոսներից, չի տեսել ոչ մի ժողովուրդ ոչ մի աշխարհքում: Ու վաղուց էլ, անվերջ կռիվներից ու կոտորածներից, անսպառ թշնամի բազմություններից ուժասպառ եղած, ընկճված ու քայքայված հայ ժողովուրդը խաչակրաց արշավանքներից ի վեր իր աչքը ձգած է եղել Արևմուտքի քրիստոնյա լուսավոր ազգերին, նրանցից է սպասել իր փրկությունը:

Երբեմն Ֆրանսիա, երբեմն Գերմանիա, երբեմն Իտալիա, երբեմն Անգլիա— վերջապես նրա հույսը հանգել է Ռուսաստանի վրա: Եվ էն օրվանից, որ իր հույսը արել է Ռուսաստանի վրա ու նրա հետ վեր է կացել, էն օրվանից մինչև էսօր հայ ժողովրդի ամբողջությունը առանց վարանումի ու անշեղ գնում է իր պատմական արյունոտ ճանապարհը: Եվ իբրև հավատիք իր ազգային զգացմունքների տվել է «Վերք Հայաստանի»-ն, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ հայ ժողովրդի վերքի մռմուռի հետ միասին մի հզոր ջատագովություն ու օրհներգ ռուս ազգին ու իր ուժին և որ սակայն դեռ անծանոթ է մնում ռուսներին: Մի

գիրք, որ հայ ժողովուրդը պաշտում է տակավին ու իր նոր գրականության հիմնաքարն է համարում:

«Կարևոր հույսն ու դարևոր ճանապարհը» հոդվածից, 1914—15 թ. թ.

... Ինչքան բան անցնելուց հետո թե հայերի, թե ռուսների մեջ քիչ չի էն անտեղյակ մարդկանց թիվը, որոնք կարծում են թե՝ նոր բան են ռուս հայկական լավ հարաբերությունները, փոխադարձ հավատն ու հույսերը...

Այո՛, հին են թե հույսը, թե էդ հույսն իրագործելու ճանապարհը: Եվ երկար ժամանակի փորձը ցույց է տվել, որ նաև— անսխալ է, որովհետև, անհատները կարող են սխալվել, բայց ազգերը հեշտ չեն սխալվում: Հայ ժողովուրդը, որ ապավինել է հզոր Ռուսաստանին ու մարդավայել կյանք է ուզում, ոչ թե նրա համար, ոչ թե միայն նրա համար, որ գոյություն ունենա աշխարհքում, այլ նրա համար, որ էդ գոյության մեջ կա մի բարձր խորհուրդ, որ թանկագին է դարձնում ամեն մի գոյություն: Թե չէ, եթե միայն լոկ ֆիզիկապես ապրելու խնդիրը լիներ վաղուց ու շատ հեշտ վճռված կլիներ խնդիրը— հարմարված ու ձուլված կլիներ նրանց, որոնց դեմ մաքառում է դարերով:

Եվ էդ մարդավայել կյանքը նա անպատճառ կունենա:

«Կարևոր հույսն ու դարևոր ճանապարհը» հոդվածից, 1914—15 թ. թ.

Այսպես, դարեր շարունակ մեր թշվառ աշխարհքում տիրում էր նույն բռնակալությունը, նույն հալածանքը, նույն դժոխքը: Եվ դարերից հետո էլ՝ Զաքարիա սարկավագից հետո՝ նույն Քանաքեռ գյուղում աչքը բաց անելով՝ Խ. Աբովյանը իր աչքով տեսավ նույն զարհուրելի վիճակը—պատկերներն ու նույն դըժոխքը, որ և ամենայն հարազատությամբ պատմեց ու ողբաց իր «Հայրենասերի ողբ»-ի մեջ. սակայն նա

տեսավ այնտեղ և առաջին հանդուգն ապստամբությունն այդ բնության դեմ, որ հայ ժողովրդի բացարձակ ու բարձր բողոքն էր պարսից կառավարության դեմ, որի պատկերը «Վերք Հայաստանի»-ի մեջ հանդիսանում է Աղասին, տեսավ փրկության հույսը, որը սպասում էր հայ ժողովուրդը Ռուսաստանից, տեսավ և այդ դժոխքի ավերումը՝ Երևանի առումով: Այս է պատճառը, որ նրա «Վերք Հայաստանի»-ն և՛ հայրենասերի ողբ է կսկծով ու հառաչանքով լիքը, և՛ ազգային դյուցազներգություն է, որ ուժ ու հպարտություն է շնչում, և՛ բարերարված ու փրկվածի ներբող՝ ողողված ուրախության արտասուքներով, երախտագիտական բացականչություններով ու օրհնություններով: Եվ ամենը, ինչ որ դուրս է գալի նրա սրտից, նրա բերանից, նրա գրչի տակից, անկեղծ է, միամիտ ու ճշմարիտ, որովհետև ինքն ապրել, աչքով տեսել, ականջով լսել ու պատմել:

«Ռուս-պարսկական պատերազմը և Աբովյանը» անտիպ աշխատությունից, 1908.

... Մեծ է փորձությունը ու աղետն ահռելի:

Բայց մենք երեկ մեկել օրվա ժողովուրդը չենք, առաջին անգամը չենք տեսնում էս տեսակ աղետ և՝ ինչ որ տեսնում ենք՝ անօրինակ չի մեզ համար:

Սրանից շատ ավելի մեծ աղետներ ենք տեսել, շատ ավելի մեծ տարածությունների վրա, շատ ավելի երկար ժամանակներով, շատ ավելի ծանր կորուստներով, փախչողն ու գաղթողն էլ չի իմացել թե ուր ապաստանի, ու ոչ մի տեղից էլ ոչ մի օգնություն կամ օգնության հույս չենք ունեցել: Բայց այնուամենայնիվ անց ենք կացրել էս ամենը:

Էսօր շատ ավելի բարեհաջող են պայմանները: էսօր մենք մարտնչում ենք մեր թշնամիների դեմ, մեր գաղթականն ապավեն ունի ռուսական Հայաստանում, իր եղբայրների մոտ, և սոված այլևս իր որբերը չի ուտում կամ իր հարազատին, էսօր մեզ հետ է ռուսա-

կան մեծ բանակն ու բովանդակ Ռուսաստանը, նրա միջոցով էլ աշխարհքի մեծագույն պետություններն ու լուսավոր ազգերը, և ահա համաշխարհային թոհ ու բոհի մեջ՝ մեր վիճակի մասին խոսք են հանում Ռուսաստանից մինչև Ամերիկա, վերջապես էն հաստատ հավատն էլ ունենք, որ ինչքան էլ կատաղի լինի թշնամու վայրագությունը— վերջինն է լինելու:

Էս ամենը լավ պետք է իմանա ամեն մի հայ ու միշտ հիշե, ոչ ոք հուսահատի ու վհատի խոսքեր չըպետք է անի, որ հատուկ է ձախորդ վայրկյանին, փորձությունը, ինչքան էլ մեծ լինի, պետք է տանենք արիությամբ ու վեր կենանք միասին, միահամուռ ուժերով դիմադրավելու մեր վատթար թշնամիներին և դարման տանենք ընդհանուր ազգային աղետին հանդիստ ու լիքը մոտիկ լավագույն ապագայի անսասան հավատով:

«Հանդիստ ու լիքը հավատով» հոդվածից, 1916.

Մենք եկել ենք ու գալիս ենք դեպի մեծ Ռուսաստանը, դեպի մեծ ռուս ազգը...

Եթե մենք կապված ենք եղել ու էսօր էլ նորից՝ ավելի գիտակցաբար ամրապնդում ենք կապը՝ էդ ռուս լավ մարդու հետ է, որի սրտի բարությունն ու մեծությունը վայել են իր հայրենիքի մեծությանն ու ազգային ուժին:

Թող առաջ գա նա, ով կարող է մեծ Ռուսաստանը հանդես բերել հոգու մեծությամբ ու սրտի բարությամբ. նա, որ իր ուժով երկրներ նվաճելու հետ իր առաքինություններով էլ ժողովուրդների սրտերն է նվաճում:

«Փորձիչը» հոդվածից, 1913.

Հայ ժողովուրդը [երկար դարերով] աչքը կթած արևմուտք օգնություն էր աղերսում մերթ մի, մերթ մյուս եվրոպական քրիստոնյա պետությունից: Դարերի փորձը, պատմության ընթացքն ու ժամանակի

մատը ցույց տվին, որ այդ հույսն ու ապավենը Ռուսաստանն էր լինելու, որ օրեցօր զորանալով ու իր ափերից դուրս հորդելով իր զինվորներով՝ հորձանք էր տալիս դեպի Արևելք։ Եվ Հնդկաստանից մինչև Կովկաս, ամենայն հայոց կաթողիկոսից մինչև վերջին շինականը՝ հայ ժողովրդի հայացքը կենտրոնացավ Ռուսաստանի վրա։ Հիրավի, հզոր Ռուսաստանի արևելյան քաղաքականությունն ու տանջվող հայ ժողովրդի հույսերը բռնում էին իրար։ Այստեղից էլ առաջ եկավ այն մտերմությունն ու այն ջերմ հավատը, որ գոյություն ուներ ռուս պետության ու հայ ժողովրդի մեջ...

«Ռուս-պարսկական պատերազմը և Աբովյանը» անտիպ աշխատությունից, 1908.

Երևանի առումով Ռուսաստանին միացավ Մասիսի էս կողմը գանվող հայությունն ու այդ օրվանից հայ ժողովրդի կյանքի ու պատմության մեջ բացվեց մի նոր շրջան։ Կատարվեց Կովկասի հայության դարավոր տենչանքը։ Ցնծությունն ընդհանուր էր, սրտալի ու մեծ, ինչպես ընդհանուր ու մեծ էր դարավոր «Վերքի» ցավը։ Այդ ցավի ու այդ ցնծության հրաշունչ արտահայտությունը եղավ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն։

Այդ գրքի մեջն է ամփոփված հայ ժողովրդի վերջին ժամանակների տանջանքներն ու տենչանքները և գաղտնիքն էլ հենց դրա մեջ է, որ նա մեզանում համարվում է մի սրբազան գիրք

«Ռուս-պարսկական պատերազմը և Աբովյանը» անտիպ աշխատությունից, 1908.

Դաշնակից պետությունների ագահ ու հավիտյան հանցավոր քաղաքականությունը, հայ ղեկավար շրջանների անկարողությունն ու քաղաքական անհեռատեսությունը և հայ-թուրքական վայրենի ու անզուսպ

թշնամությունը Հայաստանը հասցրին օրհասական դուռը:

Ամենից լքված ու հուսահատված հայ ժողովուրդը իր հայացքը դարձրեց դարձյալ դեպի Ռուսաստանը: Եվ եկավ նա, Նոր Ռուսաստանը:

Այժմ նոր, ազատ Ռուսաստանից է կախված՝ ոչ միայն հայ ժողովրդին ազատել վերահաս վտանգից՝ այլև ապահովել նրա անկախ քաղաքական կյանքը, խաղաղ վերջացնել հայկական արյունոտ խնդիրը, հայ ժողովրդին հաշտեցնել մահմեդական հարևանների հետ և արդար աշխատանքի ճանապարհով առաջնորդել դեպի նոր կյանք:

Փոքր ժողովուրդները, հիրավի, զրկված բանվորներ են ազատ ու անխիղճ իմպերիալիստական հզոր պետությունների ճանապարհների վրա:

Նոր Ռուսաստանը, որ գալիս է նրանց հանի էգոիստական վիճակից՝ նոր դարաշրջան է բաց անում մարդկության պատմության մեջ...

«Հայաստանի Ռևկոմին» գրած նամակից, 1920.

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր,
— Քեզի ընծա՛, իմ հայրենիք.
Սոսյաց անտառեն էի գայն կտրեր..
— Քեզի ընծա՛, հին հայրենիք —
Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող՝ լույս ելաներ:

Եղեգնյա գրչով երգեցի արյուն
— Ձեզի ընծա՛, սուրբ զոհեր —
Ան ելած էր մոխրի մեջ իբրև կնյուն...
— Ձեզի ընծա՛, կրակի զոհեր —
Եղեգնյա գրչով երգեցի վերքեր.
Ընդ եղեգան փող՝ սիրտս ելաներ:

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

Դարձյալ քանդել ըսկսան բարբարոսները ղրժխեմ.
Կացիններուն տակ նորեն կարյունին մեր մարմարները.—
Հերոս ը՛նկեր, մոտեցի՛ր, Սուրդ կախեմ...
Ան ըսպաննե թող եղեռն:

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

Հայ հոգին, դարբնված մթին ու մեծաշուք պատկերներով լի անցյալե մը, լուսավորված տխրորեն սև արևե մը, թրծված կյանքի մը մեջ զոր Գողգոթայի ճամբաներ կակոսեն, մեր օրերուն կթվի ըլլալ հրաշք մը, որուն խորհուրդները պետք է արտաբերել: Հայ հոգին իմացական տիեզերքի մեջ տարր մըն է, որուն հայտնությունը պիտի զարմացնե վսեմ մարդկությունը: Պարզել այդ հոգին՝ էական պարտավորությունն է ամեն հայ արվեստագետի:

Կսենք. արտաքին գործոններ— ստացական սովորություններ, օտարոտի ազդեցություններ, զգացմանց խոտորում և ձևազեղծում— տիրած են այսօր՝ բայց չեն կրցած ձուլել զայն: Մենք կընդնշմարենք զայն, հայ հոգին, անոր ճաճանչներուն կայծկլտալը գողթընյան և միջնադարյան փանդիռներու լարերուն վրա, և իմաստին խորը մեր ժողովրդական խաղանդավեպերուն՝ փայլուն զանակներ մեր ազգային հանճարին: Կզգանք թե մեզնե յուրաքանչյուրին մեջ թաքչած է ան, և, առհավության շունչին թելադրումներեն միշտ կենդանի. պիտի բարբառի անմիջապես-որ գտնե իր արտահայտությունը:

«Մեր հանդանակը» առաջնորդողից, 1914.

Կմոտենա թվականը այն կրկնակ հոբելյաններուն՝ զոր մեզ կպարտադրեն տոներու հայ տառերու գյուտն ու տպագրության մուտքը հայերուս մեջ: Եթե ակնարկ մը նետենք այդ երկու երևույթներուն վրա՝ անկարելի է որ կարենանք մեր հիացումը զսպել հայ ոգիին մեծության վրա՝ որ միշտ ի հայտ եկած է իր համառության և փյունիկի հարաճուն թևավորումին մեջ:

Տառե՛ր, որոնք ծնունդ առին սուրբի մը սրտին արյունին մեջ և շարունակեցին միշտ իրենց հարափոփոխ ձևերով ձուլվիլ արյունի, հրդեհի և անպատում սրածության խորը: Ո՛վ պիտի կրնա գրել այդ տառերուն պատմությունը. անոնք հրաշեկ գամերու նման ցեղին գոյությունը հաստատեցին մագաղաթներու հավերժական հաստատությանց վրա: Աստվածային «Ա» են սկսյալ, որ աղոթքի մը նման բազուկները վեր կարկառած, դարերու ընթացքին մեջ, երկինքը հաստատ բռնեց հայության գլխուն վրա, մինչև ինքնամփոփ «Ֆ»ն՝ որ հույսի քղամիթին փաթթված, ա՛չքը միայն բաց, քալե՛ց, քալեց դեպի արշալույսները գալիք օրերուն, այդ բոլոր տառերը, կըսեմ, կարավան առ կարավան առաջնորդեցին մեր

գոյությունը, մեր հայականությունը մինչև ներկա դարու սեմին վրա:

Փա՛ռք հայ տառերուն, որոնք անխմանալի խնամությամբ, մոգական գրիչներու տակ հավաքված՝ Եղիշեին լեզուն ոսկի ըրին, Բագրատունիինը՝ ադամանդ, և Ալիշանինն ու Հայրիկինը մեղր քաղցրահոս: Հայ լեզուն այդ տառերու սանդխամատներուն վրա ոտն առ ոտն բարձրացավ ամեն դարու ճակատին վրա՝ հոն փորագրելու համար անմահությունը ցեղին:

Եվ տպագրությո՛ւնը, մեր մեջ. այդ կնշանակե հայ մտքին լուսացիր սփռումը չորս ծագն աշխարհի՝ ուր հայ մը կար պանդխտացած, ծարավ՝ մեսրոպյան լեզվին քաղցրահոս բարբառին: Հայ մամուլին ճռինչը ողբ մը եղավ հավիտենական. ան երբեք բարձրագոչ չծիծաղեցավ: Լացավ այդ մամուլը լուսավոր արցունքներով՝ որոնք չիթ առ չիթ թափեցան հայ սրտին՝ հայ հողին վրա ու երևան բերին ամեն քանդումե վերջ նո՛ր վերածնունդը, ամեն առկայծումե վերջ նոր հրդեհում:

Եվ մենք անոնց հոբելյանը տոնելով՝ տոնած պիտի ըլլանք ազգի մը դարավոր մշակույթը և մշակները: Այդ մշակներուն մեծագույնները, որոնք արժանավոր կերպով գործածեցին տառն ու լեզուն, թուղթն ու մամուլը, այժմ ոչ ևս են: Սահակի ու Մեսրոպի ոսկորները, Տարոնի և Օշականի մեջ, իրենց հուշին մասվորման կսպասեն իրենք ալ մասվորվելու համար. Ալիշանինն ու Բագրատունիինը, պանդուխտ հողի վրա ընաշխարհի երազովը կմորմոքին ու կսրսփան: Ինչպիսի՛ գուրգուրանքով տվին անոնք տառի ու լեզվի այդ ավանդը, ու հաջորդական ճիգերով զայն պահեցին, հղկեցին, անոնցմով գրականության ադամանդներ երեսակեցին ու հետո հանձնեցին նոր սերունդին: Այժմ այդ սերունդը տերն է այդ ավանդին. այդ կնշանակե թե տերն է իր և իր հաջորդներուն գոյության կռվանին: Ինչ ավելի նվիրական պարտականություն քան անխորտակելի, անկորնչելի պահել այդ կռվանը:

Անոր վրա միայն կրնա կազմվիլ անբաժանելիությունը հայ անհատներուն ու հատվածներուն, անոր վրա պիտի միանան ու իրարու բոցով հրդեհվին սիրտերը ուծացած, այդ կռվանին վրա է ջահը դարավոր հույսին, ու վերածնունդը դարավոր ողջակեզին:

Անհատները կրնան ուծացվիլ, նշդեհության, սրածության մատնվիլ՝ բայց երբ հաստատուն պահված է սիրտերու մեջ՝ տառերուն բևեռը, լեզվին անջնջելի ճառագայթը, կրակե այդ ճառագայթը իրար բերելու, իրարու միացնելու համար անհատները՝ իբրև ժողովուրդ, ժողովուրդը՝ իբրև ազգ, ազգը՝ իբրև հայկանության:

«Վաղվան հոբելյանները» հոդվածից, 1913.

Դուք կուզեք անշուշտ, որ հայ ցեղը ստանա իր նախնի կորովը, ռազմիկ նկարագիրը, ազնվական ու խրոխտ այն ապրելակերպը՝ որ անտարակույս գոյություն ունեցած էր ժամանակին, երբ հայությունը կհնչեցներ իր բարբառը բանակին մեջ, ռազմի դաշտին վրա, կամ կոլորակեր իր լեզվին հնչականությունը արքունիքներու մարմարյա սյուներուն տակ, կամ սեպուհներու դահլիճներուն մեջ՝ ուր կտոնախմբեին «տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին»: Երբ կուզեք անտարակույս հայ ցեղին վերադարձնել նույն այս նկարագիրը իր նախնիքներուն՝ ինչո՞ւ համար իր գեղեցիկ դպրության պիտի չվերադարձնեք նույն այդ նկարագիրը լավագույն կերպով ցոլացնող լեզվին ամենեն ուժեղ և արտահայտիչ գանձերը:

«Յարճանյանի քերթողությունը» բանախոսությունից, 1913.

Դյուցազներգակ մը չէ Յարճանյան [Սիամանթո, Ա. Բ.], դյուցազուններ երգելով հանդերձ: Ան ռազմերգու մըն է: Իր հերոսները քաջությունը քաջության համար չեն պայքարիր՝ ինչպես հիները կ՚ընեին ընդհանրապես: Բառին դասական և միևնույն ատեն

արդի իմաստով առաքինի մարդիկ են անոնք՝ հայրենիքի տառապանքով հերոսացած, սնած՝ տնտեսական ու քաղաքական իմաստասիրական սկզբունքներով, որոնք կվիճեն, կճառեն ու իրենց սկզբունքները իրենց քաջությամբ կձգտին կիրարկել ու ապրեցնել: Այս դյուցազուններուն համար կռիվը պարտականություն մըն է՝ բնության իրավակարգեն և հայրենիքեն պարտադրված: Ով որ հայ մարդ է պիտի պայքարի՝ կամ պիտի դրժե իր արյունին և իր պատկանած ազգին դեմ...

Յարճանյան քնար չունի: Իր երգը կոփյուն մըն է՝ զոր մեր Նախնիքը Նավասարդի տոներուն կհնչեցնեին իրենց աշտեն զարնելով վահաններու ոսկեցոլ կումբին: Իր երգը ազգի չեփորին երախեն արտահոսող մարտահրավերն է, որուն ունկնդիր, այսօր, Վիրգիլիոսի հետ Տանթեի գրիչով, հիացմամբ լի, կ'ըսենք.—

Onorate l'altissimo poeta·

Պատվով ըրեք վսեմական քերթողին.

«Յարճանյանի քերթողությունը»
բանախոսությունից, 1913.

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Բաբելոնն է եղել մեր ախոյանը՝ ահա—
Անհետ կորել, անցել է — չար մշուշի պես,

Ասորին է եղել մեր թշնամին — ահա
Դատարկ է տեղը և չկա քար քարի վրա:

. . . .

Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն անհետ,
Օրհասական խոսքը մեր կմնա հավետ,

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Հայրենիքի երգը հնչել է մեզանում առավել կամ պակաս ուժեղ Եղիշեից և Խորենացուց սկսած մինչև մեր օրերը: Այդ գաղափարը կարմիր թելի նման անցնում է մեր գրականության միջով սկզբից մինչև մեր օրերը, դարձել է մի անբաժանելի հատկանիշ, գունավորել է մեր ինտելիգենցիայի միտքն ու երևակայությունը դարեր շարունակ, անշուշտ իր կոնկրետ ձևերի որոշ շեղումներով ու տարբեր գույներով, սակայն էությամբ միշտ նույնն է մնացել, մի ֆանտոմ է եղել, մի զորություն, որ մղել է դեպի հերոսական մարտիրոսություն, դեպի աներևակայելի լարում հոգեկան ու նյութավոր էներգիայի, մի անհասանելի, մի միշտ բաղձալի ցավատանջ իղձ է դարձել այդ անկախ հայրենիքի, այդ ազգային գոյության գաղափարը:

«Հայ գրականության գալիք օրը» դասախոսության ձեռագրից, 1914.

Հայ գրականության մեջ իշխող գաղափարը, նրա հիմնական առաջմղիչ ուժը՝ ազգային գոյության, ազգային անկախության գաղափարն է։ Սակայն այդ ընդհանուր և իշխող գաղափարն ունեցել է մեզանում իր բնորոշ ու առանձնահատուկ գույնը, որը գրեթե բոլորովին անհասկանալի է օտար մարդուն թե իր էությամբ, թե արտահայտության ձևով։

«Հայ գրականության գալիք օրը»
դասախոսության ձեռագրից, 1914.

Եվրոպային մենք ընդունում ենք բաց աչքերով և բաց սրտով, մենք ժխտում ենք այն ազգությունը, որ լավագույն դեպքում (թեպետ դա էլ անկարելի է) կարող է մեզ համար Պարսկաստանի նման մի հայրենիք ստեղծել։ Մենք չենք կամենում այդպիսի հայրենիք։ Մեր հայրենիքը Ռուսիան է և նրա ծոցումն է, որ կամենում ենք մենք առաջ տանել ու պահպանել մեր կուլտուրան— եթե կարող ենք մենք յուրացնել ժամանակակից Եվրոպայի ամբողջ կուլտուրական ժառանգությունը— ուրեմն կարող ենք ապրել, եթե ոչ—մենք կմեռնենք իբր ազգ։

«Հայ գրականության գալիք օրը»
դասախոսության ձեռագրից, 1914.

Մենք միշտ քարոզել ենք, և այժմ էլ պիտի անդադար քարոզենք, որ հայ աշխատավոր ժողովրդի փրկությունը Ռուսաստանի Բանվորական և Գյուղացիական Խորհուրդների իշխանության հզորության մեջ է։ Եվ ով որ դեմ է խորհուրդների իշխանության՝ նա դավաճան է, նա ժողովրդի թշնամին է։ Եվ ահա մենք հայ կոմունիստ բոլշևիկներս, կոչ ենք անում ձեզ հայ գյուղացիներ և հայ բանվորներ՝ միացեք Ռուսաստանի խորհուրդների կարմիր գնդերին, ուժ տվեք նրանց, որովհետև բանվորական և գյուղացիական կարմիր գնդերն են, որ պիտի մի գեղեցիկ օր եղբայրական ձեռք մեկնեն տանջված և կեղեքված մահացու վտանգի մեջ գտնվող հայ գյուղացուն ու բանվորին,

միայն Ռուսաստանի բանվորական և գյուղացիական խորհուրդների իշխանության կարմիր գնդերն են, որ կարող կլինեն ազատություն ավետել արյունաներկ երկրին:

«Նամակներ հայ գյուղացիներին և բանվորներին» գրվածքից, 1918.

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Բռնկվել է արյան հեղեղը կրկին,
Վրնջում են նժույգները երկաթի,
Սակայն սանձը մրրիկների զայրագին
Դու բռնել ես քո կուռ ձեռքում պողպատի:

Եվ տանում ես հաղթանակից հաղթանակ
Հայրենիքը մեր անեզր, անընկուն.
Քեզ անսպառ կամք ու կորով, երկար կյանք,
Ով մեծ գործի մեծ առաջնորդ իմաստուն:

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Վառ ու հզոր քո ապագան
Կայծակում է իմ դեմ.
Դո՛ւ, հավերժող իմ Հայաստան,
Անուն քաղցր ու վսեմ:

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Հայ ժողովուրդը աշխարհիս ամենահին ժողովուրդներից մեկն է, որին դարերի ծանրությունը չի ընկճել բնավ, այլ ընդհակառակը, կռել-կոփել է նրան, դարձրել է քաջարի մարտիկ իր գոյության, իր հայրենիքի պաշտպանության համար. նա կենսունակ է և լցված ստեղծագործական պոտենցիալով:

Հայ ժողովուրդը աշխարհ է տեսել, տեսել է աշխարհի չարն ու բարին, նրա գլխով շատ փորձություններ են անցել. նա կոտրել է Դարեհ Վշտասպյանի գոռոզությունը, նա ճակատել է հռոմեական լեգեոնների դեմ, արաբական մոլեռանդ հորդաների

դեմ, նա ապրել է մոնղոլական բարբարոսների խժդժությունները. Նա տեսել է աշխարհակալ բռնապետությունների բարձրացումն ու փոշիացումը իր իսկ երկրում, նա կրել է բյուրավոր աղետներ, կոտորածներ, և դուրս է եկել այդ զարհուրելի մղձավանջից արյունլվա, բայց միշտ ոտքի վրա, և նրա աշխատող բազուկը միշտ հերկել է հայրենի հողը:

«Մեր իդեալներն անսասան
են» հոդվածից, 1941.

Հայ ժողովուրդը անցել է կուլտուրայի երկար ճանապարհ և, նրա դարավոր կուլտուրան և դարավոր կենսափորձը թողել են մի գանձ, մի բյուրեղացում, մի թանգարժեք նստվածք իր հոգում և իր հայրենիքում: Այդ թանգարժեք նստվածքը այն մեծ և նվիրական գանձերն են,— իր դասական շքեղ լեզուն, իր հոյակապ ճարտարապետությունը, իր սքանչելի էպոսն ու ֆոլկլորը և իր հումանիստական աշխարհայացքը,— որոնց մշտապես գուրգուրել է նա, պահել-պաշտպանել իր կյանքի գնով:

«Մեր իդեալներն անսասան
են» հոդվածից, 1941.

Հայ ժողովրդի բազմափորձ իմաստությունը դարերով սովորեցրել է սերունդներին խաղաղ ստեղծագործ աշխատանքի. իր դյուցազն Դավթի պես լինել խաղաղասեր և հաշտ իր դրացիների հետ, բայց տեղը եկած ժամանակ անձնուրաց կռվել հայրենիքի ազատության համար, իր ժողովրդի բարեկեցության համար, իր կուլտուրական մեծ ժառանգության համար. տոկալ և չընկճվել բախտի հարվածներից, չդավաճանել իր էությունը: Իր մարգարեական Մհերի պես պայքարել բռնության և կեղեքման դեմ և միշտ վառ պահել հավատը աշխարհի վերակառուցման և արդարագույն ապագայի հանդեպ, որը անպատճառ պիտի գա:

«Մեր իդեալներն անսասան
են» հոդվածից, 1941.

Հայ ժողովուրդն իր քաղաքական անկախությունը կորցնելուց հետո՝ օտար բարբարոս իշխանություններին բռնարար ենթարկված՝ դարերով չհաշտվեց երկրի գերության հետ, անընդհատ պայքարեց բռնակալների դեմ ազգային անկախությունը վերստին ձեռք բերելու համար, սակայն տուժեց չարաչար, կոտորվեց: Բայց հայ ժողովրդի ճակատին պատմությունը գրել էր՝ ապրել ու բարձրանալ:

«Մեր բաղձանքները»
հոդվածից, 1942.

Սիրելագույն Շիրակն ինձ համար տիեզերքի կենտրոնն է եղել, որովհետև այստեղ է, որ սկսել է բաբախել իմ սիրտը: Այստեղ եմ զգացել աշխարհը: Այս կենտրոնումն է սկիզբ առել իմ աշխարհաճանաչումը: Այստեղ եմ լսել և սովորել մեր հայակապ մայրենի լեզուն: Այստեղ, մեր անուշ տատիկներից լսել եմ հոգի կախարդող հեքիաթները, մեր փորձաշատ պապիկներից իմաստուն զրույցներ, խոսք ու առած:

Մեր թափառական գուսաններից և գյուղացի աղջիկներից լսել եմ մեր ժողովրդի չքնաղ տաղերն ու խաղերը, մեր մելոսը՝ սրտահույզ երգերը:

Մեր հնադարյան, խորիմաստ ֆոլկլորը, որին ես այնքա՜ն ու այնքա՜ն երախտապարտ եմ...

Մեր հովիվների շվին, մեր աշուղների սազը, մեր զուռնան ու փողը լցրել են իմ սիրտը մարդկային սուրբ զգացմունքներով, վառել են իմ երևակայությունը և թևավորել իմ պատանի հոգին: Այստե՛ղ, այստե՛ղ...

Հայկական անցյալ փառավոր կուլտուրայի այս վայրում՝ նվիրական Շիրակումն եմ հյուսել իմ չքեղ երազները՝ նրա զմրուխտե Մանթաշում, Ալագյազի ադամանդե կատարի վրա, բյուրեղ աղբյուրների գրընգոցի մեջ, Արփաչայի ափերում, բոստաններում, ջաղացներում և Անիի ներշնչող պարիսպների և առյուծաբաշ բուրգերի տակ:

Շիրակումն է իմ հոգին խոյացել արդար հպար-

տությամբ և տես մեր նախնիքների կերտած այդ զարմանալի գեղեցիկ և ներդաշնակ ճարտարապետության, որի մասին հռչակավոր գիտնական Ստրժիգովսկին ասում է. «Մի արվեստ, որ կարող է մրցել Հելլադայի և ռոմանական-գոթականի հետ առաջնության դափնու համար»: Այս վսեմ արվեստն է ինձ ամուր հավատ ներշնչել այն հայակեր մռայլ շրջանում, թե հայ ժողովուրդը չի կորչի, որովհետև ստեղծել է ինքնուրույն ոճ, և որովհետև ոճ ստեղծող ժողովուրդները չեն կորչում...

Այսպիսով, իմ սիրելի բարեկամներս, ես չափազանց երախտապարտ եմ իմ հավերժ սիրելի Շիրակին, որովհետև նա ինձ կազմավորել, ոգևորել և դարձրել է հայ հինավուրց ժողովրդի անմահ ու վեհ գրականության անուններից մեկը կրտսերագույնը: Այստեղ եմ ճաշակել հայ գրականությունը, որից ստացել եմ ես սրբազան պատգամներ, դարերի մեջ կռած-կոփված և երկյուղածությամբ ծառայել եմ նրանց:

Այնուհետև, ինչքան հասակ եմ առել, այնքան ընդարձակվել են Շիրակի սահմանները և վերջը գրկել են ամբողջ Հայաստանը:

Եվ Հայաստանը ես միշտ և հանապազ կրել եմ իմ հոգում, ուր որ եղել եմ, Հայաստանը տարել եմ ինձ հետ: Նայել եմ Մոմբլանին, բայց տեսել եմ Մասիսը, կանգնել եմ Աթենքի Պարթենոնի առաջ, բայց զգացել եմ Երերույքը և Հռիփսիմե տաճարը: Լսել եմ Նեապոլի ժողովրդական երգերը, բայց հուզվել եմ մեր ժողովրդի երգով...

«Թանկագին ընկերներ, սրտագին ողջույն բոլորին»: Իր ծննդյան 65-ամյա հոբելյանին արտասանած ճառից, 1941.

Հայ ժողովուրդն աշխարհի հին, քաղաքակրթված ժողովուրդներից մեկն է՝ համառ և անվհատ մարտընչող իր կուլտուրայի, ինքնուրույնության և հայրենիքի համար: Իր անունը որպես անհաշտ, ըմբոստ ճա-

կատողի տակավին մեր թվականությունից 600 տարի առաջ, դրոշմել է տվել Բիսուտունի ժայռերի վրա Դարեհի աշխարհակալության դեմ:

Հայ ժողովուրդը՝ ճակատագրի բերմամբ կանգնած լինելով արևելյան և արևմտյան աշխարհակալ հզոր պետությունների հանգուցային ճանապարհի վըրա՝ գոյության անտեղիտալի կռիվ է մղել և զարհուրելի բախումների մեջ կոտորակվելով և վերստին կոտորակվելով այնուամենայնիվ մնացել է միշտ կանգուն իր նվիրական հողերի վրա, և միշտ հոգով աննըվաճ, ազատատենչ և լուսաբաղձ: Իր արյունոտ մաքառման էպոսը կռել-կոփել է իր համար Թուր Կայծակին, որ երբեք նա ձեռքից վայր չձգեց: Մի ձեռքում Թուր Կայծակին՝ պաշտպանել է նա իր հայրենի տունն ու ապրելու իրավունքը, մյուս ձեռքում՝ կուլտուրայի զենքերը— հերկել է իր հողը և կերել է իր արդար հացը, ստեղծել է հոյակապ դասական լեզու, արվեստի հրաշալիքներ: Վայրագ բարբարոսներն անընդհատ ներխուժել են նրա հայրենիքը: Արաբական մոլեռանդ խալիֆաները, նրանց մարդակեր ոստիկանները՝ Բուղաներն ու Կաշմերը հրդեհել են նրա հոյակերտ քաղաքները, կոտորել են նրա ծերերին և երեխաներին: Ալփ Ասլանը ավերելով չքնաղ Անին՝ նրա պարիսպների առաջ հայ մանուկների արյունով լցրել է ավազանը և լողացել արյունատենչ գազանը:

Մոնղոլական տափաստանների մարդագայլերը՝ Չինգիզխան, Չարմաղան, Լենկ-Թեմուր քարը քարի վրա չեն թողել Հայաստանում. հրաշակերտ քաղաքների և տաճարների ավերակների մեջ գանգերից բուրգեր են կանգնեցրել... սակայն հայ ժողովուրդը՝ անմահ ոգով, նորից ոտի է կանգնել բոլոր փլուզումների և կոտորածների միջից, նորից վառել է իր գոյության օջախը իր սրբազան ավերակների վրա, նորից և նորից կերտել է՝ իր նման անմահ մեր քարերին տալով գեղեցկություն և իմաստ. նորից հավերժացրել է իր մաղաղաթյա մատյանները: Եվ կերտելով ու ստեղծելով

Հայրենիք—13

նորից և նորից իրականացրել է իր ապրելու հզոր կամքը: Եվ ավելի մեծ հույսով ու հավատով հուսացել է և հավատացել իր փառավոր ապագային, արդարության և ճշմարտության գաղափարներին, հառաջադիմության և կուլտուրայի հաղթանակին: Եվ ստեղծել է իր երազանքների, հավատի ու ոգու պատգամախոսին—մարգարեական Մհերին՝ չար, անարդար աշխարհի կործանման և բարի, արդար աշխարհի նորակառուցման պատգամախոսին և իրականացնողին:

«Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը» հոդվածից, 1942.

Հինգերորդ դարը, որ մեր գրականության պատմության մեջ կոչվում է «Ոսկե դար», վերին աստիճանի նշանակալի երևույթ է: Սկսվում է մի աննախընթաց ծաղկում, երևան են գալիս պատմաբանների փայլուն պլեադաներ— Ղազար Փարպեցի, Զենոբ Գլակ, Փավստոս Բյուզանդացի, Մովսես Խորենացի, Եղիշե, փիլիսոփաներ՝ Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ: Թարգմանվում են Պլատոնը, Արիստոտելը և ուրիշները:

Այդ օրվանից սկսած մինչև մեր օրերը, հազար հինգհարյուր տարվա ընթացքում հայ ժողովրդի միտքն ու սիրտը շարունակել են անընդհատ կերպով երազել, հավատալ, և այս կամ այն ձևով ջանացել են լուծել ներքին և արտաքին կյանքի հարցերը:

Այն, ինչ իրականացրել է ժողովրդի հանճարը այս երկար ժամանակամիջոցի ընթացքում գրականության ասպարեզում, այնքան հարուստ ու բազմազան է, որ այդ գրականությունը պատիվ կբերեր իրենց պատմական նշանակելիությամբ, ու իրենց տարբերով հայ ժողովրդին չզիջող շատ ու շատ ժողովուրդների: Բավական է հիշատակել, որ չխոսելով անհետ կորած մեծաքանակ գրավոր մատյանների մասին, մեզ հասել են 22 հազար հատորից ավելի գրական կոթողներ, որոնք անփոխարինելի օժանդակություն է Մերձավոր Արևելքի

ժողովուրդների կյանքում տեղի ունեցած պատմական դեպքերն ուսումնասիրելիս:

«Մտքեր հայ գրականության
մասին» հոդվածից, 1939.

Երբ հենվելով հայ ժողովրդի բազմադարյան պատմության և նրա խիստ հարուստ գրականության վրա մենք ջանում ենք երևան հանել նրանց, այսպես ասած փիլիսոփայական էությունը, անխուսափելիորեն հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

Մեր գրականության հավերժ շողշողացող բովանդակությունն է եղել ազատության անշեջ ծարավը, պայքարը, հայրենասիրությունը և մարդկային արժանապատվության հարգանքը:

Դեռ հնագույն հումանիստներից մեկը՝ Սեբեոսը՝ նշում է, որ մեր ժողովրդի նվիրական երազը եղել է հայրենի երկրի բարգավաճման համար ապրելն ու մեռնելը:

Այս երազը կայծակի նման անցնում է մեր պատմության միջով՝ սկզբից մինչև մեր օրերը:

Հայ ժողովուրդը, և հանձին նրա ողջ հայ գրականությունը, դարերով պայքարել է հայրենի երկրի անկախության ու ինքնավարության համար: Հինգերորդ դարի բանաստեղծ-պատմաբան Եղիշեի դյուցազներգությունը մի հիմն է ի փառս հայ ժողովրդի պարսից փաղանգների դեմ նրա մղած պայքարի առթիվ: Այս պայքարն ու այս երգը շարունակեցին մեր գրողները մինչև ամենավերջին ժամանակներս: Այս բոցավառ, կյանքով ու ուժով առլցուն նվիրական եղանակները նպաստել են մեր ժողովրդի ազատագրվելուն՝ արաբ գիշատիչների, պարսից շահերի, մոնղոլ խաների, տաճկաց սուլթանների ու ցարերի լծից:

«Մտքեր հայ գրականության
մասին» հոդվածից, 1939.

Հայ ժողովուրդը ստեղծել է հոյակապ կլասիկ լեզու, անզուգական հնադարյան էպոս՝ Հայկը, Արա-

մի, Արայի և Արտաշեսի մասին, ստեղծել է միջին դարերի հերոսական էպոս՝ Սասունցի Դավթի և նրա որդի Մհերի մասին, դյուցազունների, որոնց մեջ մարմնավորված է ժողովրդի իղձը՝ հայրենիքի հաղթության, նրա ազատագրման և աշխարհի վերափոխման մասին:

Հայ ճարտարապետությունը սքանչելիորեն ներդաշնակվում է երկրի պեյզաժի հետ. այն կարծես թե մեր լեռների ու ժայռերի իմաստալից շարունակությունն է: Այն խիստ է իր զուսպ ձևերի մեջ, ունի շատ քիչ օրնամենտ:

Միջնադարյան գրականությունը հիմնականում լիրիկական է, նկարագրելով հայրենիքի հարուստ, ճոխ բնությունը— ձյունապատ բարձր լեռները, գեղեցիկ հովիտները, կիզիչ արևը, այն զարդարված է արևելյան պոեզիայի վառ գույներով, միևնույն ժամանակ ազատ է չափազանցություններից, հիպերբոլիզմից, սակավաբառ է ու սեղմ: Սերն այդ պոեզիայի մեջ զուսպ է, մաքուր և անարատ:

Մեր ժողովրդի մելոսն էմոցիոնալ է, նուրբ և սրտագին:

Բազմազան և հարուստ ժողովրդական ստեղծագործության մեջ մարմնավորված են մեր ժողովրդի բնավորության լավագույն գծերը— նրա անհողդողդ կամքը հաղթանակի նկատմամբ, ակտիվությունը: Արվեստի, ժողովրդի ստեղծագործության կերտվածք-ները դարեր շարունակ ծառայել են նրան նաև որպես պայքարի անխորտակելի զենք: Ժողովրդական երգիչները՝

Մեր գեղջուկի պարզ խրճիթում, սուրբ օճախի
շուրջը նստած՝
Գուսանները մեր խանդավառ, առջևները գինի
ու հաց,
Վիպերգեցին հաղթանակը դյուցազների մեր
մեծազոր

Եվ ծաղրեցին պարտությունը ոսոխների, մեր
բյուրավոր…
Տեսան շքեղ մեր ապագան, անընկճելի ազատ
ոգին,
Հայրենիքի սիրո համար միշտ բարձրացրած
Թուր-Կայծակին:

Հայաստանը դարեր շարունակ ծառայել է իբրև հզոր պետությունների միջև ահեղ ընդհարումների թատերաբեմ: Շատ հաճախ հայ ժողովուրդն ես պայքարելով իր հողի ու գոյության համար, կռվել է անձնվիրաբար, արյուն է թափել, կատարել է հերոսական սխրագործություններ, զենքով պահպանել է իր ազգային կուլտուրական արժեքները:

Ես իրավամբ հպարտանում եմ, որ այդ մարտընչող, հերոսական ու անմահ ժողովրդի զավակն եմ:

«Պոետի խոհերը» հոդվածից, 1941.

…Եվ ահա, երբ եկավ հաղթանակի օրը, Հոկտեմբերյան Սոցիալիստական ռեվոլյուցիան և Հայաստանը սովետականացավ, հայ ժողովուրդը այս պատմական մեծ իրադարձության մեջ տեսավ իր ազատատենչ երազների, իր դարավոր իղձերի պսակումը — ազատություն, հայրենիք, կուլտուրական-տնտեսական առաջադիմություն, ժողովուրդների եղբայրություն:

Մեր ժողովուրդը վաղուց էր նախատեսել իր ազատագրումը՝ պայմանավորելով այն՝ չար աշխարհի մի անդամի կործանումով և վերստին կառուցումով:

Նա ստեղծել էր Մհերին, որպես իր զինված մարգարեին, որ ազատությունը և արդարությունը սրով պիտի կենսագործե, իր Թուր-Կայծակով: Լավ ըմբռնելով, որ ազատությունը և արդարությունը առանց ուժի՝ ունայն հնչյուն է:

Ես արտասահման էի, երբ ազատագրվեց Հայաստանը և սովետական կարգերը հաստատվեցին այն-

տեղ և սկսվեց սոցիալիզմի կառուցման հաղթանակող գործը:

Եվ ես վերադարձա հայրենիք: Ի՜նչպես չվերադառնայի իմ բազմաչարչար հայրենիքը՝ վերածնված հիմա, հողով-սրտով գուրգուրված այն նվիրական հողը, ուր կան այնքան քաղցր ձայներ, հին-հին դարերից եկած, հարազատների ձայներ, նահատակների ձայներ, հերոսների ձայներ: Ուր կան մտերիմ դեմքե՜ր, քնարական դաշտե՜ր, վիպական լեռնե՜ր, մայրենի բարբառ, ժողովրդական երգի սրտագին մթնոլորտ, վերջապես հայ ժողովուրդը՝ աշխատավոր և արդար, Հայաստանի պատկառելի ժայռերից ծնված, քարից հաց հանող և քարից հրաշքներ կերտող հայ ժողովուրդը:

Ես ապրում եմ հիմա սոցիալիստական Հայաստանում, մեծ Միության մեջ, իմ երազների, իմ դեգերումների վերջնական հանգրվանում:

Ես ապրում եմ ժողովրդի հետ, տեսնում եմ նրա կուլտուրական և տնտեսական աճն ու վերելքը— համալսարան, անթիվ դպրոցներ, թատրոններ, օպերա, կոնսերվատորիա, գործարաններ...

Ես հպարտությամբ տեսնում եմ նրան մեծ Միության ժողովուրդների հետ, կողք-կողքի, կոմունիզմի վեհապանծ դրոշակի տակ, կոմունիզմի աշխարհաներթ բանակի մեջ, ինչպես դիպուկ ասել է մեր տաղանդավոր բանաստեղծ սիրելի Նաիրի Զարյանը:

Ես տեսնում եմ մեր հանճարեղ ղեկավարին— ի՜նչպիսի մեծ զգուշությամբ, իմաստությամբ, չրջահայեցությամբ տանում է նա աշխարհի ամենամեծ պետության նավը երկրի չորս կողմը բռնկված արյան հրդեհների և ահեղ փոթորիկների միջով դեպի այն վսեմ նպատակը, որ մատնանշել են պատմության մեծ հանճարները՝ հին և նոր, և՛ Մարքս, Էնգելս, Լենին, և՛ ինքը՝ Ստալինը:

Սիրելի՛ ընկերներ, իմ տարիքն ու փորձը թույլ են տալիս ինձ այս նշանաբանները տալու ձեզ—

Հայրենիք,
Մայրենի լեզու,
Ժողովուրդների եղբայրություն,
Ինտերնացիոնալիզմ,
Կոմունիզմ:

Բոցավառ շրթունքներով համբուրում եմ այս նվիրական նշանաբանները և հանձնում եմ ձեզ, սիրեցեք դրանց, պաշտեցեք և կիրառեցեք ամենայն հավատով, քաջությամբ և անձնվիրությամբ:

> «Թանկագին ընկերներ, սրտագին ողջույն բոլորից»: Իր ծննդյան 65-ամյա հոբելյանին արտասանած ճառից, 1940.

Հրդեհվող քաղաքների, արյան հեղեղների, աննըպատակ ու անհամար զոհերի վրայով, վերջապես, մեզ էլ հասավ դարերի մեծագույն հանճար Լենինի մարգարեական, զգաստացնող ձայնը:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան փրկեց և կյանքի կոչեց հայ ժողովրդին, որը կանգնած էր գերեզմանի եզրին: Սկսվեց իսկական վերածնությունը, որի մասին ժողովուրդը երազել էր դարեր շարունակ:

Այդ նվիրական օրից անցել է միայն 20 տարի, բայց նախկինում ավեր Հայաստանը դարձել է միանգամայն անճանաչելի: Նա իրավահավասար անդամ է մեծ Սովետական Միության ժողովուրդների ընտանիքում: Օրեցօր ամրապնդվում են սիրո և բարեկամության կապերը Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի ժողովուրդների միջև, որոնց՝ ցարիզմը հրահրում էր միմյանց դեմ...

Հայ ժողովուրդը աճում է և զարգանում: Ազատություն տալով նախկինում խեղդվող իր ստեղծագործական եռանդին, նա ոգևորված ու համարձակ միացել է սոցիալիստական հասարակությանը, ակտիվ, հարձակողական շարժմանը դեպի առաջ:

Օգտագործելով պատմական լավագույն տրադի-

ցիանները, Խորենացու, Նարեկացու, Քուչակի, Սայաթ-Նովայի, Կոմիտասի կլասիկ ժառանգությունը, հայ ժողովուրդը ստեղծում է նոր արժեքներ կոմունիզմի ոգով...

Պատմական բախտի բերումով ամբողջ աշխարհում ցիրուցան հայ աշխատավորների հայացքներն ուղղված են դեպի Սովետական Հայաստանը, դեպի ավետյաց երկիրը, հայերի սրբազան հայրենիքը...

«Պոետի խոհերը» հոդվածից, 1941.

Հայ ժողովուրդն ունեցել է բարբարոս ավերիչ շատ թշնամիներ, որոնց դիտել է իբրև տարերային չարիք և նրանց լծի տակ հեծելով հանդերձ՝ նա իր ստեղծագործական ոգու բարձրունքից արհամարհել է նրանց և հաճախ կամեցել է ներել, մոռանալ նրանց, սակայն երբեք չի կարողացել մոռանալ «քաղաքակրթված» մի ժողովրդի պետությունից ստացած մահացու հարվածները, մի ժողովրդից, որն իրեն «կուլտուրտրեգեր» է կոչում— գերմանական պետությունը...

«Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը» հոդվածից, 1942.

Հայ ժողովուրդը՝ հելլենիզմի կրողը Եվրասիական սահմանագծի վրա, վերածննդի առաջին ճառագայթն արձակողներից մեկը, շրջապատված և ոտնահարված լինելով մոնղոլական և այլ ժողովուրդներով, դարերի ընթացքում աչքը հառել էր եվրոպական լուսավոր ժողովուրդներին՝ նրանցից սպասելով իր փրկությունը: Եվ ահա XIX դարում սկսվեց փոքր ժողովուրդների՝ հույների, սերբերի, բուլղարների և այլոց ազատագրումը սուլթանական լծից, հնչեց և հայ ժողովրդի փրկության ժամը: Սակայն գերմանական կանցլեր Բիսմարկն էր, որ խոչընդոտ կանգնեց՝ հայտարարելով, թե հայ ժողովուրդը չարժե մի պոմերանցի (գերմանացի) զինվորի փտած ոսկորներին:

Եվ հետո, Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդ-

վածը, որ արևմտահայերի համար կուլտուրայի որոշ ավտոնոմիա էր նախատեսում, Բեռլինի ժողովում, նույն կանցլերի ջանքերով և խարդախությամբ վերածվեց 61-րդ մեռած հոդվածին, որ սակայն հայության սիստեմատիկ բնաջնջման զենք դարձավ սուլթան Աբդուլ Համիդի ձեռքում: Այնուհետև, երբ Հայաստանի գյուղերն ու քաղաքները թաթախվեցին հայկական արյան մեջ՝ այլասերված Վիլհելմ II կայզերը ցինիկաբար հայտարարեց, որ հայերից պիտի թողնել միմիայն մի մարդ, իբրև էթնոգրաֆիկ մուզեի օբեկտ, և ուխտի գնաց նույն Սուլթանի մոտ խրախուսելով հայկական ջարդերը: Իսկ առաջին իմպերիալիստական պատերազմին նույն կայզերը իր բարոններով՝ Իմհոֆ, Սանդերս, ֆոն դեր-Գոլց գեներալները և դեսպան Վանկենհայմով թև տվեց Իթթիհատի պանթուրքական բանդագուշանքին և... ջնջեցին ողջ արևմտահայությունը, մի հինավուրց ժողովուրդ իր կուլտուրայով, արվեստով, ֆոլկլորով, սրբեցին մի ողջ ժողովուրդ իր բազմադարյան հայրենիքից, ջնջեցին նրա և՛ անցյալը, և՛ ներկան, և՛ ապագան...

Մոնոկլ դրած գերման վայրագ սպաների հոհոցի տակ՝ ծովը թափեցին երեխաներին և մանուկներին, մայրերին...

Կուլտուրական բարբարոսները և մոնղոլ բարբարոսները միացան ստեղծելու համար մի նոր չինգիզխանյան հրեշապետություն Համբուրգից մինչև Չինական պարիսպները: Հայ ժողովուրդը գերմանացիների ձեռքից ստացավ մի անբուժելի վերք...

Հայ ժողովրդի սրտի մեջ շիկացած երկաթով անջնջելիորեն գրված են այս ամենը:

Ահա այս պիտի գիտենա գերման զորքը, երբ հանդիպի հայ զինվորին: Եվ պիտի գիտենա նաև, որ հայ ժողովուրդը՝ իրավունք ունի մահի պես ատելու իր թշնամուն և սիրելու իր բարեկամին՝ ռուս մեծ ժողովրդին: Եվ ահա ինչո՞ւ, երբ բոցավառվեց սոցիալիստական ռևոլյուցիան հայ ժողովուրդը նրա մեջ տե-

ցավ էր դարավոր փափագների կենսագործումը: Նրա մեջ գտավ իր փրկությունը: Այն, ինչ որ խլել էին նրանից կայզերներն ու նրանց վարձկանները՝ նա ետ ստացավ սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից, սովետական իրավակարգից:

«Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը» հոդվածից, 1942.

Երբ պատերազմը ծագեց, հայ ժողովուրդը խորապես գիտակցեց պատմական վայրկյանի բախտորոշ լինելու և չլինելու հարցը: Պետք է ուրեմն կռվել և հաղթանակել հանուն իր նորանվաճ ազատության, հանուն իր հին հայրենիքի պահպանման, հանուն իր մեծ հայրենիքի՝ Սովետական Միության: Լցված այս վսեմ գիտակցությամբ՝ հայ ժողովրդի զավակները պատերազմի բոլոր ճակատներում, Կարմիր պանծալի Բանակի մեջ, հայտ բերին հերոսական նվիրվածություն, պայքարի աննկուն ոգի: Շատ ու շատ են այն այլևս անմահ կտրիճների անունները, որոնց քաջագործությունները մեր նոր կյանքի հոգեցունց դրվագներն են կազմելու և Հայրենական պատերազմի ոսկե գրքի փառավոր էջերից մեկից ավելին: Այս նոր հերոսների մեջ վերակենդանացել է հայության հին հերոսների, ներշնչող, անձնուրաց ոգին: Վարդան և Վահան Մամիկոնյանների, Թեոդորոս Ռշտունիների և Թաթուլ Վանանդեցիների մարտնչող ոգին: Սմբատ սպարապետի և Վահրամ սպարապետի, Խութեցի Հովնանի և Սյունեցի Դավիթ Բեկի արյունը վառվեց վերստին նոր հերոսների սրտերի մեջ: Իսկ թիկունքում հայ ժողովուրդը՝ այր ու կին, ծեր և պատանի, լծվել են անդուլ աշխատանքի, որպեսզի մարտնչողներին օգնեն ամեն ձևով, բավարարեն նրանց կարիքները, և ավելին, քան անհրաժեշտ է:

«Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը» հոդվածից, 1942.

Լույսի և ազատության այս փրկարար և մեծա-

գույն պայքարին իր սրտառուչ մասնակցությունն է բերում հայ փոքրիկ ժողովուրդը, որ մեծ է սակայն իր քաջ որդիների հերոսությամբ, որոնք իրենց հայրենասիրությամբ, անձնազոհությամբ վերստին տալիս են իր մայր-ժողովրդին ազնվության նորանոր վկայականներ:

«Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը» հոդվածից, 1942.

Այսօր... հայ ժողովուրդը նորից կանգնած է ռուս մեծ ժողովրդի կողքին, եղբայրական ժողովուրդների հետ միասին կռվում է անձնուրացությամբ վայրագ թշնամու դեմ, և խորապես հավատացած է մեր արդար գործի հաղթանակին— և սակայն որքան էլ նա փոքրաքանակ լինի, միշտ պատրաստ է պայքարելու իր հայրենիքի ազատության և իր հին կուլտուրայի պաշտպանության համար: Նրա հոգու մեջ միշտ կենդանի է իր հին հերոս Վահան սպարապետի հրեղեն խոսքը, երբ նա V դարում պարսից բռնակալության դեմ կռվելիս ասաց· «Մենք պատրաստ ենք ուրախությամբ մեռնել, քան թե ծառայել ձեզ»:

Հայ ժողովրդի համար սուրբ է միշտ այս պատգամը· ավելի լավ է մեռնել, քան թե ծառայել բռնակալներին:

«Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը» հոդվածից, 1942.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3
«Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսից 9
Մովսես Խորենացի 17
Փավստոս Բյուզանդացի 27
Եղիշե 38
Ղազար Փարպեցի 48
Հար. Ալամդարյան 60
Մ. Դ. Թաղիադյան 62
Խ. Աբովյան 65
Ղ. Ալիշան 78
Ստ. Նազարյան 91
Մ. Նալբանդյան 95
Մ. Պեշկիթաշլյան 99
Ռ. Պատկանյան 107
Ս. Շահազիզ 115
Պ. Դուրյան 123
Գ. Սրվանձտյան 128
Րաֆֆի 137
Ղ. Աղայան 148
Մուրացան 150
Լեո 160
Հովհ. Թումանյան 165
Դ. Վարուժան 181
Վ. Տերյան 186
Ավ. Իսահակյան 189

Պատ. խմբագիր՝ Հր. Գրիգորյան

ՎՖ 01030 Պատվեր 487. Տիրաժ 3000. Տպագրական $12^{3}/_{4}$ մամուլ.
Ստորագրված է տպագր. 1946 թ. մարտի 20-ին։

ՀՍՍՌ ԺԿՍ-ին կից Պոլիգր. և հրատ. վարչ. № 1 տպ., Երևան, 1946.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220030796

ԳԻՆԸ 10 Ռ.

A II 30796